

ԱՂԱՎԵԼԻ ԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԱՄՆ-Ի ՎԱՐԱԾ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ
ԵՐԿՐՈՐԴ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻ ԵՎ
ԹԳՆԱԺՈՒՄԻ ԸՆԹԱՑՅՈՒՄ
(1975 - 1991թթ.)**

ՄԵԿԵՆԱԱՍՈՒԹՅԱՄՐ «ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԵ
ԶԵՐԵԶՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ», (ԱՄՆ)



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

AGHAVNI ALEKSANDER HARUTYUNYAN

USA POLICY DURING THE SECOND CIVIL WAR
AND CRISES OF LEBANON
(1975-1991)

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY "ARMEN AND
BERSABE JEREJIAN FOUNDATION", Inc. (USA)

YEREVAN 2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՅՑԱՆ ԱՊԱՎՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ԱՄՆ-Ի ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ
ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ
ճԳՆԱԺԱԽԻ ԸՆԹԱՑՅՈՒՄ
(1975-1991թթ.)

A 93837
II



ԵՐԵՎԱՆ
Հեղինակային իրատարակություն
2008

ՀՏԴ 327: 94/99
ԳՄԴ 66.4 + 63.3
Հ 422

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագիր՝ Ռ. Կ. Կարապետյան, պ. գ. թ.

Հարությունյան Աղավնի Ալեքսանդրի

- Հ 422 ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում (1975-1991թ.), -Եր.: Հեղինակային հրատարակություն, 2008 թ.- 249 էջ:

Աշխատության քննարկման առարկան 1975-76թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի և մինչև 1991թթ. երկարածված սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամի նկատմամբ ԱՄՆ-ի գրաված դիրքորոշումն ու վարած քաղաքականությունն է: Աշխատանքում նորովի և լուսաբանվում ԱՄՆ-ի նախագահներ Ջերալդ Ֆորդի, Չիմմի Կարտերի, Ռոնալդ Ռեյգանի և Ջորջ Բուշի վարչակազմերի ներձավորարևելյան և այդ համատեքստում լիրանային քաղաքականությունը: Հետազոտվում են Լիբանանի քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում երկրի ներքին գործերին արտաքին միջամտությունների ու ազրեսիաների, ինչպես նաև հակամարտության ներքին ու արտաքին ուժերի միջև ԱՄՆ-ի միջնորդական առաքելության, ավելի ուշ ԱՄՆ-ի ռազմաքաղաքական միջամտության և տարածաշրջանային գարզացումների հետ կապված մի շարք հիմնախնդիրներ:

Աշխատանքը նախատեսված է արևելագետների, միջազգայնագետների, դիվանագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ԳՄԴ 66.4 + 63.3

ISBN 978-9939-53-229-5

© Ա.Ա. Հարությունյան, 2008թ.

Նվիրում եմ ընտանիքիս անդամներին՝ Արաքսիա,
Արսեն և Ալեքսանդր Հարությունյաններին

ԱՌԱՋԱԲԱՆ

1975-1991թ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի, առջալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումն ու վարած քաղաքականությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլ քաղաքական և գործնական նշանակություն: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ներլիբանանյան և տարածաշրջանային զարգացումներում ԱՄՆ-ի մասնակցությունն ու նրա ազդեցության ուսումնասիրությունն արդիական է ոչ միայն Լիբանանի այդ շրջանի պատմությունը, դրան հաջորդած տարիների զարգացումներն ու երկրի ներկա իրավիճակը ճիշտ հասկանալու, այլ տարածաշրջանային գործընթացներն ավելի համապարփակ ու խորը գնահատելու առումով:

Աշխատանքում ներկայացվում է Լիբանանի կրոնադավանական համակարգը, կրոնական համայնքները, դրանք ներկայացնող քաղաքական ուժերն ու կուսակցությունները, Լիբանանում ՊԱԿ-ի և նրա զինված խմբավորումների քաղաքական գործոն դառնալու հետևանքները: Ցույց է տրվում Լիբանանի առջակ-տնտեսական, քաղաքական, ազգային-կրոնական, ինչպես նաև միջարարական հակասություններով և արտաքին ուժերի ներգործությամբ պայմանագորված ճգնաժամի արդյունքում լիբանանյան հասարակության երկիրեկման ու ներքաղաքական ճգնաժամի սրման գործընթացները, ինչպես նաև դրանց վրա միջազգային, մասնավորապես ԱՄՆ-ի և տարածաշրջանային՝ մասնավորապես Սիրիայի վարած քաղաքականության ազդեցությունը: Քննության են ներքարկվում ուսումնասիրվող ժամանակահատվածում ԱՄՆ-ի չորս վարչակազմերի՝ Զերալդ Քորդի, Չիմմի Կարտերի, Ռոնալդ Ռեյգանի և Ջորջ Բուշի վարած մերձավորարևելյան և այդ համատերսում լիբանանյան քաղաքականության ուղղությամբ կրած վոփոխությունները, քացահայտվում դրանց պատճառահետևանքային կապն ու ազդեցությունը տարածաշրջանային և լիբանանյան զարգացումների վրա:

Գոյություն ունեցող սկզբնադրյուրների և այլ նյութերի հիման վրա հետագրուվում են «առար պատերազմի» ուսումնասիրվող ժամանակա- հատվածում համաշխարհային երկու քևեռների՝ Արևոտքի և Արևելքի միջև Մերձավոր Արևելքի, մասնավորապես Լիբանանի զբաղեցրած տեղը, ինչպես նաև արար-խրայելական հակամարտության և ուրդակի կամ անուղղակի կերպով ներպետական և միջազետական հակամարտությունների վարման նպատակով «պահուստային մարտադաշտի» վերածված Լիբանանի նկատմամբ գերտերությունների և տարածաշրջանի երկրների զբաղեցրած դիրքորոշումը։ Ըննարկվում են մերձավորարևելյան հակա- մարտության խաղաղ կարգավորման գործընթացում ԱՍՆ-ի միանձնյա տնօրինման և ԱՍ-ի օրակարգում Լիբանանին լուսանցքային դեր հատ- կացնելու արդյունքում Լիբանանի քաղաքական ճգնաժամի խորացման, այն գերտերությունների մերձավորարևելյան հովանավորյալների և ներ- համայնքային պայքարի օջախի վերածման հետևանքները։ Վերլուծութ- յան են ենթարկվում ԱՍ-ում ԱՍՆ-ի վարած խրայելամետ քաղաքակա- նության արդյունքում Վաշինգտոնի ուսպմաքաղաքական աջակցությու- նից օգտվող Թել-Ավիվի կողմից լիբանանյան երկու (1978 և 1982թ.) ազ- րեսիաների և Լիբանանից ՊԱԿ-ի ուսպմաքաղաքական կառույցների դրու քերման ուղղությամբ ԱՍՆ-ի միջնորդական ջանքերի, ինչպես նաև երկրում արևմտամետ ու խրայելամետ կառավարության հաստատման գործընթացները։ Աշխատանքում փորձ է արվում քացահայտել 1982թ. երկրորդ կեսից Լիբանանի հիմնախնդիր կարգավորման ուղղությամբ ԱՍՆ-ի զբաղեցրած միակողմանի դիրքորոշման արդյունքում ԽԱՀԱ-ի տեղական դաշնակցի՝ Սիրիայի կողմից ԱՍՆ-ի հովանավորած արար- խրայելական համաձայնագրի ճախողումը, Լիբանանի արմատական շարժումների և հակասաբրեկշական պայքարում ԱՍՆ-ի անզրությունն ու այդ ուղղությամբ Վաշինգտոնի վարած երկակի ստանդարտների քա- ղաքանությունը։ Ցույց է տրվում ԱՍՆ-ի՝ խրայելալիբանանյան համա- գործակցության հովանավորից սիրիալիբանանյան համագործակցության հովանավորի փոխակերպման գործընթացը։

Աշխատանքը գրվել է հայերեն, արաբերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով առկա բազմարիվ աղյուրների և զիտական ուսումնասիրությունների հիման վրա, որի միջով են կազմում հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող քենային նվիրված արժեքավոր աշխատությունները, ինչպես նաև պաշտոնական հրատարակություննե-

րը, քաղաքական գործիչների հուշերը, հայտարարություններն ու պարբերականները, պաղեստինյան և լիբանանյան հիմնախմբին վերաբերող ՍԱԿ-ի պաշտոնական հրատարակումները և Միջազգային փաստաթղթերը, ԽՍՀՄ-ի կառավարության արարական երկրներին առնչվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, Մերձավոր Արևելյան քաղաքական գարգացմանը նվիրված բյուլետեններն ու ամսագրերը, լիբանանյան և արարական զանազան պարբերականները ևն: Այդ նյութերից շատերն առաջին անգամ են դրվել գիտական շրջանառության մեջ:

Աշխատության արդիականության հարցը կարևորվում է նաև մերձավորակնելյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կարևոր գործընկերներից մեկի՝ Լիբանանի Հանրապետության նորագոյն պատմության, ներքին և արտաքին քաղաքականության հանգուցային հիմնախմբների ուսումնասիրության տեսանկյունից:

Օգուվելով առիրից, կցանկանայի հատուկ շնորհակալական խոսք հեղի և իմ խորին երախտագիտությունն հայտնել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ բորբակից-անդամ Նիկոլայ Հովհաննիսյանին՝ ցուցաբերած գիտական աջակցության և զրքի հրատարակման գործում տնեցած իր անզնահատելի ներդրման համար: Շնորհակալ եմ ԵԱՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների թեկնածու՝ Ռուբեն Կարապետյանին՝ իմ աշխատանքը դեկավարելու համար: Շնորհակալություն եմ հայտնում նաև ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի իրանական երկրների քաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բայրուրյանին և նույն ինստիտուտի արարական երկրների քաժնի վարիչ՝ պատմական գիտությունների թեկնածու Շահեն Կարամանուկյանին՝ արժեքավոր դիտուրիյունների և խորհուրդների համար:

Անշափ երախտապարտ ու շնորհակալ եմ ծնողներին ու եղբոր՝ աշխատանքի ընթացքում ցուցաբերած անսահման աջակցության, քաջակերանքի ու հոգատարության համար:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում «Արմեն և Բերսարե Շերեճեան» Հիմնադրամի նախագահ Էդվարդ Շերեճեանին՝ սույն զրքի հրատարակության ծախսերը հոգալու համար:

ԼԻԲԱՆԱՆԻ 1975Թ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի
ԴԵՐՁՈՐՈՇՈՒՄԸ ՆՐԱ ՍԿԶԲՆԱԿԱՄ ՓՈՒՌՈՒՄ

1. ԱՄՆ-Ի ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(1945-1970-ԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

19-րդ դարի վերջին ու 20-րդ դարասկզբին Մերձավոր Արևելքն (հետայսու՝ ՍՍ) ԱՄՆ-ի համար առևտրային ու քաղաքական տեսանկյունից մեծ հետաքրքրություն էր ներկայացնում: ՍՍ-ում ամերիկյան ներկայությունը կապված էր ավելի շուտ աստվածաշնչյան հայրենիքում կրոնական առաքելությունների գործունեության և Պաղստիճում հրեական օջախ հիմնելու նպատակով ամերիկյան հրեաների կազմակերպած գաղթի հետ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ԱՄՆ-ն արարական արևելքում հետապնդում էր ֆաշիստական երկրների կողմից տարածաշրջանի զավթումը կանխարգելելու¹, արարական զաղութներում Ֆրանսիայի և Անգլիայի ազդեցությունը կասեցնելու, անգլ-ֆրանսիական դիրքերի բոլոցման հաշվին արարական արևելքում ամերիկյան քաղաքական և տնտեսական դիրքերն ամրապնդելու նպատակ²:

1945թ. երկրորդ կեսից մինչև 1990-ականների սկիզբն ընկած ժամանակահատվածը նշանավորվում է համաշխարհային տիրապետության համար ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև մղվող պայքարով², որի արդյունքում միջազգային հարաբերություններում ծևափորվեց ուազմաքաղաքական նոր իրողություն՝ «սառը պատերազմ»: Այս շրջանում

Այս հարցում ԱՄՆ-ի նպատակների արտաքինապես համընկնում էին Անգլիայի և Ֆրանսիայի հետ:

Օգանեսյան Հ.Օ., Политика империалистических держав на Арабском Востоке в годы Второй мировой войны (1935-1945 гг.), Ереван, 1980, стр. 261-262.

² Зигнегев Бжезинский, Великая шахматная доска, М., 1998, стр. 5.

Վաշինգտոնի մերձավորարևելյան քաղաքականության մեջ կարևորություն ներկայացնող նավային գործոնին գուգահեռ ուրվագծեցին «կոմունիզմի զապնան», արարական աշխարհը բացառապես «Արևելք-Արևմուտք» պայքարի համատեքստում դիտարկելու, Խորայիլի պետության աջակցություն ցուցաբերելու և արարական ազգայնականության ու արմատականության աճի հետ կապված հիմնախնդիրները: Վաշինգտոնը ՍՍ-ը դիտում էր իրեւ տարածաշրջանային հականարտությունների և ճգնաժամների առավել վտանգավոր օջախ, որոնք ի վիճակի էին համաշխարհային ծավալների ճգնաժամների վերածել՝ ԽՍՀՄ-ԱՄՆ անխուսափելի առնակատման հետանկարով:

Այս ամենը նպաստեց, որպիսի ուազմավարական առումով Եվրոպան, Ասիան և Աֆրիկան ծովային և օդային հաղորդակցություններով միմյանց կապող ՍՍ-ի տարածաշրջանը, որը միաժամանակ սահմանակից էր ԽՍՀՄ-ին և Սոցիալիստական համերաշխության երկրներին, վերջիններիս դեմ ԱՄՆ-ի ուազմահանգրվանների վերածվի: Այդ իմաստով, ՍՍ-ում ամերիկյան ազդեցության ամենահուսալի հենարան շարունակում էր ծառայել ամերիկյան սիոնիզմի ազդեցիկ շրջանակների հետ սերտորեն կապված Խորայելը, որին Վաշինգտոնը լայն ուազմաքաղաքական և տնտեսական աջակցություն էր ցուցաբերում: Միևնույն ժամանակ, արարական արևելքը ևս՝ հատկապես նավային գործոնի հետ կապված, ԱՄՆ-ի արտաքին տնտեսական և քաղաքական կյանքում հատուկ տեղ գրադեցրեց՝ տասնամյակներ շարունակ մնալով ԱՄՆ-ի էներգահանգստիչության գարշապարը³:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության օրակարգում ՍՍ-ի տարածաշրջանին հատկացվող առաջնակարգ դերի մասին են խոսում ԱՄՆ-ի տարբեր վարչակազմների կողմից հոչակված դոկտրինաները, հոչակագրներն ու կղնկտիվ անվտանգության դաշինքները (1950թ.՝ «ԱՄՆ-Մեծ Բրիտանիա-Ֆրանսիա եռակողմ հոչակագիրը», 1947թ.՝ «Թրումենի դոկտրինան», 1957թ.՝ «Էյզենհաուերի դոկտրինան»),

³ Лушникова Л.И., Арабские нефтедобывающие страны и "новая" стратегия США (70-е годы), Характерные черты социально-политического развития Арабских стран в 1950-1970-е годы, Ереван, 1980, стр. 35.

* Այս մասին տես' Robert E. Osgood, Alliances and American Foreign Policy, Maryland, 1968. p. 96.

1979թ. «Կարտերի դրկտրինան», 1955թ. «Բաղդադի պակտը», 1982թ.՝ Ռեյգանի ծրագիրը, 1983թ.՝ «ԱՄՆ-Իսրայել ռազմավարական համաձայնագիրը» և այլն), ինչպես նաև մերժավորաբենյան երկարատև խաղաղության գործընթացում ԱՄՆ-ի միջնորդական քազմաքիվ առաջելություններն ու նրա հովանու ներքո կնքված մի ամբողջ շարք պայմանագրերը:

1956թ. Եգիպտոսի դեմ եռակողմ Անգլիա-Իսրայել-Ֆրանսիա, ազրեսիայի ճախողման և տարածաշրջանից Անգլիայի ու Ֆրանսիայի հեռացումից հետո, ՍՍ-ում ստեղծված քաղաքական վակուումը ԽՍՀՄ-ի կողմից «ցնելու» հնարավորության կանխարգելման նպատակով ԱՄՆ-ը 1957թ. հունվարին հանդես եկավ նոր՝ նախազահ Եյզենհաուերի հայտնի նախաձեռնությամբ, որը հայտնի դարձավ իրեւ «Եյզենհաուերի դրկտրինա»⁴: Վերջինս ԱՄՆ-ի ազգային շահերին և համաշխարհային խաղաղությանը ծառայելու նպատակով ՍՍ-ի ժողովուրդների անկախության և ամրողականության պահպանման ողությամբ տնտեսական և ռազմական օգնության փաթեթ էր: ԱՄՆ-ի նախազահին զինուժի կիրառման իրավունք էր Վերապահվում «միջազգային կոնունիզմի» վերահսկողության տակ գտնվող ցանկացած երկրի կողմից զինված ազրեսիայի դեմ՝ հօգուտ օգնություն հայցող ՍՍ-ի որևէ ազգի կամ ազգային խմբի: ԱՄՆ-ի կոնգրեսում «Եյզենհաուերի դրկտրինայի» վավերացումը նշանակում էր Վաշինգտոնի կողմից տարածաշրջանում Արևմտյան շահերի պաշտպանության պատասխանատվության ստանձնում: Հարկ է նշել, որ Լիբանանն արաբական երկրներից առաջինը 1957թ. մարտին միացավ «Եյզենհաուերի դրկտրինային», որի դիմաց Լիբանանին խոստացվել էր 10 մլն. դրամի ամերիկյան օգնություն: Նույն տարում ստորագրվեց Լիբանանին գենք ու զինանքերը տրամադրելու վերաբերյալ ամերիկալիրանանյան պայմանագիրը:

1958թ. տարածաշրջանային և ազգային ճգնաժամի առկայության պայմաններում Լիբանանի կառավարության խնդրանքով ամե-

⁴ История Дипломатии, Том V, Москва, 1974, стр. 562.

րիկյան գորքեր ափհանվեցին⁵: ԱՄՆ-ի ռազմական միջամտության իրական նպատակը ՍԱ-ի պետությունների միջև տեղական պայքունավունք հականարտությունների կանչումն ու Լիբանանի նախագահ Ջամիլ Շամունի իշխանության պահպանման միջոցով երկրում ու ընդիանրապես ՍԱ-ում սեփական տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդումն էր: Այն բնական վրդովմունք առաջացրեց լիբանանցիների, մասնավորապես երկրի ընդդիմության շրջանում, որի արդյունքում Լիբանանի ժողովուրդը հերքեց ինչպես «Բաղդադի պակտը», ամերիկյան «համատեղ պաշտպանության ծրագիրը», այնպես էլ «Եզնինառերի դոկտորինան»:

1960թ. ԱՄՆ-ի նախագահ Չոն Ջեննելին իր նախընտրական ընտրարշավի ընթացքում դատապարտեց նախորդ Վարչակազմին՝ արարական աշխարհին «քացառապես Արևելք-Արևմուտք պայքարի համատեքստում» դիտարկելու համար: Նախագահը հիմնականում հակված մնաց ՍԱ-ում հավասարակշռված քաղաքականության վարժանը, որը համեմատարար խաղաղ էր իր նախագահության երեք տարիների ընթացքում:

1960-ականների երկրորդ կեսին և 70-ականների սկզբներին Վաշինգտոնի հիմնական խաղաքարտերը դրվեցին Խորայելի ռազմական մերենայի օգտագործման վրա՝ առանց տարածաշրջանում ԱՄՆ-ի անմիջական ներգրավվածության, որն առավել վառ արտահայտվեց 1967թ. խորայելական ազրեսիայի ժամանակ:

Ավելի ուշ ԱՄՆ-ի ՍԱ-ի քաղաքականության առաջնահերթություն դարձավ տարածաշրջանում արևմտամետ պետությունների տարրորշումը և Խորայելին գուգահեռ այլ դաշնակիցների որոնումը: Դրանց առավել վառ օրինակ կարող են համարվել, 2-րդ աշխարհամարտից ի վեր, շահական Իրանը, իսկ 1970-ականների երկրորդ կե-

⁵ Այս բայի հիմքում ընկած էին Սուեզի ճճաժամի, «Բաղդադի պակտի», «Եզնինառերի դոկտորինայի» ենթակա գործընթացները և ընդհանրապես երկրի իշխանությունների վարած արևմտամետ քաղաքականությունն ու Լիբանանի նախագահի կողմէց վերընտրության նպատակով սահմանադրական խախոռնմերի փորձերը: Այս ժաման տեսն Հովհաննեսյան Ն., Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1938-1958թթ., Եր., 1967, էջ 229-234; Alain Gresh and Dominique Vidal, The Lebanese Civil War, An A-Z of the Middle East, London 1990, p. 117.

սից՝ Ծոցի արարական պահպանողական վարչակարգերն ու Եզիալ-տոսը:

ԱՄՆ-ի ՍՍ-ի քաղաքականության ձևավորման գործում կարևոր դեր խաղաց նաև 10-ամյակները շարտանակ Վաշինգտոնի կողմից ՍՍ-ի հետ կապված խնդիրները ոչ միայն իրքն իր արտաքին քաղաքական կամ տնտեսական, այլ իրքն ներքաղաքական կարևոր գործոն գնահատելու հաճախանքը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքական հայեցակարգում կարևորվեց տարածաշրջանային և միջազգային համագործակցության շրջանակներում «Pax Americana»-ի հաստատման անհրաժեշտությունը⁶: ԱՄՆ-ի ՍՍ-ի քաղաքականության առաջնահերթություն համարվեց տարածաշրջանի կայունության պահպանումը, ՍՍ-ում ԱՄՆ-ի կայուն գոյատևմանը սպառնացող սուր ճգնաժամերի կանխարգելումը, ԽՍՀՄ-ի ազգեցության սահմանափակումը: Վերջինս գործնականում արտահայտվեց ՍՍ-ում խորհրդային դիրքերի սահմանափակման և ԽՍՀՄ-ի հետ մերձավորաբեկյան առանձին երկրների հարաբերություններում խոշնդրությունը հարուցելու, իսկ հնարավորության դեպքում՝ այդ հարաբերություններն ամրողովվին խզելու Վաշինգտոնի ձգուումներում:

1973թ. հոկտեմբերյան պատերազմից հետո, ԱՄՆ-ը ճգնաւում էր Խորայելի շահերի վտանգությունը խուսափելու գնով հասմել ՍՍ-ի իրադրության կարգավորմանը և արարական աշխարհի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների բարելավմանը: Սակայն պատերազմի ծանր հետևանքները, Խորայելի հետ Եզիալտոսի սեպարատ՝ մասնակի պայմանագրի կնքման ուղեգիծը, արարական երկրների միջև այդ շրջանին բնորոշ տարաքնույթ հակասություններն ու 1975 թվից սկիզբ առած լիբանանյան ճգնաժամն առավել բարդացրին ԱՍ-ի իրադրությունը՝ ստեղծելով որակապես նոր իրադրություն: Տարածաշրջանային և տեղական հաճախանական հակամարտությունները, ճգնաժամային իրադրությունները, ինչպես նաև դրանցից շատերի համար սկզբնապատճառ համարվող արաբ-խորայելական հակամարտություն-

⁶ Сивачев Н.В., Языков Е.Ф., Новейшая История США, М., 1980, стр. 310.

նը ՍԱ-ը և Լիբանանը վերածեցին ուսկմական սպառնալիքի հարատև օջախի⁷:

ՀԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՈՆԱԴՎԱՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՄՐԳԸ

Լիբանանն իր ներկա աշխարհագրական սահմաններով քաղաքական քարտեզի վրա ի հայտ եկավ 1920թ. սեպտեմբերի 1-ին, երբ Առաջին աշխարհամարտից և Օսմանյան կայսրության անկումից հետո նրա կազմի մեջ մտնող արարական տարածքները բաժանվեցին Անգլիայի և Ֆրանսիայի միջև: 1920թ. ապրիլին Սան Ռեմոյում Ազգերի Լիգայի Խորհրդի համաժողովում Սիրիայի և Լիբանանի մանդատը տրվեց Ֆրանսիային: Լիբանանի ողջ իշխանությունը կենտրոնացվեց բացարձակ իշխանությամբ լիազորված ֆրանսիական գլխավոր հանձնակատարի ձեռքում, որի հրահանգով էլ հռչակվեց «Մեծ Լիբանանի» ստեղծումը⁸:

Ֆրանսիական մանդատի տակ գտնվող Լեռնալիբանանն իր 340.000 մարոնի բնակչությամբ ընդգրկում էր 1861թ. ստեղծված օսմանյան ինքնավար մութասափիքությունը⁹: Այն 1920թ. ֆրանսիացիների նախաձեռնությամբ եռապատկվեց՝ մուտքամբ մեծամասնությամբ Բեյրութ, Տրիպոլի (հյուսիսում), Սիրոն (հարավում) քաղաքների, գերազանցապես շիա բնակչությամբ հարավային Լիբանանի շրջանների,

⁷ Современные Соединенные Штаты Америки, Энциклопедический справочник, Москва, 1988, стр. 306.

⁸ Հովհաննիսյան Ն., Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982թթ.), Եր., 1982, էջ 3-4:

⁹ Լեռնալիբանանը, բացառությամբ Բերայի, Աքքարի, Հարավային Լիբանանի, Տրիպոլի, Բեյրութի և Սիրոնի, դառնում էր ինքնավար մութասափիքություն՝ քրիստոնյանահանգապեսի գլխավորությամբ: Այս մասին տես՝ Հովհաննիսյան Ն., Արարական երկրների պատմություն, Օսմանյան տիրապետության շրջան (1516-1918թ.), հ. II, Երևան, 2004, էջ 323-330:

մուսուլման և ուղղափառ հույն քնակշությամբ Բեքաա հարթավայրի հաշվին¹⁰:

1932թ. մարդահամարի տվյալներով՝ Լիբանանը գրեթե բաժանված էր քրիստոնյաների և մուսուլմանների միջև, որոնք ենթարածանվում էին 15 կրոնահամայնքային խմբերի: Սեծագույնը քրիստոնյամարոնիներն էին¹¹, այնուհետև՝ սունի-մուսուլմանները, շիաներն¹² ու դրուզները¹³: Լիբանանի առավել փոքր համայնքներ էին հույն կաթոլիկները, հույն ուղղափառները, բողոքականները, լատինները, հայ կաթոլիկները, հայ ուղղափառները, սիրիացի կաթոլիկները, սիրիացի ուղղափառները և այլն¹⁴:

Այսպիսով, 1943թ. սեպտեմբերի 21-ին բացվեց Լիբանանի խորհրդարանի առաջին նըստաշրջանը, որի ընթացքում ամենաազեցիկ քրիստոնյա-մարոնի համայնքի ղեկավար Բիշարա ալ-Խուրին ընտրվեց Լիբանանի Հանրապետության նախագահի պաշտոնում, իսկ սունի համայնքի ամենաազեցիկ ղեմբերից մեկը՝ Ուխադ Սողիը նշանակվեց երկրի վարչապետի պաշտոնում¹⁵: 1943թ. նոյեմբերի 8-ին Լիբանանի խորհրդարանը վերացրեց ֆրանսիական մանդատը՝ Լիբանանի անկախությանը տալով իրավական ուժ: Այդ օրը Լիբանանի պատմության մեջ մտավ իրեն ֆրանսիական մանդատի վերացման և

¹⁰ Don Peretz, The Middle East Today, The Republic of Lebanon, Praeger, New York, 1988, p. 361.

¹¹ Մարոնիների մասին մանրամասն տե՛ս S.A. Morrison, The Political, Social & Religious Problems, Middle East Survey, London, 1954, p. 198; Журавский А., К вопросу об этноконфессиональных проблемах Арабского Востока, Специальный бюллетень, 5(218), М., 1981, стр. 83.

¹² Սունի-մուսուլմանների և շիաների մասին տե՛ս Հովհաննիսյան Ն.Հ., Արարական երկրների պատմություն, Արարակ 7-րդ դարից մինչև 1516թ., հ. I, Երևան, 2003, էջ 37-40:

¹³ Դրուզների մասին տե՛ս Մեցրևեն Մ.Г., Община друзов (этно-религиозный генезис), Проблемы современной советской арабистики, Ереван, 1985, Вып. I., Современные политические и социально-экономические проблемы арабских стран, Ереван 1989, стр. 104-109.

¹⁴ Zuwiyya Jilal, The Parliamentary Election of Lebanon 1968, State University of N.Y. at Binghamton, 1972, p. 3-4.

¹⁵ Оганесян Н., Восстание в Ливане в ноябре 1943г. и его историческое значение, Арабский Восток и Magrib, Москва, 1977, стр. 214.

Լիրանանի անկախության ու ինքնիշխանության հաստատման օր¹⁶: 1946թ. դեկտեմբերի 31-ին ավարտվեց օտարերկրյա բոլոր գործերի դուրս քերումը Լիրանանից:

Լիրանանի քաղաքական համակարգի ամենաառանցքային բնորոշիչը տարրեր կրոնական խմբերի միջև կոնֆեսիոնալ՝ կրոնադավանական հավասարակշռության պահպանումն էր, որը փաստացի կերպով ամրագրվեց 1943թ. նոյեմբերի 9-ին Լիրանանի հանրապետության սահմանադրության 95-րդ հոդվածով: «Երջինիս համաձայն՝ երկրի պետական կառուցվածքի հիմքում դրվեց կրոնադավանական սկզբունքը»:

Անկախությունից հետո մուսուլման և քրիստոնյա դեկավարության՝ Լիրանանի առաջին նախագահ Քիշարա ալ-Խուրիի և երկրի առաջին վարչապետ Ռիադ ալ-Սուկի միջև չգրված մի շարք պայմանավորվածություններ ձեռք բերվեցին: 1943թ. դեկտեմբերին նշյալ կոդմերը հոչակեցին «զենտրալնական համաձայնագիրը», որն առունեան հայտնի դարձավ իրեւ «Ազգային Դաշինք»՝ «ալ-Միթաք ալ-Վատանի»: «Դաշինքով սահմանվեցին Լիրանանի պետական կառուցվածքի, ներքին ու արտաքին քաղաքականության գյուղակուր սկզբունքները, որոնց համաձայն քրիստոնյաները պետք է խուսափեին Ֆրանսիայի ազդեցությունից՝ ճանաչելով Լիրանանի արարական բնույթը և ընդունելով նրա տեղին ու դերն արարական աշխարհում: Մուսուլմաններն էլ իրենց հերթին պետք է ճանաչեին Լիրանանին՝ իրեւ լիակատար անկախի և ինքնիշխան պետություն: Ընդ որում՝ Լիրանանը պարտավոր էր չհակվել արարական երկրների այս կամ այն խմբավորման կամ դաշինքի, մի երկրին պաշտպանել մյուսի դեմ: Միաժամանակ, հաշվի առնելով երկրի առանձնահատուկ բնույթը, այն շպետք է խօսր Արևատուքի հետ կրոնական ու հոգևոր կապերը¹⁷: Փաստորեն, Լիրանանը համարելով արարական երկիր, դաշինքը միաժամանակ ընդգծում էր նրա հատուկ քրիստոնեական բնույթը: Արտաքին քաղաքա-

¹⁶ Հովհաննիսյան Ն., Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թ.), հ. III, Երևան, 2006, էջ 592:

¹⁷ Jilal Zuwayya, նշվ. աշխ., էջ 5:

կանոթյան հարցում երկու համայնքները համաձայնվում էին որպես-
թել պրական չեղործության քաղաքականություն:

Երկրի պետական կառուցվածքի հիմքում դրված կրոնադավա-
նական սկզբունքի համաձայն՝ հանրապետության նախագահ կարող
էր լինել միայն քրիստոնյա-մարոնի համայնքի, վարչապետը՝ սուննի-
մուսուլման համայնքի և խորհրդարանի նախագահը՝ շիա-մուսուլման
համայնքի ներկայացուցիչ: Երկրի դեկավար քարձրագույն պաշտոն-
ները, ինչպես նաև պետական, ռազմական, դատական և այլ մարմին-
ների միջին ու ստորին օղակների պաշտոնները կարող էին զբաղեցնել
միայն քրիստոնյա-մարոնի համայնքի ներկայացուցիչներ: Խորհրդ-
դարանում մուսուլման յուրաքանչյուր 5 պատգամավորի դիմաց 6
քրիստոնյա պատգամավորների ընտրությամբ երկրի քարձրագույն
օրենսդիր մարմնում մշտապես ապահովվում էր քրիստոնյա պատգա-
մավորների, իսկ քրիստոնյաների մեջ՝ մարոնիների գերակշռությունը¹⁸:
Հարկ է նշել, որ երկրում հաստատված կառավարման նախագահա-
կան ձևն ու նախագահին չափազանց մեծ լիազորություններով օժողո-
ւում նպաստում էր երկրում քրիստոնյա-մարոնի համայնքի դիկտատոր-
ուայի առեղծմանը:

Փաստենք, որ թեև կրոնահամայնքային համակարգի հաստա-
տումը սկզբնական շրջանում Լիբանանի նախագահ կոնֆեսիոնալ պետության համար դիտվում էր որպես փոխզիջումային քայլ, այնուհանդեռ, այն իր մեջ կրում էր հետագա հնարավոր հակամարտությունների ու դժգոհությունների նախադրյալներ՝ հանդիսանալով պետականության քույզան զիսավոր պատճառներից մեկը: Այն թեևացնում էր հասա-
րակությունը՝ խոշընդոտելով քաղաքացիական սկզբունքի արմատա-
վորմանն ու ամրապնդմանը և համայնքներից վեր կանգնած լիբանան-
յան հասարակության կազմավորմանը¹⁹:

¹⁸ Հովհաննիսյան Ն., «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982թ.), Եր., 1982, էջ 7-9: Այս մասին տես՝ Mughayzil, Joseph, Lubnan wa al-Qawmi'yah al-Arabiyyah, (Lebanon and the Arab Nationalism). Beirut, 1959, pp. 81-122; Al-Naqash, Zaki, Lubnan Bayna al-Haqiqah wa-al-Zilal (Lebanon Between the Truth and Shadows), Beirut, 1966, pp. 57-64.

¹⁹ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 9-10:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում քրիտանացիների օգնությամբ և ԱՄՆ-ի համաձայնությամբ 1943թ. Լիբանանում քրիստոնյա մարտնիների և սուննի մուսուլմանների միջև հաստատված «Ազգային Դաշինք» պահպանվեց անփոփոխ մինչև 1960-ականները՝ Լիբան պահեստինցիների ներկուազը²⁰:

3. ԼԻԲԱՆԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՆՐԱ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏճԱՐՆԵՐԸ: ՊԱՂԵՍՏԻՆԻ ԳՈՐԾՈՒՅ


1970-ականների սկզբին լիբանանյան սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը հասարակության ներքին հակասությունների խորացման և արտաքին գործոնների ազդեցության տակ դրանց սրման հետևանք էր²¹: Կրոնական, էքնիկական և սոցիալ-տնտեսական տարրեր խմբավորումներ ներկայացնող քաղաքական առաջնորդների միջև դաժան մրցակցության պայմաններում անհնարին էր դառնում երկրում ուժեղ կառավարության ստեղծումը²²: Խնդիրն այն է, որ Լիբանանի պետական ապարատում պահպանվում էր 1943թ. «Ազգային դաշինքով» նախատեսվող 5 մուսուլման և 6 քրիստոնյա անդամների հարաբերակցությունը: Խորհրդարանի 99 պատգամավորական տեղերից 30-ը պատկանում էր մարոնիներին, 20-ը՝ սուննիներին, 19-ը՝ շիաներին, 11-ը՝ ուղղափառներին, 6-ը՝ դրուզներին, 6-ը՝ կաթոլիկներին, 4-ը՝ հայ-ուղղափառներին, 3-ը՝ կրոնական մյուս համայնքներին:

²⁰ Կարապետյան Ռ., Արարական երկրների նոր և նորագոյն պատմություն, Երևան, 2003, էջ 206-207:

²¹ Мирский Г., Ливан в 80-ые годы, Москва, 1987, стр. 4.

²² «New York Times», 20.4.1975.

1921-1956թ. Լիբանամի շիա բնակչությունը 100.000-ից հասավ 250.000-ից կազմելով երկրի ընդհանուր բնակչության 19%-ը: 1956-1975թթ. շիա բնակչությունը եռապատկվեց՝ 250.000-ից հասնելով 750.000-ի և կազմելով երկրի բնակչության 30%-ը: 1990-ականներին բնակչության 1/3-ից ավելին (շիաները 1 մլն. էին, մինչդեռ երկրի ողջ բնակչությունը՝ 2,5-3 մլն.) շիաներ էին, որը քրիստոնյաների արտազարքի պայմաններում խիստ փոխում էր Լիբանամի մարդագրական պատկերը: Շիաները երկրի հարավում կազմում էին 60%, Լեռնալիբանանում ու Քեյրուքի հարավային արևմարդաներում՝ 25%, Թերաայի հովտում՝ 10%: Այս մասին տես' Հարությունյան Լ, Լիբանանում շիական գործոնի ուժնացման հարցի շուրջ (1970-1980-ական թվականներ), Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովորդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 133:



Մինչդեռ պաշտոնական տվյալների համաձայն՝ 1970-ականներին քրիստոնյաները կազմում էին Երևանի բնակչության 40-49%-ը, որոնցից մարդնիները՝ 23%-ը, իսկ բնակչության 51-60%-ը մուսումաններ էին, որոնցից առաջին տեղում էին շիաները՝ 24-27%, այնուհետև սուննիները՝ 21-26%²³: Փաստորեն, Լիրանանի բնակչությունն անկախությունից ի վեր կրկնապատկվել էր՝ վերածվերով Երևագնոյի ամենախիտ բնակչություն ունեցող Երկրներից մեկի: Երկրում տեղ գտած ժողովրդագրական նշյալ փոփոխություններով էր պայմանավորված գերակշռություն կազմող մուսուլմանների՝ մասնավորապես շիաների կողմից ստատուս քվոյի (պետական կառույցի՝ կրոնադավանական համակարգի) մերժումը:

Հաջորդ հիմնախնդիրը կապված էր 1970-ականներին, մասնավորապես 1973թ. հոկտեմբերյան պատերազմից հետո, Երկրում սկիզբ առած սոցիալ-տնտեսական ճգնաժամի (Կյանքի բանկացումն ու գործազրկության զգալի աճը) հետ, որը ծանր հարված հասցրեց մինչ այդ Երևանի կայունության գլխավոր երաշխիք համարվող լիբանանյան հասարակության միջին խավերին: Նման պայմաններում աշխատավորության և քաղաքային մասր բուրժուազիայի շրջանում մեծ կշիռ ծնորք բերեցին լիբանանյան ծախսերը²⁴:

«Ազգային դաշինքի» շնորհիվ Երևանի կառավարման և իշխանական համակարգում տիրապեսող դիրքեր գրադեմոլ և Արևամտությի հետ կրոնական ու գործարար դարավոր կապեր ունեցող մարոնի համայնքին բաժին էր ընկնում Երևանի ազգային հարատության մեծ մասը²⁵: Լիրանանի սպասարկման ու ֆինանսարանակային ոլորտում գերիշխում էր արևմտյան կապիտալը, որն իր հսկողության տակ էր պա-

²³ Мирский Г., նշվ. աշխ., էջ 6-7:

²⁴ Самир Франжье, Нарушение национального пакта, ТАСС. Атлас 29 (941), 18.7.75, стр. 29.

²⁵ О положение в Ливане, ТАСС. Атлас N 38 (950), 19.9.75, стр. 37. Թեյրութի առևտրաֆինանսական բուրժուազիան հիմնականում քրիստոնեական էր: Լիրանանի տնտեսության մեջ տիրապեսող էր առևտուրը, կոմերցիան և գրոսաշրջիկությունը: Լիրանանում առևտուրը գրադեմոլ բնակչության 13%-ը տալիս էր ՆՀԱ-ի մոտ 50%-ը, զյուղատնտեսությամբ գրադեմոլ բնակչության 50%-ը ՆՀԱ-ի 13%-ը, իսկ արդյունաբերությունն ապահովում էր ազգային եկամտի ընդամենը 15%-ը:

հում երկրի տնտեսությունը²⁶: Որպես օրինակ՝ Քեյրութում գործում էին ամերիկյան խոշորագույն բանկերի առանձին բաժիններ՝ «Նելյշընը սիթի բէնկ»-ը, «Ամերօվկիանոսյան երկների ֆինանսավորման ամերիկյան ընկերությանը» ներկայացնող «Չեզ Մանհեթըն բէնկ»-ը, ամերիկյան երկու բանկերի՝ «Նելյշընը Թրասթ էնդ Սեյվինգս Ասութեյշն» և «Բանկ օֆ Ամերիկա Ինտերնայշընը օֆ Նյու-Յորք Սիթի»-ի շահերը ներկայացնող «Բանկ օֆ Ամերիկա»-ը²⁷:

Մինչեւ երկրի մուսուլմանական վերնախավը, հատկապես Լիբանանի մեծագույն շիա համայնքի հարուստ՝ ներկայացուցիչները, որոնք իրենց տնտեսական դիրքերով չեն զիջում քրիստոնյաներին, մնում էին «երկրորդական դիրքերում»²⁸:

1950-60-ականներից Լիբանանի տնտեսության մեջ նավային պետություններից ստացվող դրամական ներփակի պայմաններում քաղաքաբնակ և առևտուկ գրադարձող քրիստոնյա բնակչությունը, ի տարրերություն արվածաբնակ և հիմնականում մուսուլման բնակչության, զգայի աճ էր ապրում²⁹: Դրա շնորհիվ Քեյրութն աստիճանաբար բաժանվում էր մեծամասամբ քրիստոնյաներով բնակեցված համեմատաբար բարեկեցիկ արևելյան, և մուսուլմաններով բնակեցված առավել աղքատ՝ արևմտյան հատվածների³⁰:

Ստեղծված պայմաններում Լիբանանի մուսուլմանները՝ երկրում տեղ գտած ժողովրազրական վերոնշյալ փոփոխությունների, ընդհանուր տնտեսական ճգնաժամի, հասարակության քրիստոնյա և մուսուլման ունենոր խավերի միջև սոցիալ-տնտեսական հակասությունների սրման պայմաններում հանդիս եկան 1943թ. «Ազգային Դաշինք»-ով սահմանված ստատուս քվոյի մերժմամբ: Նրանց դժգոհությունն ընդունեց տարրեր քաղաքական հոսանքների՝ կուսակցությունների ու

²⁶ Զալբյան Ն., Լիբանանի հայ համայնքը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում (1970-ական թթ.), Երևան, 2002, էջ 24:

²⁷ Позиция Американского империализма в Ливане, Арабский Восток, N 12, Специальный бюллетень, Экз. N 28, М., 1960, стр. 18.

²⁸ Шуйская Н., Ливан, Сторонники и противники гражданского примирения (осень 1985-1986г.), Восток и Современность, Научно-информационный бюллетень, 1(43), ЭКЗ. N 000252, М., 1978, стр. 45.

²⁹ William Polk, The Arab World Today, Cambridge, 1991, p. 428.

³⁰ William L.Cleveland, A History of The Modern Middle East, Boulder, 1994, p. 99.

իմրակցությունների կողմից երկրի կառավարման գործերում մուսուլման համայնքների առավել լայն մասնակցության պահանջի, ինչպես նաև լիբանանյան ծախսերին այդ պայքարում ընդգրկելու և անուղղակի սատարելու տեսք³¹:

Փաստորեն, լիբանանյան ծախսերը՝ պայքարելով երկրում սոցիալ-տնտեսական արմատական վերակազմավորումների օգտին, որն անհնարին էր առանց կրոնադավանական համակարգի քարեփիշումների, հանդես եկան հեղափոխականորեն տրամադրված մուսուլման բուրժուազիայի մարտավարական դաշնակցի դերում³²: Վերջիններս պահանջում էին փոփոխություններ մտցնել Լիբանանի պետական կառուցվածքում՝ մերժելով իր դարն ապրած ֆեոդալական-կլանային, կլանահամայնքային համակարգը, և անցնել բուրժուական պառամենտարիզմի սովորական ձևերի կիրառմանը³³: Լիբանանի խորհրդարանում կայուն մեծամասնության բացակայության պայմաններում նախագահի, վարչապետի ու խորհրդարանի միջև հարաբերությունները գնալով լարված բնույթ էին ստանում³⁴:

Հարկ է նկատել, որ ճգնաժամի խորացման գործում իր դերն ունեցավ նաև արաբիսրայիլակական հիմնախնդրի կարգավորմանը մասնավոր լուծումների միջոցով հասնելու ԱՍՆ-ի (ի դեմս ԱՍՆ-ի պետքարտուղար Հենրի Քիսինջերի) քաղաքականությունը, որի կենսագործման ճանապարհին գլխավոր խոչընդոտ էր դիտվում Լիբանանում ապաստանած «Պաղեստինի Դիմադրական շարժումը», ՊԴԸ-ը: Վերջինիս դեմ պայքարում ԱՍՆ-ը ստիպված էր գործ ունենալ նաև ՊԴԸ-ի դաշնակիցների՝ Լիբանանի ծախս-մուսուլմանական ուժերի հետ՝ ակամայից ներքաշվելով երկրի ներքաղաքական պայքարի խորին հորձանութը³⁵:

³¹ «Le Monde Diplomatique», Paris, 7.7.75.

³² Шүйская Н., նշվ. աշխ., էջ 45:

³³ «Հովհաննիսյան Ն., Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դրաշըզան (1918-2005թթ.), հ. III, Երևան, 2006, էջ 638:

³⁴ William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 99:

³⁵ Топалин А.Г., Характер и причины конфликта между правыми силами Ливана и палестинским движением сопротивления, Характерные черты социально-политического развития арабских стран, Еր., 1979, стр. 33.

Այսպիսով, 1970-ականների սկզբին ամուր պետականության քացակայության, միջհամայնքային հակասությունների սրման հետևանքով ազգային դաշինքի քոլացման արդյունքում սկիզբ առած ճգնաժամը բնեղացնում էր լիբանանյան հասարակությունը՝ ի վերջո քուլացնելով երկրի քաղաքական համակարգը ճիշտ այն ժամանակ, երբ երկիրը սկսած 1960-70-ականներից ստիպված էր քախվել քաղաքականապես ծայրահեղական, իսկ ռազմական տեսանկյունից լավ սպառագինված պաղեստինցիների հետ:

1948-49թթ. արար-իսրայելական պատերազմից ի վեր մինչև 1960-ականների կեսերը պաղեստինցիները Լիբանանի կյանքում քոյլ, լուսանցքային դերակատարություն ունեին³⁶: Սակայն 1967թ. արար-իսրայելական 6-օրյա պատերազմը փոխեց իրերի փաստացի դրույթունը, երբ Իսրայելի գրաված տարածքներից վտարված պաղեստինցի փախստականներն ու հատկապես **ՊԴԸ-ի** ջոկատներն³⁷ ապատանեցին Լիբանանում՝ երկիրը վերածելով արար-իսրայելական հակամարտության էալիկենտրոնի:

Փաստենք, որ Լիբանանի իշխանությունները, եներլով Լիբանանի քրիստոնյաների և մուսուլմանների միջև 1943թ. հաստատված փիլտրում հավասարակշռությունից, որպես օրենք հրաժարվում էին 1948թ-ից ի վեր երկրում ապաստանող պաղեստինցի փախստականների մեծ մասին քաղաքացիություն շնորհել³⁸: Մինչդեռ պաղեստինցիների ներկայությունը պահպանվում էր՝ քաղաքական կյանքում ապահովելով մուսուլման ֆեոդալների լայն ներկայացուցչությունն ու երկրի դեկավարման գործում մուսուլման քուրժուազիայի առավել լայն մասնակցությունը: Դեռ ավելին, լիբանանյան քաղաքական համակարգում ի հայտ եկան ստատուս քվոն մերժող ուժեր՝, որոնք **ՊԴԸ-ի** սատարման կարգախոսի ներքո 1968 թվից միավորվեցին՝ կառավարության դեմ պայքարում կազմելով լիբանանյան ծախերի հիմնական միջուկը:

³⁶ William Polk, նշվ. աշխ., էջ 428:

³⁷ Don Peretz, նշվ. աշխ., էջ 383:

³⁸ Միրսկի Գ., նշվ. աշխ., էջ 4:

* Դրանք երեք կուսակցություններ էին՝ Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը, Կոմունիստական Գործողության կազմակերպությունը և Առաջաղինական Սոցիալիստական կուսակցությունը:

Իսկ քաղաքական համակարգում ստատուս քվոյի պահպանման կողմնակիցները՝ լիբանանյան աջերը, 1969թ. պայքար ծավալեցին ՊԴ-ի դեմ՝³⁹, որի արդյունքում, ի հեճուկս արար-խրայելական հակամարտության նկատմամբ Լիբանանի նախապես որդեգրած չեզոր քաղաքականությանը, պաղեստին-խրայելական հակամարտությունը վերածվեց պաղեստին-լիբանանյան հակամարտության:

Նույն թվի հոկտեմբերին լիբանանյան բանակը երկրում գտնվող պաղեստինյան ռազմահանգրվանները Սիրիայի մատակարարման աղբյուրներից կորելու հրահանգ ստացավ⁴⁰: Լիբանանյան իշխանությունների և ՊԴ-ի միջև ծագած հակամարտության կարգավորման նպատակով երկու կողմերը՝ հանձինս ՊԱԿ-ի առաջնորդ Յասեր Արաֆաթի և Լիբանանի բանակի հրամանատար գեներալ Բուսրանիի, 1969թ. դիմեցին Կահիրեի աջակցությանը⁴¹: Եզիդոսի նախազահ Արդ ալ-Նասերի հովանու ներքո, 1969թ. նոյեմբերի 8-ին Կահիրեում հակամարտող կողմերի միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ պայմանագիր՝ կնքվեց՝ օրինականացնելով պաղեստինյան ներկայությունը Լիբանանի հարավում⁴²:

Փաստորեն, Պաղեստինի Ազատազրության կազմակերպությունները⁴³ (ՊԱԿ-) իր արտաքին մասնավորապես Սիրիայի հետ ունեցած

³⁹ Самир Франжье, біз. աշխ., էջ 28:

⁴⁰ Дмитриев Е., Палестинский узел, К вопросу об урегулировании палестинской проблемы, Москва, 1978, стр. 115.

⁴¹ Mahmoud Riad, The Struggle for Peace In the Middle East, London, Melbourne, N.Y., 1981, p. 158-59.

* Այս մասին մամրամասն տե՛ս Kamal Salibi, Crossroads to Civil War, Lebanon 1958-1976, N.Y., 1976, pp. 42-43.

⁴² Alain Gresh and Dominique Vidal, նշ. աշխ., էջ 115:

⁴³ ՊԱԿ-ը կազմավորվել է 1964թ.: ՊԱԿ-ն ուներ Արարական Լիգայի կողմից ճանաչված իր սեփական՝ «Պաղեստինի Ազատազրության Բանակը» (ՊԱԲ): ՊԱԿ-ի գլխավոր կառույցը և միջարարական ու միջազգային գործերում նրա հիմնական քաղաքական ուղղակիցն որոշողը 1950թ. ստեղծված ՖԱԹՀ-ն էր (ՖԱԹՀ-ը՝ «Պաղեստինի ազատազրման շարժում» անվան արարեն հակադարձ հապավումն է), որն ուներ իր սեփական զաղունի միլիցիան՝ «Ալ-Ասիֆը» («Փորորիկ»): Այս մասին տե՛ս Հ. Կասум-զադե, Вопросы национального освобождения в программных документах "Фатха", Восток и Современность, Научно-информационный бюллетень, 4 (42) ЭКЗ. N 00255, М., 1986, стр. 84. Առավել ուսումնական պաղեստինյան կազմակերպություններից էին ՊԱԺ-ը (Պաղեստինի Ազատազրման ժողովրդական նակատ), ՊԱԺ-Դ-ն (Պաղեստինի Ազատազրական ժողովրդական նակատը):

կապերով Լիբանանում ծեռք էր քերում «պետություն պետության մեջ» կարգավիճակ՝ Լիբանանում Դամասկոսի դերակատարության ակտիվացման հիմք ծառայելով⁴⁴: Թերևս այդ էր պատճառը, որ լիբանանյան քրիստոնյա ազերը չէին քարցնում Կահիրեի համաձայնագրի նկատմամբ իրենց դժգոհությունը՝ գտնելով, որ այն իրենց պարտադրված է հանգամանքների քերումով: Այնուհանդերձ, մարտավարական նկատառումներից ելնելով, նրանք ստիպված էին հավանություն տալ համաձայնագրին, քանզի այն կառավարական ճգնաժամի հաղթահարման հնարավորություն էր ընձեռում⁴⁵:

Ավելի ուշ, 1970թ. Հորդանանում ՊԱԿ-ի կողմից երկրի իշխանությունը գրավելու փորձները կանխելու նպատակով Հորդանանի քաղաքոր Հուսեյնը (սեպտեմբերին) գործի դրեց իր արինատավարժ «Արարական Լեգիոնը»⁴⁶: Հորդանանից վտարվելով, քաղաքականապես ակտիվ քաղում պաղեստինցիներ, նրանց զիսավոր ռազմական կառույցներն ու ղեկավար մարմինները Սիրիայի օժանդակությանը տեղափոխվեցին և հաստատվեցին Լիբանանում⁴⁷: Այժմամ երկրի պահեստինցի բնակչության թիվը հասակ 300.000-ի կազմելով երկրի բնակչության 10-15%-ը: Փաստորեն, ստեղծվեց փոքրամասնություն կազմող ևս մեկ համայնք, որի զինված հատվածը գործում էր պետությունից անկախ: Գաղթյաներից 10.000-ն անկանոն քանակի մարտունակ զինվորներ էին, որոնց թիվը մորիլիզացվելու դեպքում կարող էր հասնել 30.000-ի⁴⁸: Հորդանանից վտարվելուց և Սիրիայում ճնշչիչ ու խիստ վերահսկողության տակ գտնվելուց հետո, պահեստինցի առաջ-

⁴⁴ Naomi Joy Weinberger, Syria-Forcign Relations-Lebanon, Lebanon-Forcign Relations-Syria, N.Y., 1986, p. 116.

⁴⁵ Новейшая история арабских стран Азии (1917-1985), М., 1988, стр. 126. Թու 1969թ. դիւտմբերին Ռաշիդ Քարամեն ձևավորեց նոր կառավարություն, այնուամենայնիվ, Պ.Ն.С.-ի ներկայության խնդիրը վերածվեց կրոնադավանական խմբումների ելակետի:

⁴⁶ Steinatzky Shapolsky, The Media's War Against Israel, New York. Jerusalem. Tel Aviv, 1986, p. 234.

⁴⁷ Հովհաննիսյան Ն. Հ., Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թ.), հ. IV, Երևան, 2007, էջ 306-307:

⁴⁸ John Bulloch, Եղվ. աշխ., էջ 10: 1975թ. պահեստմանցիներն առավել քան 3 մլն. բնակչություն էին կազմում, որոնց գրեթե կեսը բնակվում էր նորայինում կամ նոր գրավյալ տարածքներում, 750.000-ը Հորդանանում, 400.000-ը՝ Լիբանանում և 200.000-ը՝ Սիրիայում:

նորդները Լիբանանը դիտում էին իրենց գործունեության և ապաստանան միակ հուսալի ու կենսական կարևորություն ներկայացնող կենտրոն: Այդ էր պատճառը, որ լիբանանյան ծախերի նկատմամբ քրիստոնյա-աջերի հաղթանակի կասեցման նպատակով պահստիճները պետք է օգնություն ցուցաբերեին ծախերին:

Փաստորեն, օգտվելով Լիբանանի ներքաղաքական պայքարում տարբեր դաշինքներին միանալու հնարավորությունից և ստեղծելով իրենց սեփական ուազուժը, պաղեստիճներն ամրագրեցին «պետություն պետության մեջ» իրենց կարգավիճակը: Լիբանանը վերածվեց ՊԱԿ-ի գործունեության գլխավոր հենակետի, իսկ հարավային Լիբանանը՝ ՖԱՇՀ-ի ռազմահանգրվանի: Պայքարի վերջնանպատակ հայտարարելով կորուսյալ հայրենիքի ազատազրումն ու այնտեղ վերադարձը՝ նրանք ազատազրական պատերազմ սանձահարեցին հսրայելի դեմ՝ երկիրը վերածելով իսրայելական հակահարվածների և հարձակումների թիրախի⁴⁹: Այս ամենը Լիբանանի գործերում արարական որոշ երկրների, մասնավորապես Սիրիայի ու Սաուդյան Արաբիայի ներգրավման պատճառ դարձավ, որոնք հովանավորում էին ՊԱԿ-ի հիմնական խմբավորումներին⁵⁰:

1970-ականներից պաղեստիճների գործունությունը պարտիզանական պայքարից մասսամբ վերածվեց մարդկանց առևանգումների ու մահափորձների, ինչպես նաև պաղեստիճների դրության ու նրանց պահանջների նկատմամբ միջազգային հանրության ուշադրության գրավման նպատակով ինքնարիոնների ու նավերի առևանգումների⁵¹:

4. ԼԻԲԱՆԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՀԱԿԱՍՄԱՐՏՈՂ ԴԱԾԻՆՔՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Այսպիսով, վերոնշյալ զարգացումների կարգավորման ուղղությամբ Լիբանանի իշխանությունների անզորության պայմաններում, լի-

⁴⁹ William Polk, նշվ. աշխ., էջ 428:

⁵⁰ Steimatzky Shapolsky, նշվ. աշխ., էջ 234:

⁵¹ Питер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга I, Москва, 2000, стр. 502.

բանանյան քաղաքական դաշտը պառակտվեց, իսկ Բեյրութը մարտադաշտի վերածվեց հակամարտող տարբեր խմբակցությունների միջև։ Լիբանանի ընդհանուր քաղաքական վայրի վերումներն ու անկայուն իրավիճակը, ներքաղաքական սուր պայքարը, պետական ինքնավարության և ինքնիշխանության դեմ ոտնձգությունները, սոցիալ-քաղաքական լարվածության դրսևումները, երկիրը 1975թ. ապրիլին մղեցին քաղաքացիական նոր պատերազմի⁵²։

1975թ. սկզբից աջ-քրիստոնեական «Քարաիր» կուսակցությունը ՊԴՀ-ի և լիբանանյան ծախերի դեմ ակտիվ ռազմարշավ սկսեց։ «Քարաիրի» նպատակը Խորայելի դեմ պաղեստինցիների գործողությունների կանխարգելումն էր, որոնք կարող էին լիբանանի դեմ «հարձակում սաղրել»։

Սակայն պատերազմի շարժադիր ծառայեց 1975թ. ապրիլի 13-ին Բեյրութի Այն ալ-Ռումանա քաղամասում «Քարաիր» կուսակցության ակտիվիստների և արմատական պաղեստինցիների միջև տեղի ունեցած զինված բախումները, որոնց ընթացքում առաջին անգամ ծանր գենք օգտագործվեց։ Այս միջադեպը սկիզբ դրեց ՊԴՀ-ի և փառանցավորների միջև ծանր մարտերի բռնկմանը, որին ավելի ուշ միացան մայրաքաղաքի բոլոր զինված խմբակումները⁵³։ Հնգօրյա մարտերի արդյունքում լուրջ պարտություն կրած «Քարաիրն» ապրիլի 17-ին ընդունեց կառավարության հրադադարի առաջարկությունը։ ՊԴՀ-ն իր գործողությունները սահմանափակեց Լիբանանում պաղեստինյան ճամբարների պաշտպանությամբ։ Սակայն իրադրությունը փոխվեց, երբ ծախերի նախաձեռնությամբ հրավիրված «Ազգային կոնգրեսը» կոչ արեց երկրի քաղաքական բոլոր ուժերին, մասնավո-

⁵² Itamar Rabinovich, *The War for Lebanon 1970-1985*, Ithaca and London, 1985, p. 43.

«Քարաիրը» պաղեստինցիների դեմ կազմակերպված գրոհներ իրականացրեց հատկապի Սայդայում։ Այս մասին տես՝ Պիտեր Կալվոկորեսս, նշվ. աշխ., էջ 504։ Միայն 1974թ. մայիսի 6-ին խրայնվական 36 իմբարիներ գրոհներով լիբանանի Նարարիա քաղաքի և պաղեստինցի փախստականների այլ ճամբարների վրա՝ տասնյակ զոհերի և վիրավորների պատճող դարձան։ Այս մասին տես՝ Avi Nassef H., *Middle East Crucible; Studies On the Arab-Israeli War of October 1973*, The Medina University Press International, USA, 1975, p. 471.

⁵³ «New York Times», 20.4.1975. Բախումների արդյունքում զոհվեցին 27, վիրավորվեցին՝ 20 պաղեստինցիներ։

րապես մուսուլման առաջնորդներին, դադարեցնել կառավարությունում քրիստոնյա-ազերի առաջնորդ Պիեր Ժմայելի «Քարայրի» հետ համագործակցությունը⁵⁴:

Կահիրեի 1969թ. համաձայնագրի հիման վրա, լիբանանասպահեստինյան հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ձեռնարկված քաղաքական և դիվանագիտական ջանքերի արդյունքում, 1975թ. ապրիլի 29-ին վերջիններիս միջն հնարավոր եղակ փոխազդում ապահովել, որի իրականացման նպատակով լիբանան-պաղեստինյան համատեղ հանձնաժողով ձևավորվեց: Սակայն մարտերը վերսկսվեցին մայիսի 8-ին, երբ կառավարությունից «Քարայր»-ի և «Ազգային Լիբերալ կոսակցության» անդամների հեռացման արդյունքում վարչապետ Ռաշիդ ալ-Սոլիի կառավարությունը ստիպված նղակ հրաժարական տալ: Վարչապետության թուլացման այս գործընթացն իր գագարնակետին հասավ 1975թ. մայիսի 23-ին, երբ հանրապետության նախագահ Սուլեյման Ֆրանժիեն ստեղծված փակուլուց ելքի որոնման, երկրում կարգ ու կանոնի վերականգման և ազգային հաշտության պահպանման նպատակով Նոր ալ-Դին ալ-Ռիֆայի գլխավորությամբ յոթ զինվորականներից և քաղաքացիական մեկ անձից կազմված ռազմական նոր կառավարություն ձևավորելու որոշում կայացրեց⁵⁵: Սակայն նախագահի հաշվարկները չարդարացան, քանի որ ճախերն ու մուսուլմանները, որոնց միացան նաև ռազմական վարչախմբին թշնամարար տրամադրված որոշ քրիստոնյա առաջնորդներ, միասնական ճակատով հանդիս եկան նոր կառավարության դեմ: Երկրի գլխավոր քաղաքներում բարիկադներ կանգնեցվեցին և հայտարարվեց համընդհանուր գործադրու, որը շարունակվեց մինչև կառավարության անկումը, այսինքն՝ 48 ժամ⁵⁶: Ռազմական կարինետի

⁵⁴ «Le Monde Diplomatique», Paris, 7.7.75.

* Վերջինս վարչապետի պաշտոնը ստանձնել էր 1974թ. նոյեմբերի 1-ին՝ մասսամբ ճախերի առաջնորդ Զամալ Ջումբարի աջակցությամբ և կիսում էր վերջիններիս կարծիքը պահետինցիների դնմ մարտեր հրահելու մեջ փաղանգավորների մեջսակցության հարցում:

⁵⁵ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 44:

* Սամսնավորական Ազգային Ռաշինք կոսակցության նախագահ Ռայմոն Էղինն:

⁵⁶ Samir Franjye, նշվ. աշխ., էջ 30:

հրաժարականից հետո Ռաշիդ Քարամեին հանձնարարվեց նոր կառավարություն ձևավորել: Իր հերթին, պետության ղեկավարը՝ ի հեճուկս ծախսերի և մուսուլման առաջնորդների դիմակայության, ծգուում էր կառավարությունում ապահովել փաղանգավորների կուսակցության մասնակցությունը՝ ակամայից ծգծելով նոր կառավարության ձևավորման գործընթացը և սրբով քրիստոնյա ու մուսուլման առաջնորդների միջև հակասությունները: Այս հանգամանքը նպաստեց նախագահի մեկուսացմանը, որը ենթարկվեց միաժամանակ ծախսերի և ավանդական ընդդիմության քննադատությանը:

Այսպիսով, պատերազմն ի դերև հանեց լիբանանյան հասարակության խորը հակասությունները և ապացուցեց կառավարության անգորությունը դրանց հաղթահարման ուղղությամբ: Երկրի պետական ապարատը վերջնականացնելու վերաբերյալ դրանց հաղթահարման ուղղությամբ: Երկրի պետական ապարատը վերջնականացնելու վերաբերյալ դրանց հաղթահարման ուղղությամբ: Անգամ պետության մայրաքաղաքը բաժանվեց արևմտյան՝ մուսուլմանական, և արևելյան՝ քրիստոնեական, միմյանց դեմ մարտնչող հատվածների⁵⁷:

Արդեն 1975թ. հունիսի վերջին Լիբանանն ամրողովին համակած էր քաղաքացիական պատերազմով, որի ընթացքում բյուրեղացվեցին երկու մեծ կուլիցիաներ՝ դաշինքներ: Հակամարտող այդ երկու ճամբարները հետապնդում էին ոչ միայն կրոնահամայնքային կամ սոցիալ-դասակարգային, այլ քաղաքական նպատակները⁵⁸: Թեև երկրի կառավարման սահմանադրական մարմինները՝ խորհրդարանը, կառավարությունը, նախագահը դեռ ֆակտու պահպանվեցին, այնուանդերձ, երկրում իրական իշխանությունը հայտնվեց պատերազմող ճամբարների՝ «Ազգային Հայրենասիրական ուժերի» (այսուհետ՝ ԱՀՌ-կամ ԱՌ) և «Լիբանանյան ճակատի» (այսուհետ՝ ԼՃ) ծեղում⁵⁹: ԱՀՌ-ը՝ լիբանանյան ծախս-մուսուլմանները, միավորվեցին՝ կազմելով

⁵⁷ Шуйская Н., նշվ. աշխ., էջ 46:

⁵⁸ Itamar Rabinovich, նշվ. աշխ., 45:

⁵⁹ Шуйская Н., նշվ. աշխ., էջ 46:

Ազգային շարժումը (ԱԾ կամ «Հարաբար ալ-Վատանի»)⁶⁰, որի մեջ մտնող ուժերի գործողությունները համակարգող Կենտրոնական քաղաքական խորհրդի ղեկավարը Զամալ Չումրլարն էր: ԱԾ-ի գլխավոր անդամը Չումրլարի Լիբանանի Առաջադիմական Սոցիալաստական կուսակցությունն (ԼԱՍԿ) էր, որը պաշտպանում էր պահեստինցի արարեների օրինական իրավունքների համար մղվող պայքարը⁶¹: Զաղարցիական պատերազմի ընթացքում ԼԱՍԿ-ն առաջատար դեր խաղաց, որի ընթացքում նրա առաջնորդի ղեկավարությամբ քոլոր ծախերը միավորվեցին միասնական ճակատում՝ պայքարի ընդիանուր ծրագրով և զինված ուժերով: Խսկ ՊՈ-Ծ-ի ռազմական միջամտության արդյունքում 1976թ. ԱՀՌԻ-ի կողմը թերվեց ուժերի կշեռքի նժարը⁶²: Նշենք, որ ԱՀՌ-ն իր մեջ մտնող կուսակցությունների և կազմակերպությունների մարտավարական դաշինք էր, որին, հակառակ նրա սոցիալ-քաղաքական, կրոնադավանական քազմազանությանը, միավորում էր Լիբանանի միասնականության պահպանման, սոցիալ-տնտեսական, կրոնաքաղաքական քարեփոխումներ իրագործելու ռազմավարությունը:

Իրենց հերթին լիբանանյան աջերը՝ Լիբանանյան Փաղանգներ կուսակցությունը (ԼՓԿ), Ազգային Լիբերալ կուսակցությունը (ԱԼԿ), «Թանգիր» և «Մարոնական Լիգան» 1976թ. հունվարի 31-ին պաշտոնավես հայտարարեցին «Ազգայության և Մարդու ճակատ» (ԱՄՃ)

* ԱԾ-ի մեջ մտնում էր ԼԱՍԿ-ը, Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը (ԼԿԿ), Լիբանանի Կոմունիստական Գործողության կազմակերպությունը (ԼԿԳԿ), սիրիական Ազգային Սոցիալիստական կուսակցությունը (ԱԾԿ), Ամկախ Նասերականների շարժումը (ԱՆԾ) և մուտքմաններից կազմված նրա զինված խմբավորումը՝ «Ալ-Մուրարիխումբ», ԲԱԱՍ-ի լիբանանյան ճամանակակից Արարական Սոցիալիստական Վերածնության կուսակցությունը (ԱԱՎԿ), Ազգային Դաշինք կուսակցությունը (ԱԴԿ), Սիրիական Ազգայնական Սոցիալական կուսակցությունը (ՍՍԱԿ), շիական ԱՍԱԼ-ը՝ («Նիմայլության լիբանանյան գումարուակները»), «Ալֆաջ ալ-մութավիմա ալ-լուբնանիյան»), Աշխատանքի Արարական Սոցիալիստական կուսակցությունը (ԱԱՍԿ), քրդական ծահակողմյան «Պարտի» կուսակցությունը, ՊՊԾ-ը: Այս մասին մանրամասն տեսն Զագազին Բ.Վ., Կիսելев Գ.Ա., Политические Партии, Справочник, Москва, 1981, стр. 162; Национально-политические силы Ливана и их политическая программа, ТАСС. БПИ N 17, 26.1.1982г., стр. 23.

⁶⁰ Հովհաննիսյան Ն., Եղվ. աշխ., էջ 24:

⁶¹ К положению в Ливане, ТАСС. Атлас N 29 (993), 16.7.76, стр. 27.

կամ «Լիբանանյան ճակատ» (ԼԾ)⁷ քաղաքական միավորում ստեղծելու որոշման մասին: 1976թ. սեպտեմբերին հիմնադրվեց ԼԾ-ը, որը Քամիլ Չամպունի գլխավորությամբ կազմեց աջակողմյան կոալիցիայի քաղաքական հիմնայունը: ԼԾ-ը Պիեր Ժմայելի որդու՝ Բաշիր Ժմայելի գլխավորությամբ ձևավորեց համատեղ ռազմական հրամանատարություն, որի մեջ յուրաքանչյուր կուսակցությունից ընդգրկվում էին երկուական անդամ, և որի տրամադրության տակ էին դրվում ԼԾ-ի մեջ մտնող կուսակցությունների և խմբակցությունների միլիցիաները՝ կազմելով «Լիբանանյան ուժերը» (ԼՈՒ):

Ուշագրավն այն է, որ քաղաքացիական պատերազմի սկզբում ԼԾ-ը համագործակցում և կապեր էր պահպանում Բեյրութի ու նրա շրջակայրի մուսուլման-սուննիների, Լիբանանի հարավի և այլ շրջանների շիա-մուսուլմանական վերնախավի հետ: Այնուհետեւ, ԼԾ-ին շիաջողվեց համախմբելով ոչ միայն Լիբանանի բոլոր քրիստոնյաներին՝ ուղափառներին, կաթոլիկներին, բողոքականներին, այլ ամբողջ քրիստոնյա-մարոնի համայնքը⁸:

5. ՄԻՐԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ճԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՆ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԶԱՆՁԵՐԸ

1975թ. ողջ հունիս ամսին փաղանգավորների (որոնց հետագայում միացան ԱԼԿ-ի միլիցիան) և պաղեստինցիների (ՊԱԺ-ի

7 Լիբանանյան աջերի մեջ էին մտնում քրիստոնյա-մարոնի շեյխ Պիեր Ժմայելի ԼՓԿ-ը («Հզր ալ-Քարափ ալ-Լորնանի») կամ պարօպան «Քարափը», Լիբանանի նախագահ Քամիլ Չամպունի Ազգային Լիբերալ կուսակցությունը (ԱԼԿ) կամ («Հզր ալ-Կառամի ալ-ահրար») և վերջինս գիշեած կազմակորումը՝ «Անզորի միլիցիան» («Նոսմոր»), որոնց կողմնակիցները հաճախ կոչվում էին շամունականներ, Լիբանանյան Սայրի Պաշտպանության կազմակերպությունը (ԼՈՄԿ)-ը, Ֆուադ Չամալի «Թանգիմ» («Կազմակերպություն») գաղմի կազմակերպությունը: Այս մասին մանրամասն տես Itamar Rabinovich, Եղվ. աշխ., էջ 61-65; Հովհաննիսյան Ն., Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982թ.), Եր., 1982, էջ 26; Marius Deeb, The Lebanese Civil War, New York, 1980, p. 29.

8 1977-1978թթ. Սուլեյման Ֆրանժեի (որի նախագահության ժամանակ սկսվել էր քաղաքացիական պատերազմը) գլխավորությամբ Լիբանանի հյուսիսի՝ Զորորայի շրջանի մարտնական խմբագորումը դրս եկավ ԼԾ-ի կազմից և զնաց սումնի մուսուլման համայնքի հետ հաշտեցման և համագործակցության ուղիով:

անդամների) միջև մարտերը շարունակվեցին՝ ի հեճուկս վերջիններիս հաշտեցման ուղղությամբ գործադրված քազմարիլ միջնորդական ջանքերի: Պայքարի առանցքը Լիքանանում պաղեստինյան կազմակերպությունների գործողությունների ազատության շուրջ առկա տարածայնություններն էին: Պաղեստինցինները փորձում էին պաշտպանել ոչ միայն իրենց դիրքերն ու վերջին տարինների ծեղքերումները, այլև դրանք հնարավոր դարձնող քաղաքական միջավայրը: Զախերն ու մուսուլմանները հանդիս էին գալիս նախագահի պաշտոնում Ռաշիդ Քարամենի թեկնածության առաջադրությամբ՝ պահանջելով փոխել ընտրական համակարգն ու վերացնել կոնֆեսիոնալիզմը⁶²: Սակայն վարչապետը, որն այլև չէր պաշտպանում կառավարությունում փաղանգավորներին մեկուսացնելու առնչությամբ Զումբլարի ողեզիծը, ստիպված էր նոր կառավարության ձևավորման գործում ապավինել սիրիական միջնորդությանը:

Փատունք, որ 1943թ. Լիքանանի անկախության ծեղք բերումից ի վեր, Սիրիայի բոլոր վարչակազմերը՝ ի հեճուկս Լիքանանի անկախության վերաբերյալ կնքված պայմանագրերի և ընդունված սահմանադրության, երկիրը համարում էին ֆրանսիացինների «արիեստական» քաժաննան արդյունք⁶³: Չիրաժարվելով Լիքանանն իրեւ «Մեծ Սիրիայի» հետ ամուր պատմաաշխարհագրական կապերով անքակտելի հատված վերականգնելու մտքից, սիրիական ոչ մի կառավարություն չէր ընդունում Լիքանանի ինքնիշխանության փաստը՝ դիվանագիտական հարաբերությունների շխատատեղով Քեյրութի հետ⁶⁴: Դիվանագիտական առաքելությունների քացակայությունը հիմնավորելով իրեւ երկու երկրների միջև սերտ հարաբերությունների առկայության հետևանքը, հաճախ էր շեշտվում այն փաստը, որ Լիքանանի մայրա-

⁶² Զախերին, մասնավորապես ԼԿԿ-ին և ԼԿԳԿ-ին, հաջողվել էր իրենց դիրքերն ամրապնդել ոչ միայն երկու գլխավոր քաղաքներում, այլ Թեյլութի արևմտյան քաղաքաներում: Այս մասին տեսն «Le Monde Diplomatique», Paris, 7.7.75.

⁶³ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 43-45:

⁶⁴ Խաղաղամբ նոր էր վերաբարձել Սիրիայի Նահանգներ կատարած այցից:

⁶⁵ William Polk, նշվ. աշխ., էջ 345: Լիքանանի նավահանգիստները Դամասկոսի համար քնական եւր էին համարվում դեպի ծով, իսկ տնտեսությունը կննական կարևորություն էր ներկայացնամ Սիրիայի համար:

⁶⁶ Steinatzky Shapolsky, նշվ. աշխ., էջ 237:

բաղադր թերությն ընդամենը 60 մղոն հետափորության վրա է գտնվում Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսից⁶⁵:

Նախքան 1970-ականները, Լիբանանում սիրիական շահերի ու նկրտումների ապահովման ուղղությամբ Դամասկոսի անզորությունը պայմանավորված էր Սիրիայի ներքին քուլությամբ, անկայունությանը և արտաքին ռեսուրսների բացակայությամբ: Դեռ ավելին, 1973թ. պատերազմի հետևանքները, 1974թ. իսրայելանգիպտական պայմանագրի կնքումը և 1975թ. ապրիլին Լիբանանում սկիզբ առած քաղաքացիական պատերազմը հանգեցրին ՄԱ-ում որակապես նոր իրադրության ստեղծմանը, որի արդյունքում Սիրիան հայտնվեց մի շարք սուր և բարդ խնդիրների կարգավորման անհրաժեշտության առջև: Եզիդական պատերազմը համարական պայքարի ճակատից կտրուկ քարդացրեց Սիրիայի դրությունը՝ նախ և առաջ Իսրայելին զինված հակագդեցություն ցուցաբերելու տեսանկյունից⁶⁶:

1973թ. պատերազմից ի վեր մինչև 1980-ականների վերջը, իբրև Իսրայելի հետ անմիջական առօնակատման մեջ գտնվող արարական երկրի, արարական նավարույնահանող պետություններն անհատույց ֆինանսական օգնություն ցուցաբերեցին Դամասկոսին, որը նպաստեց երկրի տնտեսության զարգացմանը⁶⁷: Սիրիայի ներքին կայունության հաստատման ջանքերն ուղեկցվեցին արտաքին քաղաքականության գործում մեկուսացումը հայրահարելու, իսկ 1973թ. հոկտեմբերի պատերազմից հետո անգամ տարածաշրջանային պետության վերածվելու հավակնություններով: Հետամուտ լինելով Արևելքի ու Արևմուտքի հետ չմիացման արտաքին քաղաքականությանը, Սիրիայի նախագահ Հաֆիզ ալ-Ասադը, զինամբերքի և տնտեսական աջակցության ապահովման հարցում ապավինում էր ԽՍՀՄ-ին՝ միա-

⁶⁵ Marius Deeb, նշվ. աշխ., էջ 122:

⁶⁶ Григорян Г. М., Позиция Сирии в Ближневосточном конфликте, Вопросы Международных и региональных отношений, Проблемы современной советской арабистики, Ер., 1985, Вып. I.- Современные политические и социально-экономические проблемы арабских стран, Ер., 1989, стр. 282.

⁶⁷ Սարքազման Գ., Սիրիայում ուղղիչ շարժման սոցիալ-տնտեսական քաղաքականության որոշ առանձնահատկությունները (1970-ական թթ.), Սերծավոր Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 182:

ժամանակ լուրջ հարաբերություններ գարգացնելով ԳԴՀ-ի և Ֆրանսիայի հետ: Նախագահը դրական էր վերաբերվում նաև քաղաքական և տնտեսական ոլորտներում ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հաստատմանը: Այս իմաստով գուցե անհիմն չէին ԱՄՆ-ի դիտորդների կարծիքներն առ այն, որ Սիրիայի համար Վաշինգտոնի հետ խաղաղության հաստատումն ավելի մեծ կարևորություն էր ներկայացնում, քան Իսրայելի հետ⁶⁸:

Փաստորեն, Սիրիայի արտաքին քաղաքական առաջնահերթություն դարձավ երկու գերտերությունների միջև խուսափարման, ինչպես նաև առավել թույլ արար հարևանների՝ Լիբանանի, Հորդանանի ու պաղեստինցիների նկատմամբ ռազմական հզորության և գերազանցության պահպանման ռազմավարությունը⁶⁹: Սիրիայի նախաձեռնությամբ «հյուսիսային ճակատի» (Հորդանանի և պաղեստինցիների մասնակցությամբ) ստեղծումը Եզիդուսուին մեկուսացնելու և սեպարատ՝ անջատ գործարքներից զերծ պահելու նպատակ էր հետապնդում: Սիրիայի նկատառումներով, Դամասկոսն անհրաժեշտ էր գտնում օգնություն ցուցաբերել Լիբանանում գտնվող ՊԱԿ-ին՝ Սուլեյման Ֆրանժիեի գլխավորած աջ-քրիստոնեական ուժերի դեմ պայքարում, քանզի վերջիններս ողջունում էին նախագահ Անվար Սադարի ուղղվածը⁷⁰:

Օգովելով արարական գործերում Եզիդուսուի մեկուսացվածության փաստից, Սիրիան վերածվեց Լիբանանի վրա մեծագույն ազեւցություն ունեցող արարական երկրի: Քաղաքացիական պատերազմի առաջին մի քանի շարաբների ընթացքում, հատկապես 1975թ. մայիսի 23-ին նախագահ Ֆրանժիեի կողմից ռազմական կառավարության նշանակումից հետո, Սիրիան միշրճվեց լիբանանյան հակամարության մեջ և մինչև 1975թ. դեկտեմբերը ճախ-մուսուլմանական ուժերի սատարման միջոցով անուղղակիորեն նպաստեց Լիբանանի քաղաքական համակարգի բուլացմանը:

⁶⁸ Abba Eban, Diplomacy For the Next Century, New Haven and London, 1998, p. 160.

⁶⁹ Maoz Moshe and Yaniv Avner, նշվ. աշխ., էջ 179:

⁷⁰ «Sunday Times», London, 10.6.1976.

Հարկ է նկատել, որ Լիբանանում պաղեստինցի պարտիզաններին ցուցաբերվող սիրիական աջակցությունը պայմանավորված էր Իսրայելի կողմից Լիբանան հնարավոր ներխուժման մտավախորյամբ, որը կարող էր հանգեցնել լիբանանյան կառավարության լիակատար փլուզմանն ու պաղեստինցիների կողմից ողջ երկրի կամ նրա մի մասի բռնագրավմանը։ Տվյալ դեպքում հարվածի տակ էր որվում ոչ միայն Սիրիայի սեփական հավակնություններն իբրև տարածաշրջանային տերության, այլ արաբական աշխարհի նկատմամբ նրա ներկայացրած հայտը⁷¹։ Սիրիան, ըստ Եւրիյան, միջամտեց Լիբանանում տեղի ունեցող իրադարձություններին ոչ թե պաղեստինցիներին կամ էլ քրիստոնյաներին օգնելու, այլ Լիբանանը որպես քաղաքական միավոր փրկելու նպատակով, որի կայունությունն ու անվտանգությունը կենսական նշանակություն ուներ Սիրիայի համար։ Լիբանանի ներքաղաքական փիլիտն հավասարակշռությունը պահպանելու պաշտոնական Դամասկոսի այդ շահագրգովածությունն էր, որ նրան վերածեց Լիբանանում սկզբում դե-ֆակտո, իսկ ավելի ուշ՝ դե-յուրեն կայունություն ապահովող միակ գործնական ուժի⁷²։

Այսպիսով, Սիրիայի արտգործնախարար Արդ ալ-Հալիմ Խաղամի⁷³ լիբանանյան երկու (հունիսի 16-ի և հունիսի 29-ի) այցելություններից հետո հականարող կողմերի միջև հաստատվեց քվով 24-րդ հրադադարը⁷⁴, և 1975թ. հունիսի 30-ին 6 հոգուց բաղկացած «համայնքային հավասարակշռության կառավարություն» ձևավորվեց։ Խսկ 1975թ. հուլիսի 1-ին հայտարարվեց «Փրկության կառավարության»⁷⁵ ձևավորման մասին, որով ավարտվեց Լիբանանի քաղաքացիական պատերազմի առաջին փուլը վերջ դնելով դաժան արյունահե-

⁷¹ William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 99։

⁷² Կարասպետյան Ռ., Արարական երկրների նոր և նորագույն պատմություն, էջ 209։

⁷³ Խաղամը նոր էր վերադարձել Սիրայով Նահանգներ կատարած այցից։

⁷⁴ Димитриев Е., Палестинский узел, К вопросу об урегулировании палестинской проблемы, Москва, 1978, стр. 117.

⁷⁵ Kamal Salibi, նշվ. աշխ., էջ 112։ Վարչապետ Ռաշիդ Քարամեն դարձավ միաժամանակ պաշտպանության նախարար, Զամիլ Չամումը գրանցեց ներքին գործերի նախարարի պաշտոնը, արտգործնախարարի պաշտոնը գրանցեց նույն կարողիկ Ֆիլիպ Թաքրան։

դությանը, սակայն, միանգանայն հասկանալի պատճառներով, չվերացնելով ճգնաժամը ծնող պատճառները:

Այդ էր թերևս պատճառը, որ Քամալ Չումրլարն այս անգամ հանդես եկավ արար ազգայնականների ու արմատական տարրերի առավել լայն ներկայացուցչություն ապահովող նոր կառավարության ձևավորման և ճգնաժամից դուրս գալու նպատակով «Հինգ պահանջների»^{*} կենսագործման առաջարկով: Սակայն հարկ է խոստովանել, որ Քարամինի կառավարությունը, անգամ այդ պահանջների հրատապությունը գնահատելու դեպքում, ի վիճակի չեր արմատական միջոցառումներ կիրառել թե՝ մարոնի դեկավարության դիմակայության, և թե՝ մարտերի շարունակման նպատակով քրիստոնյա ու մուսուլման միջիցիանների գինվելու և ուսումնավարժական ճամբարներ հիմնելու պայմաններում: 1975թ. օգոստոսի 18-ին ընդդիմադիր կուսակցություններն ու ուժերը հրատարակեցին լիբանանյան համակարգի ժողովրդավարական բարեփոխումների ազգային ծրագիրը[†]: Օգոստոսի 23-ին պաշտոնական մակարդակով բարձրացվեց Լիբանանի քաղաքական կառույցի վերանայման անհրաժեշտության խնդիրը: Սուվեյման Ֆրանժիեն հանդես եկավ անկախության շրջանակներում լիբանանցիների միջև եղայրական համագոյակցության վրա հիմնված 1943թ. «Ազգային դաշինքի» պահպանման և օրյեկտիվ պայմաններից բխող սահմանադրական բարեփոխումների իրականացման անհրաժեշտության կոչով, որն առավել մոտ էր «Քարամին» դիրքորոշմանը²⁵:

Սակայն մարտական գործողությունները վերսկսվեցին 1975թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին Լիբանանի տարրեր խմբակ-

*«Հինգ պահանջների» մեջ էին մտնում կրոնադավանական համակարգի վերացումը, գործադիր իշխանության տարրեր ճյուղերի իրավասությունների վերասահմանման նպատակով սահմանադրական փոփոխությունների իրականացումը, ընտրական օրենքի փոփոխությունը, բանակի վերակազմավորումն ու բաղադրացիության շնորհման հարցում սահմանափակումների վերացումը: Այս մասին տես՝ Kamal Salibi, նշվ. աշխ., էջ 112-123:

[†] Ընդդիմադիր կուսակցությունների պահանջներն էին՝ աշխարհիկ քաղաքական համակարգի հաստատումը, ընտրական օրենքի բարեփոխումները, վարչական ապարատի վերակազմավորումը և ժողովրդավարական իրավունքների ու բաղադրացիության ազատությունների հայեցակարգի կատարելագործումը:

²⁵ Заявление президента Ливана, ТАСС. Атлас N 36 (948), 5.9.75, стр. 34-35.

ցուրյունների՝ հիմնականում քրիստոնյա և մուսուլմանական խմբերի միջև Զակեռն (Բերաա) ծագած և դեպի հյուսիս-արևելք՝ Բեյրութ, Տրիպոլի, Աքքար տարածում գուած մարտերով⁷⁶:

Միևնույն ժամանակամիջոցին են վերաբերվում նաև խրայելական ուժերի կողմից պաղեստինյան ռազմահանգրվանների և հարավային Լիբանանում պաղեստինցի փախստականների ճամբարների ուղղությամբ ցամաքից և ծովից իրականացված ռազմաթիվ գրոհները:

Լիբանանի ներքաղաքական իրադրությունն առավել սրվեց սեպտեմբերի սկզբին հյուսիսային Լիբանանի Ջղորտա և Տրիպոլի քաղաքների միջև տեղի ունեցած կատաղի քայլումների արդյունքում: Ջղորտայի քրիստոնյա բնակչությունը նախազահ Սուլեյման Ֆրանժիեի ջատագովներն էին: Մինչդեռ երկրի մեծությամբ երկրորդ քաղաքի՝ Տրիպոլիի գերազանցապես մուսուլման բնակչությունը սատարում էր իր հայրենակից վարչապետ Ռաշիդ Քարամեին:

Վարչապետին ու նախագահին չեր հաջողվում համաձայնության զալ Ջղորտայում և Տրիպոլիում հակամարտող կողմների միջև խաղաղություն հաստատելու նպատակով ռազմական ուժերի տրամադրման հարցում: Զախ-մուսուլմանական ուժերը դեմ էին քանակում փաղանգավորական և շամունական սպանների գերազանցությանը, հատկապես բանակի զիսավոր հրամանատար գեներալ Իսկանդար Ղանիմի կողմից նրա ղեկավարմանը⁷⁷:

Քոնությունների դադարեցման ուղղությամբ վարչապետ Քարամեի կոչերը արծագանք չգտան: Միայն մի քանի նիստերից հետո կառավարությունը 1975թ. սեպտեմբերի 10-ին որոշում ընդունեց հյուսիսի մարտերին վերջ տալու նպատակով ուժ գործադրելու ուղղությամբ: Սակայն այն հանդիպեց մուսուլմանական շրջանակների հակագրեցությանը, թեև զինված ուժերի զիսավոր հրամանատար Իսկանդար Ղանիմը փոխարինվեց մուսուլմանների համար առավել նախընտրելի անձով՝ Հաննա Սահմու (մարոնի համայնքի ներկայացուցիչ): Ռազմական ստորաբաժանումները հրահանգավորվեցին գրադենել Տրի-

⁷⁶ Itamar Rabinovich, Աշվ. աշխ., էջ 45:

⁷⁷ Deeb Marius, Աշվ. աշխ., էջ 2:

պոլիի և Զդորուայի միջև չեզոք գոտին՝ հակամարտող կողմերի հետ անմիջական շփոմներից խուսափելու նպատակով⁷⁸:

1975թ. սեպտեմբերին հատուկ առաքելությամբ Բեյրութ ժամանեց Սիրիայի փոխվարչապետ և արտաքին գործերի նախարար Արդալ-Հալիմ Խաղբամը⁷⁹, հանդիպումներ ունենալով նախագահ Ֆրանսիերի, վարչապետ Քարամեի և քաղաքական բոլոր կուսակցությունների ու կրոնական համայնքների ներկայացուցիչների հետ: Բեյրութի իրադրության արագ կարգավորմանը նպաստելու վերջինիս միջնորդական ջանքերի արդյունքում, սեպտեմբերի 20-ին հրադադարի վերաբերյալ համաձայնագիր ստորագրվեց և ճևագործվեց «Ազգային երկխոսության հանձնաժողովը»՝ ԱԵՀ-ը⁸⁰: Հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Լիբանանի կրոնաքաղաքական բոլոր ուժությունները ներկայացնող 20 գործիչները⁸¹: Հակամարտության բոլոր կողմերը հրապարակավ իրենց պատրաստակամությունը հայտնեցին հրադադարի նոր պայմանագրին հետամուտ լինելու հարցում⁸²: ԱԵՀ-ի օրակարգ մուցկեցին ինչպես փաղանգավորների և վերջիններիս դաշնակիցների առաջ քաշած տարածքային ինքնիշխանության, ԱԾ-ի ու նրա դաշնակիցների առաջադրած քաղաքական բարեփոխումների, այնպես էլ Լիբանանում ՊԱԿ-ի կարգավիճակի շուրջ համաձայնության հասնելու հետ կապված հիմնախնդիրները: Սակայն վարչապետ Քարամեն քաղաքական բարեփոխումների շուրջ տարածայնություններ ուներ արդեն ոչ միայն նախագահ Ֆրանսիերի, այլ իր դաշնակիցների, հատկապես Զումրլաքի ու ԱԾ-ի հետ⁸³: Խնդիրն այն էր, որ Քարամեի կուսակցիայի բարձրացրած պահանջներն ավելի շուտ միտված էին Լիբանանի քաղաքական համակարգի վերակառուցմանը, քան թե վերացմա-

⁷⁸ О положение в Ливане, ТАСС. Атлас N 38 (950), 19.9.75, стр. 37-38.

⁷⁹ Հովհաննիսյան Ա., Սիրիայի ուազմական միջամտությունը Լիբանանյան հակամարտությանը 1976թ., Սերմագր և Սիրիան Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XVI, Երևան, 1996թ., էջ 36:

⁸⁰ Kamal Salibi, Աշվ. աշխ., էջ 129:

⁸¹ Don Peretz, Աշվ. աշխ., էջ 386-387:

⁸² К событиям в Ливане, ТАСС. Атлас N 39 (951), 26.9.75, стр. 37.

⁸³ Marius Deeb, Աշվ. աշխ., էջ 4:

նը⁸⁴: Փաստորեն, Քարամեն, որը ստիպված էր պայքարել իր վարչապետության դեմ արտահայտվող կառավարության քրիստոնյա խմբակցությունների (նախ և առաջ Սուվեյման Ֆրանժիեի և նորքին գործերի նախարար Քամիլ Շամունի) հզոր ընդդիմության դեմ, այժմ հայրձակման թիրախ էր դարձել նաև իր մուսուլման դաշնակիցների համար: Երկրի քրիստոնեական ճակատին միաժամանակ չէր գոհացնում ԱՆՀ-ի նկատմամբ Սիրիայի հովանավորության հանգամանքը⁸⁵:

Ի վերջո, իրադադարի շուրջ ԱՆՀ-ի ընդունած ծրագրերը ճախողվեցին Լ.Շ.-ի իրակրած նոր քախումների արդյունքում, որն օգտվելով կարճատև իրադադարից, քախումների վերսկսման մտադրությամբ իր դիրքերը նախապես ամրապնդել էր Բեյրութի արևելյան հատվածում⁸⁶:

6. ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1975Թ. ԼԻԲԱՆԱՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԿԱՍՄԱՄ ՆՐԱ ՄԿՁԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ”

Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբում ԱՄՆ-ի նախագահ Ջերալդ Ֆորդի վարչակազմը՝ (1974-1977թ.) մերձավորարևելյան օրակարգում լիբանանյան հիմնախնդրին մեծ առաջնահերթություն շտալով, հետամուտ էր երկրում առկա status quo-ի պահպանան քաղաքականությանը⁸⁷: Առաջնորդվելով ԱՄ-ի համատերսուում Լիբանանին լուսանցքային դեր հատկացնելու և երկրում արմատական վերափոխումներ իրականացնելու անհնարիմության կանխադրույթից, Սպահակ տունը խորացող ճգնաժամի պայմաններում ամերիկյան ակտիվ ներգրավածությունն աննպատակահարմար էր

⁸⁴ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 45; К положению в Ливане, ТАСС. Атлас N 48 (960), 28.11.75, стр. 26.

⁸⁵ Kamal Salibi, նշվ. աշխ., էջ 129:

⁸⁶ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 36:

⁸⁷ Այս մասին մանրամասն տես՝ Հարությունյան Ա., ԱՄՆ-ի դիրքորոշումը 1975թ. լիբանանյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ նրա սկզբնական փուլում, Մեծագործ Արևելք, Պատմություն, Քաղաքականություն, Մշակույթ, Երևան, 2007, էջ 66-72:

⁸⁸ Moshe Maoz and Avner Yaniv, Syria under Assad, London & Sydney, 1986, p. 211.

դիտում՝ իր գլխավոր նպատակը համարելով տարածաշրջանային կայունությունը և ՍԱ-ում ԱՄՆ-ի կայուն գոյատևմանը սպառնացող սուր ճգնաժամի կանխարգելումը⁸⁹. Հենրի Քիսինջերին պետքարտուղարի և Ազգային անվտանգության գծով նախագահի օգնականի պաշտոնում պահպաներու փաստն անգամ խոսում էր այն նասին, որ Ֆորդն իր նախորդի արտաքին քաղաքականության մեջ լուրջ փոփոխություններ չեր նախատեսում⁹⁰:

Խնդիրն այն է, որ 1973թ. հոկտեմբերյան պատերազմից հետո Վաշինգտոնը գրադարձ էր ԱՄՆ-ի պետքարտուղար Հենրի Քիսինջերի կողմից 1974-76թթ. ընթացքում կենսագործված «քայլ առ քայլ», «վարերային» կամ մասնակի զիջումների դիվանագիտության միջոցով ԱՄՆ-ի մեկ այլ, «առավել կարևոր»՝ խրայնլաեզիապտական հարաբերություններում առաջնաբաց ապահովելու խնդրով: Լիբանանյան ճգնաժամի նախօրեին և սկզբնական շրջանում հաճախ էր խոսվում այն նաև, որ ԱՄՆ-ի և Խորայելի միջև հաստատված հատուկ հարաբերություններում նկատվում է սառնություն, և որ Խորայելը չի կարող համարվել ԱՄՆ-ի միակ դաշնակիցը տարածաշրջանում, քանզի Եզիապտոսը ևս կարող է հավակնել այդ դերին: Որոշ քաղաքագետներ դրանով բացատրեցին Թել-Ավիվի և Վաշինգտոնի միջև ծագած տարածայնությունները՝ մասնավորապես Լիբանան սիրիական հետազաներին մասնակի հարցի շուրջ⁹¹:

Միաժամանակ արար-խորայելական կարգավորման գործընթացի շրջանակներում Հենրի Քիսինջերը ջանք չէր խնայում Մոսկվայի մասնակցությունը բացառելու կամ լիբանանյան քաղաքացիական պատերազմում վերջինիս դերակատարությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ, հատկապես տարածաշրջանում ԽՍՀՄ-ի սատարած «ժակարիմակերիալիստական կոալիցիայի» անկումից հետո: Մոսկվան այժմ փորձում էր ամրապնդել իր կապերը ՊՆ-ի և Սիրիայի

⁸⁹ Itamar Rabinovich, Աշվ. աշխ., էջ 35:

⁹⁰ Иванян Э.А., Белый дом: президенты и политика, М., 1979, стр. 347. Ֆորդն արտաքին քաղաքականության որորում իր անփորձությունից ենթակ նպատակահարմար էր գտնում այդ գործը հանձնել առավել փորձառու գործիչ՝ Հենրի Քիսինջերին:

⁹¹ Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, էջ 73:

հետ՝ իրապարակավ օգնելով ՊԴԸ-ԱԾ լիրանանյան դաշինքին և հանիս զալով Լիրանանի անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանության օգտին⁹²: Սյաժամանակ ԽՍՀՄ-ի առաջնորդները 1975թ. ողջ ընթացքում պաղեստինցիներին շարունակ հորդորում էին չմիջամտել Լիրանանի «ընտանեկան գործերին»: Ավելի ուշ, երբ Սիրիայի ու ՊԴԸ-ի հարաբերությունները սրվեցին, ԽՍՀՄ-ի քաղաքականությունը Լիրանանում գործնականում փակուղի մտավ⁹³:

Հարկ է նկատել, որ ՍՍ-ում ԽՍՀՄ-ի ազդեցության տարածմանը խոշնորություն էր թե՛ Խորայելի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, և թե՛ արարական երկրների հետ դրանց սահմանափակ բնույթը⁹⁴: Այդ հաճախանքը Պիրլինի համաձայն՝ ԱՍԽ-ին հնարավորություն էր ընծեռում բուլացնել արարական երկրների հակախրայելական ճակատը, խորացնել եզիպտախրայելական սեպարատ երկու համաձայնագրերի՝ ստորագրությունը հետո ռազմական ու տնտեսական տեսանկյունից արարական առավել ուժեղ երկրի՝ Եզիպտոսի և արարական մյուս պետությունների միջև բացված անդունդը: Այն չեզորացնում էր Սիրիայի ոերդ, սրում արարական երկրների միջև առկա հակասությունները, մեկուսացնում կամ առնվազն բուլացնում էր ՊԴԸ-ը⁹⁵:

Ուշագրավ է, որ Լիրանանի ճգնաժամը ժամանակային առումով համընկավ արարական աշխարհում և միջազգային քատերարեմում ՊԴԸ-ի արծանազրած հաջողությունների հետ, որն Արևմուտքում ընկալվեց իրու «Հենրի Քիսինջերի մերձավորարևելյան դիվանագիտության» հետանկարին ուղղված լուրջ սպառնալիք⁹⁶: Հետևարար, «Սի-

⁹² Tabitha Petran, The Struggle Over Lebanon, New York, 1987, p. 170.

⁹³ Американский Экспансионизм Новейшее время, М., 1986. <http://www.barchev.ru/archiv/oon17.htm>.

⁹⁴ <http://meria.idc.ac.il/books/misprcreceptions.htm>.

⁹⁵ 1974թ. հունվարի 18-ի՝ «Սինայ-1» և 1975թ. սեպտեմբերի 1-ի՝ «Սինայ-2» համաձայնագրերը:

⁹⁶ Пырзин Е.Д., 100 лет противоборства. Генезис, эволюция, современное состояние и перспективы решения палестинской проблемы, М., 2001, стр. 226.

⁹⁷ Ливанский кризис 1975-1976 гг. и Пекинская позиция негативного нейтралитета, Информационный Бюллетень, N 103, Экз. N 00521, М., 1979, стр. 138.

նայ-1» համաձայնագրի կնքումից^{*} հետո ամերիկյան դիվանագիտության հաջորդ քայլը, որոց քաղաքագետների կարծիքով, պետք է նպատակառության վիճակը լիբանանում քաղաքացիական պատերազմի հրահրմանը՝ ՊՂՀ-ի և նրա ուսումնավարական դաշնակցի՝ «լիբանանյան հայրենասիրական ուժերի» կամ ճախ-մուսուլմանական ուժերի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով⁹⁸: Եզիզոսի և Խորայելի կողմից սեպարատ բանակցությունների ժամանակակից խուսափում էր ԱՄՆ-ի կողմից, որի կառավարության վերահսկողության և հովանավորության տակ վերցվեց այդ գործընթացը: Պիմենովայի համաձայն՝ սեպարատ գործարքի օգնությամբ ամերիկյան քաղաքական գործիչները հույս ունեին պառակտել արարական աշխարհի միասնականությունը, այնուհետև, Խորայելի և պահպանողական արարական վարչակարգերի միջև «հավասարակշռված ուղղոգծի» վարմամբ, հասնել ՍԱ-ում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը⁹⁹: Չի բացառում, որ Վաշինգտոնը խուսափում էր նաև 1973թ. ԱՄՆ-ի և նրա արևմտյան դաշնակիցների նկատմամբ արարական նավթարդյունահանող երկրների կիրառած նավթային ենթարդոյի կրկնությունից: Այս մասին է վկայում 1975թ. հունվարին արված Ջիսինջերի հայտարարությունը, որի համաձայն ուժի կիրառումը նպատակահարմաք չէր դիտվում տարածաշրջանում հնարավոր «արտակարգ իրավիճակների» դեպքում նավթային պաշարների նկատմամբ ԱՄՆ-ի մուտքի ապահովման տեսանկյունից¹⁰⁰:

Վերոշարադրյալից կարելի է ներառել, որ լիբանանյան ճգնաժամն այսուհանդերձ քիսում էր ԱՄՆ-ի շահերից՝ արարական աշխարհի ուշադրությունը «Մինայ-2» եզիզոտախսայելական երկրորդ համաձայնագրից շեղելու¹⁰¹ և Խորայելի ու ԱՄՆ-ի վրա գործադրվող միջազ-

* Այս մասին տես՝ Դմիտրիև Е., Լազեկին В., Путь к миру на Ближнем Востоке, М., 1974, стр. 221.

⁹⁸ К положению в Ливане, ТАСС. Атлас N 38 (1002), 17.9.76, стр. 24.

⁹⁹ Пименова Л., Внутриполитическая обстановка в Израиле (май 1977-июль 1980гг.), Восток и Современность, Научно-информационный бюллетень, 3 (14), ЭКЗ. N 00268, М., 1980, стр. 67.

¹⁰⁰ Aruri Naseer H., Աշլ. աշխ., էջ 471:

¹⁰¹ بعثت ، دمشق، «Ալ-րաաس»، Դամասկոս, 16.9.1976:

գային ճնշումը նվազագույնի հասցնելու նպատակով: Իսրայելցի մի պաշտոնյայի խոսքերով՝ «Սինայ-2»-ը ՍԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ բանաձևի «յազգաղի վերջին մեխն էր», որի համաձայն Իսրայելը պետք է նահանջեր նախքան 1967թ. պատերազմը գրադադրած իր դիրքերը¹⁰²: Համաձայնագիրը Լիբանանի քաղաքացիական պատերազմում Եգիպտոսին հայթաթուղթ էր ապահովում, քանի որ Սահարի որոշումից կախման մեջ էր հայտնվում ինչպես դիմադրական շարժման, այնպես էլ Սիրիայի նախաձեռնությամբ «հյուսիսային ճակատի» ստեղծման ապագան: Թերևս այդ էր պատճառը, որ Սահարն աջակցություն ցուցաբերեց «Քաթարին», նախքան վերջինս կդառնար Սիրիայի դաշնակիցը և դիվանագիտական քայլերի դիմեց Լիբանանում սիրիական ռազմական միջամտությունը կանխելու նպատակով»:

Սեկ այլ տեսակետի համաձայն՝ լիբանանյան ճգնաժամը Վաշինգտոնի կողմից ընդարձակ ծրագրի մաս էր կազմում՝ ՊԱԿ-ի ոչնչացման, ինչպես նաև ԱՄՆ-ի հովանու ներք Սիրիայի, Եգիպտոսի, Հորդանանի և Իսրայելի միջև խաղաղության հաստատման նպատակ հետապնդելով¹⁰³:

Ըստ Եության, Քիսինջերի վարած «մաքրային» դիվանագիտությունը Լիբանանը վեր էր ածում մեծ խաղում շախմատային զինվորի կարգավիճակի՝ լիբանանցիների հիշաղության մեջ ամրագրվելով որպես «դավադրությունների ժամանակաշրջանի», թեև լիբանանյան բարձր պաշտոնյաների շրջանում առավել տարածված էր վերոնշյալ «գավադրությունների» անհավանականության տեսակետը: Նրանց կարծիքով՝ բոլոր կողմերը, ներառյալ ԱՄՆ-ը, շահագրգուված էին անկայուն Լիբանանով՝ ենթերու ուղղակի կամ անուղղակի կերպով ներպետական և միջպետական հակամարտությունների վարման նպատակով երկիրը պահուստային մարտադաշտի վերծելու նպատակահար-

¹⁰² Edward Sheehan, Step by Step in the Middle East, Journal of Palestine Studies 5, nos. 3 and 4 (Spring/Summer 1976).

¹⁰³ Մարտնական միլիցիային 1975թ. ընթացքում հանգանակություններ տրամադրեցին նաև արարական նավարդյունահամող երկրները՝ Սաուման Արաբիան, Քուվեյթը և ԱՄԷ-ը:

¹⁰³ Կարապիտյան Ռ., նշվ. աշխ., էջ 72-73:

մարտությունից¹⁰⁴: ԱՄՆ-ի ԿՀՎ-ի նախկին գործակալ Ռոբերտ Բվլենդի «Խաղաքարեթ տնօւակները Ամերիկայի ծախողումները Մերձավոր Արևելքում» գրքում հեղինակը խոստովանում է ԱՄՆ-ի առաջարրանքով Լիբանանի ներքին գործերին միջամտելու և քայլայիշ աշխատանքներ իրականացնելու փաստը¹⁰⁵:

7. ԼԻԲԱՆԱՆԻ ՔԱԺԱՆՍԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՐԻԱՅԻ ԴԻՐՁՈՐԾՈՒՄ ԱՅԴ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՐ

1975թ. հոկտեմբերի 16-ին Բեյրութի «Ալ-Ղուաքուր» շարաբարերի հրապարակած տեղեկության համաձայն՝ լիբանանյան ճախերի առաջնորդ Զամալ Չումրիաթը վարչապետ Ռաշիդ Քարամեի հետ հանդիպման ընթացքում ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Վարչության (ԿՀՎ) և սիրիական շրջանակների նախաձեռնությամբ Լիբանանի քաժանման ծրագրերի մշակման և դրանց իրականացման նպատակով 70-80 նմ։ ԱՄՆ-ի դոլլար հատկացնելու վերաբերյալ փաստարդեր և տեղեկատվություն էր ներկայացրել։ Բաժանման վերոնշյալ ծրագրերով նախատեսվում էր՝

1. Լեռնալիբանանի շրջանակներում քրիստոնեական պետության ստեղծում;

2. Չուփի, Բիրաայի և երկրի հարավն ընդգրկող ու հիմնականում պաղեստինցիներով բնակեցված շրջաններում իսլամական պետության ստեղծում;

3. Սիրիայում Տրիպոլի քաղաքի ու Աքքարի շրջանի ընդգրկմանը ալավիական պետության ստեղծում։

Նույն աղբյուրի համաձայն՝ Լիբանանի նախկին արտգործնախարար Շարլ Մալիքը՝ հղում անելով իր ունեցած կապերի վրա, հավաստում էր արևմտյան որոշ շրջանակների պատրաստակամությունը Լիբանանի քրիստոնյաներին ցանկացած՝ այդ թվում երկրի քաժան-

¹⁰⁴ Ghassan Tucni, Lebanon's Wars and Middle East Peace, Mediterranean Quarterly, A Journal of Global Issues, Vol. 1, No. 3, Summer, 1990, p. 90.

¹⁰⁵ Սոլբոր Իվլենդ, Картонные домики: провалы Америки на Ближнем Востоке, ТАСС. БПИ 49 (1222), 5.12.1980, стр. 25.

ման ծրագրերի սատարման ուղղությամբ: Նշվում էր նաև ԱԵՀ-ի անդամ իրավաբան Ռաքբատի հայտարարությունը, որի համաձայն ամերիկյան պատասխանատու գործիչն իրեն հայտնել էր Լիբանանի՝ իրու պետության վերանալու մասին: Այդ հարցը բարձրացվել էր նաև մարտնի համայնքի ղեկավարների խորհրդակցության ժամանակ:

Հողվածում մատնացույց էր արվում, որ եզիպտական քարոզական մարմինները, լիբանանյան հիմնախնդրի արարականացման պատրիկակով, կոչ էին անում քննարկել Լիբանանի ճգնաժամը՝ միաժամանակ աջակցություն ցուցաբերելով փաղանգավորների առաջնորդ Ժմայելին: Վերջինս իր հերթին հանդես էր եկել լիբանանյան հիմնախնդրի արարականացման և միջազգայնացման կոչով¹⁰⁶:

Հարկ է նշել, որ 1975թ. նոյեմբերին հայտնի դարձավ ամերիկյան առևտրական Սեմուել Քամմինզսի^{*} կողմից քրիստոնյա-ացերին 10 մլն. ԱՄՆ-ի դոլարի ամերիկյան գենքի վաճառքի մասին: Լիբանանյան ացերին առաքվեցին «U-16» տեսակի ինքնածիգեր, ծանր հրանոթներ և ականանետեր¹⁰⁷:

Կարծում ենք, որ լիբանանյան աջ-քրիստոնեական առաջնորդների կողմից երկրի մասնատման զաղափարի հրապարակային քննարկումները, իրու Լիբանանի քաղաքական համակարգի պահպանման ծայրահեռ միջոց, անհիմն չէին: Սարունի ղեկավարությունն ըստ եռթյան ծրագրում էր Լիբանան լեռան տարածքում՝ ներառյալ Բեյրութի քրիստոնեարնակ հատվածը, ստեղծել առանձին «Քրիստոնեական Լիբանանի Հանրապետություն»: Բազմաթիվ քրիստոնյա և մարտնի առաջնորդներ հրապարակավ խոսում էին հնարավոր բաժանման՝ «Քարսիմի» ծրագրի մասին, որը խիստ դժգոհություն առաջացրեց հատկապես մուսուլմանների մոտ¹⁰⁸: Այն իսկական բանադրանք էր Լիբանանի մուսուլմանների, պաղեստինցիների և սիրիացիների հա-

¹⁰⁶ الأدستور، بيروت، «Ալ-դուարում», Բեյրութ, 16.10.1975:

* Քամմինզս զենքի վաճառքով զրադվոր աշխարհի խոշորագույն «International Apartment Corporation»-ի ղեկավարն էր, որը նման խոշոր գործարքներ էր կառարում միայն ԿՀՎ-ի ինացությամբ:

¹⁰⁷ Агарыашв. А., Европейский Восток: Терроризм и его покровители, М., 1986, стр. 28.

¹⁰⁸ Kamal Salibi, նշվ. աշխ., էջ 117:

մար, քանզի մասնաւոված և առավել փոքր Լիբանանում քրիստոնեական պետությունն ինքնըստինջան վեր էր ածվելու «երկրորդ Իսրայելի»՝ «մարտնական Սիոնի»։ Այս մտահոգությունը կիսում էին նաև Արարական Պետությունների Լիգայի (ԱՊԼ) անդամ-երկրները։ Նշյալ զարգացումների կանխարգելման և Լիբանանի փրկության նպատակով ԱՊԼ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ Հասան Սարքի ալ-Խուլն առաջարկում էր միջարարական անվտանգության ուժերի մասնակցությամբ անհապաղ միջոցների դիմել¹⁰⁹։

Մինչդեռ ձախերի կողմից պահեստինցիներին զինված պայքարի մեջ աստիճանաբար ներգրավելու փաստը մարտնիների շրջանում խորացնում էր Լիբանանի մասին՝ իրքն ոչ կենսունակ պետություն լինելու համոզմունքը։ Սա իր հերթին փոփոխություն էր նախանշում Սիրիայի լիբանանյան քաղաքականության մեջ¹¹⁰։ Խնդիրն այն է, որ շատերի մոտ Սիրիայի կողմից Արքարի և Տրիպոլիի շրջանների բռնակցման նախադրյալ էր մեկնարանվել ինչպես Տրիպոլիից գրորտացի մարտնիների արտագաղրի հետ կապված սպառնալիքը, այնպես էլ նշյալ շրջաններ Սիրիայից պահեստինյան մարտիկների մուտքը՝ կարգուկանոնի վերականգնման նպատակով։ Կարծիք կար, որ մարտնի դեկապարությունը որոշել էր մարտերի մեջ ՊԱԿ-ի բացահայտ ներգրավում սաղրել։ Տվյալ դեպքում Սիրիան ստիպված կլիներ ՊԱԿ-ի սատարման նպատակով ներխուժել Լիբանան՝ գրավելով Սիրիային հարակից Լիբանանի մուսուլմանական հատվածը։ Իրքն պատասխան քայլ, Իսրայելը կզրավեր հարավային Լիբանանը։ Արյունքում, Լիբանան լեռան հատվածը թեյրութի քրիստոնեական հատվածով կիշչակվեր իրքն «Քրիստոնյա Լիբանանի Հանրապետություն»։

Սունի դեկապարությունը բարձրածայն հերքեց Լիբանանի բաժանման ծրագրի հնարավորությունը, որին միացան պատրիարք Խու-

¹⁰⁹ الأَخْرَارُ، الْقَاهِرَةُ، «Ալ-ախրար», Կահիրե, 17.8.1976։

¹¹⁰ Stoakes F., The Supervigilantes: The Lebanese Kataeb Party as Builder, Surrogate, and Defender of the State, Middle Eastern Studies, 11 (1975), pp. 215-236.

րեյշը և Ռայմոն Էրդեն՝ պնդելով ամեն գնով Լիբանանի ազգային միասնականության պահպանման անհրաժեշտությունը¹¹¹:

Պրիմակ կովի համաձայն՝ կային բռոր հիմքերը ենթադրելու, որ Խսրայելի ղեկավարությունը սկզբնական շրջանում վճռականորեն սատարում էր Լիբանանի քածանման ծրագիրը, որի իրականացման դեպքում Թել-Ավիվը մտադիր էր գրավել Երկրի հարավը: Դա վերջինիս հնարավորություն կտար մի կողմից՝ հյուսիսային Գալիլեայում գտնվող կենսական կարևորություն ներկայացնող կենտրոններից սահմանը հեռացնել՝ նվազագույնի հասցնելով դրանց խոցելիությունը Լիբանանի լեռնային շրջանում գտնվող ՊՆ-ի ռազմահանգըվաններից: Մյուս կողմից Լիբանանի հարավի գրավումը, մինչև Լիտանի գետը, գործնականում իսրայելական վերահսկողության տակ կրներ գտնի հուները, որոնք չափազանց կարևոր նշանակություն ունեին ինչպես Խսրայելի, այնպես էլ հարևան արարական Երկրների համար¹¹²:

Կարծիք կար նաև, որ Լիբանանի մարտնի առաջնորդներն իրենց ծրագրերի իրազործման նպատակով համագործակցում էին Խսրայելի հետ: Այս առումով շահարկվում էր այն փաստը, որ Լիբանանում քրիստոնյա պետության ստեղծման դեպքում ՍՍ-ում Խսրայելի՝ իրեւ հրեական պետության դիրքորոշումը պետք է այլև անոնակա շղիութեր¹¹³: Դեռ ավելին, Թել-Ավիվը հույս ուներ, որ Լիբանանի քրիստոնյա-մուսলմանական քաղաքական համակարգի «ծախողություն» միջազգային հանրության մոտ կասկածներ կառաջացներ Պաղեստինում արաբ-հրեական համատեղ պետության ստեղծման հետանկարի շուրջ¹¹⁴:

Այնուամենայնիվ, 1975թ. դեկտեմբերին Խսրայելի վարչապետ Ռաֆինը՝ խուսափելով արևմտաեվրոպական Երկրների և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սրումից՝ հայտարարեց, որ Խսրայելը Լիբանանի քածանման նպատակ չի հետապնդում, քանի որ այն չի համապա-

¹¹¹ Kamal Salibi, Աշլ. աշխ., էջ 118:

¹¹² Примаков Е.М., Анатомия Ближневосточного конфликта, М., 1978, стр. 117.

¹¹³ Kamal Salibi, Աշլ. աշխ., էջ 118:

¹¹⁴ Пырзали Е.Д., Աշլ. աշխ., էջ 226:

տասխանում իր շահերին¹¹⁵: Սինջեր «Ալ-Դուաքուր» շաբաթաթերթի վերոնշյալ հրապարակման համաձայն՝ Լիբանանի քածաննան ցանկացած ծրագրի իրականացում բխում էր ԱՄՆ-ի և Իսրայելի շահերից, որոնք կարող էին շարունակել պարտադրել մերձավորարևելյան կարգավորման իրենց տարրերակը¹¹⁶:

Այսուհանդերձ, Լիբանանի քաղաքական համակարգի վերջնական փլուզումը կանխելու դժվարին գործն ի զորու էր իրականացնել միայն Դամասկոսը, որը ստիպված էր հանդես գալ ճգնաժամը խաղաղ քանակցային ճանապարհով կարգավորելու և հակամարտող կողմերի միջև փոխըմբռնման ուղիներ փնտրելու առաջելությամբ¹¹⁷: Հակամարտության նախնական միջնորդական փուլում (1975թ. ապրիլից մինչև դեկտեմբեր ամիսները) Սիրիան ապավիճեց զերազանցապես ոչ հարկադրական և դիվանագիտական միջոցառումների կիրառմանը¹¹⁸, խոսափելով Իսրայելի կողմից Լիբանան պատասխան ներխուժման և Սիրիայի ու ԽՍՀՄ-ի համար անցանկալի նոր հակամարտության հնարավորությունից¹¹⁹:

Հակառակ խրայեցիների հանդեպ Դամասկոսի տածած հակարանքին, երկյուղածությանն ու թերահավատությանը, վերջինս զիտակցում էր սեփական զինուժի նկատմամբ ամերիկյան աջակցության շնորհիվ տեխնիկապես քարծր մակարդակի վրա գտնվող խրայելական զինուժի առավելությունը: Ուստի Սիրիան շահավորում էր Թել-Ավիվի նկատմամբ իր «զգացմունքները» ռազմավարական առավել անկողմնակալ նկատառումներով¹²⁰: Այդ հանգամանքով էր թերևս պայմանավորված Հաֆիզ ալ-Ասադի կողմից (1975թ. դեկտեմբերից) Լիբանանի մասնատումը և ծախ-արմատականների ու նրանց պաղեստինցի դաշնակիցների վճռական հարթանակը կանխելու ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: Հակառակ դեպքում, ըստ Ի.Ռաբինովիչի, Սի-

¹¹⁵ Примаков Е.М., նշվ. աշխ., էջ 118:

¹¹⁶ مسند، بيروت، 16.10.1975:

¹¹⁷ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 47-48:

¹¹⁸ Joy Naomi Weinberger, նշվ. աշխ., էջ 139:

¹¹⁹ Питер Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 505:

¹²⁰ William Polk, նշվ. աշխ., էջ 346:

բիան կարող էր հայտնվել երկու արմատական հարևանների՝ ծախսությամբ մուտքանական ուժերի ձեռքում հայտնված Լիբանանի և Իրաքի միջև։ Հեղինակի ենթադրությամբ՝ Իրաքը կարող էր խրայելական ազդեսիա սաղրել, որոնք Լիբանան կներխուժեին քրիստոնյաներին օգնություն ցուցաբերելու պատրիակով։ Այդժամ Սիրիան հարկադրված կլիմեր ընտրություն կատարել հավասարապես նվաստացուցիչ այլ ընտրանքային իրավիճակների միջև։ Կամ պայքարել Խորայելի դեմ, կամ՝ դրանից խուսափելու ստորացումը կրել։ Նման երկրներանքից խուսափելու նպատակով, Ասադը որոշեց քաղաքական առավել լայն ենթատերստ ենթադրող ուազմական ներխուժման նախապատրաստվել։ Նախքան այդ, Դամասկոսը պետք է իր ուժեղ քանակն ու Լիբանանի, Հորդանանի և պաղեստինցիների նկատմամբ ունեցած ազդեցությունը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի հետ սերտ կապերն իրեն լծակ օգուազործեր ԱՍԽ-ի և նավթով հարուստ արարական երկրների հետ հարաբերությունների բարելավման նպատակով¹²¹։ Ի վերջո, լիբանանյան ներխուժումից և ճգնաժամի կարգավորումից հետո Ասադն ի վիճակի կլիմեր ոչ միայն կանխել Սիրիայի շահերին սպառնացող զարգացումները, այլ ցույց տալ, որ Սիրիան ԱՍ-ում միակ արդյունավետ արարական երկիրն է¹²²։

Ինչ վերաբերվում է Լիբանանի մասնատման շուրջ Դամասկոսի պաշտոնական դիրքորոշմանը, ապա այդ ուղղությամբ ուշագրավ է 1976թ. հունվարի առաջին կեսին Սիրիայի արտօրուժնախարար Արդեկ Հալիմ Խաղջամի արած հայտարարությունը։ Վերջինիս համաձայն՝ աջ-փաղանգավորների կողմից Լիբանանի, այդ բվում՝ լեռնային քրիստոնեարնակ, Բեյրութի և ծովափնյա շրջանների, բաժանման փորձի դեպքում Սիրիան պատրաստվում էր քռնակցել Լիբանանը, որին կանգնեցնել չէր կարող անզամ Խորայելի կողմից Լիբանան ներխուժման սպառնալիքը¹²³։ Խաղջամը մերժեց 1975թ. դեկտեմբերի վերջին Լիբանանի մասնատումը ճգնաժամի «քննական» լուծում համարելու

¹²¹ Itamar Rabinovich, Աշվ. աշխ., էջ 48:

¹²² Այս մասին մանրամասն տես՝ Itamar Rabinovich, The Limits of Military Power: Syria's Role and Lebanon in Crises: Participants and Issues, N.Y., 1979, pp. 55-73.

¹²³ Արայի Ալեք, «Ալ-ռայ Ալ-ամմ», Քուվեյթ, 7.01.1976:

ուղղությամբ Ժմայելի հայտնած տեսակետը։ Ըստ Սիրիայի արտգործնախարարի՝ լիբանանցիներն ունեին երկու այլնոտքանը՝ կամ ապրել Լիբանանի առկա սահմաններում՝ իրեն միացյալ և անկախ ժողովուրդ, կամ էլ՝ երկու քաժանման դեպքում Դամասկոսը պետք է ուղղակի միջամտեր՝ ողջ Լիբանանը (ներառյալ Լիբանան լեռը) վերամիավորելով Սիրիային¹²⁴։

Իր հերթին Խորայելի վարչապետ Իցխակ Ռարինը հայտնել էր, որ Թել-Ավիվը չի հանդուրժի Լիբանանի նկատմամբ սիրիական ուղղմական միջամտության որևէ փորձ՝ համարելով այն իրեն Խորայելի անվտանգությանն ուղղված սպառնալիք¹²⁵։

8. ՍԻՐԻԱՅԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆ-ՊԱՂԵՍԻՆՅԱՆ ՀԱԿԱՍՎՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՄՆ-Ի ԴԻՔՑՈՐՈՇՈՒՄՆ ԱՅԴ ՈՒՂԴՈՒԹՅԱՄ (1975-1976ԹԹ.)

1975թ. նոյեմբերին Զահլեռում, Դամուրում, հատկապես Բեյրութում ԼԵ-ի, ԱԾ-ի և ՊԴԾ-ի միջև շարունակվող կատաղի մարտերում ուղղմական առավելությունը ծախս-մուսուլմանական ուժերի կողմն էր։ Արտակարգ դրություն մտցնելու ուղղությամբ դեկտոներին ներքին գործերի նախարար Շամունի առաջարկությունը մերժվեց վարչապետ Քարամենի կողմից՝ քանակի միջամտությունը պաղեստինցիների հետ անխուսափելի ուղղակի քախում առաջացնելու և քանակի ներսում քրիստոնյաների ու մուսուլմանների երկպառակության հանգեցնելու պատճառարանությամբ¹²⁶։ 1976թ. հունվարի դրությամբ հակամարտությունը եղի էր Լիբանանի սահմաններից դուրս գալու (Սիրիա և Խորայել) և արարական երկուների միջև հավասարակշուությունը խախտելու տեսանկյունից¹²⁷։ Ստեղծված իրավիճակում սիրիական տարածքից պատերազմող կողմերին տարանջատելու և Լիբանանի կա-

¹²⁴ Marius Deeb, նշվ. աշխ., էջ 126:

¹²⁵ TACC. Atlaas N 3 (967), 16.01.76, стр. 31-32.

¹²⁶ Примаков Е.М., նշվ. աշխ., էջ 120:

¹²⁷ Don Peretz, նշվ. աշխ., էջ 387:

ուավարության վերակազմավորման ուղղությամբ ճնշում ապահովելու նպատակով ՊԱԲ-ի և «Ալ-Սահկա»-ի մարտիկները մուտք գործեցին Լիբանան: Իրականում Սիրիայի նախագահի որոշման նպատակը կարճաժամկետ սահմանափակ միջամտությունն էր: Սինդիք Նաումի Վայնը երգերի կարծիքով՝ «Սիրիան ընկավ այն նույն քակարդը, որի մեջ ընկել էին մյուս միջամտողները՝ սխալ հաշվարկելով իր մասնակցության հնարավոր գինը»: Սիրիայի ուղարկած պաղեստինյան ուժերը ներքաշվեցին Լիբանանի պաղեստինցիների՝ ներառյալ ավանդական դաշնակից ՊԱԿ-ի հետ մարտերի մեջ, որոնք ըստ եռթյան ողջունում էին երկրի քաժանման ծրագրերը¹²⁷: Սիրիայի յուրաքանչյուր քայլ նպատում էր ՊԱԿ-ի և ԱԾ-ի միջև կապերի սերտացմանը՝ ընդգծելով վերջիններիս քաղաքականության հակասիրիական քնույթը¹²⁸:

Այսպիսով, 1976թ. հունվարին ճգնաժամն ընդունեց լիբանանայաղեստինյան՝ արարական հականարության քնույթ, հատկապես այն քանից հետո, երբ պաղեստինյան զինված ուժերի դեմ նետվեցին Լիբանանի Ուազմաօպային ուժերն (ՈՕՈՒ) ու լիբանանյան քանակի ցամաքային ստորաբաժանումները¹²⁹ վերջիններիս շարքերում պառակտում մտցնելով: Պաշտպանության նախարար Քարամեի և ներքին գործերի նախարար Շամունի միջև տարածայնություններն առավել սրվեցին մարտերի դադարեցման գործում քանակի միջամտության խնդրի շուրջ¹³⁰: Լիբանանյան քանակը վերջնականապես պառակտվեց բռնկված մարտերի արդյունքում, իսկ իշխանություններն ի վիճակի չեղան վերահսկել անկասելի քառում հայտնված երկիրը: Լիբանանում կարգ ու կանոնի և անվտանգության ապահովման, ինչպես նաև քաղաքացիական պատերազմի քեժացման հնարավորության բացառման ուղղությամբ սիրիական պատվիրակության միջնորդական ջանքերի արդյունքում մարտերը դադարեցին և ձևավորվեց լիբանանցի, սիրիացի և պաղեստինցի սպաներից կազմված եռակողմ «Քարծրագույն զինվորական հանձնաժողով» (ՔԶՀ): Վերջինիս ձևա-

¹²⁷ William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 99-100:

¹²⁸ Հովհաննիսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 36:

¹²⁹ Примаков Е.М., նշվ. աշխ., էջ 120:

¹³⁰ Marius Deeb, նշվ. աշխ., էջ 4: 1958թ. Քամիլ Շամունը Լիբանանի ներքին գործերին միջամտելու խնդրամքով դիմել էր միջազգային համբությանը:

վորմամբ (հունվար-փետրվար ամիսներին) սիրիացի միջնորդ քանազնացները նախագահ Ֆրանժիկի հետ պայմանավորվածության եկան կրոնական համայնքների, ազգային կազմակերպությունների քարեփոխումների կենսագործման շուրջ, որից հետո նախագահ Ֆրանժիկն փետրվարի 14-ի ռադիոեթերից հրապարակեց «Սահմանադրական Փաստաբություն»: Միաժամանակ հրադադարի և լյանքի բնականոն հունին վերադառնալուն ուղղված որոշ միջոցառումներ կիրառվեցին՝ լիբանանյան զարգացումներում մեծացնելով ինչպես սիրիացիների, այնպես էլ ՊԱԿ-ի ղերակատարությունը: Իգուր չե, որ արար դիվանագետների մեծ մասի աշքերում Սիրիան և ՊԱԿ-ը լիբանանյան ճգնաժամում հաղթողի տպավորություն քողեցին: Սիրիան ամրապնդեց իր քաղաքական ազդեցությունն ու հեղինակությունն արարական աշխարհում, իսկ պահեստինցիներն ամրապնդեցին իրենց ռազմական դիրքերն ու ներկայությունը Լիբանանում¹³¹:

Ինչ վերաբերվում է վերոնշյալ զարգացումների նկատմամբ Սպիտակ տան դիրքորոշմանը, ապա հարկ է նշել, որ վերջինս մերժեց երկրի ներքին գործերին միջամտության խնդրանքով Քամիլ Շամունի կողմից միջազգային հանրությանն ուղղված կոչը¹³²: Այս ուղղությամբ ԱՍՆ-ի, և որ առավել կարևոր է, Խորայելի զասվածությունը, կարելի է քացատրել նախորդ 20 տարիներին ամերիկյան արտաքին քաղաքական շահերի, Լիբանանի և նրան հարակից երկրների միջև ուժային հարաբերակցության փոփոխությամբ: Նման իրավիճակում կողմնակի ցանկացած տերության զինված միջամտություն կարող էր առավել քան երրես ծավալուն և վտանգավոր ոլորդգործության պատճառ դառնալ: Ուստի, նախապատվությունը տալով չափավոր արարական երկրների՝ հատկապես Եգիպտոսի, Սաուդյան Արարիայի և Քուվեյթի՝ միջոցով խնդրի կարգավորմանը, ԱՍՆ-ը խորհուրդ էր տալիս Խորայելին, ԽՍՀՄ-ին և նվազական երկրներին գերծ մնալ Լիբանանում ցանկացած միջամտությունից:

¹³¹ «New York Times», 23.1.1976.

¹³² «New York Times», 21.1.1976.

* Նշյալ պետությունները լիբանանյան ճգնաժամը միջարարական և ոչ թե միջազգային խմելիր էին համարում:

**9. ԼԻԲԱՆԱՆՑԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՌԱԿՏՈՒՄՆ ՈՒ
ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԳՆԱԺԱՍՏ:**
**ԻԼԻԱՍ ՍՄՐԳԻՍԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵՂՆԱԾՈՒ
(1976թ.)**

Նախքան քաղաքացիական պատերազմը, կրոնական ու ազգային խառը կազմ ունեցող լիբանանյան 15.000-անոց բանակը¹³³ համարվում էր երկրի միակ ապակրոնական ուժը: Սակայն ուսումնական կառավարության արագ անկման, լիբանանյան բանակի շարքերում առկա կրոնական տարածայնությունների, ինչպես նաև բանակի դեկավարների դեմ մուսուլման առաջնորդների ներկայացրած կրոնաքաղաքական բնույթի մեղադրանքների արդյունքում այն ի վերջո կազմալուծվեց¹³⁴: Երբեմ ՍԱ-ում խաղաղ օազիս հիշեցնող այս երկրում միմյանց դեմ մարտնչել սկսեցին մոտ 100.000 զինված մարտիկներ և 40 բանակային կամ զինված խմբավորումներ, որը 10.000 քառ. կմ. տարածք զբաղեցնող փոքրիկ երկրի համար բերևս բարձրագույն ցուցանիշ էր¹³⁵: 1974թ. դրությամբ Լիբանանի բնակչությունը երկրագնդի վրա առաջին տեղն էր զբաղեցնում մեկ շնչին բաժին ընկնող զենքի քանակությամբ¹³⁶:

Լիբանանում պաշտոնապես հայտնի էին ամենատարբեր կուսակցությունների և քաղաքական խմբակցությունների պատկանող 15 ուսումնականացված կազմակերպություններ, որոնց մեջ, «Ալ-Նահար»-ի համաձայն, մտնում էին 150.000 մարդ և որոնց տրամադրության տակ կար 300.000 միավոր բռլոր տրամաշափերի հրազեն¹³⁷: Լիբանանյան բազմազգ բանակի փոխարեն, յուրաքանչյուր համայնք իր ինքնավա-

¹³³ «New York Times», 20.4.1975.

¹³⁴ «Le Monde Diplomatique», Paris, 7.7.75.

¹³⁵ TACC. Атлас N 29 (993), 16.7.76, стр. 27.

¹³⁶ Н. Горбунова, Ливан накануне гражданской войны (1975-1976 гг.), Арабские страны: История, экономика, политика, М., 1986, с. 245.

¹³⁷ «النهار», بيروت, 22.8.1975:

րության ու անվտանգության ապահովման նպատակով ծեռնամուխ նողակ սեփական միջիցիայի ստեղծման գործին¹³⁸:

Լեյտենանտ Ահմադ ալ-Քաքիրի¹³⁹ զիսավորությամբ ստեղծվեց մոտ 7000 շարքայիններից և կրտսեր սպաներից բաղկացած «Արարական Լիբանանի բանակը» (ԱԼԲ), որը հրաժարվում էր համեմս գալ ԱՀՌԻ-ի ու պաղեստինցիների դեմ՝ հիմնականում հակվելով ծախերի կողմը: 20.000-ի հասնող ծախերի կազմում ընդգրկված էին Քամալ Զումբլաքի ԱՍԿ-ի գորամիավորումները, հիմնականում սունի-մուսուլմաններից կազմված «Մուրաքիտուն» նասերական շարժման մարտիկները¹⁴⁰, սիրիամետ և իրաքամետ բասարականները, ծախ ԼԿԿ-ի մարտիկներն ու Լիբանանի ԿԳԿ-ի «անկախները», կենտրոնամետ ուժերը՝ հատկապես Իմամ Սադրի զիսավորած «Զրկվածների շարժումը»¹⁴¹ և ՊԱԲ-ի 5 գորամիավորումները: Լիբանանի հյուսիսում՝ Արքարում, արևելքում՝ Բերայում և հարավում՝ Ջեզզինում, տեղակայված էին սիրիական մոտ 12.000 զորքեր: Եվ վերջապես, Լիբանանում էին գտնվում Սաոււյան Արարիայի, Սուլանի, Լիրիայի և Սիրիայի գորակազմներից՝ 2500 զինվորներից բաղկացած «Միջարարական Անվտանգության ուժերը» (ԱԱՈՒ)¹⁴²:

Աջերի զինված կազմավորումների մեջ մտնում էին 10.000 փառանգավորներ, 5000 շամունականներ, 5000 ԼՍՊԿ-ի անդամներ և մարտնական այլ խմբավորումներ:

Թեև հիմնականում քրիստոնյաներից կամ մուսուլմաններից կազմված կիսառազմական այս ջոկատները կրոնական երանգավորում ունեին, այնուհանդերձ, իրենց հենքում նրանք քաղաքական խմբավորումներ էին: Դրանց գուգահեռ գոյություն ունեին նաև զուտ կրոնական բնույթի, մասսամբ ընդհատակյա կազմակերպություններ, որոնք ցրված էին երկրով մեկ՝ տարբեր համայնքների աշխարհագ-

¹³⁸ William Polk, նշվ. աշխ., էջ 345:

¹³⁹ Don Peretz, նշվ. աշխ., էջ 387:

¹⁴⁰ TACC. Atmac N 29 (993), 16.7.76, стр. 27.

¹⁴¹ «Le Monde», Paris, 20-25.10.75. Իմամ Սադրի և «Զրկվածների շարժման» մասին տես՝ III ԳԼՈՒԽ, VIII ներազնություն:

¹⁴² TACC. Atmac N 29 (993), 16.7.76, стр. 27.

յության համապատասխան¹⁴³: Սեփական զինված ջոկատներ՝ «քանակներ» ունեին նաև խոշոր հողատերեր-կալվածատերերը՝ «ֆեռոյալները», կամների առաջնորդները: Սեփական զինված ջոկատ ուներ նախագահ Ֆրանժիենի՝ հայրենի Զորոտա քաղաքում, վարչապետ Ռաշիդ Քարամեն՝ հայրենի Տրիպոլիում: Մի քանի հարյուրի հասնող «սեփական պահակախումբ» ուներ ներքին գործերի նախարար և նախկին նախագահ Ջամիլ Շամունը¹⁴³:

Զախ և մուսուլմանական զինված կազմակերպությունների գեների աղբյուրները ԽՍՀՄ-ը և Արևելյան Եվրոպայի երկրներն էին, որոնցից ծեռք բերված զենքը փոխանցվում էր Սիրիայով՝ այն հարավային Լիբանանի հետ կապող «արահետից» ազատորեն օգտվող ՊԳԸ-ի միջոցով: Քրիստոնյա միլիցիան իր զենքի մեծ մասը սկզբնական շրջանում ծեռք էր բերում արևելանվորապական երկրներից՝ ԳՎՀ-ից, Չեխովուրվակիայից և Բուլղարիայից: Ավելի ուշ, նրանց գաղտնի զենք է փոխանցվել զիխավորապես Արևմտյան Եվրոպայից՝ մեծ մասամբ Բելգիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, ԳՖՀ-ից և Պորտուգալիայից: Քրիստոնեական քանակի համար զենքը էր ծեռք բերվում Լիբանանի քրիստոնյա գործարարների, մարոնի կրոնական հիմնադրամների և արարական որոշ վարչախմբերի կողմից¹⁴⁴: Հակամարտող ճամբարները հաճախ ունենում էին զենքի միևնույն մատակարարները¹⁴⁵:

Այսպիսով, 1976թ. մարտի սկզբին Լիբանանի կառավարության առջև հառած վերոնշյալ դժվարությունները խոչընդոտեցին տարբեր խմբակցությունների միջև փոխհամաձայնության կայացմանը: Նման պայմաններում պայքարը սկսեց կիզակետվել նախագահի փոփոխության խնդրի շուրջ, որի հետ էին ծախս-մուսուլմանական ուժերը պայմանավորում ճգնաժամի կարգավորման և սահմանադրական փոխադարձ ընդունելի որոշումների մշակման գործընթացի շարունակությու-

¹⁴³ Քրիստոնյաներն ու դրութերը՝ լիբանանյան լուսներում, սուննիները՝ եյուախում, շիաները՝ հարավում և այլն:

¹⁴⁴ Руло Э., Ливан в обстановке гражданской войны, ТАСС. Атлас N 41 (953), 10.10.75, стр. 32-33.

¹⁴⁵ Kamal Salibi, նշվ. աշխ., էջ 135:

¹⁴⁵ Руло Э., նշվ. աշխ., էջ 33:

Նը: Ֆրանժիեն հրաժարվեց ենթարկվել այդ պահանջներին, և զինված պայքարը վերսկսվեց:

Ապրիլի 15-ին Յասեր Արաֆաթի և նախագահ Ասադի միջև Սիրիայում պայմանագիր կնքվեց, որի համաձայն երկու կողմերը պարտավորվեցին դադարեցնել մարտերը, վերականգնել եռակողմ՝ «սիրիա-լիբանան-պաղեստինյան հանճնաժողովի» աշխատանքները, հանդես գալ Լիբանանի քաժանման և հակամարտության «արարականացնան» կամ «միջազգայնացման»՝ ճգումների դեմ: Սիրիան լիբանանյան խորհրդարանին կոչ արեց ուղղում մտցնել սահմանադրությունում, որը նոր նախագահի ընտրության հնարավորություն կընձեռէր: 1976թ. մայիսի 8-ի խորհրդարանական նիստի ժամանակ միակ քեկնածու Խիաս Սարգսոս Սիրիայի պաղեստինյան ուժերի աջակցության և պատգամավորների վրա Դամասկոսի միջամտության պայմաններում ընտրվեց նախագահի պաշտոնում¹⁴⁶:

* Խոսքը գմում է Լիբանան արարական, ֆրամսիական կամ խառը՝ արարաֆրանսիական գորբեր ուղարկելու առաջարկության մասին, որը միաժամանակ անցանկայի էր Սիրիայի և ՊԱԿ-ի համար:

¹⁴⁶ Don Peretz նշվ. աշխ., էջ 388: Սարգսոս հիմ շեհարական էր և ոչ մի ընդհանուր քանչուներ ավանդական լիբանանյան քաղաքական գործիչների ենտ: Նա օգտվում էր Ռաշիդ Քարամինի աջակցությունից և Սիրիայի ու պահպանողական «Քուֆուր Շակատի» քեկնածում էր: Դամասկոսի միջամտությունը Սարգսի ընտրության հարցում պառակտում մտցրեց ծախս-մասունդանների շարքերում, որոնք իրենց հերթին քաժանմվեցին սիրիամետների և հակասիրամետների:

ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ՝ 1976Թ. ԵՎ ԻՄՐԱՅԵԼԻ՝
1978Թ. ԼԻԲԱՆԱՆՑԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆ ՆԿԱՏՄԱՆ

**I. 1976Թ. ՍԻՐԻԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ԱՅԴ ՈՒՂԴՈՒԹՅԱՄ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ**

Վերոշարադրյալ գարգացումների քննությունը բույլ է տալիս ենթադրել, որ Սիրիան ավելի շուտ հաջողություն արձանագրեց Լիբանանի կառավարության, քան թե պաղեստինցիների նկատմամբ վերահսկողություն հաստատելու հարցում¹⁴⁷: Դամասկոսը հաջողություն չունեցավ նաև արարական, հատկապես պաղեստինյան (ՊԱԿ-ի ղեկավար Յասիր ալ-Արաֆաթի), լիբանանյան (Քամալ Չումրլաթի) և հորդանանյան ուժերից՝ «հյուսիսային ճակատի» ճևավորման միջոցով Իսրայելին դիմակայելու և Սիրիայի անվտանգության ապահովման ուղղությամբ գործադրվող ջանքերում¹⁴⁸: Դամասկոսի մոտ մտավախություն էր առաջացնում Չումրլաթի ու պաղեստինցիների կողմից քրիստոնյա-աջերին լիակատար ուազմական պարտության մատնելու շուրջ արված հայտարարությունները¹⁴⁹: Դրանք կարող էին ինչպես Լիբանանի քրիստոնյաներին «փրկելու» նպատակով Իսրայելի ներխուժման պատրվակ, այնպես էլ պաղեստինցիներին ու ճախերին ջախջախելու, Իսրայելի հովանակորությամբ Լիբանանում քրիստոնեական պետություն ստեղծելու նախադրյալ ծառայել¹⁵⁰: Հարավային Լիբանանը պաղեստին-մուսուլմանական արմատական տրամադրված

¹⁴⁷ William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 100:

¹⁴⁸ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 36-37:

¹⁴⁹ Don Peretz, նշվ. աշխ., էջ 388:

¹⁵⁰ Լիբանանյան ճախերի առաջնորդ Ք. Չումրլաթը ՍԱԿ-ի գլխավոր քարտուղար Կորտ Վալիհայմին դիմել էր «Սիրիական գորքերի լիբանանյան ներխուժումն անհապաղ դադարեցնելու» ուղղությամբ միջամտության խնդրանքով: Այս մասին տես՝ Կ ուղղություն Ալեքսանդր Պավլովիչ Ալեքսանդրովի համար առաջարկությունը՝ ՏԱՀՀ Առաջարկ 1988 թվականի մայիսի 20-ին ընդունվելը: Այս մասին տես՝ Կ ուղղություն Ալեքսանդր Պավլովիչ Ալեքսանդրովի համար առաջարկությունը՝ ՏԱՀՀ Առաջարկ 1988 թվականի մայիսի 20-ին ընդունվելը:

վարչախմբի՝ ծեռքում հայտնվելու դեմ Թել-Ավիվի «կանխարգելիշ հարձակումը» լորջ սպառնալիք կարող էր ներկայացնել Սիրիայի անվտանգությանը։ Դամասկոսի համար վտանգավոր նախադեպ կարող էր ծառայել նաև պարհատինժիների և ծախ-մուսուլմանական ուժերի հաղթանակի դեպքում Լիբանանը քրիստոնեական և մուսուլմանական պետությունների միջև քաֆանման հնարավորությունը¹⁵¹։

Նշենք, որ Սիրիայի լիբանանյան ներխուժումն արագացնելու որոշմանը նպաստեց մայիսի 22-ին Լիբանան զորքեր ուղարկելու Ֆրանսիայի առաջարկությունը (Լիբանանի շահագրգիռ բոլոր կուսակցությունների համաձայնությունը ստանալու նախապայմանով)¹⁵², ապա՝ հունիսի 1-ին ԽՍՀՄ-ի նախարարների խորհրդի նախագահ Ալեքսեյ Կոսիգինի՝ Դամասկոս պաշտոնական այցելություն կատարելու որոշումը։ Գիտակցելով, որ համայնավարները դեմ են տարածաշրջանում իրենց դաշնակիցների՝ Սիրիայի և ՊԱԿ-ի միջև հակամարտությանը՝ այն համարելով ավելի շուտ ամերիկանետ, քան խորհրդամետ քայլ, Ասադի իր հյուրին անդառնալի փատոի առջև կանգնեցնելու նպատակով լիբանանյան ներխուժումն իրականացրեց մայիսի 31-ին։ Չի բացառվում, որ անկախ որոշումներ կայացնելու իր համարձակության ցուցադրմանը Ասադը պատրաստ էր անզամ վտանգել Սոսկվայի հետ իր հարաբերությունները։ Սեկ այլ կարծիքի համաձայն՝ Ասադը լիբանանյան ներխուժման իր որոշումը համաձայնեցրել էր Կոսիգինի հետ՝ Վերջինիս համոզելով չհամաձայնելու դեպքում, առնվազն չիմակայել սիրիական ռազմական միջամտությանը¹⁵³։ Այնուհանդեռ, Սիրիայի քայլը կարելի է գնահատել իրուն համայնավարների մերձավորակնելյան քաղաքականության ծախողում, քանզի, տարածաշրջանում իրենց ազդեցության կենտրոնը Կահիրեից

* Ենթադրվում էր, որ նրանք կմերժեին Խորայելի հետ խաղաղության հաստատման բոլոր հնարավորությունները։

¹⁵¹ «Sunday Times», London, 10.6.1976.

¹⁵² Marius Deeb, նշվ. աշխ., էջ 9: Առաջարկությունը մերժեցին ԱԾ-ն ու ու ավանդական մուսուլմանական առաջնորդները, սակայն ողջունեց Պիեր Ժմայելը։

Պիրինի համաձայն՝ սիրիական ներխուժման հետ Կոսիգինի այցի համընկնելու փաստը ԽՍՀՄ-ի կողմից երահանգակորված լինելու շորջ ընդիանուր կասկածների անլիք էր տվել։

¹⁵³ Marius Deeb, նշվ. աշխ., էջ 10:

Դամասկոս տեղափոխվելուց հետո, նրանք հայտնաբերեցին, որ *Միջամբ* և գործում է քավական անկախ և ի հեճուկս իրենց ցանկության:

Նշենք նաև, որ լիբանանյան ծախերի պառակտողական ջանքերի կասեցման միջոցով Դամասկոսն ակնկալում էր, որ մարտնիներն աջակցություն կորունեն ոչ թե Արևմուտքի կամ Խարայելի, այլև՝ Միջիայի մոտ¹⁵⁴: Այդ էր պատճառը, որ մարտնի դեկավարության կողմից ներխուժման հրավերը ստանալուն պես, Դամասկոսը չհապաղեց իր բանակը գործի դնելու (1976թ. մայիսի 31-ին) հարցում՝ հանդես գալով աջ-քրիստոնեական ուժերի պաշտպանությամբ և ուզմական բախման մեջ մտնելով ԱԾ-ի ու ՊԱԿ-ի հետ¹⁵⁵:

Սիրիայի ուզմական միջամտության արդյունքում լիբանանյան հակամարտությունը ձեռք բերեց միջազգային նշանակություն՝ փոխելով ուժերի հարաբերակցությունը հօգուտ լիբանանյան աջերի¹⁵⁶: Չի բացառվում, որ Դամասկոսը Լիբանան ներխուժեց ոչ միայն ճգնաժամի խորացումը, այլ իր գործադրած միջնորդական ջանքերի ծախողման ստորացումը կանխելու նպատակով:

Սիրիական ուզմական միջամտությունից հետո ԽՍՀՄ-ը ՏԱԱՍ-ի միջոցով իր աջակցությունն արտահայտեց պահեստինյան դիմադրական շարժմանը¹⁵⁷, միաժամանակ Ֆրանսիային ու ԱՍՍ-ին կոչ անելով զերծ մնալ հակամարտությանը ուզմական միջամտությունից, իսկ Դամասկոսին «ժիշեցմելով» Լիբանանում սիրիական գործերի առաքելության ժամանակավոր բնույթի մասին¹⁵⁸: ԱՍ-ի իրադրության հետագա սրումը կանխելու նպատակով, ԽՍՀՄ-ը հանդես եկավ Լիբանանի անկախության, ինքնիշխանության և տարածաքային ամբողջականության պահպանման օգտին՝ ընդգծելով մերձավորարևելյան տարածաշրջանը ԽՍՀՄ-ին առավել մոտ գտնվելու, հետևարար

¹⁵⁴ Tabitha Petran, Եշվ. աշխ., էջ 185:

¹⁵⁵ William Polk, Եշվ. աշխ., էջ 345: Սիրիական կանոնավոր բանակի 6000 զինվոր՝ 260 տանկերի ուղևորությամբ հունիսի 1-ին ներխուժեցին լիբանանյան տարածք, որից հետո սիրիական բանակը ընթանուր թիվը Լիբանանում հասավ 14.000-ի, իսկ 1976թ. հոկտեմբերի դրույթամբ՝ 22.000-ի:

¹⁵⁶ Китай и Палестинская проблема (1964-1976 гг.), Եշվ. աշխ., էջ 140:

¹⁵⁷ مهران، أناقة، «Ա-ակամ», Կահիրե, 11.6.1976:

¹⁵⁸ «Eco», Paris, 10.6.1976.

լիրանանյան զարգացումներով ԽՍՀՄ-ի ոչ պակաս շահագրգութածության հանգամանքը¹⁵⁹:

Սիրիայի ռազմական միջամտությունը խոր վրովունք առաջացրեց նաև արարական երկրների մոտ: Սիրիայի և Եգիպտոսի նախագահների հարաբերությունները, արարական գործին դավաճանության փոխադարձ մեղադրանքների արդյունքում, առավել սրվեցին¹⁶⁰: Եգիպտոսը Սիրիային դատապարտեց արարական երկրների հետ իր գործողությունները շիամածայնեցնելու մեջ՝ խօսելով՝ ‘Կամասկոսի հետ դիվանագիտական հարաբերությունները: Պաղեստինյան գործի պաշտպանության միջոցով արարական աշխարհում իր հեղինակության վերականգնման նպատակով Եգիպտոսը սկսեց Լիբանանի ճգնաժամում առավել ակտիվ դեր ստանձնել՝ հանդես գալով ՊԴՀ-ի և ԱԾ-ի պաշտպանությամբ: 1976թ. հունիսից ի վեր Եգիպտոսը ԱՊԼ-ի միջոցով ջանքեր գործադրեց Լիբանանում սիրիական ուժերին «Արարական Անվտանգության ուժերով» (ԱԱՈՒ) փոխարինելու ուղղությամբ¹⁶¹: Իրաքը ևս, Սիրիայի դեմ իրքն ճնշամիջոց, Սիրոնի մուտքմանական ուժերին օգնության նպատակով գորքեր ուղարկեց իրաք-սիրիական սահման, որոնց հակագրելու նպատակով Սիրիան հարկադրված էր «շտապ միջոցներ» ձեռնարկել¹⁶²:

Վեճեր ծագեցին անգամ ԱՊԼ-ի կողմից 1975թ. Լիբանան ուղարկած խաղաղապահ ուժերի միջև: Հունիսի 8-9-ին ԱՊԼ-ի արտգործնախարարները Կահիրենում նիստ գումարեցին, որոնց հրահանգով կազմակերպության գլխավոր քարտուղար Մահմուդ Ռիադը մեկնեց Սիրիա՝ արարական խաղաղապահական նոր ուժեր Լիբանան ուղարկելու Լիգայի որոշումը Ասադի հետ համաձայնեցնելու նպատակով¹⁶³: Սիրիան իր պատրաստակամությունը հայտնեց՝ փոխգիծման զնալու և ԱՊԼ-ի որոշումներն ու խաղաղ նախաձեռնություններն ընդունելու ուղ-

¹⁵⁹ طرق الشعب، بند: «Տարիկ Ալ-շաար», Բաղդադ, 10.6.1976:

¹⁶⁰ Don Peretz, Աշվ. աշխ., էջ 388:

¹⁶¹ Marius Deeb, Աշվ. աշխ., էջ 133:

¹⁶² «New York Times», 10.6.1976.

¹⁶³ Tabitha Petran, Աշվ. աշխ., էջ 204: 500 լիրացիներից և 500 սիրիացիներից կազմված առաջին արարական գորքարանակը Բեյրութ ժամանեց հունիսի 21-ին: Սառույան ու սուլանական գորքարանակները ժամանեցին մեկ շարար անց:

դությամբ: Մինչդեռ Լիբանանի հակամարտող կողմերի միջև քանակցությունների վարման ուղղությամբ Ռիյայի գլխավորած նոակողմ հանձնաժողովի ջանքերը ճախողվեցին, որից հետո որոշվեց հովհանս 12-ին արտգործնախարարների մակարդակով ԱՊՀ-ի խորհրդանիստ գումարել¹⁶⁴:

2. ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ԴԵՐԻ ԵՎ 1976Թ. ՄԻՐԻԱ-ՀՈՐԴԱՆԱՆ-ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԴԱԾՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՈՒՐՉ

ԱՄՆ-ի նախագահ Ջերալդ Ֆորդը, իր բացասական վերաբերմունքն արտահայտելով Սիրիայի ռազմական միջամտության նկատմամբ, գտնում էր, որ այն կարող էր ապակայունացնող ազդեցություն գործել, թեև մինչ այդ իրականացվել էր զուսպ կերպով¹⁶⁵: Այնուհանդերձ, Ֆորդի վարչակազմը մտավախություն ուներ, որ ՊԱԿ-ի և դիմարդական շարժման աջակցությունից օգտվող լիբանանյան ծախերը կարող են պարտության մատնել Լ.Շ.-ին: Թերևս վերոնշյալ նկատառումներից ելնելով՝ Վաշինգտոնն ընդունեց Լիբանանում Սիրիայի «կայունացնող» և «կառուցղական» դերակատարությունը՝ վերջինիս հետ երկխոսություն հաստատելով¹⁶⁶: Սիրիայի ներխուժմանը համաձայնելու գործում ոչ պակաս դեր ունեցավ նաև 1976թ. ապրիլի սկզբին ԱՄՆ-ում Հորդանանի քաջավոր Հուսեյնի իրականացրած լոքինզը, որի համաձայն Լիբանանի պատերազմին վերջ դնելու միակ կարողությունը էր դիսվում Դամասկոսը:

Իր հերքին ԱՄՆ-ի պատվիրակ Լ.Դին Բրաունը պետքարտուղար Զիսինցերին տեղեկացրեց, որ Սիրիայի դերը կառուցղական է և Լիբանանին չի սպասում Սիրիայի «արքանյակի» վերածվելու

¹⁶⁴ К положению в Ливане, ТАСС. Атлас N 29 (993), 16.7.76, стр. 26.

¹⁶⁵ К политике США на Ближнем Востоке, ТАСС. Атлас N 24 (988), 11.6.76, стр. 5.

¹⁶⁶ William L. Cleveland, նշ. աշխ., էջ 100:

վտանգը¹⁶⁷: Դամասկոսը քաջավոր Հռուեյնի և Սիրիայում ԱՄՆ-ի դեսպան Ռիշարդ Սերֆիի միջոցով Սահիտակ տանը տեղեկացրել էր, որ սիրիական ներխուժման նպատակը Լիբանանի անվտանգության ապահովումն ու քաղաքացիական պատերազմի դադարեցումն է: Ել Անվոլ ոչ միայն խրայեական պատասխան հարձակման, այլ ԱՄՆ-ի կողմից Լիբանանում սիրիական դերակատարության խոշննդուման մտավախությունից, Սիրիայի նախագահը Վաշինգտոնին վատահեցնում է, որ Դամասկոսի ռազմական ներկայությունն Խարայելին սպառնալիք չի ներկայացնի՝ ոչ իր քանակով, ոչ էլ՝ աշխարհագրական տեղակայմամբ¹⁶⁸:

Նշենք, որ Քվանդուր կապ է տեսնում Հորդանանի քաջավոր Հռուեյնի այցի և Հ. Քիսինջերի մշակած քաղաքականության շրջանակներում սիրիական ներխուժման և վերջինիս կողմից ՊԱԿ-ի ջախջախման դիմաց Դամասկոսին իրքն փոխհատուցում Գոլանները, իսկ Հորդանանին՝ Արևմտյան ափը հանձնելու ծրագրերի շուրջ: Հեղինակի կարծիքով՝ սիրիական ներխուժմանը հաջորդելու էր տարածաշրջանում «Pax Americana»-ի հաստատումը, որի արդյունքում պետք է քույացվեին ծայրահեղական վարչակարգ ունեցող արարական երկրները և նվազագույնի հասցեր ՍԱ-ում ԽՍՀՄ-ի ազգեցությունը¹⁶⁹: Կարծում ենք, որ վերոնշյալի առնչությամբ որոշակի հստակություն կարող է մտցնել 1976թ. հունիսին արար-ամերիկյան դեկավարների հետ հանդիպման ընթացքում անձանք Քիսինջերի հայտնած միտքը, որի համաձայն լիբանանյան ճգնաժամի զիսավոր պատճառը պաղեստինյան հիմնախնդիրն էր: Ըստ Էռիթյան, Վաշինգտոնը, Լիբանանում 300.000 պաղեստինցիների առկայության և խրայեղական սահմանի երկայնքով շարունակվող գրոհների պայմաններում, երկրի կառավարության կողմից հականարսությունը կանխելու փորձերն անիրատեսական էր

¹⁶⁷ ماري، بيرت، «آل-داهار، بيرت»، «Ալ-մահար»، Թեյրուր، 5.12.1976: ԱՄՆ-ի պատվիրակը տարածաշրջանում մնաց 1976թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 8-ը՝ նախագահ Սարգսի ընտրությունը:

¹⁶⁸ Marius Deeb, Աշվ. աշխ., էջ 9:

¹⁶⁹ Quandt W., Decade of Decisions: American Policy Toward the Arab-Israeli Conflict 1967-1976, Berkeley & Los Angeles, 1977, p. 283.

համարում: ԱՄՆ-ում ևս ենթադրում էին, որ առանց Սիրիայի միջամտության, Լիբանանի իշխանությունը կարող էր ՊԱԿ-ի և ղիմադրական շարժման աջակցությամբ հայտնվել լիբանանյան ծախերի ձեռքում¹⁷⁰:

Փաստորեն, Վաշինգտոնի լուր համաձայնությունը՝ գործնականում նշանակում էր Լիբանանի Արևմտյան երաշխավորի՝ ԱՄՆ-ի կողմից սիրիական ներխուժման ստարում: Սիրիայի և Իսրայելի միջև ԱՄՆ-ի գործադրած միջնորդական ջանքերի շնորհիվ սիրիացիների կողմից հարավային Լիբանանում Իսրայելի անվտանգության շահերի ճանաշման դիմաց¹⁷¹ Թել-Ավիվը համաձայնվում էր սիրիական ռազմական սահմանափակ՝ խորհրդանշական ներխուժմանը՝ կանոնավոր գորքեր չուղարկելու և իրեական պետության անվտանգությանը սպառնալիք չներկայացնելու նախապայմանով¹⁷²: Սիրիան չպետք է գորքեր տեղակայեր Լիտանի գետից հարավ, օգտագործեր իր օդուժը, ցամաքող տիպի հրթիռներ տեղադրեր Լիբանանի տարածքում: Իսրայելին իրավունք էր վերապահվում պահպանել աջ-քրիստոնեական միլիցիայի հետ իր հարաբերությունները¹⁷³: Հակառակ դեպքում, Թել-Ավիվն իր կողմից սպառնում էր ներխուժել հարավային Լիբանան¹⁷⁴:

Այսպիսով, սիրիական ռազմական միջամտությունը ստանում էր Լիբանանի նկատմամբ շահագրգիռ բոլոր մեծ պետությունների աջակցությունը: Իսրայելը հոգու խորքում գոհ էր, ԱՄՆ-ը՝ գաղտնի ցնծում էր, մինչդեռ ՊԱԿ-ը պատրաստվում էր իր ոչնչացմանը: Իրականում Լիբանան ներխուժելու միջոցով Ասադն ԱՄՆ-ի համար կրակից մի քանի շագանակ էր հանում՝ վերջ դնելով Լիբանանի միջիամայնքային պատերազմին և նախապայմաններ ստեղծելով արար-իսրայելական

¹⁷⁰ William L. Cleveland, նշվ. աշխ., էջ 100:

Վաշինգտոնի լուր համաձայնությունը կարևոր էր Ասադի՝ իր և համարձակ, սակայն ոչ անխոհեմ վճիռներ կայացնող դեկավարի համար, որը ստվարաբար դրանք իրագործում էր երկար ժամրութեր և անելոց հետո:

¹⁷¹ «The Times», London, 13.09.1976.

¹⁷² К событиям в Ливане, ТАСС. Атлас N 25 (989), 18.6.76, стр. 30.

¹⁷³ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 106:

¹⁷⁴ Kamal Salibi, նշվ. աշխ., էջ 132:

հակամարտությունում Վաշինգտոնի դիվանագիտության նոր շրջափուլի համար¹⁷⁵:

Մինչդեռ ՊԱԿ-ի առաջնորդ Արաֆարը, մի կողմից՝ ՊԴԸ-ի և լիբանանյան ծախ-մուսուլմանական ուժերի, մյուս կողմից՝ ՊԴԸ-ի և Սիրիայի միջև տարածայնությունների հրահրման փորձերը Լիբանանի ազգային-հայրենասիրական և պաղեստինյան դիմադրական շարժման ոչնչացման նպատակով ամերիկասիրնիատական ծրագրի մաս էր համարում¹⁷⁶: Չումբլարը ևս գտնում էր, որ Դամասկոսը, առանց իր ռազմական միջամտության հարցում Վաշինգտոնի հավաստիացումները ստանալու, չէր համարձակվի Լիբանան ներխուժել¹⁷⁷:

Նշենք, որ սիրիական ներխուժման հանդեպ ԱՄՆ-ի «քարյացակամ» կեցվածքը բացատրվում էր նաև 1976թ. ԱՄՆ-ում կայանալիք նախագահական ընտրություններում Ֆորդի վերընտրության նպատակով ՍՍ-ում նոր ճգնաժամի կանխարգելման և լուրջ դիվանագիտական հաջողությունների հասնելու անհրաժեշտությամբ: Այս առումով հարկավոր էր Սիրիայի համաձայնությունը՝ մայիսի 30-ին Գոլաններում «կապույտ բերեստների» մանրատի երկարածզման ուղղությամբ: Հակառակ դեպքում՝ հօդս կցնդիմ Քիսինջերի բոլոր դիվանագիտական ծեռքբերումները՝ Զ. Ֆորդին ստիպելով իր նախընտրական պայքարն իրականացնել ՍՍ-ում ընթացող նոր ճգնաժամի ստվերի տակ¹⁷⁸:

Ըստ Էռիյան, Սիրիայի ռազմական միջամտությունը չփորձեցին կանխել ոչ Խորայելը, ոչ էլ ԱՄՆ-ը՝ ենթադրելով, որ այն մի կողմից կրուպացներ սիրիական բանակը¹⁷⁹, մյուս կողմից՝ կօգներ իրենց դաշնակցներին՝ ԼԾ-ում միավորված աջ-քրիստոնեական ուժերին: Սիրիայի, քրիստոնյա-աջերի և Խորայելի միջև համաձայնությունը բխում էր ԱՄՆ-ի շահերից: Սակայն սա այն բացառիկ դեպքերից էր, երբ համընկնում էին նաև Խորայելի և Սիրիայի շահերը, որոնք նպատա-

¹⁷⁵ «Washington Post», 29.6.1976.

¹⁷⁶ المعاوه، الجزء، «Ալ-մուտահիր», Ալժիր, 2.6.1976:

¹⁷⁷ Tabitha Petran, Եշվ. աշխ., էջ 213:

¹⁷⁸ Կարապետյան Ռ., Եշվ. աշխ., էջ 75:

¹⁷⁹ «Ha'arctz», Israel, 11.06.1976.

կահարմար չէին դիտում Լիբանանի ապակայունացում¹⁸⁰: ԱՄՆ-Սիրիա-Իսրայել գաղտնի համագործակցությունը ստացավ «կարմիր գիծ» համաձայնություն անվանումը՝ մի շքրված, չստորագրված և Սիրիայի կողմից երդում չտրված համաձայնագիր¹⁸¹: Սակայն հարկ է նկատել, որ սատարվելով մի երկրի՝ ԱՄՆ-ի կողմից, որին չէր վստահում, և մեկ այլ երկրի՝ Իսրայելի կողմից, որին երդվել էր ոչնչացնել, Սիրիան, այնուհանդերձ, հայտնվել էր Լիբանանի կառավարության կողմից պահեստինցիների հանդեպ առկա «status quo»-ն պաշտպանողի միանգամայն խոցելի դերում¹⁸²:

Ոչ պակաս խոցելի դերում էր հայտնվել նաև ԱՄՆ-ը, որի դիվանագիտական առաքելությունը Լիբանանում հանդիպել էր բազում խոշոնդուների: Հունիս ամսին Բեյրութի ԱՄՆ-ի դեսպանատնից 3 կմ. հեռավորության վրա գտնվող մուսուլմանական քաղամասում հայտնաբերվել էր ԱՄՆ-ի դեսպան Ֆրենսիս Մելոյի դիակը, որն արևմտյան դիվանագետների կարծիքով՝ «Մերժման ճակատի» պահեստինցի պարտիզանների ձեռքի գործն էր¹⁸³: Ուշագրավն այն է, որ ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցները չեն ել փորձում Բեյրութում ՊԱԿ-ի անվտանգության մարմիններին հարցում անել ամերիկյան դեսպանի և մեկ այլ դիվանագետի սպանության վերաբերյալ¹⁸⁴:

Իրադրության հետագա վատքարացման մտավախությունից ելնելով՝ Բեյրութում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցների թիվը 36-ից կրճատվեց 10-15 մարդու: Երկու ամսում Լիբանանից ամերիկյան քաղաքացիների 7 տարիանում իրականացվեց¹⁸⁵: Հիշարժան է այն փաստը, որ Բեյրութից ամերիկացիների հեռացմանը ցուցաբերած օգնության դիմաց նախազահ Ֆորդը շնորհակալական ուղերձ հղեց

¹⁸⁰ Martine Lenore G., New Frontiers in The Middle East Security, Palgrave, USA, p. 221.

¹⁸¹ Հովհաննիսյան Ա., Եշվ. աշխ., էջ 37:

¹⁸² William L. Cleveland, Եշվ. աշխ., էջ 100:

¹⁸³ К убийству американских дипломатов в Бейруте, ТАСС. Атлас N 26 (990), 25.6.76, стр. 30.

¹⁸⁴ «Washington Post», 29.6.1976.

¹⁸⁵ К положению в Ливане, ТАСС. Атлас N 30 (994), 23.7.76, стр. 28.

ՊԱԿ-ին՝ ի հեճուկս վերջինիս հետ «կապերը» բացառող ամերիկյան պաշտոնական դիրքորոշմանը¹⁸⁶:

1976թ. սեպտեմբերի 27-ին Սիրիայի ընդհանուր ռազմավարության շրջանակներում Դամասկոսում բարձր մակարդակի համելիպում տեղի ունեցավ՝ Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի և ՊԱԿ-ի միջև քառակողմ դաշնային միություն ստեղծելու առաջարկի շուրջ: Դաշինքի հանդեպ լիբանանյան տարրեր կուսակցությունների վերաբերմունքը ճշտելու նպատակով առաջարկը դրվեց Լիբանանի խորհրդարանի քվեարկմանը՝ արժանանալով պատգամավորների մեծ նասի հավանությանը¹⁸⁷: Այն համապատասխանում էր նաև ամերիկյան ծրագրերին՝ ավարտին հասցնելով Վաշինգտոնի հավանությանն արժանացած սիրիական ռազմարշավը¹⁸⁸:

Դամասկոսի որդեգրած ռազմավարության շրջանակներում սիրիական բանակը 1969թ. Կահիրենի լիբանան-պաղեստինյան պայմանագրի պահանջները ՊԴԸ-ին հարկադրելու նպատակով, հոկտեմբերի 1-13-ը Լիբանանի հարավի և լեռնային շրջանների ուղղությամբ սահմանափակ մարտական գործողություններ իրականացրեց¹⁸⁹: ՊԴԸ-ն ու ԱԾ-ն օգնության կոչով դիմեցին «առաջադեմ» արարական երկրներին և ԽՍՀՄ-ին: Չումբլարը հոկտեմբերի 3-ին եղավ նաև Փարիզում¹⁹⁰, ենթերկ սիրիացիների ու լիբանանյան աջերի գործողություններն ամերիկացիների կողմից ուղղորդված լինելու հնարավորության դեպքում պատերազմը ևս մի քանի ամիս երկարածզվելու շուրջ ունեցած մտավախությունից¹⁹¹: Արաֆարը ևս լիբանանյան մարտական

¹⁸⁶ «Washington Post», 29.6.1976. 1975թ.-ից ԱՄՆ-ի պետքարտուղարությունը մերժում էր ՊԱԿ-ի հետ բանակցությունների վարումը, քանի զեռ վերջինս չէր ընդունել ԱՄԿ-ի ԱԽ-ի 242-րդ բանաձևը, որը դասապարտում էր ահարեխցությունն ու պահանջում ճամաչի Իւրայի գոյության իրավունքը:

¹⁸⁷ Կ ոլոշենիք և Լիվան, ՏԱՀ. Առաջ N 37 (1001), 10.9.76., սր. 24-25.

¹⁸⁸ «L'Umanité», Paris, 31.8.1976.

¹⁸⁹ Սիրիամ այլ քայլին դիմեց Լեռնալիբանանից ՊԴԸ-ի և ԱԾ-ի ուժերին խաղաղ բանակցությունների միջոցով դրա թերելու հարցում ծախողվելուց հետո: Այս մասին տե՛ս Պոլոշենիք և Լիվան, ՏԱՀ. Առաջ N 43 (1007), 22.10.76, սր. 27.

¹⁹⁰ Marius Deeb, նշվ. աշխ., էջ 15-17: Ֆրանսիան կոչ արեց կոր սևամանի շուրջ բոլոր շահագողին կողմերին համաժողով երավիրել և համապատասխան հաղորդագործություններ ուղարկեց Եզիդակուն ու Սիրիա:

¹⁹¹ «Nouvel Observatoire», Paris, 7.9.1976.

գործողությունների ծավալման գլխավոր պատճառներից մեկը համարեց լիրանանյան աջերին ԱՄՆ-ի ցուցաբերած օգնությունը, որին միացել էին նաև ամերիկացիների ու իսրայելցիների «քակարդն ընկած և նրանց շահերին համապատասխանաբար գործող» սիրիացիները¹⁹²: Սիրիայի գլխավոր նպատակը համարվում էր Լիրանանում պաղեստինցիների գործողությունների նկատմամբ վերահսկողության հաստատումը, որը լիրանանցիների կարծիքով՝ ուղղակիորեն սատարվում էր ԱՄՆ-ի, իսկ անողությակիորեն՝ Խորայելի կողմից¹⁹³:

Հոկտեմբերի 9-ին և 11-ին Ծոորայում խորհրդակցություն կայացավ, որի նպատակը երկրում կազուկանոնի և Լիրանանի անվտանգության ուժերի վերականգնման նպատակով նախագահ Սարգսին անհրաժեշտ ուժերի տրամադրման շուրջ համաձայնության ձեռքբերումն էր¹: Սակայն խորհրդակցությունը դրական ելք չունեցավ, որի մասին վկայում էին երկրի բոլոր ճակատներում նոր քափով բռնկված մարտական գործողությունները¹⁹⁴:

Թերևս այս զարգացումների հիման վրա էր Բեյրութում կարծիք ձևավորվել, որ Սիրիան իր ուազմավարության իրականացման վերջնաժամկետ էր նշանակել ԱՄՆ-ի նախագահական ընտրությունները (1976թ. նոյեմբեր)՝ առավել կարևորելով ոչ թե հոկտեմբերի 16-ին կայանալիք ԱՊԼ-ի գագաթաժողովը, այլ Սիրիա-Լիրանան-Հորդանան պաղեստինցիներ կազմով մերձավորարևելյան կարգավորման բանակցությունների վերականգնումը¹⁹⁵:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ վերոնշյալ «գաշնության» տեսրով Դամասկոսը ՍԱ-ում «ամերիկյան խաղաղություն» հաստատելու գործում հաշվի չէր առել ծրագրի նկատմամբ ինչպես լիրանա-

¹⁹² «النصر، القاهرة»، «Ալ-մուսավաք», Կահիրե, 2.9.1976:

¹⁹³ «New York Times», 28.10.1976.

* Խորհրդակցության մասմեացում էին նախագահ Սարգսյան, ՊԱԿ-ի գործկոմի նախագահ Արաֆարը, Սիրիայի պաշտպանության փոխնախարարն ու սիրիական օդուժի հրամանատար գեներալ Նաջի Զամիլը:

¹⁹⁴ К положению в Ливане, ТАСС. Атлас N 39 (1003), 24.9.76, стр. 24.

¹⁹⁵ Положение в Ливане, ТАСС. Атлас N 43 (1007), 22.10.76, стр. 27.

նյան հակամարտող քոլոր կողմերի, այնպես էլ արարական երկրների ու միջազգային հանրության հակազդեցության հնարավորությունը:

Յ. ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ճԳՆԱԺԱՄԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՊԼ-Ի 1976Թ. ՎԵՀԱԺՈՂՈՎՆԵՐԸ: ՀԱՐԱՎԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԸ ՀԱԿԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎՈՐ ՕՉՈԽ

Հոկտեմբերի 16-ին Սառույան Արարիայի առաջարկությամբ Ռիյադում Լիբանանի ճգնաժամի և նրա կարգավորման ուղիների, երկշում արյունահեղության դադարեցման համար անհրաժեշտ քայլերի շուրջ համաձայնության ծեռք քերնան, ուազմական գործողություններից երկխոսության անցնելու, Լիբանանի անվտանգության, ամրողականության և անկախության պահպանման, ՊԴԸ-ին (ի դեմս ՊԱԿ-ի) անհրաժեշտ աջակցության խնդիրների քննարկման նպատակով միջարարական խորհրդակցություն իրավիրվեց: Համաժողովը միաձայն քացանեց Լիբանանի բաժանման գաղափարը ցանկացած դեպքում՝ դե-յուրե և դե-ֆակտո, քացահայտ կամ քողարկված, հաստատեց Լիբանանի ազգային միասնականության և նրա տարածքային ամրողականության պահպանման, նրա ներքին գործերին չմիջամտելու հարցում պարտավորության ստանձնումը¹⁹⁶:

Կողմերը համաձայնության եկան Լիբանանում հրադադարի հաստատման շարք: Հոկտեմբերի 21-ից նախատեսվեց «Անվտանգության Միջարարական ուժերի» (ԱՍՊԻ) կազմը հասցնել մինչև 30 հազարի՝ դրանց ընծեռելով գսայիշ գործառույթներ և հանձնելով Լիբանանի նախագահ Իլիաս Սարգսի հրամանատարությանը¹⁹⁷:

¹⁹⁶ Այս մասին մանրամասն տես՝ Совместное коммюнике и резолюции совещания в верхах в Эр-Рияде, ТАСС. Атлас N 44 (1008), 19.10.76, стр 28; Ա. Հարուրյունյան, ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում (1975-1991թ.), քննածուական ատենախոսություն, ՀԱՎԵԼՎԱԾ ԱՌԱՋԻՆ:

¹⁹⁷ Այդ պահից ի վեր ԱՍՊԻ-ն ստացավ «Միջարարական Զսպիշ ուժեր»՝ ՍՊՈՒ անվանումը: Այս մասին մանրամասն տես՝ Совместное коммюнике и резолюции совещания в верхах в Эр-Рияде, նշվ. աշխ., էջ 29:

Անշուշտ, Սառույան Արարիայի և Զուվեյքի նավթային դրվագների ճնշմամբ հմարավոր չեր իրադարձությունների հետագա ընթացքի վրա ազդել¹⁹⁸, այնուհանդերձ, Սառույան Արարիան փորձում էր ապացուցել արարական աշխարհում վճռական դեր խաղալու իր կարողությունը: Կարծիք կա, որ համաժողովի նպատակը Լիքանանի նկատմամբ բացառապես սիրիական «պրոտեկտորատը» Սառույան Արարիայի գլխավորությամբ՝ մի խումբ արարական երկրների խնամակալությամբ փոխարինելու էր, որի մեջ կընդգրկվեր նաև Սիրիան: Այդ մասին էր խոսում այն փաստը, որ Ասադը վեհաժողովին համաձայնվել էր մասնակցել Ռիյադին և Կահիրեին ընդունելի պայմաններով¹⁹⁹: Նա ընդգծել էր նաև եզիատասիրիական ուազմավարական նշանակություն ունեցող հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությունը, գտնելով, որ Մայրիների երկրի ճգնաժամը սպառնալիք է ներկայացնում ոչ միայն Լիքանանին, այլև ՊԴՀ-ին և ողջ արար ժողովրդին²⁰⁰: Ենթադրվում էր, Դամասկոսի և Կահիրեի միջև հաշտությունը, ըստ ամենայնի, կարող էր դիմանագիտական, հմարավոր է նաև ուազմական դժվարություններ ստեղծել Խորայելի համար²⁰¹:

Այնուհանդերձ, խորհրդակցության մասնակիցների կողմից ՄԶՈՒ-ի՝ կազմում սիրիական 23.000-անոց զորաքանակի ընդգրկման պաշտոնական որոշումը նշանակում էր ԱՊԼ-ի կողմից լիքանանյան գործերում Դամասկոսի առանցքային դերի ճանաչում: Ուստի խորհրդակցության հայրող կողմ կարելի էր համարել Սիրիային, որն արարական երկրների հավանությունը ստացավ «Լիքանանում Սիրիայի պարտադրած խաղաղության» հարցում²⁰²:

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 32:

¹⁹⁹ «Le Monde», Paris, 19.10.1976.

²⁰⁰ لـأـخـارـ، الـقـاهـرـةـ، «Աـلـաـخـارـ»، Կـاـهـիـրـեـ، 20.10.1976:

²⁰¹ TACC. Atlaç N 44 (1008), 19.10.76, str. 32-33.

* Բայց սիրիական ուժերից, ՄԶՈՒ-ի կազմի մեջ մտան ԵԱՀ-ի, ԵԺՀ-ի, Սառույան Արարիայի, ԱԱՀ-ի, Սույանի ու Լիքանյաի, ՊԱԿ-ի զորամակվորումներ, որոնք նոյեմբերի 21-ի դրույթամբ վերահսկողություն հաստատեցին Բեյրութի և Լիքանանի տարածքի բոլոր թեժ կետերի նկատմամբ: Այդ պահից ի վեր մինչև 1982թ. խրայիլական ազրեսիան, ԱՊԼ-ի խորհուրդը յուրաքանչյուր վեց ամիսը մեկ երկարացնում էր ՄԶՈՒ-ի մանդատը:

²⁰² «New York Times», 30.10.1976.

Ոկյաղի վեհաժողովի ընդունած որոշման համաձայն՝ Լիբանանում «զսպիչ» գործառույթներով լիազորված ՄԶՈՒ-ը երաշխավորում էին նաև ՊՆ-ի անվտանգությունը՝ միաժամանակ զսպիչ գործոն ծառայելով Լիբանանը պաղեստինցիների կողմից երկրորդ Հորդանանի վերածման հնարավորության դեմ՝²⁰³:

Հարկ է նկատել, որ Ոկյաղի համաժողովը, առանց լիբանանյան ճախերի ու աջերի միջև փոխզիջման հասնելու և միայն ուղղմական խնդիրներին առնչվող որոշումների ընդունմամբ, ի վիճակի չեղ կարգավորել լիբանանյան ճգնաժամը: Չափազանց խորը հակասություններ գոյություն ունեին ոչ միայն լիբանանյան հակամարտությանը մասնակից հիմնական կողմերի, այլև այդ կողմերից յուրաքանչյուրի միջև:

Բոլոր դեպքերում, Ոկյաղի խորհրդակցության ընթացքում ընդունված բանաձևերը դրվեցին հոկտեմբերի 25-26-ին Կահիրեի կենտրոնակայանում կայացած ԱՊԼ-ի անդամ պետությունների թագավորների ու դեկավարների արտակարգ համաժողովի քննարկմանն ու հաստատմանը՝²⁰⁴: Խորհրդակցության մասնակիցները որոշեցին, որ արարական պետությունները, յուրաքանչյուրն իր հնարավորությունների շափով, պետք է նպաստեր Լիբանանի վերականգնմանը, նյութական օժանդակություն ցուցաբերեր լիբանանցի ու պաղեստինցի ժողովուրդներին՝ պատերազմի հետևանքով կրած վնասների փոխհասուցման նպատակով, ինչպես նաև աջակցեր լիբանանյան կառավարությանն ու ՊԱԿ-ին՝²⁰⁵:

²⁰³ TACC. Առաջ N 45 (1009), 5.11.76, սր. 25.

* Վեհաժողովին լիբանանյան ճախ-մուտզմանական ուժերի ներկայացուցիչների բացակայությունն արարական որոշ երկրների մոտ դիտվեց իրք ՊՆ-ի և լիբանանյան ճախերի միջև պատակտում առաջացնելու փորձ:

²⁰⁴ Այս մասին մանրամասն տես՝ Մեջարաբսկое совещание в верхах, ТАСС. Առաջ N 45 (1009), 5.11.76, սր. 23-24. ԱՀայությունյան, ԱՍԴ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում (1975-1991 թ.), թեկնածուական տեսախոսություն, ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ:

²⁰⁵ Մեջարաբսկое совещание в верхах, նշվ. աշխ., էշ 23-24: ԱՊԼ-ի որոշմամբ՝ Լիբանանում գտնվող ՄԶՈՒ-ի ֆինանսավորման համար նախատեսվում էր 62.5 մլն. ԱՍԴ դրվագ, որում ներդրում կատարող գլխավոր երկրներն էին Սաուդյան Արաբիան (ողջ գումարի 20%), Քուվեյթը (20%), ԱՍԵ-ը (15%), Արարայը (10%):

Հարկ է նկատել, որ թեև Կահիրեի հանդիպման հայտարարության համաձայն՝ Խսրայելը մեղադրվում էր Լիբանանի հարավում ազդեսիա հրահրելու մեջ, այնուհանդերձ, չեր խոսվում վերջինիս դեմ արարական երկրների կողմից կիրառվելիք միջոցառումների մասին²⁰⁶:

Այսպիսով, Ռիյայի և Կահիրեի հանդիպումների ընթացքում ընդունված որոշումները, թեև միտված չէին լիբանանյան հակամարտության արմատական կարգավորմանը, այնուհանդերձ նպաստեցին 1976թ. հոկտեմբերից ուղմական գործողությունների (քացառությամբ երկրի հարավի)²⁰⁷ ժամանակավոր դադարեցմանը: Ամիսներ երկարածվող մարտերը դադարեցին՝ վերջ դնելով լիբանանյան քաղաքացիական պատերազմին, սակայն ոչ ճգնաժամին, քանզի վերջինս ծնող հիմնական հակասություններն ու տարածայնությունները դեռևս պահպանվում էին:

Ճգնաժամի կարգավորման նպատակով 1976թ. սեպտեմբերի 23-ին իր պաշտոնավարությունը ստանձնած նախագահ Սարգիսը որոշեց նոր կառավարություն ձևավորել քաղաքականապես չեզոք դեմքերից²⁰⁸: Դեկտեմբերին վարչապետ Սելիմ ալ-Ղոսը ձևավորեց 4 նուսուլման և 4 քրիստոնյա «ուեխնուկրատներից» կազմված իր կառավարությունը²⁰⁹: Քաղաքական կարգավորման արյունքում երկիրը սկսեց աստիճանաբար վերադառնալ իր նախկին բնականոն հունին՝ ուղեկցվելով ծառայությունների, տնտեսական գործունեության և ենթակառույցների վերականգնման աշխատանքներով²¹⁰:

Սակայն պառակտված քաղաքական խոշոր կուսակցությունների և խմբակցությունների միջև երկխոսությունը շարունակ հետաձգվում էր: Իլիս Սարգիսի իշխանության քուլության պայմաններում լիբանանյան քանակի մնացորդները պառակտված էին մնում հակամար-

²⁰⁶ «New York Times», 28.10.1976.

* Հարավային Լիբանանը, որը քաղաքացիական պատերազմի ընթացքում, ի տարրերության հյուսիսի ու կենտրոնի, հարաբերական անդրորի վիճակում էր զանվորմ, լարվածության կիզակետի վերածվեց՝ ՊԱԿ-ի հարավ տեղափոխման և լիբանանյան հակամարտու ուժերի միջև պայքարի թեժացման արյունքում:

²⁰⁷ ماريوس ديوب، «الحريري، بيروت»، «اللبناني»، 30.10.1976:

²⁰⁸ Marius Deeb, նշվ. աշխ., էջ 19-20:

²⁰⁹ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 56:

տող տարբեր խմբավորումների միջև, և քանակի վերակառուցմանն ուղղված բոլոր քայլերը փակուսի էին մտնում: Արդյունավետ և վստահելի պետական համակարգի և քաղաքական կարգավորում պահանջող կոնսենսոսի բացակայությամբ էր պայմանավորված նաև ապարադաքան և ուզմական իմաստով արդյունավետ քանակի ստեղծման անհնարինությունը:

Սայստակ տունը ևս, լիբանանյան կենտրոնական կառավարության աստիճանական ամրապնդման հետ էր կապում լիբանանյան ճգնաժամի կարգավորումը, որի ուղղությամբ բարենպաստ պահ էր դիտում 1976թ. հոկտեմբերը²¹⁰: Լիբանանի պատերազմի հետևանքների վերականգնման համար 300-500 մլն. ԱՄՆ դոլարի ամերիկյան և միջազգային լայն աջակցություն էր նախատեսվում՝ պայմանավորելով այն հոկտեմբերի 21-ի լիբանադարի պայմանների արդյունավետ իրագործման հետ²¹¹: Դեռ ավելին, ԱՄՆ-ի նախագահը, Լիբանանի ամբողջականության և միասնականության պահպանման գործում իր ազդեցությունն օգտագործելու նպատակով, Իլիաս Սարգսին առաջարկեց քանակցությունների վարման առաքելությամբ ԱՄՆ-ի ներկայացուցիչ ուղարկել Լիբանան: Վերջինիս հետ պեսոք է քննարկվելու նաև ԱՄՆ-ի և միջազգային հանրության կողմից լիբանանյան կառավարությանն անհրաժեշտ միջոցների տրամադրման խնդիրները²¹²:

Սակայն լիբանանյան կառավարությանն այդժամ սկսել էր ավելի շատ մտահոգել ՊԱԿ-ի գործոնը: Խնդիրն այն էր, որ հակառակ լիբանանյան մարտերի մեծ մասում ՊԱԿ-ի կրած պարտությանը²¹³, նրան հաջողվել էր լիբանանի որոշ շրջաններում իր հսկողության տակ ամուր դիրքեր և զգալի շափով ռազմական տեխնիկա պահպանել: Այս ամենը ՊԱԿ-ին Խորայելի նկատմամբ գրոհներ իրականացնելու և քանակցային գործընթացներում սակարկելու հնարավորություն էր ընձեռում: ՊԱԿ-ն ապացուցել էր իր մարտնչելու ունակությունը²¹⁴ և շարու-

²¹⁰ Նույն տեղամ, էջ 90:

²¹¹ «New York Times», 28.10.1976.

²¹² Пресс конференция Киссинджера, ТАСС. Атлас N 39 (1003), 24.9.76, стр. 7.

* ՊԱԿ-ը պարտություն էր կրել սկզբում աջ-քրիստոնեական ուժերի, ապա՝ սիրիացիների կողմից:

²¹³ «New York Times», 30.10.1976.

նակում էր վճռական գործոն մնալ Լիբանանի քաղաքական համակարգում:

Փաստորեն, Լիբանանում Սիրիայի ու ՊԱԿ-ի դերակատարության ակտիվացումն Իսրայելի մոտ երկրի գործերի նկատմամբ առավել մեծ հետաքրքրության և միջամտության խթան ծառայեց՝ ճգնաժամի ելքի վրա ազդելու և Սիրիայի ու ՊԱԿ-ի ազդեցությունը սահմանափակելու տեսանկյունից: Այդ նպատակով Իսրայելը մեծացրեց աջ-քրիստոնեական կողայիշիայի միջիցիաներին տրամադրվող ուղմական օգնությունը և սկզբում հումանիտար, այնուհետև՝ ուղմաքաղաքական աջակցություն ցուցաբերեց հարավային լիբանանցիներին²¹⁴: Սիանգամայն հասկանալի պատճառներով, այս միջոցառումներն Իսրայելի կողմից Լիբանանի սահմանը բաց պահելու և հետախուզական գործունեություն ծավալելու նպատակ էին հետապնդում²¹⁵: Թեև այդժամ Լիբանանի հարավում Իսրայելը տարածք չէր գրանցուել, այնուհանդերձ, իսրայելակայիրանանյան բաց սահմանն ու քաղաքացիների միջև անմիջական շփումների հաստատումն Իսրայելին հնարավորություն էր տալիս «խսաղալ» միջհամայնքային տարածայնությունների վրա²¹⁶: Ըստ Եության, սահմանամերձ շրջաններում պարտիզանական դիրքերի ամրապնդումը կանխելու նպատակով Իսրայելը ցանկանում էր Արքուի լեռնային շրջանում իր սահմանի երկարությամբ «Ֆարահիլենոյ» անվամբ հայտնի «անվտանգության գոտին»²¹⁷ ստեղծել, որը հակասում էր 1969թ. Կահիրեի պայմանագրին²¹⁸:

Դեռ ավելին, Իսրայելի վարչապետ Ռարինի կառավարության առաջարկությամբ և աջակցությամբ աջ-քրիստոնեական ուժերի

²¹⁴ Itamar Rabinovich, Եղվ. աշխ., 59:

²¹⁵ Laura Zittrain Eisenberg, Do Good Fences Make Good Neighbors?: Israel and Lebanon After the Withdrawal, Meria, Middle East Review of International Affairs, Journal, Volume 4, No. 3, September 2000. <http://mcria.idc.ac.il/journal/2000/issue3/jv4n3a2.html>.

²¹⁶ ۱۹۷۶، آنچه، «Ա-ախրար», Կահիրե, 20.10.1976:

²¹⁷ «Le Monde», Paris, 12.10.1976. Իսրայելին սահմանակից քրիստոնյաներով բնակեցված որոշ զյուղերի կողմից «մինրապաշտպանական» ջոկատմերի ստեղծման շնորհիվ հաճախացել էին բախումները վերջիններին և պաղեստինյան ու ծախութանական ուժերի միջև:

²¹⁸ Дмитриев Е., Палестинский узел, К вопросу об урегулировании палестинской проблемы, М., 1978, стр. 121.

ստեղծած «Հարավի Ազատազոման բանակն» (ՀԱԲ)* իր հսկողության գրառու ընդլայնմամբ հարվածի տակ էր դնում Ռիյադում ճեղք քերված հրադարարի պայմանագիրը՝ ստեղծելով պայքունավոտանք իրավիճակը²¹⁹:

Փաստորեն, Լիբանանի համար այդուհետ առավել մեծ վտանգ կարող էր ներկայացնել աջ-քրիստոնեական ուժերի՝ շամունականների, փաղանգավորների և Խսրայելի միջև զարգացող ռազմաքաղաքական համագործակցությունը²²⁰: Սա խոսում էր միաժամանակ Միջիայի լիբանանյան «դաշնակիցների» անհուսավորության և Լիբանանում Միջիայի գործողությունների ազատության սահմանափակման հնարավորության մասին: Նման իրավիճակում Դամասկոսը ստիպված էր վերանայել իր դիրքորոշումը պաղեստինցիների նկատմամբ՝ վերջիններիս հետ իր համագործակցությունը վերականգնելու մտադրությամբ:

4. ԱՍ-Ը ԿԱՐՏԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՕՐՈՔ (1977-1981թթ.): ԱՄՆ-Ի ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԴԻՔԸՐԾՈԾՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՑ

1977թ. հունվարի 20-ից մինչև 1981թ. հունվարի 20-ը ԱՄՆ-ի նախագահ Ջիմմի Կարտերն արար-խրայելական հակամարտության համապարփակ կարգավորումը դարձրեց իր գերազույն առաջնահերթություններից մեկը: Անտեսելով 1976թ. նախագահական ընտրացավի ընթացքում մերձավորարևելյան «ճահճի մեջ ներքաշվելուց» խուսափելու շուրջ իր խորհրդականների նախազգուշացումները, նախա-

* ՀԱԲ-ը դեկավարում էր Լիբանանի բանակի հովոյ կարույկ մայոր Սաադ Հադրադը:

²¹⁹ Ալ-Սաֆիր, Բեյրութ, 23.10.1976:

²²⁰ Ալ-հուտույա, Բեյրութ, 30.10.1976: Ակտիվ օգնությունը սկսվել էր 1976թ., եթե Խսրայելի նախկին վարչապես Խցիսակ Ռարինը և նախկին պաշտնախարար Շիմն Պերեաց Զոմիա ծոցում խրայելական երիտակրի տախտականածի վկա համեմակեցին Քամիլ Համումի և Պիեր Ժմայելի հետ: Խսրայելը լիբանանյան քիսունյաներին տրամադրեց 110 տանկեր, այդ քիում՝ «Սուպեր Շերման», 5000 երանոր և 12.000 երացան: Փաղանգավորների 1500 մարտիկ ռազմական պատրաստվածություն էին տուացել Խսրայելի ռազմահանգրվաններում:

զահն ամբողջովին համակվեց Խորայելի անվտանգության, պաղեստինցիների իրավունքների, տարածաշրջանում համայնավարների ազդեցության կասեցման և Արևմուտքի կախվածությունն արարական նավթից սահմանափակելու հիմնախնդիրներով:

Կարտերը հեռահար համակրանք էր տածում պաղեստինցիների նկատմամբ և ընդունում էր նրանց հիմնախնդիրների կարգավորումից խուսափելու նպատակով 1975թ. «Ախնայ-2» պայմանագրի ստորագրման արդյունքում ԱՍԽ-ի մերձակորարևելյան քաղաքականության փակուղի մտնելու փաստը²²¹: Կարտերի պես կրոնամեծար մարդու համար Քիսինջերի «ռեալպոլիտիկա»-ն օտար ու անքարո էր քվում: Ուստի վերջինիս «քայլ առ քայլ դիվանագիտության» հերքմամբ, նախագահը գերադասում էր արար-խորայելական հակամարտությունում համապարփակ կարգավորման հասնել ժնկի 1973թ. համաժողովի աշխատանքների վերականգնման միջոցն՝ խաղաղության գործընթացի մեջ ներգրավելով նաև համայնավարներին, որից Քիսինջերն այդափ արդյունավետորեն խույս էր տվել:

Այդ էր թերևս պատճառը, որ իր նախագահական ընտրարշավի սկզբում Կարտերը պահանջում էր գրավյալ տարածքների մեծ մասից խորայելական ուժերի դուրս թերում՝ հավանություն տալով Արևմտյան ափում պաղեստինյան պետության հաստատման գաղափարին: Սակայն ավելի ուշ, ամերիկյան հրեաների ծայների ծեռքբերման անհրաժեշտությունից եկնելով, Կարտերը ստիպված էր ընդգծել Խորայելի հետ ԱՍԽ-ի կապերի ամրապնդման կարևորությունը: Նախագահը հանդես եկավ Թել-Ավիվի «պաշտպանելի սահմանների» պահանջների աջակցությամբ, մի տերմին, որը հիմնականում ընկալվում էր իրեն 1967թ. Խորայելի կողմից գրավյալ տարածքների օկուպացման շարունակություն: Կարտերը հայտարարեց նաև, որ նախքան ՊԱԿ-ի կողմից Խորայելի պետության գոյության իրավունքի ճանաչումը, ինքը չի ընդունի ոչ ՊԱԿ-ին, ոչ էլ պաղեստինցիներին ներկայացնող այլ մարմնի²²²: Անշուշտ, Կարտերի նախընտրական արշավի ընթացքում խորա-

²²¹ William Polk, Եղվ. աշխ., էջ 430:

²²² William L.Cleveland, Եղվ. աշխ., էջ 103-104:

յելամետ այս բնույթի բարձր հայտարարությունները չէին կարող վլդովմունք և տագմաա շառաջացնել արարական աշխարհում:

Նախագահը պետքարտուղարության, Պենտագոնի, ԿՀՎ-ի և Ազգային Անվտանգության խորհրդի (ԱԱԽ) ապարատը համալրեց փորձառու պետական գործիչներով²²³: Սայրու Վենսին պետքարտուղարի պաշտոնում նախագահն ընտրեց իրքն լավ դիվանագետի և վարչարարի, որն ԱԱԽ-ի նախագահներ Քենեդը և Ջոնսոնի պաշտոնավարման ընթացքում քանակի նախարարի և պաշտպանության փոխնախարարի պաշտոններ էր գրադեցրել:

ԱԱԽ-ի նոր վարչակազմի արտաքին քաղաքական հիմնական առաջնահերթությունները, ազգային անվտանգության գծով նախագահի օգնական Զբիգնիև Բժեզինսկիի համաձայն՝ ԱԱԽ-ի գաղափարական ազդեցության ամրապնդումն էր աշխարհում, ԽՍՀՄ-ի նկատմամբ ռազմավարական դիրքերի բարելավումը, Երրորդ աշխարհի երկրների շրջանում ԱԱԽ-ի հանդեպ գրավչության վերականգնումը²²⁴:

Ինչ վերաբերվում է նոր վարչակազմի ՍՍ-ի քաղաքականությանը, ապա նրա հիմնական նպատակը տարածաշրջանի ցանկացած հաստվածի խաղաղությունը խաքարող կամ խոշնորություն զարգացումների կանխարգելումն էր: Բավարարվելով ՍՍ-ում հաստատված status quo իրավիճակով, տարածաշրջանային խնդիրների օրակարգում Լիքանանի ճգնաժամին դարձյալ երկրորդական տեղ էր հատկացնում:²²⁵ Թեև Ռիյազի ու Կահիրեի համաժողովներից հետո Կարտերը վերանայեց իր նախորդների մերձավորարևելյան քաղաքականության որոշ ասպեկտներ, այնուհանդերձ, հավատարիմ մնաց լիքանանյան ճգնաժամի հանդեպ վերջիններիս որդեգրած հիմնական ուղեգծին:

²²³ «New York Times», 24.12.1976. Պետքարտուղարի պաշտոնում Սայրու Վենս, պաշտամարարի՝ Հարոլդ Բրաուն, ԿՀՎ-ի տնօրին՝ Թեոդոր Սորենսեն, ՍԱԿ-ում ԱԱԽ-ի ներկայացուցչի՝ Էնորյու Յանգ, Ազգային Անվտանգության գծով խորհրդական Զբիգնիև Բժեզինսկի, Էներգետիկայի գծով նախագահի օգնական՝ Ջեյմս Շլափենչեր: Այս մասին տես՝ Կաբինետ Կարտեր, ՏԱԾ. Առաջ N 53 (1017), 31.12.76, սր. 13.

²²⁴ Овчинников Р.С., Зигзаги внешней политики США: От Никсона до Рейгана, М., 1986, стр. 147.

²²⁵ William L.Cleveland, 624. աշխ., էջ 121:

1977թ. գրեթե ողջ ընթացքում Կաշխնգունդը ճգլում էր արարիստայելական հակամարտության համակղղմանի կարգավորման նպատակով Սիրիայի հետ պահպանել, իսկ ՊԱԿ-ի հետ սկսել երկխոսություն՝²²⁶ Պետքարտուղարության ՍՍ-ի գծով մասնագետները Սիրիայի լիբանանյան ռազմարշավը դիտում էին իբրև՝ կամ ուղղակի, կամ էլ ժնիվ համաժողովի միջոցով սիրիախորայելական հարաբերությունների կարգավորման հնարավորություն՝²²⁷ Սակայն այդ կարգավորման առաջընթացին այժմ խոչընդոտում էր հարավային Լիբանանում ստեղծված քարդ իրավիճակը, որի «շտկման» գործը Վաշինգտոնը վստահում էր Սիրիային: Վերջինս պետք է իր վերահսկողության տակ գտնվող լիբանանյան տարածքների և լիբանանիսրայելական սահմանի միջև ընկած հատվածում, Լիտանի գետի հյուսիսային ափին, բուժերային գոտի ստեղծեր: Այս քայլը պետք է ճանապարհ հարթեր ժնիվ համաժողովի աշխատանքների վերականգնման համար: Սակայն Դամասկոսի խաղաղ մուադրությունները լրջորեն անհանգուտացնում էին Իսրայելին: Ուստի ամերիկյան դիվանագետները ստիպված էին Սիրիային և Իսրայելին համոզել խոհեմություն դրանքել և խուսափել ժնիվ համաժողովի աշխատանքների վերականգնմանը խոչընդոտող քայլերից՝²²⁸ Այս նկատառումներով, անշուշտ Կարտերի խմացությամբ և նրա հավանությամբ, նախատեսվում էր գործի դնել ամերիկյան ազեցության լծակները՝ հարկ եղած դեպքում վտանգելով անգամ Իսրայելի դեկավար շրջանակների և ամերիկյան հրեա համայնքի հետ հարաբերությունները: Ամերիկյան դիվանագետների համոզմամբ՝ ՍՍ-ի հանդիսանուր կարգավորման հարցում նման ճնշում գործադրելու որոշումն՝ ընդունվել էր Ռիջարի գագաթաժողովից հետո,

²²⁶ Itamar Rabinovich, մշվ. աշխ., էջ 90:

²²⁷ Об отношениях США с арабскими государствами и Израилем, ТАСС. Атлас N 48 (1012), 26.11.76, стр. 34.

²²⁸ «Christian Science Monitor», New York, 28.12.1976.

* 1977թ. մայիսի 21-ին ԱՍՍ-ի պետքարտուղարի ու ԽՍՀՄ-ի արտօնորմախարարի համատեղ ներկատվության մեջ կողմերը կարևորում էին ՍՍ-ի գծով ժնիվ խաղաղ համաժողովի երակիրումը, որի աշխատանքների վերականգնման (1977թ. աշնանը) նպատակով պայմանագրությունը ծնոր քրիվց: Այս մասին տես՝ Արաբо-իզրանլեկան կոնֆլիկտ և պալեստинская проблема, Москва, 1989, стр. 86; Внешняя политика Советского Союза и международные отношения, 1987...1988, М., стр. 83-84.

որի մասնակիցները Լիբանանի հիմնախնդրի կարգավորումը Եզիպտոսի համաձայնությամբ «հանձնել էին» Սիրիային: Իսկ ճնշման շարունակությունն անհրաժեշտ էր դիտվում 1977թ. զարմանը Ժնևի երկրորդ շրջափուլի ապահովման միջոցով վերջնական կարգավորման հասնելու տևանելյունից²²⁹:

Այդժամ, օգտվելով ընձեռված հնարավորությունից, «անկողմնակալ» միջնորդի իր դերը կատարելու նպատակով Կարտերը պետք է ըմբռնումով մոտենար արարների դիրքորոշմանն ու օրյեկտիվություն հանդես բերեր նրանց շահերի հանդեպ²³⁰: Դեռ ավելին, համակողմանի և երկարատև կարգավորման հասնելու նպատակով, Կարտերը վճռականություն պետք է հանդես բերեր Խորայելին անհրաժեշտ գիշումներ պարտադրելու հարցում: Ասադը ևս ընդունում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերը և, իրեն գերտերություն՝ մերձավորարևելյան ճգնաժամում նրա ստանձնած պարտավորությունների անհրաժեշտությունը²³¹:

Արդեն իսկ 1977թ. հունվարի սկզբին, մերձավորարևելյան հակամայրության վերջնական կարգավորման շուրջ քանակցային նոր հիմքերի հստակեցման նպատակով արարական առաջատար երկրների և Խորայելի ղեկավարները հրավիրվում են Վաշինգտոն²³²: Փետրվարի կեսին ԱՄՆ-ի պետքարտուղար Ս.Վենսի և ԱՄԿ-ի գլխավոր քարտուղար Կ.Վալդիայի այցելություններ են ծրագրվում տարածաշրջանի մի շարք երկրներ, այդ թվում Լիբանան²³³: Նախատեսվածի համաձայն՝ Լիբանանի արտաքին գործերի և պաշտպանության նախարար Ֆ.Քուտրոսը Ս.Վենսին պետք է հստակ ներկայացներ երկրի ներքին իրադրությունը: Պետք է մատնանշվեին Լիբանանի, տարածաշրջանի և ողջ աշխարհի վրա պաղեսատինյան հիմնախնդրի ունեցած հետևանքները, որի նկատմամբ ԱՄՆ-ի գրադեցրած ամուր և ուժեղ դիրքորոշման ցանկացած ժախսդում կարող էր հանգեցնել ԱՄ-ի և ողջ

²²⁹ «Christian Science Monitor», New York, 28.12.1976.

²³⁰ «Christian Science Monitor», New York, 14.12.1976.

²³¹ Интервью Асада, ТАСС. Атлас N 52 (1016), 24.12.76, стр. 35.

²³² «United News and World Report», Washington, 8.1.1977.

²³³ США, Внешнеполитическая деятельность правительства Карттера, ТАСС. Атлас N 5 (1022), 4.2.77, стр. 15. Այցելություններ էր նախատեսվում Խորայել, Եգիպտոս, Լիբանան, Հորդանան, Սիրիա և Սաուդյան Արաբիա:

աշխարհի իրադրության վատքարացմանը. Անհրաժեշտ էր համար-վում նաև ԱՄՆ-ի հետ քննարկել Լիբանանի շահերի պաշտպանության և ժնիվի համաժողովին պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման հարցում Լիբանանի մասնակցության և նրա դերակատարության խնդիրը. Ինչ վերաբերվում է ԱՄԿ-ի գլխավոր քարտուղարի այցելության նպատակին, ապա նրա համար պետք է լիբանանյան և տարածաշրջանային իրադրությունների միջև կապերի բացահայտման նպատակով անձամբ ծանոթանալու հնարավորություն ստեղծվեր:

Նախատեսվում էր նաև քննարկումներ անցկացնել միջազգային հանրության կողմից Լիբանանին ֆինանսատնտեսական և տեխնիկական աջակցության ցուցաբերման խնդիրների շուրջ²³⁴: 1977թ. հուլիսին նախազահ Կարտերը կրնզրեսի հավանությանը ներկայացրեց Լիբանանի վերականգնման համար 100 մլն. ԱՄՆ-ի դոլարի օգնության տրամադրման համալիր առաջարկը²³⁵: Իսկ օգոստոսի 3-ին Բեյրութում Լիբանանի իշխանությունների հետ հանդիպման ընթացքում, ԱՄՆ-ի պետքարտուղար Ս.Վենադ քննարկեց լիբանանյան կառավարությանը Վաշինգտոնի նախատեսած 100 մլն. ԱՄՆ-ի դոլար արժուությամբ վարկի խնդիրը^{*}, որի երկրորդ մասը պետք է հաստատեր կոնգրեսը: Ամերիկյան կառավարությունը Լիբանանի համար ևս 23 մլն. դոլարի հանգանակություն էր նախատեսում²³⁶:

Ինչ վերաբերվում է Թեղ-Ավիկ լիբանանյան քաղաքականությանը, ապա այդ առնչությամբ հարկ է նշել, որ կոչտ գծի հետևող Սենատին Բեգինի և աջ-ազգայնական «Լիկուր» կուսակցության կողմից խրայելական կառավարության (1977թ.) ստանձնման արդյունքում այն արմատական փոփոխության ենթարկվեց: Հակառակ Լիբանանի քրիստոնյաների հանդեպ Բեգինի տածած համակրանքին[†], նրա լիբանանյան քաղաքականությունը նախկին վարչապետի (Ռարինի) համե-

²³⁴ «Monday Morning», Beirut, 24.1.1977.

²³⁵ О положении в Ливане, ТАСС. Атлас N 28 (1045), 15.7.77, стр. 35.

* 25 մլн.՝ 1977թ., 75 մլն.՝ հաջորդ երկու տարիների համար:

²³⁶ Пресс-конференции Венса в Бейруте и Аммане, ТАСС. Атлас N 32(1049), 12.8.77, стр. 34.

* Բեգինի հաճախ էր ընդգծում իրենների և քրիստոնյա-մարոնիների միջև պատճական ընդհանրությունների փաստը՝ Խարյանին վերագրելով Լիբանանում արևմայան ու քրիստոնեական շահերի պաշտպանի դերը:

մատությամբ առավել հանդրագի քնույթ էր կրում: Բեզինը չերկընչեց անգամ լիրանանյան գործերում Կարսերի կառավարության հետ Խորայելի գործողությունների համակարգման մակարդակի նվազեցման հարցում²³⁷:

Թել-Ավիվի որդեգրած կոշտ քաղաքականության և 1977թ. գարնանն արար-խրայելական կարգավորմանն ուղղված դիվանագիտական ջանքերի բոլուսման արդյունքում Լիրանանի հարավում պաղեստինցիների ու խրայելցիների միջև լարվածությունը սրվեց: Այս առնչությամբ Լիրանանի նախագահ Սարգիս մեղադրեց Վաշինգտոնին, որը չէր իրազործում նախքան Բեզինի պաշտոնավարության ստանձնումը, ամերիկյան դիվանագիտական խողովակների միջոցով խրայելական ներխուժման անհնարինության ուղղությամբ Լիրանանին տրված երաշխիքները:

Դամասկոսի գրադեցրած դիրքորոշման առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ վերջինս՝ սիրիական գորքերը Լիրանանում անորոշ ժամկետով պահելու անկարողության պատճառաբանությամբ, լիրանցիներին հորդորում էր երկրում սեփական միջոցներով կարգ ու կանոն հաստատել²³⁸: Սիրիական գորքերի պահպանման աննպատակահարմարությունը հավանաբար պայմանավորված էր ճգնաժամ ապրոյ երկրի կողմից Լիրանանում անհրաժեշտ միջոցառումների կիրառման և իրադրության պատասխանատվությունը շարունակ կրելու Դամասկոսի անզորությամբ:

Ստեղծված իրավիճակից շտապեց օգտվել Եզիպտոսը, որի նախագահ Սադաթը հանդես եկավ հարավային Լիրանանում լարվածության կարգավորման ուղղությամբ Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, Եզիպտոսի, Քուվեյթի և Լիրանանի ղեկավարների խորհրդակցություն

²³⁷ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 106:

²³⁸ «New York Times», 7.7.1977. Սիրիան դա բացատրում էր Գոլաններում իր գորքերի համարման պահանջով:

Այդ դժվարությունները կապված էին Դամասկոսի նկատմամբ միջազգային ճնշման, լիրանանյան ներխուժման նետառներով կրած նյութատեխնիկական վնասների, ներփակայքային լարվածության, Սիրիայի իշխանական վերին էշելններում խմբվող դժգոհությունների և այլ խմելինների հետ: Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Ն. Հ. Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թ.), հ. IV, Երևան, 2007, էջ 523:

հրավիրելու առաջարկությամբ։ Իր հերթին, հարավային Լիբանան ՍԱԿ-ի խաղաղապահներ ուղարկելու ուղղությամբ Լիբանանի քրիստոնյաների վաղօրոք արված առաջարկի պաշտպանությամբ հանդիս եկավ Սաուսան Արարիայի գահաժառանգ արքայազնը²³⁹։ Վերջինիս այդ քայլը բացատրվում էր հարավային Լիբանան սիրիական գերակշռությամբ արարական խաղաղապահ ուժեր մտցնելու դեմ Իսրայելի բռնորդարկման փաստով։ Իրեն իր անվտանգության ուղղված սպառնալիքը²⁴⁰։ Փաստորեն, Լիբանանի հարավի իրադրությունը, հատկապես այն պահեստինյան մարտիկների հիմնական ուղմահանգը վերածվելուց հետո, իսրայելական ազրեսիայի առիթ և հնարավորություն էր ստեղծում՝ ՍԱ-ում վտանգավոր զարգացումների հետանկար նախանշելով²⁴¹։

Նման զարգացումներից խուսափելու նպատակով 1977թ. հունիսի 21-ին Ծոտորայում լիբանան-պաղեստին-սիրիական համատեղ հանձնաժողովի աշխատանքների ընթացքում քըննարկման դրվեցին 1969թ. Կահիրենի պայմանագրի կենսագործման և Լիբանանի հարավի իրադրության կարգավորման խնդիրները։ Քննարկման արդյունքում որոշվեց, որ երկրի հարավում պաղեստինյան ճամբարների պաշտպանությունը պետք է իրականացվեր լիբանանյան քանակի ստորարաժանությունը, իսկ Քեյրութի արվարձանների պաղեստինյան ճամբարների պաշտպանությունը՝ պաղեստինյան զորամիավորումների ու միջարարական զայիչ ուժերի կողմից²⁴²։

Հակառակ վերոնշյալ միջոցառումների ձեռնարկմանը, 1977թ. օգոստոսի դրությամբ իսրայելական զորքերի կուտակումները շարունակվում էին Լիբանանի հարավից շրջաններում՝ ուղեկցվելով ՊԴԸ-ի և ԱՀՌԻ-ի դիրքերի դեմ իսրայելական հետևակի գրոհներով։ ՊԱԿ-ը և

²³⁹ «New York Times», 7.7.1977.

²⁴⁰ О положении в Ливане, ТАСС. Атлас N 28 (1045), 15.7.77, стр. 35. ՊԱԿ-ի ներկայացուցչի համաձայն՝ Հարավի կարգավորման խնդիրը կախված էր ոչ թե ծախսերից կամ աջերից, այլ Իսրայելից և ԱՄՆ-ից։

²⁴¹ «الآن، بيروت», 14.7.1977:

²⁴² К положению в Ливане, ТАСС. Атлас N 30 (1047), 29.7.77, стр. 43.

* Իսրայելական գրոհներն իրականացվում էին հրետանու և տանկերի աջակցությամբ։

Սիրիան Խսրայելի գործողությունների ակտիվացումը պայմանավորում էին ԱՄՆ-ի պետքարտուղար Ս.Վենսի ՍՍ-ի այցից հետո Սպիտակ տան կողմից լիբանանյան ճգնաժամի կարգավորման ուղղությամբ կրնկրեստ միջոցառումների չկիրառմամբ կամ դրանց անարդյունավետությամբ²⁴³: Նշենք, որ վերոնշյալ այցի շրջանակներում, օգոստոսի 3-ին Բեյրութում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, Ս. Վենսը Լիբանանի կառավարությանը հորդորել էր որոշում կայացնել լիբանան-խսրայելական սահմանին ՍՍԿ-ի խաղաղապահների տեղակայման ուղղությամբ²⁴⁴:

Ստեղծված պայմաններում, ճգնաժամի ամերիկյան կարգավորման հետ հույս կապող երկրներին մնում էր սպասել ՍՍԿ-ի ԳԱ-ի նոտակա նստաշրջանի ընթացքում, ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ, արարական երկրների և Խսրայելի արտաքին գործերի նախարարների հանդիպմանը: Մինչդեռ Թել-Ավիվը՝ օգտվելով արարական որոշ երկրների միջև առկա լարվածությունից, փորձում էր իր հակառակորդներին դնել հնարավորին շափ շատ կատարված փաստերի առջև: Հարավային Լիբանանում պատերազմական իրավիճակի երկարաձգմամբ, Խսրայելը ակնկալում էր Սիրիային ներքաշել Լիբանի վտանգավոր և առճակատմամբ հղի իրադարձությունների հորձանուուը²⁴⁵:

Այդ էր քերևս պատճառը, որ Սիրիայի նկատմամբ մարոնի դեկավարներին հաղթարքությ ապահովող խսրայելական ջանքերի դեմ Դամասկոսն առաջ քաշեց Լիբանանի հարավի քաժանման ծրագիրը, որի համաձայն պաղեստինցիները պետք է հաստատվեին «Ֆարահ-լենք»-ում: Դրանից հետո Լիբանանի նախագահ Սարգսի հովանուները (ԱՄՆ-ի աջակցությամբ) տարբեր համայնքների ներկայացուցիչներից կազմված լիբանանյան նոր քանակը պետք է մուտք գործեր էվակուացման գոտի: Որոշ կարծիքների համաձայն՝ Կարտերի կառա-

²⁴³ Положение в Ливане, ТАСС. Атлас N 34 (1051), 26.8.77, стр. 39-40.

²⁴⁴ Пресс-конференции Вэнса в Бейруте и Аммане, б2ц. аշխ., էջ 33:

²⁴⁵ Положение в Ливане, ТАСС. Атлас N 34 (1051), 26.8.77, стр. 40.

վարույթունը Բեգինին կոչ էր արել նպաստել սիրիական քաժանման ծրագրին²⁴⁶:

Սակայն սիրիական ծրագրերին սատարելու վոլխարեն, իսրայելական հետևակն ու զրահատանկերը՝ անցնելով սահմանը, «գիրքեր գրադեցրին» Լիբանանի հարավում, որից հետո Բեգինը հրապարակավ հանդես եկավ հրադադարի շուրջ անհապաղ բանակցություններ վարելու առաջարկությամբ։ Սակայն դժվար էր պատկերացնել Արաֆաթի հետ բանակցությունների վարման հարցում Իսրայելի պատրաստակամությունը, առավել ևս, որ Լիբանանում հրադադար հաստատող միակ ուժը սիրիական բանակն էր։

Թեև Լիբանանի հարավը միակ շրջանն էր, որտեղ պաղեստինցիները նախկինի պես պահպանում էին իրենց անկախ ու ուղղակի ուժությունը և որտեղ Իսրայելը բացառում էր սիրիական բանակի մուտքը, այնուհանդերձ, Իսրայելը գիտակցում էր, որ պատերազմի հնարավորության դեպքում, սիրիական բանակը կարող էր առավել մեծ սպառնալիք ներկայացնել իր անվտանգությանը, քան ՊԱԿ-ը։ Ուստի Թեև-Ավիվը գերադասում էր Լիբանանի հարավը վերածել լիբանանյան որևէ չեղոր «քանակի» հսկողության տակ գտնվող բուժներային գոտու։ Սա Իսրայելի կողմից միանգամայն վտանգավոր և Լիբանանի հարավի բոնակցում ենթադրող ուղեգիծ էր²⁴⁷։ Լիբանանյան ծախերի կարծիքով՝ ի հեճուկս Վաշինգտոնի կողմից նման բռնակցումը պաշտոնապես անթույլատրելի համարելու շուրջ արված հայտարարություններին, Սպիտակ տունը գործնականում Իսրայելին Լիբանանի հարավի նկատմամբ արյունավետ հսկողություն հաստատելու իրավունք էր վերապահում²⁴⁸։

Իրենց հերթին, լիբանանյան աջերը հակասիրիական ու պազմարշավ ծավալեցին՝ այդ նպատակով օգտագործելով ինչպես Իսրայելի կողմից գործադրվող ճնշամիջոցներն ու ԱՄՆ-ի քաղաքական աջակցությունը, այնպես էլ լիբանանցիների զգալի շրջանում աճող հակասի-

²⁴⁶ «New York Times», 23.8.1977.

²⁴⁷ «The Times», London, 22.9.1977.

²⁴⁸ К Положению на Юге Ливана, ТАСС. Атлас N 46 (1063), 18.11.77, стр. 43.

լիական տրամադրությունները²⁴⁹: 1977թ. հոկտեմբերին, արևմտյան քեյլութը վեր էր ածվել սիրիական քանակի և աջ-քրիստոնեական ուժերի միջև մարտադաշտի: Նշենք, որ աջ-քրիստոնեական ուժերին Խորայելն աջակցություն էր ցուցաբերում այնքանով, որքանով անհրաժեշտ էր միայն սիրիական քանակին դիմակայելու և պայքարը շարունակելու, բայց ոչ երբեք՝ հաղթելու համար:

Ինչ վերաբերվում է Սիրիայի և Խորայելի միջև հարաբերությունների սրման շարժառիթներին, ապա դրանք բացատրվում են տարածաշրջանային զարգացումների համատեքստում: Խնդիրն այն էր, որ 1977թ. նոյեմբերին նախատեսվում էր Եգիպտոսի նախագահ Սադաթի այցը Երևանադեմ: Այս քայլի կասեցման և Սադաթի շուրջը բյուրեղացող արարական ցանկացած համերաշխության կանխարգելման հարցում Սիրիան զգում էր ոչ թե լիբանանցիների, այլև պատեստինցիների կարիքը: Հետևաբար այս գործոնը ևս նպաստեց Լիբանանի ներսում դաշինքների վերադասավորմանը²⁵⁰, որում մեծ դեր խաղաց նաև լիբանանյան աջերի, մասնավորապես Շամունի մտավախությունն առ այն, որ պատերազմից հետո Լիբանանում Սիրիայի ներկայության շարունակությունը կարող էր սպառնալ իրենց դիրքերին: Այդ էր պատճառը, որ լիբանանյան աջերն ամրապնդեցին Խորայելի հետ դաշինքն ընդդեմ Սիրիայի և լիբանանյան ձախերի²⁵¹:

Խորայելն իր հերթին պես է փորձեր Սիրիային պահել երերուն հողի վրա, քանզի տարածաշրջանային խնդիրներից և արարական ճակատի հանդեպ պատասխանատվությունից սիրիական դիվանագիտությանը շեղելու առավել նպատակահարմար միջոց, քան պահեստինցիների մասնակցությամբ բռնությունների հրահրումն էր, գոյություն չուներ: Դա Սադաթին հնարավորություն կտար Խորայելի հետ անարգել քանակցություններ վարել²⁵²:

Ինչ վերաբերվում է Կարտերի վարչակազմին, ապա հակառակ վերջինիս կողմից քիսինչերյան քաղաքականությունից հրաժարվելու և

²⁴⁹ Напряженность в Ливане сохраняется, ТАСС. Атлас N 11 (1080), 17.3.1978, стр. 36.

²⁵⁰ Ghassan Tueni, Յշվ. աշխ., էջ 91-92:

²⁵¹ Itamar Rabinovich, Յշվ. աշխ., էջ 110:

²⁵² Ghassan Tueni, Յշվ. աշխ., էջ 92:

ՍԱ-ի հակամարտության կարգավորման խաղաղ բանակցությունների ուղղությամբ 1977թ. հոկտեմբերին խորհրդապերիկյան համատեղ հայտարարությամբ հանդիս գալու հանգամանքին²⁵³, իր ՍԱ-ի քաղաքանության առաջնահերթություն դարձրեց խարայելածիպական սեպարատ բանակցությունները: Մինչդեռ խորհրդապերիկյան համատեղ հայտարարության մեջ երկու կողմերը համոզմունք էին արտահայտել, որ խաղաղության ամրապնդման և «միջազգային անվտանգության» շահերը «քելադրում են արար-խարայելական հակամարտության արդարացի և ամուր կարգավորմանն արագ հասնելու անհրաժեշտությունը», որը պետք է «համապարփակ լիներ, ներառեր բոլոր շահազգի կողմերին ու հիմնախնդիրները»²⁵⁴: Փաստորեն, սեպարատ գործարքների քաղաքականությունից ԱՍՆ-ի հրաժարումն ամրագրված էր «Պաղեստինցի ժողովոյի օրինական իրավունքների» և խաղաղության գործընթացին վերջիններիս մասնակցությանը վերաբերող խորհրդապերիկյան համատեղ փաստարդում²⁵⁵: Մինչդեռ 1977թ. նոյեմբերին Սահաքի՝ Երուսաղեմ, իսկ Բեգհնի՝ Վաշինգտոն կատարած այցելություններից հետո Կարտերը բացառեց խաղաղության գործընթացում ՊԱԿ-ի ցանկացած մասնակցությունը²⁵⁶:

Այսպիսով, Սահիստակ տունը՝ ետին պլան մղելով Սիրիայի հետ բացված, իսկ պաղեստինցինների հետ ակնկալով երկխոսությունը, սատար կանգնեց խրայելածիպական պայմանագրի կնքման գործընթացին: ԱՍՆ-ը ստանձնեց Իսրայելի ու Եգիպտոսի միջև բանակցությունների գլխավոր միջնորդի դերը՝ համաձայնագիրը դիտելով իրեն Իսրայելի և նրա բարը հակառակորդ-հարևանների միջև ստորագրվելիք մի շարք պայմանագրերի նախակարապետ²⁵⁷:

²⁵³«US News and World Report», Washington, 2.11.1977. ԱՎեման ու ԱԳրոմիկոն որոշակի վիխսգիշման զնացին ՍԱ-ի գծով՝ ԱՍՆ-ը հրաժարվեց Իսրայելին, իսկ ԽԱՀԱ-ը՝ ՊԱԿ-ին ցուցաբերվող որոշ օգնությունից:

²⁵⁴«Правда», Москва, 2.10.1977.

²⁵⁵Внешняя политика Советского Союза: Сб. Документов, 1977 г., М., 1987, стр. 170; «Washington Post», 13.10.1977.

²⁵⁶Tabitha Petran, նշվ. աշխ., էջ 239:

²⁵⁷Питер Кальвокоресси, նշվ. աշխ., էջ 509:

Ուշագրավն այն է, որ լիբանանյան զարգացումների առնչությամբ նախազահ Սադաթը, որը ոչ քև Լիբանանի անկախության ու ինքնիշխանության, այլ իր սեփական նպատակներին՝ նախևառաջ Խորայելի հետ սեպարատ գործարքի հասնելու նպատակ էր հետա-պնդում, Փարիզում տված մամլ ասուլիսի ժամանակ հայտնել էր, որ Եզիդական դեմ է Լիբանանում որևէ այլ երկրի, բացառությամբ՝ «Լիբանանի ազդեցությունից»: Կարելի է ենթադրել, որ Լիբանա-նի հողի վրա Սադաթը «հաշիվներ էր մաքրում» Եզիդականի նոր ուղե-զիծը դատապարտող և, այս կամ այն կերպ, այն խոչընդոտող Սիրիա-յի, ՊՆՀ-ի, Լիբիայի և այլ ուժերի դեմ²⁵⁸: Խոսքը Եզիդականի արա-բական սեպարատ բանակցությունների դեմ 1977թ. դեկտեմբերին Տրիպո-լիում «Կայունության և հակագրեցության ճակատի» («Front of Steadfastness and Confrontation») ստեղծման մասին էր, որի մեջ ընդգրկվեցին հակակայսերապետական կողմնորոշում ունեցող արա-բական երկրներ Սիրիան, Իրաքը, Ալժիրը, ԵժԴՀ, Լիբանանը, ինչպես նաև ՊԱԿ-ը²⁵⁹:

Սակայն Սիրիան, որի լիբանանյան ներխուժումը համաձայնեց-վել էր ԱՄՆ-ի հետ, չեր կարող հաշվի չնստել այդ երկրում վերջինիս դերակատարության հետ, որն էլ ըստ եռյան սկսել էր սահմանակա-կել Լիբանանում սիրիական գործողությունները: Իրենց հերթին, լիբա-նանյան աջերը հետզինեւ ավելի հաճախ էին Լիբանանի անվտան-գության երաշխավորման կոչերով դիմում Վաշինգտոնին: Լիբանա-նում ԱՄՆ-ի դեսպան Պարկերի հետ հանդիպումների ժամանակ, նրանք քննարկում էին ամերիկյան աջակցության տարրերակներ՝ վկայակոչելով Լիբանանի, նրա բանակի և անկախության պաշտպա-նության ուղղությամբ ԱՄՆ-ի պատրաստակամության շուրջ U. Վենսի հայտարարությունը: Սակայն Վաշինգտոնն անշուշտ Սիրիայի վրա ազդելու նպատակով առավել բարդ ու ոչ միանշանակ խաղ էր վարում՝

²⁵⁸ Напряженность в Ливане сохраняется, б. վ. аշխ., էջ 38:

²⁵⁹ Караманукин Ш.Л., Место Арабской Лиги в межарабских отношениях, Проблемы современной советской арабистики, Ер., 1985, Вып. I.- Современные политические и социально-экономические проблемы арабских стран, Ер., 1989, стр. 253. Դեկտ. 5-ին այս երկրները խզել էին Եզիդականի հարաբերությունները:

ակնկալելով մերձավորարևելյան կարգավորման գործընթացում ամերիկյան սցենարով Սիրիայի դիրքորոշման հետագա փոփոխությունը:

Ստեղծված իրավիճակում լիբանանյան ծախսերն ու պահեստին ցիները գգուում էին Սիրիային խրայելցիների և աջերի դեմ առավել վճռական գործողությունների հրահրել: Իսկ աջերը փորձում էին Խսրայելի ու ԱՍՆ-ի միջոցով պահեստինցիների ու լիբանանյան կառուվարության նկատմամբ ճնշում ապահովել՝ իրենց ուղեգիծը (հատկապես քանակի վերակազմավորման հարցում) պարտադրելու նպատակով²⁶⁰: Այս միտումներն իրենց «գործնական արտահայտությունը» գտան 1978թ. Փետրվարի 6-ից սկիզբ առած «սիրիա-լիբանանյան պատերազմում», երբ արևելյան Բեյրութի Ֆայադիա գինվորական կայագորում քախվեցին ԼԾ-ի և ՄԶՈՒ-ի գերազանցապես սիրիացիներից կազմված ուժերը²⁶¹:

5. 1978թ. ԻՄՐԱՅԵԼԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԿԱՏՄԱՐ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐԱՎԸ ՄԻՐԻԱ-ԻՄՐԱՅԵԼ-ԼԻԲԱՆԱՆՅԱՆ

ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Վերոշարադրյալից կարելի է գալ այն հետևության, որ ԱՍՆ-ի քաջալերած խրայելանգիպտական քանակցային գործընթացի գինը, այնուամենայնիվ, վճարեցին լիբանանցիները: Ֆայադիայի դեպքերից մեկ ամիս անց, 1978թ. մարտի 15-ին, խրայելական 30.000-անոց գրաքանակը, Լիբանանի հարավում «անվտանգության գոտի» ստեղծելու՝ պատրվակով, ներխուժեց հարավային Լիբանան՝ գրավելով մինչև Լիտանի գետն ընկած տարածքները, բացառությամբ Տիր քաղաքի²⁶²:

²⁶⁰ Напряженност в Ливане сохраняется, №24. аշխ., էջ 37-38:

²⁶¹ «Arab Report and Record», London, 1978, p. 90-91. ՄԶՈՒ-ի սիրիական ուժերը փորձել էին կայազորի հրամանաւարին արգելել լիբանանյան քանակի համար հասկացված ԱՍՆ-ի ուղղմական քենները տրամադրել ԼԾ-ին: Վեծին նպաստել էին նաև լիբանանյան քանակում բրիտանյանների օգտին արված նշանակումները:

Հարձակումից 5 ժամ անց այդպես է արտահայտվել Է.Վեյցմանը: Այս մասին տես «Arab Report and Record», London, 1978, p. 184.

²⁶² Ближний Восток и Международное право, М., 1982, с. 190. 10 կմ. լայնությամբ և 25 կմ. նրկարությամբ ներխուժման Խրայելը գրադարեց նրկի ուղ տարածքի 1/10-ը:

Հարկ է նշել, որ խրայելական ներխուժումը ՊԴՀ-ին «մեկընդիշտ» կուտքելուց բացի, Լիբանանի ջրային պաշարներին տիրելու և Լիբանանի հարավը «Մեծ Խրայելին» բռնակցելու հետահար նպատակ էր հետապնդում, որի նկատմամբ այդժամ հարկավոր էր համարվում հսկողություն սահմանը²⁶³:

Պաղեստինցիներն ի վիճակի չեղան կասեցնել աշխարհի լավագույն զենքերով՝ ներառյալ ամերիկյան գնդիկավոր ռումբերով հանդերձափորված խրայելական բանակի ներխուժումը²⁶⁴, որի արդյունքում վերջիններս զրավեցին Լիբանանի հարավի 1/3-ը՝ առավել խորացնելով առկա ճգնաժամը և ևս 250.000 փախստականների առաջացնան պատճառ դառնալով²⁶⁵:

Դամասկոսը՝ զիտակցելով Սիրիայի նկատմամբ Խրայելի ռազմական առավելության փաստը, ռազմական գործողություններին հետևում էր Թել-Ավիվի կողմից Լիբանանի հարավի գրավման և այն Սիրիայի դեմ իրքն զիտակոր ռազմահանգրվան օգտագործելու մտավախությամբ: Խրայելանգիպտական բանակցությունները Դամասկոսին դրել էին «ռազմավարական ճեղքի» առջև՝ քուացնելով վերջինիս դիրքերը Թել-Ավիվի նկատմամբ²⁶⁶:

Ինչ վերաբերվում է խրայելական ագրեսիայի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշմանը, ապա պետքարտուղար Սայրու Վենսը քննադատեց Խրայելի կողմից «առանց լիազորությունների» ամերիկյան զենքի կիրառման փաստն ու «ԱՄՆ-ի խորհրդով» Լիբանանում խրայելական գործերի պահպանման ուղղությամբ Բեգինի քոյլ տված ակնարկները²⁶⁷: Նախագահ Կարլսերը ևս դժգոհ էր Բեգինի կողմից Լի-

²⁶³ Вольнов Л.Л., Ливанский дневник, Актуальные вопросы международной политики, М., 1980, стр. 80. Հարձակման շարժափր ծառայեց Հայֆա-Թել-Ավիվ զիտակոր նայութու վրա պաղեստինցիների զրոհի արդյունքում մի բանի խրայելցիների զոհվելու փաստը:

²⁶⁴ Tabitha Petran, նշվ. աշխ., էջ 241: Լիբանանի հարավից «կարմիր գծով» բաժանված սիրիական գործերը՝ երկրով մեկ փոքր պահակազորերի բաժանվելով՝ դադարել էին բանակ լինելոց: Նրանք ի գորո չեն իրականացնել իրենց զիտակոր գործառությը՝ Սիրիայի դեմ խրայելական հարձակման ներքությունների կասեցումը:

* Հարձակման արդյունքում զոհվեցին 2000 լիբանանցիներ ու պաղեստինցիներ:

²⁶⁵ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 111:

²⁶⁶ «Baltimore Sun», 16.03.1978.

բանանի հարավ ուղղված տեխնիկա ուղարկմանը²⁶⁷: Վաշինգտոնին իրականում անհանգստացնում էր իսրայելանդիպուտական պայմանագրի ստորագրման նախաշեմին Թել-Ավիվի գործողությունների արդյունքում իրադրության ազակայունացման հեռանկարը²⁶⁸: Կասկածից վեր է, որ Վաշինգտոնը նախապես տեղյակ էր ներխուժման մասին և, ցանկության դեպքում, ի վիճակի էր հետաձգել կամ կանխել այն: Մնում է ներադրել, որ ամերիկյան լրությունը հավասարագոր էր հավանությանը²⁶⁹:

Սակայն, եթե Բեգինը հայտարարեց սահմանի երկայնքով «անվտանգության գոտո» ստեղծման իր մտադրության մասին, Վաշինգտոնը Լիբանանի խնդիրը հանձնեց ՍԱԿ-ի ԱԽ-ի քննարկմանը՝ ենթալով Իսրայելի գործողությունների բացահայտ սատրման դեպքում Սադարի «խսաղաղ նախաձեռնությունը» ճախողելու մտավախությունից:

Իսրայելական գորքերին Լիտանի գետի ուղղությամբ շարժվելու թեգինի իրամանի արծակումից հետո, ՍԱԿ-ի ԱԽ-ն ԱՄՆ-ի հովանու ներքո 1978թ. մարտի 19-ին ընդունեց 425-րդ բանաձեռը: Այն կոչ էր անում իսրայելական գորքերի անմիջական, ամրողական և առանց նախապայմանների դուրս բերում Լիբանանի հարավից: Պահանջվում էր երկրում հաստատել ՍԱԿ-ի 5000-ոց ժամանակավոր ուժեր՝ Սիացյալ Ազգերի Լիբանանի ժամանակավոր Ուժեր (ՄԱԾՈՒ կամ UNIFIL): Իսրայելական ուժերի դուրս բերումն ապահովելու և երկրի հարավում Լիբանանի կառավարության ինքնիշխանությունը վերականգնելու գործին աջակցելու նպատակով²⁷⁰:

Թել-Ավիվը սկզբից և առ մերժեց 425-րդ բանաձեռը՝ մեկնարաբելով այն իրեւ Լիբանանի հարավում ազատ գործող պաղեստինցի

²⁶⁷ Perlutter Amos, *The Life and Times of Menahem Begin*, New York, 1987, p. 7.

²⁶⁸ Арабский мир, Три десятилетия независимого развития, М., 1990, стр. 342.

²⁶⁹ «Ha'aratz», Israel, 21.3.1978.

²⁷⁰ Այս մասին տես՝ ԱՀարությունյան, ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում (1975-1991թ.), քեկնածուական աւտենախոսություն, ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐՐՈՐԴ; <http://www.un.org/russian/documents/sresol1/1978/res425.pdf>.

²⁷⁰ Basic Facts About The United Nations. United Nation Department of Public Information, N.Y., 2000, p. 97; UNSC Resolution 425 of March 19, 1978.

ահարեկիչների սաղրանքների հակագրեցության դիմաց Իսրայելին միակողմանի և անարդարացյուրեն պատժելու փորձ: Թել-Ավիվը ներխուժումից միայն 3 ամիս անց՝ 1978թ. հունիսին, ԱՍԿ-ի ճնշման տակ դուրս քերեց իր ուժերը Լիբանանի հարավից, որտեղ ստեղծված քոֆերային՝ չեզոք գոտում Իսրայելի Պաշտպանության ուժերը (ՊՊՈՒ) փոխարինվեցին գերազանցապես ԱՍԿ-ի խաղաղապահներով²⁷¹:

Սակայն Թեգինի կառավարությունը՝ «զվատահեղով» ՄԱԿ-ի կողմից պաղեստինյան գրոհների արդյունավետ զապնան կարողությանը և տրամադրվածությանը²², իսրայելական գործերի «վերջնական» դուրս քերման արդյունքում ԱՍԿ-ի վերահսկողությանը հանձնեց իր կողմից զրահեցրած 5 դիրքեր: Մի շարք քրիստոնեաբնակ վայրերում ստեղծած հենակետեր, այսպես կոչված՝ «անվտանգության գոտին», հանձնվեց² Սաադ Հադրայի «Լիբանանի հարավի պաշտպանության բանակի» (ԼՀՊԲ) և շիա մուսուլմանների միլիցիաների վերահսկողությանը: Վերջիններս համաձայնեցին Իսրայելի ուազմական և ֆինանսական աջակցության դիմաց կանխել Լիբանանի հարավ ՊԱԿ-ի վերադարձը և Սիրիայի հնարավոր ներխուժումը²⁷²: Իսրայելական օգնության շնորհիվ ուազմական և քաղաքացիական գրեթե բոլոր ենթակառույցներում Հադրայի ուժերը Հարավային Լիբանանում հզրագույն ուժի վերածվեցին²⁷³: ԻՊՈՒ-ի որոշ խորհրդականներ և մի քանի հարյուրի հասնող զինվորականներ մնացին երկրի հարավում՝ հաճախակի բախումների մեջ մտնելով ԱՍԿ-ի խաղաղապահների հետ: Իսրայելը շարունակում էր նաև լիբանանյան սահմանի մոտ զգալի քա-

²⁷¹ Laura Zittrain Eisenberg, Do Good Fences Make Good Neighbors?: Israel and Lebanon after the Withdrawal, *Meria, Middle East Review of International Affairs*, Journal, Volume 4, No. 3 - September 2000. <http://meria.idc.ac.il/journal/2000/issuc3/jv4n3a2.html>.

* Իսրայելն իր անվտահությունը պայմանավորում էր համական ԱՍԿ-ի որոշ զորամիավորումներ ՊԱԿ-ին համակրող երկրներից հավաքարված լինելու հանգամանքով:

* Իրենց հետացման նախօրեին իսրայելցիներն առավել քան 50 տասկ և զրահատանկային վոյազարմքոցներ, մնեց քանակությամբ հրետանի և տազմամբերը, լավ համեմատավորված ու ամրացված դիրքեր հանձնեցին Սաադ Հադրայի միլիցիային:

²⁷² Обстановка в Южном Ливане, ТАСС. Атлас N 25 (1094), 23.6.78., стр. 39.

²⁷³ Положение на Юге Ливана, ТАСС. БПИ N 90, 11.5.1979г., стр. 28.

Նակությամբ ռազմուժ պահել, որոնք անհրաժեշտության դեպքում կարող էին կրկին երկրի տարածք ներխուժել²⁷⁴:

Թեև Կարտերի վարչակազմը պաշտոնապես հավանություն չուվեց Իսրայելի կողմից ԼՇ-ին ու Սաադ Հադդադի միջիցիային ցուցաբերվող օգնությանը, անուամենայնիվ, իր ջանքերը Իսրայելի հետ մեկտեղ կենտրոնացրեց պաղեստինյան հիմնախնդրի վրա՝ գտնելով, որ անհիմաստ է արդեն եղածին ևս մի հակամարտություն ավելացնել:

Ինչ վերաբերվում է ԼՀՊԲ-ի հանդեպ ամերիկյան դիրքորոշմանը, ապա ուշագրավ է ԱՄՆ-ի պետքարտուղարության խոսնակ Թոմ Ուստրոնի կողմից Սաադ Հադդադին լիբանանյան բանակի սպա հայտարարելու փաստը: Այն ամերիկյան փորձագետների կողմից քրիստոնյա-աջերի կողմից սահմանային գոտու նկատմամբ վերահսկողության հաստատման ուղղությամբ Վաշինգտոնի անողուակի հավանություն գնահատվեց: Թերևս պատահական չէր, որ UNIFIL-ի հրամանատար գեներալ Էմմանուել Էրսկինը Հադդադին և նրա ուժերին վերաբերում էր իրև «լիբանանյան կառավարության օրինական ներկայացուցչի», իսկ ավելի ուշ՝ Լիբանանի հարավի «ողեն ֆակտութերի»²⁷⁵:

Չնայած Իսրայելի հյուսիսային շրջանների ուղղությամբ պաղեստինների գրոհների զգալիորեն նվազաման հանգամանքին, ոչ UNIFIL-ը, ոչ էլ Իսրայելի աջակցությունից օգտվող լիբանանյան միջիցիաներն ի վիճակի չեղան կամիսել պաղեստինների վերադարձը: Վերջին իրողությունը, զուգակցվելով Լիբանանի հարավում Սիրիայի ազդեցության աճի հետ, վկայում էր UNIFIL-ի, Հադդադի և հատկապես Իսրայելի «Լիտանի» գործողությունների անարդյունավետության մասին²⁷⁶: UNIFIL-ը երբեք իր խնամակալության տակ գտնվող տարածքներում լիարժեք հսկողություն չհաստատեց: Այն չկարողացակ կասեցնել ՊԱԿ-ի կողմից Իսրայելի ուղղությամբ իր գորքերի գլխավերևով իրականացվող հրթիռակոծությունները, ճիշտ այնպես, ինչպես

²⁷⁴ Laura Zittrain Eisenberg, Աշվ. աշխ.:

²⁷⁵ Tabitha Petran, Աշվ. աշխ., էջ 242-243:

²⁷⁶ Laura Zittrain Eisenberg, Israeli's Lebanon Policy, Meria, Middle East Review of International Affairs, Journal, Volume 1, No 3 - September 1997. <http://meria.idc.ac.il/journal/1997/issue3/jv1n3a3.html>.

անգոր գտնվեց Խորայելի գործողությունները կանխելու, անգամ այդ ուղղությամբ կամք դրսելորելու հարցում²⁷⁷:

Ինչպես տեսանք, ԱՄՆ-ի հովանու ներք Սահարի և Խորայելի միջև ուղղակի քանակցությունների վերականգնմանն ուղղված գործնքացը նպաստեց Լիբանանի իրադրության սրմանը: Եզիատախարայելական սեպարատ քանակցությունների հաջողության համար առավել քարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, քանակցող կողմերը ծգուում էին նվազեցնել արարական երկրների շրջանում հակասադրյան տրամադրությունները, թուլացնել Խորայելին հակագրող կայունության ճակատը²⁷⁸:

Ինչ վերաբերվում է երկրի հարավում լիբանանյան կառավարության իշխանության վերականգնման խնդիրին, ապա այդ ուղղությամբ նրանց գործադրած ջանքերը դրական արդյունք չունեցան՝ կապված լիբանանյան քանակի կանոնավոր գորամիավորումների մուտքը սահմանային շրջաններ Հաղդադի կասեցման հետ: Հաղդադը միաժամանակ դեմ էր իր ազդեցության տակ գտնվող անկախության ԱՄՆ-ի գործերի հսկողությանը հանձնելուն՝ հիմնավորելով դրանք խորայեցիների կողմից նախապես գրավված շինելու հանգամանքով²⁷⁹: Անգամ ԱՄՆ-ի ճնշման տակ, 1978թ. ամռանը Լիբանանի հարավ ուղարկված լիբանանյան քանակի մի գումարտակ՝ հանդիպելով հարավի դիմակայությանը, ստիպված էր ցրվել:

Լիբանանի հարավի նկատմամբ խորայելական ազրեսիան նպաստեց նաև 1978թ. փետրվարից սկիզբ առած և մինչև հոկտեմբեր ՄՊՈՒ-ի կազմի մեջ մտնող սիրիական ուժերի դեմ կարճատև (ապրիլ, հունիս, հուլիս ամիսներին) ընդմիջումներով աջ-քրիստոնեական ուժերի ռազմարարական գործողությունների շարունակմանը:

Այս մարտերի ընթացքում քաշահայտվեց, որ լիբանանյան քանակի սպաների մեծ մասը կողմնակից են ԼՇ-ին: Անձամբ Իվիաս Սարգիս օտարվեց Սիրիայից՝ մերձենալով ԼՇ-ին՝ այդ կերպ կորցնելով

²⁷⁷ John Bulloch, նշվ. աշխ., էջ 12:

²⁷⁸ أشارة، دمشق، «Ալ-սատրա», Դամասկոս, 8.7.1978:

²⁷⁹ «Le Monde», Paris, 21.6.1978.

Սիրիայի ու լիբանանյան իր դաշնակիցների վստահությունը: Սինջեռ վարչապետ Հոսու մնաց Սիրիայի մերձավոր դաշնակիցն ու գրեք միակ նեցուկը լիբանանյան կառավարությունում²⁸⁰:

«Սիրիացիների կողմից Լիբանանի 600.000 քրիստոնյաների ոչնչացման» դեմ օգնության խնդրանքով «քաղաքակիրք աշխարհին» ուղղված Շամունի կոչերին «պատասխանեց» միայն Թել-Ավիվը: Վերջինս խրայելական քարոզամեքենայում սիրիացիների գործողությունները համեմատեց «2-րդ աշխարհամարտի տարիներին հրեաների նկատմամբ նացիստների կիրառած բռնությունների» հետ²⁸¹: Խրայելն ակտիվացրեց իր ռազմական օգնությունը ԼԾ-ին, սակայն դրանք ավելի շուտ վերջիններիս քարոյական ոգին քարծրացնելու, քան Սիրիային վախեցնելու նպատակ էին հետապնդում, նամանավանդ որ, որոշ աղբյուրների համաձայն, խրայեցի պաշտոնյաները Վաշինգտոնի միջոցով այլժամ գրեք ամենօրյա անուղղակի երկխոսություն էին պահպանում Դամասկոսի հետ²⁸²:

Ուշագրավն այն է, որ երբ Լիբանանի նախագահ Սարգսին, ԱՄՆ-ի դեպսան Ռիշարդ Պարկերի հետ խորհրդակցելուց հետո, Դամասկոսին հայտնեց սիրիացիների ռազմական գործողությունների շարունակման դեպքում երաժարական տալու իր մտադրության մասին, Ասադը հայտնեց Լիբանանի նոր նախագահ փնտրելու սիրիացիների պատրաստականությունը և պահանջեց վերջ դնել Խրայելի հետ ԼԾ-ի դաշինքին²⁸³: Սիրանույն ժամանակ, Թել-Ավիվը «Քաթարիի» և ԱԼԿ-ի խնդրանքով դիմեց ԱՄՆ-ին՝ Լիբանանի նարտական գործողությունների դադարեցման ուղղությամբ Սիրիայի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով: Սակայն Դամասկոսը դնմ արտահայտվեց լիբանանյան ճգնաժամի շուրջ ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ԱԼԿ-ի ԱԽ-ի նիստի գումարմանը, որի դեպքում կարող էր հայտնվել իր գորքերը

²⁸⁰ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 111:

²⁸¹ Tabitha Petran, նշվ. աշխ., էջ 246:

²⁸² «Middle East Report», USA, 30.9.1978.

²⁸³ Tabitha Petran, նշվ. աշխ., էջ 247:

Լիրանանից դուրս բերելու վերաբերյալ ընդունված քանաձևի իրագործման փաստի առջև²⁸⁴:

Չաղաքական և ուզմավարական նկատառումներից ելնելով, Լիրանանում մնալով, Սիրիան դիմակայում էր ոչ միայն Խորայիշին, այլ իր արար հակառակորդներին: Լիրանանի նկատմամբ հսկողության նախաձեռնությունը մարտնախարայելական դաշինքին զիջելով՝ Սիրիան ուզմավարական պարտություն կրեթ: Իր հերթին Լիրանանի 400.000-ոց պաղեստինյան համայնքի նկատմամբ հսկողության կորուստը Սիրիային կղրկեր նաև արար-խորայելական խաղաղ քանակցությունների վրա ճնշում գործադրելու հնարավորությունից: Դեռ ավելին, Լիրանանի երպառակլոչական պատերազմն «անպատճ թողնելու» պարագայում, նույնպիսի պատերազմ կարող էր սանձազերծվել Սիրիայում²⁸⁵: Այդ էր պատճառը, որ Դամասկոսը չէր պատրաստվում իր գործերը դուրս բերել Լիրանանի տարածքից այնքան ժամանակ, քանի դեռ ավարտին չէր հասցրել իր ստանձնած առաջելությունը: Այդ առնչությամբ Սիրիայի արտգործնախարար Հալիմ Խադրայը գտնում էր, որ ՄԱՀ-ը «ոչ ոքից բույլտվություն խնդրել չէր պատրաստվում»²⁸⁶: Դեռ ավելին, նախագահ Ասադը գտնում էր, որ, հակառակ Լիրանանի ինքնիշխանության վերականգնման դեմ Խորայիշի ու նրա դաշնակիցների գործողություններին, Լիրանանն ի վիճակի էր ինքնույրույն ամրապնդել երկրի հարավում պետության դիրքերը²⁸⁷:

²⁸⁴ شرق، «Ա-շակը», Բեյրութ, 28.7.1978: 1978թ. ՍՊԸ-ի կազմում մնացել էր միայն սիրիական զորաքանակը:

²⁸⁵ «Observer», London, 2.8.1978.

²⁸⁶ Интервью министра иностранных дел Сирии, ТАСС. Атлас N 33 (1102), 18.8.78, стр. 38. ՍՊԸ-ի՝ Լիրանանում մնալու ժամկետը լրանում էր հոկտեմբերի սկզբին:

²⁸⁷ Пресс-конференция президента Асада, ТАСС. Атлас N 34 (1103), 25.8.78, стр. 32.

Խսրայելագիպտական սեպարատ գործարքի կնքումից^{*} ուղիղ մեկ ամիս անց, 1978թ. հոկտեմբերի 15-17-ին, Բեյր էլ-Ղինում (Լիբանան) տեղի ունեցավ ՍԶՈՒ-ի կազմում գորամիավորումներ ունեցող կամ այն ֆինանսավորող արարական երկրների^{*} արտգործնախարարների խորհրդակցությունը, որը՝ Վերահաստատելով 1976թ. Կահիրեի և Ռիյազի վեհաժողովների ընդունած սկզբունքները, կոչ արեց բարելավել Լիբանանի իրավիճակն ու աջակցել ազգային հաշտեցման կայացման գործընթացին:

Հատկանշական է, որ համաժողովից հետո, հոկտեմբերի կեսերին Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան խիստ դատապարտեցին ազգային հաշտեցման ուղղությամբ մարտնական միլիցիայի անօգիքում կեցվածքն ու այն քաջալերող Խսրայելի քաղաքականությունը: Ֆրանսիայի արտգործնախարարը նախազգուշացնում էր, որ մարտնական միլիցիայի վարած ուղեգիծն անզամ աջակցություն չի գտնում Լիբանանի բոլոր քրիստոնյաների կողմից: ԱՍՆ-ի պետրարտուղարության խոսնակ Թոմ Ուեսթոնը՝ համաձայնելով Ֆրանսիայի արտգործնախարի հետ, միաժամանակ ընդգծում էր, որ Խսրայելի շահերից է քիսում Սիրիային լիբանանյան գործերում խճելը, քանի դեռ խսրայելագիպտական քանակություններն ընթացքի մեջ էին: Վաշինգտոնն ու Փարիզը Խսրայելից պահանջում էին չաջակցել քրիստոնյա միլիցիային, քանի որ Վերջինս Լիբանանի ներսում ամեկախ պետություն ստեղծելու ինքնակործան և անիրատեսական ուղի է բռնել²⁸⁸:

1978թ. դեկտեմբերին ՍԱԿ-ի ԱԽ-ը կրկին քննարկեց Լիբանանի հիմնախնդիրը, որի ժամանակ ԽՍՀՄ-ի ներկայացուցիչը պահանջեց անհապաղ դադարեցնել Խսրայելի միջամտությունը լիբանանյան գոր-

* 1978թ. սեպտեմբերի 17-ին ԱՍՆ-ի նախագահի նստավայր Ջեմի Նիկում տեղի ունեցավ նախագահներ Կարտերի, Սադարի և Բեգինի համայնքումը, որն ավարտվեց եզիպտախսրայելական համաձայնագրի կնքմամբ: Սակայն համաձայնագրը ոչ միայն չստեղծեց համընդիամուր կարգավորման համար քարենպաստ միջավայր, այլ քարոյացեց դրա իրականացնմը: Սինայի հողերի վերադարձի դիմաց Խսրայելն իր դիրքերն ամրապնդում էր Արևոտյան ափի, Ղազայի և Գողանների գրավված տարածքների նկատմամբ: Այս մասին տե՛ս Տվաչչ Հ.Վ., Յազիկ Ե.Փ., Խոհեմայական պատմությունը լիբանանյան գոր-

* Սառույան Արարիա, Քովեյր, Քարար, Սուլան, ԱՍԴ:

²⁸⁸ Tabitha Petran, նշվ. աշխ., էջ 248-249:

ծերին: Մոսկվան հանդես եկավ երկրի ողջ տարածքի նկատմամբ օրինական կառավարության իշխանության ամրապնդման և Լիբանանում ՊԴԸ-ի շահերի պաշտպանության օգտին: ԽՍՀՄ-ն արտահայտվեց Լիբանանի անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հիման վրա իրադրության կարգավորմանը նպաստելու օգտին: Սակայն այդ ուղղությամբ ԱԽ-ի գործողություններն կասեցվեցին ԱՍԽ-ի և վերջինիս ՆԱՏՕ-ի գործընկերների կողմից, իսկ Խարայելը շարունակեց Լիբանանում ՊԴԸ-ի դիրքերի ուղղությամբ գրոհները²⁸⁹:

6. ԱՍ-Ն ԱՄՆ-Ի «ԿԵՆՍԱԿԱՆ ԾԱՀԵՐԻ» ՏԱՐԱԾՈՒՅԹԱՆ: 1979թ. «ԿԱՐՏԵՐԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ»

Այսպիսով, Լիբանանի ճգնաժամը Վաշինգտոնի ՍԱ-ի քաղաքականության օրակարգում, պահպանելով իր լուսանցքային նշանակությունը, ամրողության ստվերվեց մերձավորարևելյան մի շարք զարգացումներով, մասնավորապես եզիպտահսրայելական քանակցային գործընթացով^{*}: Այն եզրափակվեց 1979թ. մարտի 22-ին Վաշինգտոնում կնքված եզիպտահսրայելական համաձայնագրով՝ ԱՍԽ-ի արտաքին քաղաքական «մեծագույն պատմական» հաջողություններից մեկը գնահատվելով²⁹¹.

Մինչդեռ Լիբանանում շարունակվող խարայելական ագրեսիայի պայմաններում, Սպիտակ տունն ի վիճակի չեղավ քողարկել սեպարատ գործարքի միջոցով ՍԱ-ում համընդիմուր խաղաղության հասնելու անհնարիտությունը²⁹², հիասքափության և կորսորդ զգացողություն առաջացնելով նաև Մայրիների փոքրիկ երկրում²⁹³: Այն Խարայելի կողմից գրավյալ տարածքների բռնակցման, լրացուցիչ բնակավայրերի

²⁸⁹ Американский Экспансионизм Новейшее время, М., 1986.
<http://www.barichev.ru/archiv/oon17.htm>

* Պաղեստինյան խնդրի ուղղությամբ Կարտերի քաղաքականության մեջ տեղի էր ունեցել փոփոխություն:

²⁹¹ Սկլեր Իմանդ, Աշվ., աշխ., էջ 28:

²⁹² США и Ближний Восток после Кэмп-Дэвида, ТАСС. БПИ N 96, 21.5.1979, стр. 3.

²⁹³ M. Heikal, Middle East International, London, 25.5.1979.

կառուցման և ՊԱԿ-ի դեմ պայքարի նպատակով Լիբանանի նկատմամբ ազրեսիայի հիմք ծառայեց²⁹⁴: Գործարքն անօգուակար գտնվեց նաև ՍԱ-ում ԱՄՆ-ի հենարան համարվող Իրանի շահի անկման արդյունքում ստեղծված վակուումը լրացնելու առումով: Խնդիրն այն է, որ շահը ՍԱ-ում ԱՄՆ-ին արժեքավոր ծառայություններ մատուցող շահավետ դաշնակից էր և Խորայելին նավք մատակարարող տարածաշրջանային առաջատար նավթարդյունահանող միակ երկիրը: Իրանի ուազմանավերը հսկում էին Պարսից ծոցն ու Օրմուզի ներուցը, որտեղից առաքվում էր համաշխարհային նավթի 40%-ը²⁹⁵:

ՍԱ-ում ԱՄՆ-ի համար որակապես նոր իրավիճակ ստեղծվեց 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո պատճառինցիների և Իրանի միջն դաշինքի հաստատման ու հակախրայելական քաղաքական արմատական ուղեգծի որդեգրման, Ծոցի տարածաշրջանի ամերիկանետ վարչակարգերին սպառնացող Վտանգի²⁹⁶, 1979թ. մարտին Բաղդադում արարական երկրների գումարած համաժողովում²⁹⁷ Եզիդական դեմ դիվանագիտական պատժամիջոցների ընդունման ու համաժողովին Իրանի մասնակցության արդյունքում²⁹⁸:

Վերոնշյալ զարգացումների ու գործնքացների պայմաններում, ամերիկացիները հարկադրված էին ՍԱ-ում մնկուսացման մեջ չհայտնվելու նպատակով ակտիվ քաղաքականության անցնել²⁹⁹: Ըստ շուտով Հարոլդ Բրաունը, Զրիգնի Բժեղինսկին և Զեյմս Շլեին-ջերը հանդիս եկան ՍԱ-ում՝ մասնակորապես Ծոցի տարածաշրջա-

²⁹⁴ Chomsky Naom, Middle East Illusions, Including Peace in The Middle East? Reflections on Justice and Nationhood, London. Boulder, Oxford, New York. 2003, p. 184.

²⁹⁵ «Fortune», USA, 9.4.1979.

²⁹⁶ Ենթադրվում էր, որ Ծոցի տարածաշրջանի երկրների մեծ մասում առկա շիա և պահեստինի բնակչությունը պոտենցիալ վտանգ էր ներկայացնում նավթահորերի դեմ դավադրությունների իրականացման առումով:

²⁹⁷ «New York Times», 2.7.1979. Լիբանանի կառավարությունը բացասարար վերաբերվեց Եզիդական վարչության դաշնագրի ստորագրմանը, որի պատվիրակությունը և մասնակցեց Սադրաթի գործելակերպ դատապարտող արարական երկրների Բաղդադի խորհրդակցությանը:

²⁹⁸ «Foreign Affairs», USA, Summer, 1979. Բաղդադի խորհրդակցությանը մասնակից երկրները որոշեցին սատեցնել Եզիդական անդամակցությունը ԱՊԼ-ու: Այս մասին տես Գևորգյան Գ., Եզիդական և իրաքա-լիբանյան պատերազմը (1980-1988թ.), Սերծավոր Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XXII, Երևան, 2003, էջ 56:

²⁹⁹ Задача восстановления единства арабских стран, ТАСС. БПИ N 115, 15.6.1979г., стр. 27.

նում, Միացյալ Նահանգների «կենսական շահերի» և տարածաշրջանի կայունության «պաշտպանության» նպատակով ՆԱՏՕ-ի շրջանակներում շարժական հարվածային ուժերի տեղակայման և զգածամի կամ արտակարգ իրավիճակների դեպքում դրանց գործադրման ուղղությամբ ԱՄՆ-ի ծրագրերի հայտարարությամբ³⁰⁰: Սպիտակ տունը, ենթելով Միացյալ Նահանգների «անվտանգության նկատառումներից», Սաույան Արարիային, Օմանին, Հյուսիսային Եմենին, Սոմալիին, Քենիային ու ազմական օգնության ծրագրեր էր նախատեսում³⁰¹: Վաշինգտոնը 13 մրդ. ԱՄՆ դոլարի օգնության ծրագիր էր նախատեսում նաև Իսրայելի ու Եգիպտոսի համար, որի 90%-ը՝ ժամանակակից զենքի գնման նպատակով³⁰²:

Անշուշտ, այդ օգնության զիսավոր նպատակը ՍԱ-ի երկրներում ԱՄՆ-ի ներկայության և նավթային պաշարների նկատմամբ անարգել մուտքի ապահովումն էր³⁰³: Ուշագրավ է, որ Ծոցի երկրները, մասնավորապես Սաույան Արարիան, ամերիկյան ու ազմական օգնության կարիքը զգում էին առանց ԱՄՆ-ի ներկայության՝ տարածաշրջանի արմատական խմբերի «հակակայսերապետական» տրամադրությունների սրումից խուսափելու նպատակով³⁰⁴:

Վաշինգտոնը գտնում էր, Իրանի զիմուժի թուլության պայմաններում, Պարսիկ ծոցում վտանգ կարող էր ներկայացնել միայն ԽՍՀՄ-ը, որի ուղղակի սպառնալիքը՝ միջուկային պատերազմի հեռանկարով, կարող էր ստեղծել չափազանց բարդ իրավիճակ: Ուստի անիրաժեշտ էր համարվում անգամ ուժային քաղականության միջոցով ԽՍՀՄ-ի մուտքի կասեցումը տարածաշրջան: 1980թ. գարնանը Սպիտակ տունը նույնիսկ հանդես եկավ Ծոցում մարտավարական մի-

³⁰⁰ «Financial Times», London, 5.7.1979.

³⁰¹ Дэвид Бьюкен, США изучают варианты новой роли в Персидском заливе, ТАСС. БПИ N 136, 16.7.1979г., стр. 40. Այն 1979թ. կազմում էր 5.5 մրդ. ԱՄՆ դոլար, որի կեսը համագնիւղ էր ԱՄՆ-ի ուժերի համար ու ազմահանգրվանների կառուցմանը: 1980թ. այդ գումարը հասնելու էր 8 մրդ. ԱՄՆ դոլարի:

³⁰² «L'Humanité», Paris, 18.6.1979.

³⁰³ Spiegel Steven L., The Middle East and the Western Alliance, University of California, Boston, Sydney, 1982, p. 112.

³⁰⁴ «Fortune», USA, 7.5.1979.

ջուկային գենը կիրառելու ԱՄՆ-ի իրավասության շուրջ հայտարարությամբ³⁰⁵:

Ի վերջո, ԱՄՆ-ի որդեգրած ուժային քաղաքականությանը ձևակերպեց «Կարտերի դոկտրինայում», որը հոչակեց 1979թ. դեկտեմբերին՝ ԽՍՀՄ-ի աֆղանական ներխուժումից հետո: Նոր հայեցակարգի համաձայն՝ Վաշինգտոնն իրեն «ֆրավունք» էր վերապահում ԱՄՆ-ի «կենսական կարևորության շահեր» ներկայացնող աշխարհի ցանկացած հատվածում, տվյալ դեպքում՝ Ծոցի տարածաշրջանում, կանխել սոցիալական կամ այլ բնույթի զարգացումներն ու արտաքին որևէ ուժի կողմից վերահսկողություն հաստատելու փորձերը³⁰⁶:

Այդ էր թերևս պատճառը, որ ԱՄ-ում ստեղծված նոր իրավիճակում ԱՄՆ-ի ստանձնած պարտավորությունների հարցում «հոսանքած» արարական արմատական մի շարք վարչախմբեր փորձեցին իրենց կապերն ամրապնդել ԽՍՀՄ-ի հետ³⁰⁷:

7. 1979թ. ԱՐԵՎՈՒՏՏՔԻ ՄԻՋԱՄԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄԿԱԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ: ՊԱՅՔԱՐ ԼԾ-Ի ՆԵՐՄՈՒՄ

Ինչպես նշվել է, 1978թ. մարտի 19-ի ՍԱԿ-ի ԱԽ-ի 426-րդ քանածելի համաձայն՝ Լիբանանի հարավում հաստատվեցին ՍԱԿ-ի խաղաղապահները՝ ԼՍԱԿԺՈՒ-ը, որոնց գործառույթների մեջ էր մտնում Լիբանանի ողջ տարածքում իշխանության վերականգնման ուղղությամբ կառավարությանն օգնության ցուցաբերումը: Սակայն ԼՍԱԿԺՈՒ-ի վերահսկողության տակ գտնվող գոտին իրականում վեր էր ածվել մայոր Հադրայի գործերի և իսրայելական գրոհների ու ազգեսիայի թիրախի, որոնց դեմ պայքարում իրենց անզորությանը խո-

³⁰⁵ Levon Keshishyan, Middle East, London, June, 1979.

³⁰⁶ Современные Соединенные Штаты Америки, Энциклопедический справочник, Москва, 1988, стр. 306. ԽՍՀՄ-ի ներկայության դեմ պայքարելու նպատակով նախազակարտներն ու Զբիգնի Բժեզինսկին Պակիստանում ու Աֆղանստանում խվանական արմատականների զինման ու վարժեցման նպատակով նախաձեռնեցին 40 մլրդ. ԱՄՆ դոլարի ծրագիր: Այս մասին տես՝ <http://www.usa-presidents.info/carter.htm>.

³⁰⁷ Edward Said, The Palestine Question and the American Context, Beirut, 1979, p. 17.

տովանում էին անզամ խաղաղապահները: Խսկ գրոհների կասեցման նպատակով ռազմական միջոցառումներ կիրառելու ուղղությամբ լիքանանյան կառավարության պահանջները մերժվում էին ինչպես ԱՍՆ-ի, այնպես էլ ԱՍԿ-ի կողմից³⁰⁸:

Ստեղծված իրադրության պայմաններում, 1979թ. մարտին ԱՍՆ-ը, Ֆրանսիան և արարական որոշ երկրներ Բեյրութի վրա ճնշում գործադրեցին լիքանանյան բանակի բարեփոխման կետ պարունակող բեյթ էլ-Դինի համաձայնագրի կենսագործման առնչությամբ: Մարտի 14-ին Լիքանանի խորհրդարանը հաստատեց բանակի օրինագծի ընդունման առաջարկը, որով պահանջվում էր արևմտաեվրոպական բանակների կառույցների օրինակով համապատասխան բարեփոխումներ իրականացնել լիքանանյան գինված ուժերում³⁰⁹:

Հարկ է նշել, որ Ֆրանսիան դեռևս 1978թ. նոյեմբերի 27-29-ը նախագահ Սարգսի՝ Փարիզ կատարած այցելության ընթացքում խոստացել էր Լիքանանի գինված ուժերում բարեփոխումների իրականացման նպատակով ծանր զենք վաճառել³¹⁰: 1979թ. հունվարին Ֆրանսիան միջամտել էր նաև Լիքանանում ԼՍԱԿՇՈՒ-ի մանդատը ևս 5 ամսով երկարաձգելու հարցում: Փարիզը միաժամանակ կողմ էր ԱՍԿ-ի ԱԽ-ի 444-րդ բանածի ընդունմանը, որը Լիքանանի ողջ տարածքով կառավարության իշխանության հաստատման նպատակով ծրագիր ներկայացնելու կոչ էր պարունակում:

Արևմտութիւն ճնշման նպատակը, ըստ Եռության, նախագահ Սարգսի կողմից մայոր Հադրադի դեմ գործողությունների ծեռնարկումն էր, որից նախագահը խուսափում էր՝ նույնատիպ գործողությունների իրականացում պահանջելով պաղեստինցիների դեմ: Այնուհանդերձ, նախագահ Սարգսի կողմից Լիքանանի հարավում կառավարության իմբիշխանության հաստատման նպատակով գորաքանակ ուղարկելու վերջնաժամկետ նշանակվեց 1979թ. ապրիլի կեսը: Լիքանանի կա-

³⁰⁸ «Arab Reportis», 6.6.1979, p. 25.

³⁰⁹ Tabitha Petran, նշվ. աշխ., էջ 249:

³¹⁰ К итогам визита Саркиса во Францию, ТАСС. Атлас N 49 (1003), 8.12.76, стр. 32-33. Ֆրանսիան խոստացել էր մարտական տանկեր, իրետանի, երթուային պահակագորային նոտորանակեր և այլն:

ուավարության նկատմամբ լրացուցիչ ճնշում գործադրվեց նաև արարական երկրների կողմից:

Ապրիլի սկզբին լիրանանյան իշխանությունների կողմից Հադ-դաղի վերահսկողության տակ գտնվող անկյավ 450 հոգանոց կանոնավոր զորաքանակ (UNIFIL-ի փոխարեն) ուղարկվեց: Իբրև հակաքայլ ապրիլի 12-ին վարչապետ Բեգջինն Խորայելի հսկողության տակ գտնվող սահմանային նեղ գոտիին հանձնեց մայոր Հադրադին³¹¹: Իր հերթին մայոր Հադրադը՝ ենելով ինչպես լիրանանյան քանակի առաջնադաշտման դեպքում խրայելական սահմանի հետ կենսական նշանակություն ունեցող հաղորդակցության ուղիներից կտրվելու մտավախությունից, այնպես էլ Լիրանանի հարավում բնակվող «քրիստոնյաներին պաշտպանելու անհրաժեշտությունից», հոչակեց «Ազատ Լիրանան» անկախ պետությունը³¹². «Հադրադինոր»: Այն ըստ եռյան վերածվեց «պետության մեջ պետության» և Խորայելի յուրօրինակ պրոտեկտորատի³¹³: «Ազատ Լիրանանի» հոչակմամբ Հադրադը միաժամանակ Խորայելին կատարված փաստի առջև դնելով նպատակ էր հետապնդում՝ վերջինիս ստիպելով ենթարկվել Լիրանանում միայն պաշտպանական դիրքեր գրադեցնելու ուղղությամբ ԱՍՆ-ի պահանջներին³¹⁴: Խնդիրն այն է, որ Խորայելը 1979թ. հոնվարի կեսից ի վեր ողից, ծովից և ցամաքից անընդմեջ հրետակոծություններով հարավային Լիրանանում «հյուծիչ պատերազմ» էր վարում՝ կիրառելով ամե-

³¹¹Tabitha Petran, Աշվ. աշխ., էջ 249-251: ՄԶՈՒ-ի կազմից իրենց զորքերը փնտրվարի կեսին դուրս քերեց Սուլանը (600), մարտի կեսին՝ Սաույան Արարիան (1200), մի փոքր ավելի ուշ՝ ԱՍՆ-ը (750):

³¹² Волънов Л.Л., У врат Востока, Очерки о Ливане, М., 1982. 700 քառ. կմ. տարածք գրադեցնող «Ազատ Լիրանանում» բնակվում էր 100.000 մարդ, որոնց մեծ մասը՝ 60.000-ը շիա-մուսավամաններ, 40.000-ը՝ քրիստոնյաներ, մի քանի հարյուրը՝ դրուզներ էին: 42 զյուղերից 12-ը քրիստոնեական էին: Լիրանանի հարավի բնակչության գրեթե բոլոր խմբերը սատարեցին Հադրադին: Վերջինիս համաձայն՝ Լիրանանի մայրաքաղաքը մնամ էր Բեյրութը, քանի որ ինքը մտադիր չէր Լիրանանը քաժանել, իսկ ազատ պետությունը ստեղծվել էր միայն սիրիացիներին ու պաղեստինցիներին երկրից դուրս վտարելու, լիրանանյան ծախսերի դեմ պայքարելու նպատակով: Մինչ այդ, 30.000-ոց սիրիական քանակը խուսափել էր Հադրադի միջիցիայի հետ բախտմաներից՝ ենելով հիմնականում վերջինիս հովանավոր Խորայելի հետ առնակատման մտավախությունից:

³¹³ Don Peretz, Աշվ. աշխ., էջ 393:

³¹⁴ Положение на Юге Ливана, ТАСС. БПИ N 90, 11.5.1979г., стр. 28.

ըիլյան գերժամանակակից, անզամ միջազգային իրավունքով արգելված զինատեսակները: Ուստի ենթադրվում էր, որ Իսրայելի գործողությունների պատասխանատվությունը պետք է կրեր նաև ԱՄՆ-ը³¹⁵:

Այդ էր թերևս պատճառը, որ պետքարտուղար Վենսը՝ օգոստոսի սկզբին կոնգրեսին տեղեկացնելով Իսրայելի կողմից ամերիկյան օրենքի խախտման մասին՝ ակնարկում է Թել-Ավիվի դեմ պատժիչ միջոցառումների կիրառման և ԱՄՆ-ի տրամադրած զենքը գուտ ինքնապաշտպանական նպատակներով կիրառելու անհրաժեշտության մասին: Վենսի համաձայն՝ Իսրայելը Լիբանանի հարավում ոչ միայն ԱՄՆ-ի տրամադրած ինքնազնա երեսանի էր կիրառել, այլ տանկային տեխնիկա էր մտցրել այնտեղ: Թել-Ավիվը՝ հերքելով իր հասցեին ուղղված ԱՄՆ-ի մեղադրանքները՝ հայտնում է, որ իր գրոհներն ուղղված են եղել բացառապես ՊԱԿ-ի ռազմահանգրվանների դեմ³¹⁶: Դեռ ավելին, Իսրայելի արտգործնախարար Մոշե Շայանը հայտարարում է, որ Վաշինգտոնը սատարել է ամերիկյան զենքի կիրառմանը Լիբանանի հարավում, բացառությամբ քաղաքացիական բնակչության, պաղեստինցի պարտիզանների դեմ Թել-Ավիվի գրոհների քաղաքանությունը³¹⁷:

1979թ. ապրիլից մինչև օգոստոս ամիսներմ ընկած ժամանակահատվածում Իսրայելը հարավային Լիբանանը վերածեց հրածգության գոտու՝ քաղաքացիական բազում զոհեր³¹⁸ և խոշոր վճասներ պատճառելով երկրին: Այն իրականում պաղեստինյան հեղափոխության ճնշման ու Լիբանանի հարավ սիրիա-իրաքյան զորքերի հնարավոր միջամտության դեպքում «կանխարգելի հարված»՝ «preemptive attack» հասցելու նպատակ էր հետապնդում: Սիրիացի զինվորները գործնականում հայտնվել են դժվարին կացության մեջ՝ սահմանափակելով իսրայելական զրոհներին հակագրելու նպատակով պաղեստինցիներին ցուցաբերվող աջակցությունը³¹⁹: Սա լուրջ խոշընդուներ

³¹⁵ «Washington Star», 13.8.79.

³¹⁶ О Ближневосточной политике США, ТАСС. Атлас N 34 (1155), 24.8.79, стр. 16.

³¹⁷ К американо-израильским отношениям, ТАСС. Атлас N 34 (1155), 24.8.76, стр. 37-38.

³¹⁸ Федеральный канцлер Бруно Крайский о положении на Ближнем Востоке, ТАСС. БПИ N 190, 28.9.1979, с. 16.

³¹⁹ «Middle East», London, N 128, 4.7.1979.

Եր Լիբանանում Սիրիայի վարած քաղաքականության համար, որն առանց այն էլ խրթին էր դարձել ինչպես ներսիրիական, ներլիբանանյան, այնպես էլ միջարաբական մի շարք գործոնների ազդեցության պայմաններում: Փոխվել էր Լիբանանում Դամասկոսի դերի շորջ Սատույան Արարիայի և Ծոցի մի շարք այլ երկրների դիրքորոշումը, որի արդյունքում նվազել էր Լիբանանում սիրիական ռազմական ներկայության ապահովման նպատակով ֆինանսական հատկացումները: Եվ չնայած Լիբանանի նկատմամբ երկարատև վերահսկողություն հաստատելու շնորհիվ Սիրիան ամրապնդել էր Իսրայելի դեմ իր պաշտպանական և հարձակողական դիրքերը, այնուհենդեռ, 30.000-ոց զորքի պահպանումը, առանց անհրաժեշտ ռազմական ենթակառույցների և ֆինանսական աջակցության, բոլացնում էր Դամասկոսի դիրքերը, որն առանց այն էլ սուժել էր իսրայելականի պահպանական գործընթացի հետևանքով³²⁰:

Լիբանանի նկատմամբ Սիրիայի քաղաքականության փոփոխության առաջին նշաններն իրենց օգացնել տվեցին 1979թ. նոյեմբերին՝ Թունիսում կայանալիք արաբական պետությունների դեկավարների խորհրդակցության նախօրեին, երբ նախագահ Սարգսին արտահայտեց Լիբանանի հարավի և երկրում պաղեսատինցիների գործունեության խնդիրը համաժողովի ընթացքում քարձրացնելու իր մտադրությունը: Սիրիան ոչ միայն համաձայն չէր նախագահի մտադրության հետ, այլ դեմ էր Սիրիայից անկախ գործելու ուղղությամբ Լիբանանի իշխանությունների ցանկացած դրսւորման³²¹: Այնուհենդեռ, Լիբանանի հարավի հիմնախնդիրն ընդգրկվեց ԱՊԼ-ի անդամ-երկրների արտգործնախարարների սեպտեմբերյան խորհրդակցության օրակարգում³²²: Թունիսյան նիստերի ընթացքում լիբանանյան պատվիրակությունը հանդես եկավ Լիբանանում ՊՆՀ-ի ներկայության հարցի առաջնահերթ քննարկման առաջարկով: Սակայն այդ հիմնախնդիրների քննարկումները մերժվեցին արաբական երկրների կողմից՝

³²⁰ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 101:

* Նախագահի առաջարկն արժանացել էր Լճի աջակցությանը:

³²¹ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 115:

³²² «New York Times», 27.9.1979.

Սաղարի անջատողական քաղաքականության դեմ պայքարի գլխավոր ուղղությունից իրենց շեղելու պատճառաբանությամբ:

Կարծում ենք, որ Լիբանանի ճանաժամի ստատուս քվոյի երկարածման իր հերթին նպաստեց նաև արարական համընդհանուր շահերի, ամուր դաշինքի բացակայությունը և արարական վեհաժողովների օրակարգում նրան պատշաճ տեղ չհատկացնելու փաստը: Արար վարչախմբերը եզիպտահարայելական խաղաղության գործընթացի, ԽՍՀՄ-ի աֆրանական ներխուժման, Իրանի խլամական հեղափոխության և ՍՍ-ի մի շարք այլ զարգացումների եռողի վրա գրադված էին սեփական վարչախմբերի կայունության պահպանման առավել կարևոր խնդիրներով:

Ինչ վերաբերքում է ՍԱԿ-ի ԱԽ-ին, ապա վերջինիս կողմից Լիբանանի հիմնախնդրի ուղղությամբ բազմաթիվ քննարկումները, որպես օրենք, ավարտվում էին երկրի հարավում ՍԱԿ-ի ժամանակավոր ուժերի ներկայության երկարածման որոշումով:

Լիբանանի նկատմամբ տարածաշրջանային և միջազգային նման դիրքորոշումների պայմաններում, 1980թ. սկզբին երկրի կենտրոնական իշխանությունները մշակեցին 14 կետերից կազմված ազգային հաշտության ծրագիր, որով հերքվում էր Քենիփ Դիլիջի գործարքն ու Խորայելի հետ համագործակցության բռնոր ձևերը, ճանաչվում էր Պաղեստինի ժողովրդի օրինական, սեփական անկախ պետություն ստեղծելու իրավունքը, ընդհանուր գծերով անդրադարձ էր կատարվում սոցիալական խնդիրների լուծման անհրաժեշտությանը: Սակայն պաղեստինյան ներկայության խնդրի նկատմամբ աջերի անհաջող կեցվածքի պատճառով այն կրկին շիրագործվեց³²³: Ազգային հաշտության վերականգնման հարցում ներքական անհաջողությունը հանգեցրեց 1980թ. հուլիսին վարչապետ Սելիմ Հոսի պաշտոնաթողությանը: Նոր կառավարությունը գլխավորեց Շաֆիկ Ուազզանը, որի գործառույթներն ազգային հաշտեցման, փոխզիջման և քաղաքական կարգավորման բացակայության պայմաններում հիմնականում արարողակարգային բնույթ կրեցին: Գործնականում Լիբանանի ներքին քաղաքա-

³²³ Новейшая история арабских стран Азии (1917-1988), Москва, 1988, стр. 141.

կանությունը վարդում էր քաղաքական մեծ ճամբարների ու խմբակցությունների կողմից:

Միրիայի և ԼՇ-ի միջև պայքարի թիրախ դարձած և հիմնականում իրենց գորանոցներում փակված լիբանանյան բանակը և չեր օգտագործվում կենտրոնական կառավարության իշխանության հաստատնան նպատակով³²⁴: ԼՇ-ն աշխատում էր հնարավորին շափ կենսական դժվարություններ ստեղծել սիրիական ուժերի համար՝ հատկապես Բերայի հովուում:

Իսկ ՊԱԿ-ի գործողությունների սահմանափակման ուղղությամբ նախազահ Սարգսի ջանքերը միայն վատրարացնում էր նրանց հետ հարաբերությունները՝ հակապահեատիմյան և պաղեստինամետ առանցքների շուրջ բնետացնելով հակամարտող կողմերին⁵: Աջ-քրիստոնեական կուսակցությունների և խմբակցությունների գինված կազմակորումները շարունակում էին որոշակի ինքնուրույնություն պահպանել՝ աջերի շրջանում և տարածայնությունների և ուզմական բախումների պատճառ դառնալով:

ԱՇ-ի ներքին պայքարում հաղթող դուրս եկան փաղանգավորները՝ ի դեմս «Զարայիր» ուազմական խորիրդի ղեկավար երիտասարդ Բաշիր Ծմայելի, որին չհաջողվեց հաղթանակ տանել միայն նախկին նախազահ Ֆրանժիեի՝ Տրիպոլիում գտնվող «Մարադա» բրիգադի նկատմամբ: Բախումների արդյունքում Ֆրանժիեի որդու և նրա հարազատների ողբերգական մահվանից հետո Ֆրանժիեն՝ ԼՇ-ի հիմնադիրներից մեկը, լրեց նրա շարքերը՝ դաշնակցելով սիրիացիների և մուսումանական ազգայնական որոշ խմբացությունների հետ: Ֆրանժիեի հետևորդների հսկողության տակ գտնվող Լեռնալիբանանի հյուսիսային հատվածի նկատմամբ վերահսկողություն հաստատելու հարցում ծախողվելով, «Զարայիր» կուսակցությունն իր հարվածն ուղղեց ԼՇ-ի իր հիմնական հակառակորդ Շամունի ԱԼԿ-ի դեմ:

³²⁴ Itamar Rabinovich, Յշվ. աշխ., էջ 96:

Վարչապետ Ուազզանը եիշեցրեց, որ ՍԶՈՒ-ը Լիբանան են ժամանել լիբանանցիների խնդրանքով՝ նպաստելով երկառակատշական պայքարի դադարեցմանն ու երկրի կազմարածման կասեցմանը և կինոանան միայն Լիբանանի կենտրոնական կառավարության իշխանությունը ողջ երկրում վերականգնելուց հետո:

Փաղանգավորները պահանջում էին վերակազմավորել ԼՇ-ի մարտական ջոկատներն ու առանց խորականության բոլոր զինված խմբավորումները Ենթարկել կենտրոնական դեկավարությանը: Սա 1980թ. Խովհանն հանգեցրեց ԱՀԿ-ի ջոկատների հետ դաժան քախումների՝ ԱՀԿ-ի և նրա առաջնորդ Շամունի որդու՝ Դանիի պարտության պատճառ դանալով:

Ի վերջո, Բաշիրը լիակատար վերահսկողություն հաստատեց արևելյան Բեյրութի, ինչպես նաև Բեյրութի ու Տրիպոլիի միջև ընկած փոքր ծովափնյա նեղ հատվածի նկատմամբ: Օգտվելով քվային և ուսումնական առավելությունից, Բաշիրը մեկ ամսվա ընթացքում ճնշեց նաև դիմադրության մյուս օջախները՝ վերահսկողություն հաստատելով քրիստոնյա-ազերի ճամբարի նկատմամբ: Նա դարձավ ԼՈՒ-ի լիիրավ առաջնորդ, որի նախաձեռնությամբ էլ իրականացվեց ԼՇ-ի քաղաքական ու գաղափարական վերակազմավորումը³²⁴:

1980թ. դեկտեմբերին ԼՇ-ը իրապարակեց գրծողությունների իր ծրագիրը, որի համաձայն երկրում քրիստոնեական համայնքին հատուկ դիրք էր վերապահվում, նշվում էր համադաշնության շրջանակներում Լիրանանի քաղաքական կառույցի «ապակենուրունացման» նպատակով 1943թ. «Ազգային Դաշինքնի» վերանայման անհրաժեշտությունը: Առաջ էր քաշվում սիրիական ուժերը դուրս բերելու, Լիրանանում պաղեստինցիների «քննակեցմանը» վերջ դնելու, ՊԱԿ-ի և ճախերի նկատմամբ հաղթանակ պայականվելու, ինչպես նաև երկրի ողջ տարածքով իրենց վերահսկողությունը հաստատելու պահանջը³²⁵:

* ԼՇ-ի քաղաքական դեկավար մնաց Քամիլ Շամունը:

³²⁵ Don Peretz, Եղվ. աշխ., էջ 390: Այս հանգամանքը խորացրեց Սիրիայի հետ ԱՇ-ի հակասությունները, որը վերջին հաշվով հանգեցրեց նրանց միջև քացանայտ առնակատման:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1982թ. ԻՄՐԱՅԵԼԻ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ԵՎ
ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ-ԻՆ ՆԵՏՎԱԾ ԼՈՒՐՉ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

1. ԱՄ-Հ ՌՈՂՆԱԼԴ ԱԵՅՑՄՆԻ ՊԱՏԾՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԳՔԲՆԱԿԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ: ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄՆ-Ի ՍԱ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՈՒՐՁ³²⁶

1980թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրապայքարում հաղթանակեց Ռոբերտ Ռեյգանը, որի կյանքի համոզմունքներից մեկը, իր իսկ խոստովանությամբ, եղել էր Խրայել պետության գոյատևումն ապահովելու խնդիրը³²⁷: Այդ մասին նա հայտնել էր դեռևս Կալիֆորնիայի նահանգապետի պաշտոնավարության ընթացքում՝ Նիքսոնի վարչակազմի խրայելամետ քաղաքականությանն իր աջակցությունը հայտնելիս: 1980թ. նախագահական ընտրարշավի ժամանակ Ռեյգանը կրկին վերահաստատեց իր լոյալությունն Խրայել պետության հանդեպ³²⁸, որը, ճշա համոզմամբ, ԱՄ-ում կայուն ժողովրդավարություն ունեցող, ԱՄՆ-ի հետ միանման արժեհամակարգ ունեցող, և տարածաշրջանի հնարավոր ապակայունացման ու քառսի օսպման նպատակով կայուն ուազմական հնարավորություններ ունեցող երկիր էր³²⁹:

Ուստի պատահական չէր, որ ԱՄՆ-ի նախագահի պաշտոնում Ռ.Ռեյգանի ընտրությունը քերևություն պարզեց խրայելցիներին, որոնք սկսել էին մտորել Խրայելի շահերին հավատարմության և Սառույան Արարիայում ու Պարսից ծոցում սեփական նյութական ու ուազմավարական շահերի միջև հարկադրաբար ընտրություն կատա-

³²⁶ Այս մասին տես՝ Հարուրյունյան Ա., ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությունը 1980-1981թթ., Սերմավոր Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XXIV, Երևան, 2005թ., էջ 111-124; Հարուրյունյան Ա., ԱՄՆ-ի լիրանանյան քաղաքականության ոյու ասպեկտների շուրջ (1982-1984թ.), Սերմավոր Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XXV, Երևան, 2006թ., էջ 67-82:

³²⁷ Ronald Reigan, An American Life, New York, 1990, p. 409.

³²⁸ Kiron K. Skinner, Annelise Anderson and Martin Anderson, George P. Shultz, Reigan. A Life In Letters, Free Press, 2003, p. 443.

³²⁹ Նույն տեղում, էջ 32:

ըսող ամերիկյան վարչակազմի քաղաքականության շուրջ³³⁰: Ույշգանի ընտրությունը մեծապես ողջունվեց Խսրայելում, փոխարենը՝ խիստ մտավախություն առաջացնելով արարական աշխարհում: Արարեներին մտահոգեց ոչ միայն պաշտոնավարության ստանձնումից նախազահի կողմից երկրի նեկավար պաշտոններում խրայելամեռ բարձրաստիճան պաշտոնյաների նշանակումները, մասնավորապես պետքարտուղարի պաշտոնում ՆԱՏՕ-ի գինված ուժերի նախկին զիսավոր հրամանատար Ակեքսանդր Հեյգի նշանակումը, այլ մերժավորարևելյան գործերում վերջիններիս փաստացի անիրազեկությունը³³¹:

Իր պաշտոնավարության առաջին 18 ամիսների ընթացքում նախազահ Ույշգանը, պետքարտուղար Հեյգն ու ազգային անվտանգության գծով նախազահի զիսավոր խորհրդական Ռիշարդ Վ. Ալլենը, Վաշինգտոնի մերձավորարևելյան քաղաքականության շուրջ դատում էին ոչ թե տարածաշրջանային գործերում իրենց սեփական փորձի ու իմացության, այլ սաող պատերազմի ոսպնյակով՝ «Արևելք-Արևմուտք» հակամարտության դիրքերից: Ույշգանի քաղաքական փիլիսոփայության համաձայն՝ աշխարհը բաժանված էր միայն ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի դաշնակիցների և այդ երկու գերտերությունների կողմից գրավման ենթակա տարածքների: Պետքարտուղար Հեյգն անգամ հայտարարել էր, որ «Երրորդ աշխարհ գոյություն չունի», հողագունդը կազմված է Արևմուտքից և Արևելքից: Պատահական չէր, որ իր պաշտոնավարության ընթացքում Ույշգանը խոստացել էր կոմունիստներին քոյլ շտալ աշխարհի որևէ երկրում իշխանության գալ³³²: Ույշգանի աշխարհաքաղաքական հայցըների հիմքում ընկած այս կանխադրությի համաձայն, տարածաշրջանային հիմնախնդիրները պետք է երկրորդական նշանակություն ունենային նաև ՍՍ-ի առաջնորդների համար³³³, քանի

³³⁰ Кальвокоресси Питер, Յշվ. աշխ., էջ 510:

³³¹ Fred J. Khouri, The Arab Israeli Dilemma, The Reagan Administration, Israel, the Arabs, and Palestinians, January 1981-March 1985, New York, 1985, p. 422.

³³² Игнасио Рамоне, Терроризм или конфликты малой интенсивности, ТАСС. БПИ N 210, 23.10.1986г., стр. 4.

³³³ Shibley Telhami, Political Islam: Challenges For U.S. Policy, Why Do They Hate US So Much?, Congressional Program, Second Conference, Vol. 18, No. 4, June 27-July 3, Washington, DC., 2003.

որ Վաշինգտոնի կարծիքով՝ Ռիյադը, Կահիրեն, Երուսաղեմն ավելի շուտ համակված պետք է լինեն խորհրդային սպառնալիքի հետ կապված մտայնությամբ:

Թերևս դա էր պատճառը, որ Սիացյալ Նահանգներին դարձյալ անհանգստացնում էր ոչ թե Լիբանանի «անցողիկ» համարվող ճգնաժամն ու արար-իսրայելական հակամարտությունը, այլև ԱՍ-ում ԽՍՀՄ-ի հնարավոր առաջսահացման կասեցումը³³⁴, ԱՍՆ-ի համար ուազմավարական ու կենսական շահեր ներկայացնող Ծոցի երկրների անվտանգության ապահովումը և նրա նավթային պաշարների նկատմամբ Արևմուտքի ազատ մուտքի ապահովագրումը: Ավելին, նրանք տարածաշրջանը դիտում էին իրեն խորհրդային ծավալապաշտության դեմ Վաշինգտոնի պայքարի մարտադաշտ³³⁵:

Ույզանի նախագահության տարիներին Սահմակ տունը գործնականում անորոշվելի մնաց Սոսկվայի ցանկացած քաղաքական նախաձեռնության նկատմամբ: Ի տարրերություն իրենց նախընտրական հոեստորությունից պաշտոնավարության միջին շրջանում առավել կենտրոնամետ, պրագմատիկ մոտեցումների անցնող ԱՍՆ-ի նախագահների մեծ մասի, Ույզանը մեկնդրմիշտ անհոդրող մնաց ավանդական արտաքին և ներքին ուժերի նկատմամբ՝ չիրաժարվելով նախկինում իրեն բնորոշ ազրեսիվ գաղափարական դիրքորոշումներից: Եվ քանի որ նախագահի համար ԽՍՀՄ-ը մնաց իրեն առաջին քշնամի³³⁶ և «զարիքի կայսրություն», ուստի վարչակազմն իր ջանքերը կիզակետեց Խորհրդային Սիոնիթյան դեմ³³⁷, մերձավորարևելյան քաղաքականության առաջնահերթություն դարձնելով խորհրդային հնարավոր ագրեսիայի կասեցումն ու ազդեցության սահմանափակումը: Այդ «մարտահրավերների» դիմակայման նպատակով Վաշինգտոնը հետամուտ եղակ տարածաշրջանի արևմտամետ կրողնորոշմամբ երկրներից (Բուրյայի, Եգիպտոս, Հորդանան և Սառույան Արարիա) «ուազմավարա-

³³⁴ Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 422:

³³⁵ William L. Cleveland, նշվ. աշխ., էջ 121:

³³⁶ Anatoly Dobrynin, In Confidence Moscow's Ambassador to America's Six Cold War Presidents, University of Washington Press, 1995, p. 499.

³³⁷ Shibley Telhami, նշվ. աշխ., էջ 14:

կան կոնսենսուսի»՝ պաշտպանական համակարգի ստեղծման գործին, որի առաջարկությամբ հանդիս էր եկել դեռևս Կարտերի վարչակազմը: Ծոցի երկրներին զինելու միջոցով ԱՄՆ-ը մտադիր էր կասեցնել ինչպես խորհրդային գործերի աֆղանական ներխուժումը, այնպես էլ իրանական հեղափոխության «արտահանումը»³³⁸: Այն ամերիկյան արտաքին քաղաքականությունը ծերրազատելու էր ներտարածաշրջանային հակամարտությունների հետ կապված քարոզություններից՝ միաժամանակ ՍՍ-ի արևմտամետ կողմնորոշմամբ երկրներին համախմբելով հակախորհրդային առանցքի շուրջ:

Ուշագանի վարչակազմի մերձավորարևելյան քաղաքականության ուղղությամբ երկրորդ գործնական քայլը կրկին կապված էր Կարտերի վարչակազմի Արագ Շավալման (պաշտպանական) ուժերի (ԱԾՈՒ)³³⁹ ստեղծման նախաձեռնության շարունակության հետ³⁴⁰: Պաշտպանական այս համակարգի ստեղծման նպատակով 1981թ. ապրիլին պետքարտուղար Ալեքսանդր Հեյգը մեկնեց ՍՍ՝ պահպանողական արար վարչակարգերին համոզելու խորհրդային սպառնալիքի առկայության և «ռազմավարական կոնսենսուսին» միանալու անհրաժեշտության մեջ: Սակայն սաուղցի և հորդանանցի առաջնորդները հայտնեցին, որ վերջիններիս համար առավել մեծ մտահոգություն ու

Թեև անվտանգության սպառնալիքների դիմակայման նպատակով Ծոցի տարածաշրջանի երկրների պաշտպանական համակարգի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ մեծ առաջընթաց արձանագրվեց, այնուամենայնիվ, «ռազմավարական կոնսենսուս» առավել օգտակար գտնվեց ուղղա-տեխնիկական, քան թե քաղաքական համագործակցության տեսանկյունից:

³³⁸ Freedman Robert O, The Middle East After The Israeli Invasion of Lebanon, N.Y., 1986, p. 69-70. Իրանի տարածքից իրաքյան գործերի դուրս մղման, այնուհետև 1982թ. սեպտ. Իրանի ուղղմական հաջորդություններից ենոտ, Վերջինս Ծոցի արարական պետությունների նավարդյունահանման կայտնության հարցում ներքին, նատկապն արմատականության հետ կապված սպառնալիք սկսեց դիտվել:

³³⁹ 1982թ. Վերջին ԱԾՈՒ-ը բանակում, ծովային ենտևականորում և օդուժում 230.000 զինծառայող ուներ, որոնք տեսականորեն կարող էին օգտագործել արտակարգ իրավիճակներում: Այդ անձնակազմը համակարգվում էր «Կենտրոնական իրամատարության» Ֆլորիդայի շտարակայանի կողմից: ԱԾՈՒ-ն իրավասու էր գործել Ծոցի և 20 այլ երկրներում (քացարություն էր կազմում Խորայելը):

³⁴⁰ Steven L. Spiegel, Եշվ. աշխ., էջ 112:

սպառնալիք է ներկայացնում ոչ թե Խորհրդային Սիոնիզմը³⁴⁰, այլ խրանի խվանական հեղափոխության «արտահանումը»³⁴¹, Խորայելի ազրեսիվ քաղաքանությունը, արար-խրայելական չկարգավորված հակամարտությունն ու ՊԱԿ-ի հիմնախնդիրը: Նրանք հայտնեցին նաև, որ ի վիճակի չեն ռազմաքաղաքական համագործակցություն հաստատել Միացյալ Նահանգների հետ, քանի դեռ արար-խրայելական հակամարտությունը ՍԱԿ-ի քանաձների հիման վրա համապարփակ կարգավորում չի ստացել: Արար առաջնորդները նախագալուշացրին, որ արար-խրայելական հիմնախնդիրի կարգավորման հարցում շարունակ ճախողումները կարող են բռնական թե՛ իրենց, և թե՛ Միացյալ Նահանգների դիրքերը՝ հօգուտ ԽՍՀՄ-ի, և ուշ թե՛ շուտ կսպառնան մերձավորարևելյան նավթի նկատմամբ Արևմուտքի անկաշկանդ մուտքին³⁴²:

Նշենք, որ Ուկանի պաշտոնավարության առաջին տարում վարչակազմը պառակտված մնաց մերձավորարևելյան քաղաքականության շուրջ՝ շորտեզրելով հստակ ու հետևողական քաղաքականություն: Ուկանն ու պետքարտուղար Հեյզմ Խորայելի հետ առավել սերտ դաշինքի կողմնակից էին՝ Սիրիայի պես արարական արմատական վարչակազմներին «փորհրդային ծավալապաշտության գործակալներ» համարելով: Խսկ պաշտպանության քարտուղար Կասպար Վայնբերգերն ու ազգային անվտանգության գծով խորհրդատու Վիլիամ Կարլը համոզված էին տարածաշրջանի արարական վարչա-խմբերի հետ հաշտեցման անհրաժեշտության մեջ՝ հրաժարվելով ամերիկյան ավանդական խրայելամետ քաղաքականությունից և կոչ անելով արար-խրայելական հակամարտության նկատմամբ առավել հավասարակշռված մուտեցում դրսնորել³⁴³: Նրանց կարծիքով, տնտեսապես ու աշխարհաքաղաքական առումով կարևորություն ներկայացնող արա-

³⁴⁰ Martin Kramer, Regime Strategies in the Middle East: The Role of Islamism, Anti-Americanism, and Terrorism, War on Terror: The Middle East Dimension, Washington Institute For Near East Policy, 2002, p. 23.

³⁴¹ Barry Rubin, The United States and the Middle East: 1981-1982, Middle East Contemporary Survey, 1981-82, Vol. 6, N.Y., 1983, p. 1.

³⁴² Fred J. Khouri, Աշխ. աշխ., էջ 423:

³⁴³ William L., Cleveland Աշխ. աշխ., էջ 123:

բական աշխարհը ևս կենսական նշանակություն ուներ Ամերիկայի ու ազգավարական շահերի համար: Մինչդեռ վերջինս անտեսում էր քարեկանական արարական երկրների հետ կապերը՝ «իսրայելական քաղաքականությանը թշնամական» համարելու պատճառաբարանությամբ: Այս տեսակետի զատագովների համաձայն, Իսրայելի դեմ առավել մնած ճնշում պետք է գործադրվեր՝ արաբ-իսրայելական հիմնախնդրում զիջումներ կորզելու, իսկ արաբներին առավել կատարելագործված գենքեր պետք է վաճառվեր՝ ուժերի միջև հավասարակշռությունը պահպանելու նպատակով³⁴⁴:

Թերևս վերջին նկատառումներից ելնելով, նախագահ Ռեյգանը, հաշվի առնելով Ծոցի տարածաշրջանում իրան-իրաքյան պատերազմի հետագա ծավալման հավանականությունը, և կարևորելով Սաույան Արարիայի դերն իրրև նավարույնահանող երկրի ու կոմոնիզմի դեմ պայքարի հենարանի, ցանկանում էր ամրապնդել իր հարաբերությունները վերջինիս հետ: Նախագահը, ապավինելով Պենտագոնի այն հավաստիացումներին, թե Սաույան Արարիային 1986թ. համար նախատեսվող «AWACS» համակարգի հետախուզական ինքնարիտների տրամադրումը չի խախտի ՍՍ-ում հաստատված ուժերի հավասարակշռությունը, վերսկսեց «AWACS»-ի շուրջ դեռևս Կարտերի վարչակարգի օրոր նախաձեռնած քանակցությունները³⁴⁵: Նախագահ Ռեյգանի համաձայն՝ Սաույան Արարիան արարական շափակոր երկրների առաջատարն էր և Իսրայելին կամ Եգիպտոսին կարող էր փոխարինել իրրև ՍՍ-ում խաղաղության տարածման քանակի³⁴⁶:

Սակայն ԱՄՆ-ի դաշնակից Իսրայելն այս հարցում դատում էր այլ կերպ՝ «AWACS»-ի վաճառքը դիտելով իրրև սեփական պաշտպանությանն ուղղված մարտահրավեր և Ռիյազի կողմից Վաշինգտոնի նկատմամբ լծակներ ձեռք բերելու հնարավորություն, որն ըստ Էռյան նվազեցնում էր ԱՄՆ-Իսրայել ու ազգավարական դաշինքի նշանակութ-

³⁴⁴ Fred J. Khouri, Աշխ. աշխ., էջ 426:

³⁴⁵ William L. Cleveland, Աշխ. աշխ., էջ 123:

³⁴⁶ «Washington Post», 1.11.1981. Հարցում արված ամերիկացիների 63%-ի կարծիքով՝ Հորդանանի և Սաույան Արարիայի կարգի արարական երկրներին զենքի վաճառքով վարչակազմը չէր նպաստում ՍՍ-ում խաղաղության հաստատմանը: Այս մասին տես «Time», N.Y., 14.4.1982.

յունը: Ուստի 1981թ. փետրվարին, Իսրայելի արտգործնախարար Իցհակ Շամիրն իր վաշինգտոնյան այցի ընթացքում ԱՄՆ-ից պահանջեց Սաուդյան Արարիայի համար նախատեսված «AWACS»-ի վաճառքը փոխհատուցել Իսրայելին 300 մլն. ԱՄՆ դոլար արժողությանը «F-15» տիպի 15 կործանիչների տրամադրմանը³⁴⁷: 1981թ. սնատեմբերին, Իսրայելի մտավախությունները մեղմելու նպատակով, Վաշինգտոնը վարչապետ Մենախեմ Բեզինի հետ ուղարկած հանգործակցության վերաբերյալ «Փոխըմբռնման հուշագիր» ստորագրեց³⁴⁸, որը բնական զայրույթ առաջացրեց արարների մոտ:

«Են ավելին, Եզիդակոսի նախագահ Սադամի սպանության արդյունքում տարածաշրջանի հնարավոր ապակայունացման և Սաուդյան Արարիան ամեն այլ Իրանի վերածվելու» հավանականության մտավախությունից ենթակա նախագահ Ռեյզանը ստիպված եղավ իր բոլոր իրավասություններն ու ողջ ժողովրդականությունը գործի դնել՝ հոկտեմբեր ամսին Մենատի կողմից (52° կողմ, 48° դեմ ծայներով) Իսրայելին կործանիչներ վաճառելու հավանությունը ծեռք բերելու նպատակով³⁴⁹:

Փաստորեն, ԱՄՆ-ի ուղարկած ներգրավվածությունը նոր քափ էր հաղորդում Իսրայելի հարձակողական քաղաքականությանը՝ ԱՄ-ում հաստատված ուժերի լուրջ փոփոխություն ենթադրելով: «Փոխըմբռնման հուշագրով» Թել-Ավիվին ցուցաբերվող ուղմա-քաղաքական անսահմանափակ աջակցությանը Միացյալ Նահանգները հաստատում էր իր հավատարմությունն Իսրայելի որդեգրած «ազրեսիվ ծավալապաշտության» ուղեգծին:

Ինչ վերաբերվում է արար-իսրայելական հակամարտության հանդեպ Վաշինգտոնի դիրքորոշմանը, ապա նոր վարչակազմը Քենսի Դեկտի գործընթացին որոշակի վերապահումով էր վերաբերվում³⁵⁰: Եթե Կարտերի և նրա խորհրդականների տեսանկյունից՝ եզիդական գործարքն Իսրայելի և արարական պետությունների միջև

³⁴⁷ William L. Cleveland, Աշվ. աշխ., էջ 123:

³⁴⁸ Barry Rubin, Աշվ. աշխ., էջ 2:

³⁴⁹ William L. Cleveland, Աշվ. աշխ., էջ 123:

³⁵⁰ T.G. Fraser, The USA and the Middle East Since World War 2, New York, 1989, p. 160.

սեպարատ պայմանագրերի կնքման մեկնակետ էր, որոնք հետագայում կարող էին ԱՄՆ-ի հովանու ներքո ուղարկած պազմաքարական դաշինքների վերածվել, ապա Ռեյգանի վարչակազմի համար այդ գործարքը հակախորհրդային ուղարկարության շորջ Խորայելին և արարական վարչախմբերին համախմբող առանցք կամ միջոց էր: Խոսքը գոտում է ոչ թե ուղղակի գործող ավանդական դաշինքի, այլ Վաշինգտոնի միջոցով ԱՄՆ-ի և նրա տարածաշրջանային գործընկերների միջև «փոխհարաբերությունների» մասին³⁵¹:

2. 1981թ. ԽՈՐԱՅԵԼԱՍԻՐԻԱԿԱՆ ՈԱԶՍԱԿԱՆ ԲԱԽՈՒՄԸ: ԽՈՐԱՅԵԼԻ ՈԱԶՍԱՏԵՆՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՑԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՆԱԽԱԴՅԱԼՆԵՐԸ

1981թ. սկզբին, Ռեյգանի պաշտոնավարության սկզբից և առար-խորայելական հակամարտությունում ճգնաժամային նոր իրավիճակ ստեղծվեց, որը վարչակազմի ուշադրությունը իրավիրեց լիրանանյան իրադարձությունների վրա՝ Ռեյգանի ուժամյա նախագահության ընթացքում չկորցնելով իր հրատապությունը, և մնալով ԱՄՆ-ին նետված արտաքին լուրջ մարտահրավերներից մեկը:

Լիրանանի իրադրության ապակայունացմանը նպաստեց Քեմփ Նիփի գործարքից հետո ՊԱԿ-ի գործողությունների ակտիվացումը: ՊԱԿ-ն իր հսկողության տակ առավ Լիրանանի հարավի մեծ նազը՝ պահեստինյան փախստականների ճամբարները պարտիզանական գրոհների նպատակով իբրև հենակետ օգտագործելով Խորայելի հյուստում կատուցվող բնակավայրերի դեմ:

Սպիտակ տունն աջակցություն ցուցաբերեց լիրանանյան փաղանգավորներին՝ միաժամանակ հոյս տածելով, որ պահեստինցիները կինտեզրվեն Լիրանանի քաղաքական համակարգին: Վաշինգտոնը փորձում էր վերջ դնել Լիրանանում սիրիական ոժերի ներկայությանն ու քաղաքական ազդեցությանը: Պատահական չէր, որ 1981թ. գարնանն ԱՄՆ-ի պետքարտուղար Հեյգն իր մերձավորարևելյան ա-

³⁵¹ Арабский мир, Три десятилетия независимого развития, М., 1990, стр. 347.

ուաջին պաշտոնական այցի ընթացքում դատապարտեց Լիբանանում Սիրիայի ապակայունազնող դերակատարությունը³⁵²:

Սիւնույն ժամանակ սրվեցին նաև երկու գերտերությունների ԱՍ-ի դաշնակիցների՝ Սիրիայի և Իսրայելի միջև հակասությունները՝ իրենց գագաթնակետին հասնելով 1981թ. ապրիլին և իսրայելասիրիական ռազմական առճակատման առիթ ծառայելով: Բախսման առիթը՝ փաղանգավորներին ցուցաբերվող իսրայելական ռազմական աջակցության և պահեստինցիների դեմ փաղանգավորական միլիցիայի գրոհների դեմ Սիրիայի հակագդեցությունն էր³⁵³:

Փաստենք, որ դեռևս 1980թ. վերջին քրիստոնյա-աջերը, օգտվելով Սիրիայի տարածաշրջանային դիրքերի քուլացումից և Լիբանանում նրա ունեցած դժվարություններից, հակոռություն էին հաստատել Զահլեն (Բերաա հարթավայր) քրիստոնեական քաղաքի վրա՝ սրելով ՄԶՈՒ-ի և աջ-քրիստոնեական ուժերի միջև հարաբերությունները: Իրադրությունն առավել սրվեց 1981թ. սկզբին, երբ «Քարաիբը» երկրի ողջ տարածքով իր դիրքերի ընդլայնման ու ամրապնդման, ինչպես նաև Սաադ Հադդադի գլխավորությամբ հարավ-լիբանանյան խմբավորումների հետ միավորման արդյունքում մարտերի բռնկվեց ՄԶՈՒ-ի դեմ: Քրիստոնյա-աջերը դիմեցին Իսրայելի աջակցությանը³⁵⁴, որի վարչապետ Մենահիմ Բեզինը Կնիսսեստում հանդես եկավ Լիբանանում իսրայելական պետության անվտանգությանը սպառնացող սիրիական Հակա-օդային պաշտպանության (ՀՕՊ) ոչնչացման վերաբերյալ հրաման արձակելու առաջարկով:

Ապրիլի 28-ին Իսրայելը Զահլեում գտնվող սիրիական երկու տրանսպորտային ուղղաթիռներ հրթիռակոծեց³⁵⁵, որից հետո Սիրիան ԽԱՀԱ-ի հետ պաշտպանական նկատառումներով «Բարեկամության ու համագործակցության» պայմանագրի շրջանակներում «SAM-6» տիպի հակաօդային հրթիռներ տեղադրեց Բերաայի հովտում: Իսրա-

³⁵² Itamar Rabinovich, Աշվ. աշխ., էջ 90:

³⁵³ Don Peretz, Աշվ. աշխ., էջ 391:

³⁵⁴ Հարուրյան Լ., Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանանյան ճգնաժամում (1975-1990թ.), Արևելք Երևան, 2001, էջ 80:

³⁵⁵ P. Scoble, The Struggle for the Middle East, London, 1988, p. 284.

յելը ոմբակոծման սպառնալիքի տակ պահանջեց անհապաղ դուրս քերել այդ հրթիւնները³⁵⁶:

Սպարհիլ 6-ին Երուսաղեմում վարչապետ Մենախիմ Բեզինի հետ տրված մամլո ասովիսի ժամանակ Հեյզմ անդրադարձավ սիրիացիների ու փաղանգավորների միջև Զահելում տեղի ունեցած քախումներին՝ քրիստոնեական շրջանների նկատմամբ սիրիացիների գործողությունները հրադադարին ուղղված քայլ գնահատելով: ԱՍՆ-ը, որն ամենայն հավանականությամբ պաշտպանելու էր Իսրայելին, քաջ գիտակցում էր, որ սիրիախրայելական հորթուային ճգնաժամը կարող է իրենից վանել արարական պահպանողական դաշնակից վարչակարգերին*, և որ ԽՍՀՄ-ի հետ Սիրիայի «Քարելկամության ու Համագործակցության» պայմանագրի կյանքի կոչումը կարող էր, ի վերջո, ԽՍՀՄ-ԱՍՆ հակամարտության առիր ծառայել³⁵⁷:

Խուսափելով լայնամասշտար սիրիախրայելական պատերազմի ծավալումից և Սոսկվայի հետ հնարավոր առճակատումից, Ռեյզանի վարչակարգը 1981թ. նայիսին երեք հիմնական մարտնչող կողմերի՝ Իսրայելի, Սիրիայի և ՊԱԿ-ի միջև հրադադարի հաստատման միջնորդական առաքելությամբ ՍՍ գործողեց պատվիրակ Ֆիլիպ Հարիիրին: Վերջինիս հաջողվեց հրադադար ապահովել Սիրիայի ու Իսրայելի միջն³⁵⁸, որը ՍՍ-ում ամերիկյան դիվանագիտության հաջողություն գնահատվեց³⁵⁹:

ԽՍՀՄ-ը հրթիւային ճգնաժամի ընթացքում Սիրիային աջակցելու հարցում զգուշակորություն դրսորեց՝ աննպատակահարմար գունելով իրենից որոշակի ուազմական առավելություն ունեցող ԱՍՆ-ի (ի դեմս նրա դաշնակից Իսրայելի) հետ իր դաշնակից Դամասկոսի ուրբակի առճակատումը: Փաստենք, որ հրթիւային ճգնաժամի ընթացքում ակնհայտ դարձավ նաև Սիրիայի շահագրգությունը՝

*³⁵⁶ Fred J. Khouri, Աշվ. աշխ., էջ 423:

*³⁵⁷ Արարական երկրներն ամենայն հավանականությամբ սատարելու էին Սիրիային:

³⁵⁸ Itamar Rabinovich, Աշվ. աշխ., էջ 92:

³⁵⁹ Heig Alexander M., Caveat Jr.: Realism, Religion, Foreign Policy, Macmillan, New York, 1984, p. 180.

Ագարակ Ա., Օր Կեմպ-Դզվիդ դո տրագեդին Լիվան, Մ., 1983, с. 161.

ԱՄՆ-ի հետ երկխոսության վերականգնման ուղղությամբ^{*}: Ուստի ԽՍՀՄ-ը անհմաստ էր գտնում Սիրիային պաշտպանել առնակատման միջոցով: Նույնը վերաբերվում էր նաև ՊԱԿ-ին, որի ղեկավարության քաղաքական գերազույն նպատակը Վաշինգտոնի կողմից իր ճանաչումն ապահովելն էր³⁶⁰:

1981թ. հունիսի 30-ին Խսրայելի խորհրդարանական ընտրություններում հաղթանակեց Լիկուդ կուսակցությունը: Պաշտպանության ու արտաքին գործերի նախարարների պաշտոններում համապատասխանաբար նշանակվեցին Արիել Շարոնը և Իցհակ Շամիրը, որոնք դարձան Խսրայելի ուսգմատենչ նոր քաղաքականության գաղափարախոսներն ու կենսագործողները: Լիկուդը շարունակեց Խսրայելի որդեգրած քաղաքական կոչտ գիծը՝ արագացնելով գրավյալ տարածքներում խսրայելական բնակավայրերի կառուցման գործընթացը և մի շարք «կանխարգելիչ գրոհներ» («preemptive attacks») իրականացնելով Լիբանանի հարավի պաղեստինյան թիրախների ուղղությամբ³⁶¹:

Նույն ամսին Բեյրութում գտնվող ՊԱԿ-ի գրասենյակի վրա Խսրայելի օդուժի հրթիռակոծությունների արդյունքում առաջացած զանգվածային ավերածություններն ու մարդկային կորուստները (300 զոհեր և 800 վիրավորներ), Խսրայելի ու պաղեստինցիների միջև լիբանանախսրայելական սահմանի երկայնքով մարտերի բռնկումը, ինչպես նաև դեկտեմբերին Գոլանի բարձունքներում խսրայելական ուժերի ծավալումը ԱՄՆ-ի վարչակազմին կանգնեցրին մի շարք ոչ դյուրին խնդիրների կարգավորման անհրաժեշտության առջև³⁶²:

Խսրայելական գործողությունների և նրան ցուցաբերվող ամերիկյան աջակցության փաստը Վաշինգտոնի մոտ տարածաշրջանային լայնամասշտար հակամարտության առաջացման լուրջ մտավախություն առաջացրին: Խսկ Հարիրի առաքելության չափերն ընդլայնվեցին, երբ կրկին անգամ ակնհայտ դարձավ, որ Լիբանանի ճգնաժամի ոչ մի գործոն չի կարող դիտվել մերձավորարևելյան հակամար-

* ԱՄՆ-Սիրիա երկխոսությունը դադարել էր 1977թ.:

³⁶⁰ Itamar Rabinovich, Աշլ. աշխ., էջ 148:

³⁶¹ Fred J. Khouri, Աշլ. աշխ., էջ 424:

³⁶² William L. Cleveland, Աշլ. աշխ., էջ 121-122:

տուքյան շրջանակներից դուրս: Վերջինս փորձեց սառույանների օգնությամբ հասնել հիմնախնդրի առավել համապարփակ կարգավորման³⁶³:

Հովհանի 24-ին հրադադար հաստատվեց այս անգամ ՊԱԿ-ի և Խորայելի միջև, առաջինի հետ՝ անուղղակի, իսկ վերջինի հետ՝ ուղղակի բանակցությունների միջոցով: Խորայելը հրադադարն ընդունեց՝ ելնելով ամերիկախորայելական հարաբերությունների հետազա վատքացման մտավախությունից: Դրանք առավել սրվեցին ինչպես խորայելական որոշ շրջանակների, այնպես էլ ԱՍՆ-ի վարչակազմի, կոնգրեսականների: և ամերիկյան լրատվամիջոցների կողմից Թել-Ավիվի գործողությունների քննադատության արդյունքում: Սակայն պաշտոնական Խորայելին ավելի շուտ մտահոգում էր հրադադարին ՊԱԿ-ի մասնակցության փաստը, որը կարող էր վերջինիս հանդեպ ԱՍՆ-ի մոտ պատասխանատու բանակցային կողմի տպավորություն ստեղծել: Այս մտավախությունը թերևս գուրկ չէր հիմքից, քանի որ պահեստինցի որոշ առաջնորդների կարծիքով, ՊԱԿ-ի հետ նույնիսկ անուղղակիորեն բանակցելու միջոցով, Միացյալ Նահանգներն ու Խորայելն առնվազն դե ֆակտո ճանաչում էին ՊԱԿ-ի՝ իրու հակամարտող կողմի կարգավիճակը: Մինչդեռ խորայելիներն ու Հարիբն առարկում էին, թե հրադադարն իրականում հաստատվել է «Խորայելի և Լիքանանի միջև»³⁶⁴:

Հարկ է նշել որ Վաշինգտոնը փորձում էր նաև ՄԱԿ-ի դիրքերի ամրապնդման միջոցով ընդլայնել Լիքանանում վերջինիս գործունեության շրջանակներն ու կանխել պաղեստինցիների սպառազինման հնարավորությունը³⁶⁵:

Ի վերջո, 1981թ. երկրորդ կեսին, ամերիկյան պաշտոնական որոշ շրջանակների հայտարարություններից դատելով, մերձավորարևելյան հիմնախնդրի կարգավորման գործում իրու իդեալական տարրերակ

³⁶³ Itamar Rabinovich, Աշվ. աշխ., էջ 92:

³⁶⁴ Fred J Khouri, Աշվ. աշխ., էջ 424:

³⁶⁵ Tzipi Petran, Աշվ. աշխ., էջ 262: ԱՍՆ-ը և Սառույան Արարիան իրու եռվանավորներ պետք է երաշխավորեին համապատասխանարար Խորայելի և ՊԱԿ-ի կողմից հրադադարի պահպանումը:

ընդունվեց Քեմփի Դեկտի համաձայնագրի ու Ֆակոյի ծրագրի³⁶⁶ դրույք-ների համակցությունը: Մինչդեռ Խորայելի Կնեսսետը ոչ միայն ընդառաջ չգնաց կարգավորման առաջարկին, այլև, շրջանցելով ԱՍՆ-ի հետ վերջին շրջանում ստորագրված «Փոխընդունման Հուշագիրը», 1981թ. դեկտեմբերի 14-ին Գոլանի բարձունքների նկատմամբ իր օրենսդրական դաշտն ու կառավարման իրավասություններն ընդառաջնող օրինագիծ ընդունեց: Այս քայլը դատապարտվեց ԱՍՆ-ի կողմից՝ Ծոցի անվտանգության խնդիրներից վարչակազմի ուշադրությունը շեղելու պատճառարանությամբ: Դեկտեմբերի 18-ին Վաշինգտոնն անգամ սպառնաց սառեցնել ԱՄՆ-Խորայել հարաբերությունները³⁶⁷:

1982թ. սկզբին Վաշինգտոնի համար պարզ դարձավ, որ «ռազմավարական կոնսենսուսի» միջոցով հնարավոր չէր հասնել ԱՄ-ում Վաշինգտոնի հետապնդած բոլոր նպատակներին: Անհրաժեշտ էր առավել ավանդական և համալիր մոտեցում որդեգրել տարածաշրջանի ներքին հակամարտությունների և հիմնախնդիրների, մասնավորապես արար-խորայելական, կարգավորման նկատմամբ: Դեռ ավելին, Ծոցի և արար-խորայելական հակամարտության հիմնախնդիրներն այժմ չեն տարանջատվում միմյանցից: Առավել մեծ ուշադրություն էին պահանջում Քեմփի Դեկտի համաձայնագրի և Սինայից խորայելական ուժերի դուրս բերման վերջին փոսի հետ կապված հրատապ խնդիրները, որոնց շուրջ բանակցությունների վարման նպատակով

³⁶⁶ Fred J. Khouri, Եղվ. աշխ., էջ 425: 1981թ. օգոստոսի 8-ին Սաուստան Արարիայի քաջակիր արքայազն Ֆակոյ ներկայացրեց 8 կետերից բաղկացած նոր «Խաղաղության ծրագիր», որով կոչ էր արքում խորայելական գրքերի դուրս բերում 1967թ. գրավված տարածքներից, ներառյալ Արևելյան երուատեմից, իրենց սեփական պետության մեջ պաղեստինցիների իրավունքների ճանաչում, որից հետո կարճ ժամանակահատվածով ԱՍԿ-ի մանդատի հաստատում: Ծրագրով նաև ճանաչվում էր «տարածաշրջանի բոլոր պետությունների խաղաղ գոյակցության իրավունքը», որը Սաուստան Արարիայի արքայազն Սաուտը՝ նոյեմբերի 5-ին, իսկ նախազան Ռեյգանը՝ նոյեմբերի 10-ին որակեցին իրքը Խորայելի դե ֆակտո ճանաչում: ԱՍՆ-ը Ֆակոյի ծրագիրն առնվազն մեկնակես համարեց բանակցությունների համար, որն այնոհանդեմ հերքվեց Խորայելի կողմից: Այս մասին տես նաև Հովհաննիսյան Ն.Հ., Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թ.), հ. IV, Երևան, 2007, էջ 310:

³⁶⁷ Fred J. Khouri, Եղվ. աշխ., էջ 425-427:

1982թ. սկզբին ՍԱ այցելություն կատարեց ԱՄՆ-ի պետքարտուղար Հեյգը:

Յ. ԱՐԻԵԼ ՇՎՐՈՆԻ «ՄԵԾ ՆԱԽԱԳԻԾԸ» ԵՎ ԱՄՆ-Ի ԴԻՎՈՐՈՒԾՈՒՄ ԴՐԱ ԾՈՒՑ

1982թ. ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը նշանավորվեց Ծոցի անվտանգության խնդիրներից լիրանախյան ճգնաժամի և արար-խրայելական հակամարտության նկատմամբ դիվանագիտական ջանքերի ուղղորդմամբ³⁶⁸: Պատճառը 1982թ. հունիսի 6-ին Լիբանանի նկատմամբ խրայելական ազրեսիայի՝ Արիել Շարոնի «Մեծ նախագծի» իրազործումն էր: Այն Խրայելի կողմից մեծ տերության կարգավիճակի հասնելու նպատակով քազմափուլ ծրագրի իրականացում էր³⁶⁹, որը կոչվեց «Գալիլեայի խաղաղության ուազմական գործողություն»: Ծրագրի առաջին փուլում Խրայելը պետք է շրջափակման ենթարկեր հարավային Լիբանանը՝ դրան մղերվ այնտեղ հաստատված ՊԱԿ-ի ուազմիկներին: Խրայելի եյտսիսային սահմանամերձ քնակավայրերի անվտանգությունը պահեստինյան գրոհներից ապահովելու նպատակով պետք է ոչնչացվեին պաղեստինցիների ուազմաքաղաքական ենթակառույցները³⁷⁰: Պաղեստինյան ազգայնականության քաղաքական կենտրոնի ոչնչացմամբ պետք է թուլացվեին ՊԱԿ-ի քաղաքական դիրքերն ու հեղինակությունը: Իսկ Լիբանանի հարավում նախատեսվում էր ամրապնդել Խրայելի դրածո՝ լիրանախյան քանակի նախկին մայոր Սաադ Հադդադի կառավարությունը³⁷¹.

Հաջորդ փուլում, Խրայելը պետք է ճգտեր թուլացնել Լիբանանի ծախսերին՝ փոխարենը ամրապնդելով երկրի քաղաքական կառույցներում իր հետ համագործակցության պատրաստ աջակողմյան ուժերի դիրքերը: Աջերի շրջանում գլխավոր դերում հանդիս էր գալու «Զաքարիը», որն Խրայելի հետ հաշտագիր ստորագրելու և դաշնակցելու

³⁶⁸ Barry Rubin, The United States and the Middle East: 1981-1982, Middle East Contemporary Survey, 1981-82, Vol. 6, N.Y., 1983.

³⁶⁹ William Polk, 62կ. աշխ., էջ 349.

³⁷⁰ Fred J. Khouri, 62կ. աշխ., էջ 428:

³⁷¹ Պարլի Է.Դ., 62կ. աշխ., էջ 242:

նախապայմանով՝ Թել-Ավիվի աջակցությամբ (Քաշիր ժմայելի նախագահությամբ) պետք է խրայելամետ, հակասիրիական ու ՊԱԿ-ին ընդդիմադիր «քաղաքական նոր վարչակարգ» հաստատել³⁷²: Փաստարթում ամրագրվելու էր լիրանանյան տարածքում ցանկացած ձևով «զարդեստինյան ներկայության» բացառումը³⁷³, և Իսրայելի հետ Քենի Դեկտեմբերի ուղեգծին համապատասխան հաշտագիր էր ստորագրվելու: Պատերազմի սկզբին Բեգինն ու Շարոնն անգամ ՍԱ-ում Իսրայել, Եգիպտոս և Լիբանան նոր եռանկյունու ստեղծման շուրջ խոսակցություն էին ունեցել³⁷⁴:

Մեկուսացման մեջ հայտնված Սիրիայի՝ «ճակատային գծի» միակ երկրի ուազմաքաղաքական ազդեցության բոլացումը Լիբանանում նախատեսվում էր երկրի տարածքից ՄԶՈՒ-ի^{*} դուրս բերման միջոցով: Թել-Ավիվի կարծիքով՝ լիրանանյան ներխուժումը քաղաքական ու հոգեբանական որոշակի փոխհատուցում կարող էր լինել Սինայից խրայելական ուժերի դուրս բերման դիմաց³⁷⁵: Լիկուժի դիրքորոշման համաձայն, ողջ Արևմտյան ափն ու Ղազան պատկանում էին Իսրայելին, որից «մի քիզ հող» անգամ որևէ բանակցությունում չպետք է զիջվեր արաբներին, բացառությամբ Սինայի, որը նրանց կարծիքով՝ Իսրայելին չէր պատկանում³⁷⁶:

Շարոնի ծրագրի համաձայն՝ Արևմտյան ափի և Լիբանանի պաղեստինցիները, լրեալ իրենց հողը, պետք է զարգեին Հորդանան՝ երկիրը ոչ միայն խորհրդանշորեն, այլ գործնականում վերածելով «Պատեստինի», որի դեմ կուղղվեր Իսրայելի ուազումը: Հորդանանի հետ «համագործակցության» միջոցով Իսրայելը կհարևանար Սաուդյան Արաբիային: Վերջինս, ի դեմս Թել-Ավիվի հանդիպելով ժամանակակից ու հզոր պետության, իրեն հատուկ ավանդական «հարմարվո-

³⁷² Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 428:

³⁷³ Пырлинк Е.Д., նշվ. աշխ., էջ 242:

³⁷⁴ Аммон Капелюк, Правительство Израиля в час расплаты, ТАСС. БПИ N 222, 12.11.1982г., стр. 32.

* ՄԶՈՒ-ի կազմում 1978թ.-ից մնացել էր միայն սիրիական զորաքանակը:

³⁷⁵ Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 428:

³⁷⁶ Robert O. Freedman, The Intifada, Its Impact on Israel, the Arab World, and the Superpowers, Miami, 1991, p. 51.

դական» քաղաքականություն կդրսնորեր: Շանապարի վերջում Իսրայելը կճանաչվեր իբրև աֆրո-ասիական գերտերություն՝³⁷⁷:

Կասկածից վեր է, որ ԱԱ-ում խորհրդայնամետ ուժերի՝ Սիրիայի և ՊԱԿ-ի դեմ պայքարում Իսրայելն ակնկալում էր ԱՍՆ-ի աջակցությունը՝³⁷⁸: Նախագահ Ռեյզանը և պետքարտուղար Ալեքսանդր Հեյզը՝ համոզված լինելով, որ ՊԱԿ-ի և Իսրայելի միջև 1981թ. իրադարձությունը դատապարտված է ծախողման, վերջինիս լիբանանյան ներխուժման միջոցով հնարավոր էին համարում միաժամանակ երկու հիմնախնդրի՝ Լիբանանի ճգնաժամի և արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորումը՝³⁷⁹: Հեյզը պնդում էր, որ իսրայելական քանակի մուտքը Լիբանան կարող էր վերջ դնել Բեյրութում ՊԱԿ-ի ներկայությանը՝ նոր ընթացք հաղորդելով հակամարտության կարգավորման գործընթացիմ:

Վաշինգտոնը կիսում էր Լիբանանում իսրայելամետ ու արևմտամետ քրիստոնյա փաղանգավորների ղեկավարությամբ «ուժեղ կենտրոնացված կառավարություն» հաստատելու ուղղությամբ Իսրայելի նկրտումները: Հեյզի կարծիքով՝ այն նպաստելու էր ազատ, քաց, ժողովրդավարական հասարակության կայացմանը՝³⁸⁰: Անհրաժեշտ էր նաև պայմաններ ստեղծել այստեղ ամերիկյան մշտական ռազմական ներկայության համար:

Վաշինգտոնի համոզմամբ՝ իսրայելական ներխուժումը կարող էր պատրվակ ծառայել հետպատերազմյան Լիբանանից սիրիական ուժերի դուրս բերման համար: Այն պետք է նպաստեր մերձավորակեյան խաղաղության նոր գործընթացի մեկնարկին՝ հեշտացնելով Սիացյալ Նահանգներին նպատակահարմար ձևով Լիբանանի հիմնախնդրի կարգավորումը՝³⁸¹: ԽՍՀՄ-ի դաշնակիցների պարտությունը կնևնացներ համայնավարների հեղինակությունը ԱԱ-ում և կիմաստագրկեր արարական համատերսում լիբանանյան հիմնախնդրի

³⁷⁷ Zeef Schiff. Lebanon: Motivations and Interest in Israeli's Policy. Middle East Journal, Washington, D.C., N 38, 1984, p. 220:

³⁷⁸ Կարապիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 108:

³⁷⁹ William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 4:

³⁸⁰ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 183:

³⁸¹ Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 428:

կարգավորման գաղափարը³⁸²: Խաղաղության բանակցություններում ԽՍՀՄ-ի ու Սիրիայի մասնակցության կասեցման, ինչպես նաև Խսրայի, Հորդանանի ու անկախության շիավակնող պաղեստինցիների ընդգրկման միջոցով ԱՍՆ-ին կվերապահվեր միանձնյա հովանավորի ու միջնորդի դերակատարությունը:

Փաստորեն, Խսրայելի հետ (Եզիդոսի օրինակով) Լիքանանի ներքաղաքական փոփոխություններով պարտադրված անջատողական հաշտագրի ստորագրման հավանականությունն ընդհանուր առմամբ համապատասխանում էր տարածաշրջանում ԱՍՆ-ի շահերին, որն ըստ երևույթին հնարավորություն կտար հաջողությամբ շարունակել քենչիդելիոյան գործընթացը³⁸³: Պիրիմինի համաձայն՝ Խսրայելի պաշտնախարար «Էռորպեո» ամսագրին տված իր հարցագրույցում հայտնել էր, որ Լիքանանում լայնամասշտար հակապահեստինյան «գործողության» ծրագրերը Հեյզի ու Վայնբերգերի հետ համաձայնեցրել էր դեռևս 1981թ. սեպտեմբերին: Վաշինգտոնում Շարոնն իր քարձրաստիճան գրուցակիցներին հայտարարել էր թե՝ «Ապշած տեսք չընդունեք, եթե մենք դա կանենք», այսինքն՝ եթե կներխուժենք Լիքանան: Ուշագրավն այն է, որ Լիքանանում խսրայելական ազրեսիայի «սցենարը» հիշեցնող տեղեկատվություն տապալ էր դեռևս 1981թ. «Քառնթերսփայ» ամսագրում³⁸⁴:

1982թ. փետրվարին Խսրայելի հետախուզության պետը, իսկ մայիսին՝ Շարոնը, Հեյզի և ամերիկյան այլ քարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկումներում լիքանանյան ներխուժումը ներկայացրել

³⁸² Moshe Maoz and Avner Yaniv, նշվ. աշխ., էջ 217:

³⁸³ Հարությունյան Լ., 1983թ. մայիսի 17-ի Լիքանանախսրայելական համաձայնագիրը լիքանանյան հակամարտության միջազգայնացման համատեսատում, Սնրձավոր Արևելյան երկրներ և ժողովրդներ, հ. XXIV, Երևան, 2005, էջ 125-126:

³⁸⁴ Պերլին Է.Դ., նշվ. աշխ., էջ 237-238: Ամսագրի համաձայն՝ ԿՀԿ-ի աշխատակիցների նոտահղացմանը Արևմտյան ավոտ և Ղազայում պետք է խսրայելահորդանանյան համատեղ վերահսկողության տակ, առանց ՊԱԿ-ի մասնակցության, պաղեստինյան ինչ-որ «կազմավորում» ստեղծվելու: Այդ նպառակով խսրայելական դիվավարությանը խորհուրդ էր տրվում սերտ կապեր հաստատել լիքանանյան աջ-քրիստոնեական ուժերի հետ, որոնք պետք է հարված հասցնեին արևմտյան Բեյրութի պաղեստինցիներին՝ դուրս մղելով վերջիններիս դեպի Լիքանանի հարավ: Հաջորդ փուլում խսրայելական բանակը պետք է հարված հասցներ լիքանանի հարավի պաղեստինյան զինված կազմավորումներին:

էին ոչ միայն որպես լրկալ միջոց, «այլև զլորալ հավասարակշռության մեջ Արևմտյան շահերից բխող «Մեծ Նախագիծ»՝ «Grand Design»³⁸⁵: Հեյզը հայտնել էր, որ ԱՄՆ-ի Խրայելի ուղղմական գործողությունները կընկալի միայն իրքն (ՊԱԿ-ի կողմից) «միջազգայնորեն ճանաչում գտած սաղրանքի» հակագրեցություն³⁸⁶:

Քացի այդ, դեռևս 1981թ. հոկտեմբերին Անվար Սադաթի հուդարկագործության ժամանակ Սենային Բեգինը Ակերսանդր Հեյզին հայտնել էր Լիբանան ներխուժման իրենց մուալլության մասին: Շնայած Հեյզը նախազգուշացրել էր, որ այդ դեպքում Բեգինը ստիպված է լինելու գործել առանց ԱՄՆ-ի աջակցության, այնուամենայնիվ նշել էր, որ Խրայելի ծրագիրն ընդիմական առմասը համապատասխանում է Վաշինգտոնի քաղաքականությանը³⁸⁷:

Արդեն իսկ 1982թ. մայիսի 26-ին Զիկագոյում իր ելույթի ժամանակ պետքարտուղար Հեյզը՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմին վերջ տալու նպատակով «միջազգային գործողությունների» կոչը, վերլուծարանների մեծ մասը որակեց իրքն «կամաչ լույս» խրայելական ներխուժման ճանապարհին³⁸⁸: Հեյզը նույնիսկ Խրայելին պաշտպանեց նրա քննադատներից՝ մեղադրելով, որ «Խրայելի դեմ ահարնելչական գործողություններն ավելի մեծ դժգոհությունների տեղի են տալիս, քան վերջինիս դեմ հակահարվածները»:

«Քարձր առաջնահերթություն» տալով Լիբանանի ճգնաժամի կարգավորմանը՝ Հեյզը նախազգուշացնում էր, որ «Լիբանանն այսօր վտանգի կիզակետ է: Պատերազմ բռնկվելու համար քաղում նախալրյալներ կան՝ ենու գնացող հետևանքներով»³⁸⁹: Փաստորեն, Հեյզը, չկասեցրեց ոչ Բեգինի նախաձեռնած Արևմտյան ափի բնակեցման գործընթացը, ոչ էլ Չարոնի լիբանանյան ազրեսիան³⁹⁰:

³⁸⁵ Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 428:

³⁸⁶ B.W. Quandt, Peace Process, American Diplomacy and the Arab-Israeli Conflict, Washington, D.C., 2005, p. 250.

³⁸⁷ William L. Cleveland, նշվ. աշխ., էջ 122:

³⁸⁸ Robert Fisk, նշվ. աշխ., էջ 627:

³⁸⁹ «Time», N.Y., 14.4.1982.

³⁹⁰ Douglas Little, American Orientalism, The United States and the Middle East Since 1945, The University of North Carolina Press, Chapel Hill, 2002, p. 293.

Այսպիսով, կասկածից վեր ենք համարում, որ ամերիկյան վարչակազմը ոչ միայն տեղյակ էր իսրայելական ներխուժման ծրագրի մասին, այլև կողմ էր դրա «սահմանափակ» իրագործմանը՝ ռազմաքաղաքական օգնություն տրամադրելով Իսրայելին, իսկ վերջինիս առաջնորդները «համոզված էին, որ վերջնական կանաչ լույսը պիտք է գա Վաշինգտոնից»: Հատկանշական է, որ Լիբանան ներխուժելու որոշումը Բեգինն ընդունել էր Ռեյգանի ու Հեյգի՝ Արևմտյան Եվրոպայում գտնվելու պահին, իսկ փոխնախագահ Բուշն ու ԱԱԿ-ի ղեկավար Կարլը Վաշինգտոնից դուրս կարճաժամկետ հանգստի մեջ էին: Հարկ է նշել, որ Բուշը, Կարլը, ինչպես նաև Ջեյմս Բեյքերը, դեմ էին Իսրայելի մեծ ծրագրի կենսագործմանը³⁹¹:

4. ԻՄՐԱՅԵԼԻ ԼԻԲԱՆԱՆՑԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ԵՎ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԶԱԳԱՆՔԸ: ՀԵՅԳԻ ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ՀԱԲԻՔԻ ՄԻՋԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 4-ին Լիբանանում պաղեստինյան ճամբարների ուղղությամբ ցամաքից, ծովից և օդից ինտենսիվ հարվածներից հետո, հունիսի 6-ին 90.000-ոց իսրայելական զորքերը՝ ամերիկյան նորագույն զենքով հանդերձավորված, տանկերի, օդուժի և Ռազմա-ծովային ուժերի (ՌԾՈՒ) աջակցությամբ հատեցին լիբանանյան սահմանը և անցնելով ԱԱԿ-ի ժամանակավոր ուժերի դիրքերը, ներխուժեցին Լիբանան: Հունիսի 5-ին ԱԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 508-րդ բանաձեռ, որով կոչ էր արվում «հակամարտող բոլոր կողմերին անմիջապես և միաժամանակ դադարեցնել Լիբանանում ռազմական գործողությունները»³⁹²: Հունիսի 6-ին ԱԽ-ն ընդունեց 509-րդ բանաձեռ՝ որով պահանջում էր

³⁹¹ B.W.Quandt, Peace Process, American Diplomacy and the Arab-Israeli Conflict, p. 252:

³⁹² Սիայն հումիս-սեպտեմբերի ամիսների ընթացքում ընդունվել է Իսրայելին դատապարտող շորջ 9 քանածել: Այս մասին տե՛ս Պալեստինական պատերազմի և զանազան պատերազմի պատմությունը (1975-1991թ.), պատմագիտական պատերազմի և զանաժամկետ պատմությունը (1975-1991թ.), պատմագիտական պատմությունը, ՀԱՎԵԼՎԱԾ ԶՈՐՐՈՐԴ; <http://www.un.org/russian/documents/scresol/1982/res508.pdf>.

հակամարտող կողմերի միջև հրադադարի անմիջական հաստատում, խրայելական ոժերի «անհապաղ ու առանց նախապայմանների» լիակատար դրւում միջազգայնորեն ճանաչված սահմանների մոտ: Հարկ է նշել, որ խրայելական ազրեսիան Լիբանանում կամ ինչպես հաճախ այն անվանում են «արար-խրայելական Տ-րդ պատերազմը» (78 օր տևողությամբ) առավել երկարատև արար-խրայելական պատերազմն էր³⁹³:

Լիբանան ներխուժելու առաջին օրերից Շարոնի գլխավորած խրայելական քանակը զանք չէր խնայում առավելագույն տարածքի գրավման ուղղությամբ՝ միանգամայն անտեսելով դրանց քաղաքական հետևանքները³⁹⁴: Իսկ Միացյալ Նահանգների արձագանքը սահմանափակվում էր մի շարք զգույշ հայտարարություններով՝ առանց Խրայելի հասցեին փաստացի դատավետումների: Ռեյզանը երեք օր շարունակ լուսաբաց պահպանեց՝ անզամ Խրայելի կողմից Լիբանանի վրա գլխավոր հարվածները հասցնելու լուրը լսելուց հետո³⁹⁵: Պատերազմի երկրորդ օրն ԱՄՆ-ի պատվիրակ Ֆ.Հարիր Սիրիայի և Խրայելի միջև միջնորդության նպատակով ժամանեց Խրայել³⁹⁶: Սակայն Խրայելի վերջնազիրը Դամասկոսին ներկայացնելու նպատակով հունիսի 8-ին նախատեսվող Հարիրի և Ասադի հանդիպման նախօրեին Խրայելը՝ օգտվելով իր ուժերի զգալի առավելությունից, սկսեց հարվածներ հասցնել Քեքաայում հանգրվանող ՄԶՈՒ-ի սիրիական զորամիավորումների ուղղությամբ³⁹⁷: Հունիսի 9-ին սիրիական ուժերը, որոնք խուսափում էին հակամարտության մեջ ներքաշվելուց, խրայել-ցիների հետ բախումների և ծանր մարտերի արդյունքում ստիպված ե-

³⁹³Գևորգյան Գ., 1982թ. խրայելյան ազրեսիան Լիբանանում և Եգիպտոսի դիրքորոշումը Սերձավոր Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 59:

³⁹⁴«Financial Times», London, 23.9.1982. Խրայելական ներխուժման պատրիակ ծառայեց Լոնդոնում 1982թ. հունիսի 3-ին Սև Բրիտանիայում Խրայելի դեսպան Ըլոն Արգովի նկատմամբ Արու Նիդալի խմբի կողմից իրականացված անհաջող մահավորձը:

³⁹⁵ Alexander Haig, Caveat, MacMillan, New York, 1984, pp. 336-38.

³⁹⁶ Moshe Maoz and Avner Yaniv, Աշվ. աշխ., էջ 218:

³⁹⁷ S.V.Seroshtan, Local Wars, Electronic Combat in Local Wars in Near East, Voyenno-Istoricheskiy Zurnal, UMA-86-047, No. 3, 1986, pp. 70-71.

ուան նահանջել թերութ-Դամասկոս մայրուղու ուղղությամբ՝ իսրայելցիներին մարդկային և տեխնիկական շոշափելի կորուստներ պատճենելով։ Նշենք, որ մինչ այդ, պաղեստինյան խմբավորումներն ու լիբանանյան ծախերն իսրայելցիների ճնշման տակ լրել էին հարավային Լիբանանում զտնվող իրենց դիրքերն ու նահանջել թերութ։

Փաստենք, որ 1982թ. պատերազմի նախապատրաստման և վարման ընթացքում, Իսրայելի օդուժի հրամանատարության տրամադրության տակ Սիրիայի օդային պաշտպանության և օդուժի վերահսկման նպատակով էլեկտրոնային սարքավորումների և համակարգերի վերաբերյալ հետախուզական հոսալի և ճշգրիտ տեղեկատվություն կար։ Դա Թել-Ավիվին հնարավորություն ընձեռեց նվազագույն կորուստներով կարծ ժամանակահատվածում տիրել լիբանանյան երկնքիմ³⁹⁸։ Սիրիայի գործողությունների կանխորոշման շնորհիվ՝ իսրայելցի արհեստավարժ օդաչուները կարողացան ավելի քան 20 սիրիական օդանավեր և սիրիական ցամաք-օդ տիպի հրթիռներ վնասագերծել վերջիններիս թթվածից 1-2 րոպե առաջ։ Պատերազմի ընթացքում Սիրիան ընդհանուր առմամբ կորցրեց 90 ինքնարիտ, 6 «Գազել» տեսակի հակատանկային ուղղաթիռներ և 19 ցամաք-օդ տիպի հրթիռային մարտկոցներ³⁹⁹, մինչդեռ Իսրայելը ոչ մի ինքնարիտ չկորցրեց⁴⁰⁰։

Նշենք, որ ԽՍՀՄ-ն ակնհայտ պասիվություն ու գգուշավորություն հանդիս թերեց ազրեսիայի առաջին շաբաթների ընթացքում⁴⁰¹։ Խսկ Վաշինգտոնը սիրիաիսրայելական հակամարտության խորացման մտավախությունից ենթվով, սկսեց ջանքեր գործադրել հակամար-

³⁹⁸ Hirsh Goodman, W. Seth Carus, *The Future Battlefield and the Arab Israeli Conflict*, New Brunswick (U.S.A.) and London (U.K.), 1990, p. 27.

Սիրիայի ռազմական մերենան դիւն ծայրահետ խոցելի վիճակում էր։ ԽՍՀՄ-ի ռադարները, էլեկտրոնային սարքավորումները և կոմումիկացիոն սարքավորումները հնացան, բարոյական մաշված էին։ Տակառային գծի ԽՍՀՄ-ի ինքնարիռներն ու հրթիռները զիտում էին Արևմտարի Իսրայելի ծեռ թերած սպառազինությամբ։ Այս մասին տե՛ս Arms Control and Disarmament Agency, *World Military Expenditures and Arms Transfers 1986*, Washington, D.C., 1987, p. 137.

³⁹⁹ Richard Gabriel, *Operation Peace for Galilee*, New York, 1984, p. 121.

⁴⁰⁰ Hirsh Goodman, W. Seth Carus, նշվ. աշխ., էջ 27:

⁴⁰¹ Rabinovich Itamar, նշվ. աշխ., էջ 130:

տող կողմերի միջև հրադադարի ապահովման ուղղությամբ: Խսրայելին հրադադար պարտադիրու գործին նպաստեց նաև նախազահ Ռեյգանին խորհրդային առաջնորդ Լեոնիդ Բրեժենևի հղած հուշագիրը: Ուշագրավն այն է, որ ԱՍՍ-ի հասցեին ԽՍՀՄ-ի հնչեցրած մեղադրանքներին նախազահ Ռեյգանը պատասխանում է, որ Մոսկվան պարտավոր էր կիսել ճգնաժամի պատասխանատվությունը, քանի որ Լիբանանի իրավիճակի կայունացման համար չէր օգտագործել Սիրիայի ու ՊԱԿ-ի վրա ունեցած իր ազդեցությունը⁴⁰²:

Կարծում ենք, որ չնայած հուշագրի համեմատաբար չափավոր տոնին, սիրիա-խրայելական հակամարտության խորացումն այնուհանդերձ կարող էր հանգեցնել գերտերությունների մակարդակով զլորալ միջամտության, նամանավանդ, որ խրայելական գործողությունների հանդեպ ԱՍՍ-ի քողությունը զայրույթի ու քննադատության ալիք էր բարձրացրել նաև արաբների մոտ:

Այսպիսով, պատերազմի առաջին փուլը նզրափակող հրադադարն ուժի մեջ մտավ հունիսի 11-ի 12-ի լույս գիշերը, երբ խրայելական հսկողության տակ էր հայտնվել լիբանանյան տարածքի գրեթե կեսը՝ մոտ 4,5 հազար քառ. կմ., որտեղ ոչնչացվել էին ՊԱԿ-ի ռազմագործական կառույցները⁴⁰³: Սակայն մարտերը դադարեցին միայն երկրի արևելյան հատվածում՝ շարունակվելով արևմտյան ու կենտրոնական հատվածներում: Մարտական գործողություններն ուղղակիորեն չազդեցին Սիրիայի համար ռազմավարական տեսանկյունից կենսական նշանակություն ունեցող շրջանների, հատկապես Բերդասայի վրա:

Հունիսի 13-ին խրայելցիները մոտեցան Բեյրութի արվարձաններին՝ արևելյան Բեյրութում գործող աջ-քրիստոնեական գորամիավորումների օգնությամբ աքցանի մեջ առնելով մայրաքաղաքի արևմտյան հատվածում գտնվող ՊԴ-Ը-ի և պաղեստինյան տարրեր կազմակերպությունների հիմնական ուժերին: Ակավեց աննախադեպ կերպով Լիբանանի մայրաքաղաքի հրետակոծությունն օդից, ծովից ու

⁴⁰² William L.Cleveland, ճշգ. աշխ., էջ 124:

⁴⁰³ Палестинская проблема. Документы ООН, международных организаций и конференций, М., 1984, стр. 112.

ցամաքից: Հրթիոներով և հրետանային, ընդ որում՝ ամերիկյան արտադրության գնդիկավոր, ֆուժորային և վակուումային ռումբերով՝ շարքից համվեցին հարյուրավոր տներ, գրիվեցին հազարավոր մարդիկ: Ամերիկյան լրատվամիջոցներն ու նույնիսկ կոնգրեսի որոշ անդամներ խստորեն դատապարտեցին քաղաքացիական գոհեր՝ հարուցած իսրայելական ռազմութիւնը՝ գործողությունները⁴⁰⁴: Հասարակական կարծիքի վիճակագրական տվյալների համաձայն, ներխուժումը բննայատող ամերիկացիների թիվը հետզինետե ավելանում էր:

Հունիսի 19-ի դրությամբ պետքարտուղար Հեյզը փորձեց արդարացնել իսրայելական գործողությունները՝ պնդելով, որ այն պարզապես «հարավային Լիբանանում անտանելի ճգճգվող անկայունության զագարնակետն էր»: Պետքարտուղարը համոզված էր, որ իսրայելական լայնածավալ գործողություններն ամերիկյան շահերին համապատասխանում էին այն պարզ պատճառով, որ ուղի էին հարթում լիբանանյան կայունության հիմնական խոչընդոտներ համարվող ՊԱԿ-ի և սիրիական ուժերի երկրից դուրսբերման համար: Միայն այդ դեպքում կարող էր ապահովվել Իսրայելի հյուսիսային սահմանների անվտանգությունն ու Լիբանանի կայունությունը⁴⁰⁵: Սակայն ընդհանուր առմամբ ԱԱՆ-ի կառավարության դիրքորոշումը երկիմաստ էր մնում: Վարչակազմը մտավախություն ուներ Թեյրութի նկատմամբ Իսրայելի ճնշումն ուժեղացնելու և ՊԱԿ-ին արմատախիլ անելու քույլտվության հարցում, քանի որ այդ ուղղությամբ ԱԱՆ-ի վրա ճնշում էր գործադրվում արար առաջնորդների, անգամ Ամերիկայի եկրոպական դաշնակիցների կողմից: Այդ իսկ պատճառով նախագահ Ռեյգանն Իսրայել

Միջազգային չեզոք դիտորդների կողմից ամրագրվեց այն փաստը, որ ագրեսիայի առաջին ժամերից Իսրայելն օգտագործել է միջազգային պայմանագրերով արգելվող տարրեր տեսակի զինատեսակներ, օրինակ՝ ֆուժորային ու գնդիկավոր ռոմբեր, որոնցից յուրաքանչյուրը պարունակում էր 650 փամփուշ: Վերջապես, իսրայելական բանակն առաջին անգամ կիրառեց ամերիկյան արտադրության վակուումային ռոմբեր, որոնք իրավունք ուներ կիրառել միայն «պաշտպանական նկատառումներով»: Իսրայելիցներն ամերիկյան կատարելագործված գենք օգտագործեցին Լիբանանի իրենց հակասակորդների երիտրային մարտկոցների ոչնչացման նպատակով:

Ազրեսիայի ընթացքում Լիբանանը տվեց 20 հազ. զոհ, 30 հազ. վիրավոր և կրեց 2 նլրդ. դոլարի վճառ:

⁴⁰⁴ Fred J. Khouri, Եղվ. աշխ., էջ 430:

⁴⁰⁵ Fraser T.G., Եղվ. աշխ., էջ 166:

իմ «հորդրեց» դադարեցնել ուզմական գործողությունները և պահանջեց բոլոր օտար ուժերը՝ սիրիական, պաղեստինյան և խրայելական, դրւս քերել Լիբանանից: Վաշինգտոնն անհրաժեշտ էր համարում հաստատել Իսրայելի հյուսիսային սահմանների անվտանգությունն ապահովող արդյունավետ կառավարություն⁴⁰⁶:

Ուշազրավն այն է, որ հունիսի 21-ին նախագահ Ռեյգանը հյուրընկալեց Իսրայելի վարչապետին, սակայն մերժեց Թել-Ավիվին լրացուցիչ ուզմական օգնություն տրամադրելու վերջինիս խնդրանքը⁴⁰⁷: Բեգինը խիստ սառը վերաբերությունների արժանացավ նաև հունիսի 22-ին՝ ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի հետ ունեցած հանդիպման ընթացքում⁴⁰⁸: Իսրայելցիները համոզված էին, որ ամերիկյան կառավարությունը, ընդունելով հանդերձ իր շահերին լիբանանյան ազգեւիայի ծառայելու փաստը, պարզապես պարտավոր էր իր ավանդը ներդնել դրա ֆինանսավորման գործում: Նրանք վստահ էին նաև, որ ԱՄՆ-ն Իսրայելի հանդեպ քարոյական պարտը ունի, քանի որ «իսրայելցիներն արյուն են հեղում ամերիկացիների համար շահավետ պատերազմներում»⁴⁰⁹:

Բոլոր դեպքերում, Սիացյալ Նահանգները քվեարկեց Իսրայելի ներխուժումն ու քաղաքացիական ծանր կորուստների հարուցումը դատապարտող ԱԽ-ի մի շարք քանաձների օգտին: Ռեյգանն ընդունեց նաև վարչակազմի զեկույցները, որոնց համաձայն հնարավոր էր համարվում ԱՄՆ-ի հետ ուզմական համաձայնագրի խախտման արդյունքում Իսրայելի կողմից գնդիկային ուսմբերի օգտագործումը⁴¹⁰:

Թեև Վաշինգտոնն իր քանավոր բողոքը հայտնեց խրայելական ուժերի կողմից Լիբանանի տարածքի 1/3-ը կազմող հարավի գրավման ու Թեյրութի պաշարման դեմ, այնուհետերձ, պատերազմի շարունակման նպատակով քաղաքական աջակցություն ցուցաբերեց

⁴⁰⁶ William L. Cleveland, նշվ. աշխ., էջ 125:

⁴⁰⁷ Во что обходится Израилю война в Ливане, ТАСС. БПИ N 175, 6.10.1982г., стр. 31.

⁴⁰⁸ Sachar Howard M., A History of Israel from the Rise of Zionism To Our Time, N.Y., 2000, p. 910.

⁴⁰⁹ «Le Monde Diplomatique», Paris, 17.8.1982.

⁴¹⁰ Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 431:

Թեղ-Ավիվին: ԱՄՆ-ը ոչ միայն վետո դրեց Լիբանանում խրայելական գորքերի ներկայությունը դատապարտող ՍԱԿ-ի ԱԽ-ի ընդունած միշարք բանաձևների վրա⁴¹¹, այլ 1982թ. վերջին Խրայելին 2.485 ԱՄՆ մլրդ. դոլարի տնտեսական օգնություն հատկացրեց ԱՄՆ-ի 1983թ. նախատեսվող բյուջեից⁴¹²:

Ամեն դեպքում, խրայելական ռազմական գործողությունների հետագա շարունակությունը դրւու էր գալիս Վաշինգտոնի և Թեղ-Ավիվի միջև պայմանավորվածությունների շրջանակից: Նահանգների մոտ մտահոգություն էր առաջացնում ԱՄՆ-արարական երկրներ հարաբերությունների վատթարացման, Խրայելի ու Սիրիայի միջև նշանակող պատերազմի և համայնավարների հավանական միջամտության հեռանկարը⁴¹³: Փաստորեն, Լիբանանում ՊԱԿ-ի և սիրիական ուժերի կրած պարտությունը Վաշինգտոնի համար միաժամանակ և նոր հնարավորություններ էր ստեղծում, և լուրջ խնդիրներ հարուցում: Սի կողմից, խորհրդային երկու դաշնակիցների՝ ՊԱԿ-ի և Սիրիայի պարտությունն ու Առսկվայի անգրությունը նման եղի կանխարգելման ուղղությամբ կարող էին ուժեղացնել ամերիկյան լծակները տարածաշրջանում՝ միաժամանակ բռլացնելով իր հակառակորդին⁴¹⁴: Մյուս կողմից էլ, արար առաջնորդների և նույնիսկ Նահանգների եվրոպական դաշնակիցների բննադատության պայմաններում ԱՄՆ-ը ստիպված էր զգուշավորություն հանդիս բերել Խրայելի ճնշումը թեյրութիւ հանդեպ ուժեղացնելու և ՊԱԿ-ին արմատախիլ անելու բույլսպության հարցում⁴¹⁵:

ԱՄՆ-ն ի դեմս ՍԱԿ-ում ԱՄՆ-ի մշտական ներկայացուցիչ Զ.Կիրկապատրիկի, 4 ամքամ 1982թ. հունիսի 9-ին, հունիսի 26-ին, հուլիսի 29-ին, օգոստոսի 6-ին վետո դրեց խրայելական գորքերի դուրսերման վերաբերյալ ՍԱԿ-ի ԳԱ-ի ընդունած բանաձևների վրա:

⁴¹¹ Моджорян Л.А., Международный сионизм на службе империалистической реакции, М., 1984, стр. 96.

⁴¹² Майкл Майерс, объем помощи Израиля увеличивается, ТАСС. БПИ N 12, 18.1.1983, стр. 31.

⁴¹³ Robert O Freedman, The Middle East After The Israeli Invasion of Lebanon, N.Y., 1986, p. 70.

⁴¹⁴ Barry Rubin, Եղվ. աշխ.:

⁴¹⁵ William L. Cleveland, Եղվ. աշխ., էջ 125:

Արդեն իսկ հովհանք կեսերին Հարիբը սկսեց քանակցել լիբանանյան կառավարության հետ՝ ՊԱԿ-ի ստորարաժանումների և սիրիական գործերի Լիբանանից դուրս թերման ուղղությամբ։ Դա առաջին դեպքն էր, երբ լիբանանյան կառավարությունը պաշտպանում էր Խորայիլի և ԱՍՆ-ի դիրքորոշումն այդ հարցում⁴¹⁶։ Խորայիլը, որը ցանկություն չուներ լրացուցիչ կորուստներ կրել և ներքաշվել ՊԱԿ-ի հետ մարտերի մեջ, հունիսի 25-ին Սպիտակ տանը հայտնեց, որ պատրաստ է ընդունել հրադարարի պայմանները և հաստատեց Հեյզի առաջարկած Վերոնշյալ ծրագիրը։ Իր հերթին, ՊԱԿ-ի առաջնորդ Արաֆարը, Լիբանանից ՊԱԿ-ի հետացման պատրաստակամության մասին ակնարկելով հանդերձ, պահանջեց պահպանել Բեյրութում ՊԱԿ-ի քաղաքական ու խորհրդանշական ներկայությունը՝ երաշխավորելով նաև իր ոսկմիների անվտանգ դուրսքերում։ Ուեյզանն առաջարկեց ՊԱԿ-ի դուրսքերման անվտանգության երաշխավորման նպատակով խաղաղապահ ուժերում ամերիկյան զորքեր ընդգրկել։ Սակայն ՊԱԿ-ի համար «մոր տուն» փնտրելու խնդիրը դեռևս առկախ էր՝ կապված Լիբանանում քնակվող 400.000 պաղեստինցիներին արարական երկրներում վերաբնակեցնելու և պաղեստինցի մարտիկներին այդ երկրների կողմից ընդունելու պատրաստակամության շուրջ առկա մտավախության հետ։ Վաշինգտոնը Սաուդյան Արաբիային ու արարական մյուս պետություններին պաշտոնապես տեղեկացրեց, որ «ԱՍՆ չի կարող երաշխավորել» Խորայիլի հետ զինադարձարի ապահովումը, քանի դեռ պաղեստինցիները զենքը վայր չեն դրել⁴¹⁷։

Եզիդություն նախագահ Մուրարաքն Արաֆարին առաջարկել էր ապահովան տալ 6.000 պաղեստինցի մարտիկների՝ Եզիդություն առանց սպառազինության մտնելու նախապայմանով։ Սակայն նախագահն ավելի ուշ հրաժարվեց իր առաջարկից, քանի որ Արաֆարը հրաժար-

⁴¹⁶ Շատերն Ա.Դ., Առաջարկային պատրաստություն, Մ., 2000, ս. 109.

⁴¹⁷ Հովհանք երկրորդ շարարկա ընթացքում ՊԱԿ-ը համաձայնվել էր Բեյրութում քաղաքական գրասենյակ ու Տրիպոլիում 600 հոգացոց զինուժ պահել։

⁴¹⁷ Պարլան Ե.Դ., 62կ. աշխ., էջ 248.

վուն էր Բեյրութից հեռանալ առանց զենքի⁴¹⁸: Սիայն այն բանից հետո, երբ Սաուդյան Արարիան խոստացավ համապատասխան ֆինանսական օգնություն հատկացնել, արարական որոշ երկրներ համաձայնեցին ընդունել ՊԱԿ-ի մարտիկներին⁴¹⁹: Դամասկոսը ևս հասկացրեց, որ ՊԱԿ-ը կարող է հաստատվել Սիրիայում և համաձայնվեց սիրիական ուժերը դուրս քերել Լիբանանից:

Ինչ վերաբերվում է վերոնշյալ խնդրի նկատմամբ «Կայունության և հակագողեցության ճակատի» արձագանքին, ապա հարկ է նշել, որ այն դադարել էր գոյություն ունենալ ինչպես անդամ երկրների, մասնավորապես Սիրիայի և Իրաքի՝ միջև ներքին տարածայնությունների⁴²⁰, այնպես էլ ՊԱԿ-ի ներսում առկա պառակտնան արդյունքում: Խսրայելի լիբանանյան ազրեսիան պատշաճ հակագողեցություն չառաջացրեց նաև արարական մյուս պետությունների, հատկապես ԱՄՆ-ից ուազմական առարումներ ստացող Ծոցի պահպանողական նավարդյունահանող երկրների մոտ⁴²¹: Խսրայելական ազրեսիայի առնչությամբ ԱՊԼ-ի արտգործնախարարների նիստ հաջողվեց գումարել միայն հունիսի 26-ին Թունիսում, որը սակայն հավանություն չտվեց Լիբանանում խսրայելական ազրեսիայի դեմ արաբների համատեղ պայքարի ծավալման և ԱՄՆ-ի դեմ քաղաքական ու տնտեսական պատժամիջոցների կիրառման ուղղությամբ Սիրիայի և ՊԱԿ-ի առաջարկին⁴²²:

⁴¹⁸Գևորգյան Գ., 1982թ. խսրայելյան ազրեսիան Լիբանանում և Եգիպտոսի դիրքորոշումը, էջ 64:

⁴¹⁹Պավլով А., Ястребы над Ливаном, М., 1990, стр. 33.

• Լիբանանում էր գտնվում նաև իրարյան 1500 հոգուց բաղկացած մի զորախումբ: Այս մասին տե՛ս Արաբական միջազգային կոնֆերանսը՝ Երևանում, 1990 թվականի մայիսի 26-ին Թունիսում, որը սակայն հավանություն չտվեց Լիբանանում խսրայելական ազրեսիայի դեմ արաբների համատեղ պայքարի ծավալման և ԱՄՆ-ի դեմ քաղաքական ու տնտեսական պատժամիջոցների կիրառման ուղղությամբ Սիրիայի և ՊԱԿ-ի առաջարկին⁴²³:

• Այլ տարածայնությունների շնորհիվ Խսրայելի ի վիճակի նորագույն թվուր պատշաճապահ բոլոնելի հյուսիսում կենտրոնացներլով բոլոր ուժերն ու միջոցները:

⁴²⁰1980-ականների սկզբից միջազգային շոկայում նաև կայուն կտրուկ նվազման պայմաններում նավարդյունահանող արարական երկրները զգալիորեն նվազեցրին Սիրիային հատկացվող օգնությունը: Վերջնին կրծառմանը նպաստեց նաև իրան-իրաքյան պատերազմի ընթացքում Ծոցի երկրների կողմից Իրաքին հսկայական ֆինանսական միջոցների տրամադրման փաստը: Այս մասին տե՛ս Գ. Ղարիբջանյան, Սոցիալ-տնտեսական և ներքաղաքական ճգնաժամը Սիրիայում 1980-ական, թ. XXIV, Երևան, 2005, էջ 152:

⁴²¹ The Palestinians Between Terrorism and Statehood, Brington, 1996, p. 24.

Նշենք, որ ԽՍՀՄ-ը «հաշվարկված» պասիվություն ու զգուշակություն հանդիսանքերեց՝ նաև Բեյրութի պաշարման ընթացքում՝ Ելիսական արար-խորայելական հակամարտությունը գերտերությունների ուժային քաղաքականության միջոցով կարգավորելու անհնարինության կանխադրույթից: Մինչդեռ Սիրիան՝ Մոսկվայի հանդեպ իիասրափությունը սքստելով, շարունակեց ԽՍՀՄ-ին վերաբերվել իրեն իր գլխավոր դաշնակցի, միջազգային աջակցության հիմնական միջոցի, Բեքաայում Խորայելին զսպող զլսավոր ուժի և հունիսին կորցրած զենքի լրացման աղյութի: Միևնույն ժամանակ Դամասկոսը փորձում էր վերականգնել Վաշինգտոնի հետ ընդհատված իր երկխոսությունը⁴²²:

Տ. ԸՆԻ.ՁԻ ԱՐԱՐ-ԽՈՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՍՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ: ՊԱԿ-Ի ԴՈՒՐՍ ԲԵՐՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻՑ «ՔԱԶՍԱՋԳ ՌԱԺԵՐԻ» ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐԸԸ

Վերոշարադրյալից կարելի է գալ այն հետևության, որ խորայելական ազրեսիայի սկզբում Սպիտակ տունը որդեգրել էր «վճասի սահմանափակման» ռազմավարություն, որի համաձայն՝ անհրաժեշտ էր կանխել Վաշինգտոնի արար դաշնակցների՝ հատկապես Սաույան Արարիայի և Եգիպտոսի բացասական հակագրեցությունը, նվազագույնի հասցնել համայնավարների ազրեցությունն արարական աշխարհում և խոսափել ԱՍՆ-ԽՍՀՄ ճգնաժամի առաջացումից⁴²³: Այս մոտեցումը թերևս պայմանավորված էր մերձավորարևելյան քաղաքականության շուրջ ԱՍՆ-ի պաշտնախարար Կասպար Վայնբերգերի և ազգային անվտանգության գծով հատուկ օգնական Վիլիամ Կլարկի^{*}:

* Ամգամ Բեյրութում խորհրդային դեսպանատանը խորայելական զորքերի կողմից վնաս հասնելոց հետո:

⁴²² Itamar Rabinovich, Յշվ. աշխ., էջ 130:

⁴²³ Moshe Maoz and Avner Yaniv, Յշվ. աշխ., էջ 217:

Սպիտակ տանը լայնորեն տարածված տեսակետ կար, որի համաձայն Կլարկը բավկանաչափ իրազեկ չէր արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ինքնուրույն ճշակեր գործում: Այս մասին տեսն США: Дипломатия, Раздираемая противоречиями, ТАСС. БПИ N 162, 18.8.1982, стр. 3.

նախագահ Ուեյզանի ու պետքարտուղար Հեյզի հետ ունեցած տարածայնություններով⁴²⁴: Կասպար Վայնբերգերն ու Վիլիամ Կլարկը շարունակ պնդում էին, որ Խորայելի լայնածավալ գործողությունները կարող են հակամերիկյան տրամադրություններ առաջացնել արարական աշխարհում, սպառնալ Ծոցի պահպանողական ամերիկամետ վարչակարգերին՝ տարածաշրջանում ԽՍՀՄ-ի ազդեցության վերահաստատման հնարավորություն ընձեռնելով⁴²⁵: Կլարկն առաջ էր քաշում Խորայելին զսպելու և սառուցիներին ընդառաջելու անհրաժեշտությունը, քանզի արարական աշխարհում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդման նպատակով հարկավոր էր միաժամանակ ինչ-որ քան խոստանալ նաև արարմներին:

Ի վերջո, ԱՄՆ-ի վարչակազմի ներսում առկա տարածայնությունները, մասնավորապես լիբանանյան ճգնաժամի հարցում, նպաստեցին Հեյզի պաշտոնաբողությանը: Գործնականում կառավարությունում միջազգային հարցերում եղակի փորձառու պաշտոնյաներից լինելով, Հեյզը մեկուսացված էր Սպիտակ տանը: Նախկին պաշտնախարար Շլեսինջերի կարծիքով՝ պետքարտուղարը կառավարությունում միակ արիեստավարժը լինելով, Քիսինջերի անարդարացի քննադատության գոհն էր դարձել: Շլեսինջերը գտնում էր նաև, որ որքան մեծ լիներ Հեյզի ազդեցությունը, այնքան ավելի պրոֆեսիոնալ կլիներ ԱՄՆ-ի դիրքորոշումն արտաքին քաղաքական հարցերում և առավել մեծ կլիներ Սպիտակ տան հանդեպ արտերկրի վստահությունը⁴²⁶: Ըստ Էռիքյան, Հեյզի պաշտոնաբողության հիմնական պատճառը Ուեյզանի հետ արտաքին քաղաքական խնդիրների՝ մասնավորապես Արևելյան Արևմտյան Հյուսիս-Հարավ հարաբերությունների, ուղղված սպառազինությունների սահմանափակման հիմնախնդրի և,

⁴²⁴ Карен Эллиот Хаус, Рич Джарословски, О назначении Уильяма Кларка на пост помощника президента США по национальной безопасности, ТАСС. БПИ N 7, 12.1.1982г., стр.13. Կլարկը զգալի օգնություն ցուցարեց Հեյզին՝ ույզանական Սպիտակ տան աշխատավորների հետ հարաբերությունների կարգավորման հարցում: Նա ծառում էր հարբեր ինչպես Վայնբերգերի, որի հետ ջերմ հարաբերություններ ուներ, և Հեյզի, այնպես էլ Հեյզի ու Ալենի միջև առկա հակասությունները:

⁴²⁵ Sachar Howard M., Աղջ. աշխ., էջ 910:

⁴²⁶ Карен Эллиот Хаус, Положение в Госдепартаменте: Хейг изолирован от круга Рейгана, ТАСС. БПИ N 24, 4.2.1982г., стр. 3-9.

անշուշտ, ՍՍ-ի քաղաքականության որոշ ասպեկտների շուրջ ունեցած տարածայնություններն էին⁴²⁷:

Արտաքին գերատեսչության դեկավարի պաշտոնում Հեյզին փոխարիմնեց տնտեսագետ ու առաջատար գործարար Զորյ Շուլցը⁸, որի պաշտոնավարության սկիզբը (1982թ. հուլիսի 16) նշանավորեց ՍՍ-ում խաղաղության համապարփակ գործներացի սկիզբը:

Նախագահ Ռեյգանը պետքարտուղարի պաշտոնում Ավերսանոյ Հեյզին Զորյ Շուլցով փոխարիմներու մասին լուրը հայտնելիս նշեց, որ ԱՍԴ-ի արտաքին քաղաքականության մեջ ոչ մի փոփոխություն չի լինելու՝ «այդ քաղաքականությունը որոշողը ես եմ լինելու»: Երկու շաբաթ շանցած, արտաքին գործերով սենատի հանձնաժողովի առջև իր ելույթի ժամանակ Շուլցն ակնարկեց ՍՍ-ի քաղաքականության մեջ կարևոր շրջադարձի մասին՝ «անհետածգելի» համարելով «այսպիսի համարական ծգությունների» քավարարումը⁴²⁸:

Ինչ վերաբերվում է Խորայելի նկատմամբ պետքարտուղարի տածած զգացմունքներին, ապա դրանք իր նախորդի համեմատությամբ հեռու էին քարեկամական լինելուց, և նա քննադատարար էր վերաբերվում Խորայելի հանդեպ լավատեսորեն տրամադրված պետքարտուղարության «արարագետներին»: Զորյ Շուլցն ու Վիլիամ Կլարկը վարչակազմում արարամետ գծի և արար-խորայելական հա-

⁴²⁷ Anatoly Dobrynin, նշվ. աշխ., էջ 506: Պաշտոնարողությամբ նպաստեցին նաև Հեյզի նկատմամբ ներքիմ՝ անդրկուլյայն մերժմանությունները, որոնց համաձայն Հեյզը ներազրկում էր իրեն անթրիկյան արտաքին քաղաքականության միակ առաջատարը ներկայացնելու հավակնություններում (սա նախացնում էր նախագահի դերը՝ քաղաքական որոշումների կայացման գործում), ինչպես նաև պետքարտուղարի պաշտոնը 1984թ. նախագահական ընտրություններին Ռեյգանի դեմ պայքարում օգտագործելու նույնություններում:

• Շուլցը եղել էր ՍՍ-ում լայն հետաքրքրություն ունեցող ինժեներական «Թեշել Կորպորացիայի» նախագահը, որի պատճառով կոնգրեսի որոշ անդամներ նրան պիտակավորվել էին իրեն «արարագետ»: Շուլցը Նիկոլի պաշտոնավարման տարիներին կառավարական ճակարդակի տարրեր պաշտոններ էր գրադեցրել:

⁴²⁸ CIA: Առողջապահություն, նշվ. աշխ., էջ 3-4: Ի տարրերություն Կլարկի, Շուլցը Հեյզի պես հերքում էր ԽՍՀՄ-ի դեմ «ունետեսական պատերազմի» անհրաժեշտությունը: Սա հակասում էր Սահմանական տան խորհրդականների կողմից նախագահին ներմանվող հակասություններին:

կամարտության քանակցային ճանապարհով կարգավորման կողմնակիցներ էին: Կրելով պետքարտուղարի օգնական Նիկոլաս Վելյորիսի զլանափորած պետդեպայի ՍԱ-ի գործերով գրադադարը բյուրոյի ազդեցությունը, նրանք համոզված էին խաղաղության հասնելու հնարավորությունների մեջ: Ծովակարձիքով, Վայնրերգերն ակտիվորեն ներքաշվել էր արտաքին քաղաքականության մեջ՝ միջազգային բոլոր ճգնաժամերի կարգավորման գործում առաջարկելով պարզեցված մոտեցում՝ ուղղական ուժի կիրառում դիվանագիտական ջանքերի անտեսմամբ⁴²⁹:

Այսպիսով, Լիբանանի իրադադարից (հուլիսի 5-ի) անմիջապես հետո, իր պաշտոնավարության առաջին ամսին Ծովակարձիքության ՍԱ-ի գծով փորձագետների թիմը գրադադարի էր արար-խորայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ զաղտնի ծրագրի մշակմամբ: Ծրագրով նախատեսվում էր արևմտյան Բեյրութից ՊԱԿ-ի դուրսբերում, քենակիության պայմանավորվածությունների իրագործում, Խորայելի կողմից Արևմտյան ափում և Ղազայում պահեստինյան ինքնավարության ճանաչում: Սակայն ծրագրում հստակեցված չէր պետության քացակայության պարագայում պաշտպանության և արտաքին քաղաքականության հարցերում պաղեստինցիների կողմից պատասխանատվություն ստանձնելու խնդիրը: Ըստ Էլության, Ծովականական ուժեր պաղեստինցիներին քանակցությունների սեղանի շուրջ նատեցնել եգիպտական պատվիրակության կազմում, իսկ Բեյզինին համոզել՝ զիջումների գնալ Արևելյան Երասաղենի և Արևմտյան ափում նոր քանակավայրերի կառուցումը դադարեցնելու հարցում: Նախատեսվում էր արարական «չափավոր» երկրներ Հորդանանին, Սաուդյան Արաբիային, ինչպես նաև Լիբանանին համոզել՝ եգիպտախրայելական գործարքի օրինակով Խորայելի հետ պայմանագրեր ստորագրել: Ծովական մտադիր էր նաև Վաշինգտոնի և ՍԱ-ի մայրաքաղաքների միջև կապ հաստատելու նպատակով այնտեղ մշտական դեսպան՝ իր տեսակի մեջ «գերհարիքի» նշանակել: Այդ պաշտոնում առավել հավանական թեկնածու էր դիտվում Հեմրի Զի-

⁴²⁹ Anatholy Dobrynin, Աշվ. աշխ., էջ 509:

սինջերը, որն իր մասնակի ավանդն էր ունեցել նշյալ ռազմավարության մշակման գործում: Պետքարտուղարի կարծիքով՝ զիսավոր ինուիլը Լիբանանին ուղիղ կանգնելու հարցում օգնության ցուցաբերումն էր⁴³⁰. քանի որ լիբանանյան ճգնաժամի կարգավորումը կարող էր նպաստել տարածաշրջանում տևական խաղաղության հաստատմանը:

Մինչդեռ Շուլցը գրադաւ էր արար-խորայելական հակամարտության կարգավորման իր ծրագրի մշակմամբ, խորայելական ուժերն օգոստոսի 1-ին օդային գրոհներ իրականացնելուց հետո, ներխուժեցին Բեյրութի հարավային արվածաններ և իրենց ծեռքն առան օդանավակայանի վերահսկողությունը: ԱՄՆ-ի հեռուստաալիքներով ցուցադրվեցին խորայելական ուժերի հարուցած քազմաթիվ զոհերի ու ավերածությունների գիշերային տեսարանները: Օգոստոսի 1-ը մամուլում «Աև Կիրակի» անոնը ստուգավ⁴³¹: Հաջորդ օրը ՏԱԱՍ-ը հանդիս եկավ արևմտյան Բեյրութի նկատմամբ խորայելական ազրեսիան դատապարտող հայտարարությամբ⁴³²: Միննույն օրն Իսրայելի արտգործնախարար Շամիրն այցելեց Վաշինգտոն՝ հանդիպելով ամերիկյան դեկավարության հետ: Ուշագնու Շամիրին հայտնեց, որ Իսրայելի կողմից արևմտյան Բեյրութ ներխուժման փաստն իրենց հարաբերություններում ամենատխուր հետևանքների կարող է հանգեցնել և սպառնաց դադարեցնել Իսրայելին տրամադրվող ռազմական օգնությունը: Շամիրի հետ Շուլցի առանձնազրույցի ժամանակ վերջինս պահնջեց, որպեսզի Իսրայելը դադարեցնի Բեյրութի դեմ գրոհները՝ ՊԱԿ-ի դուրս բերման շուրջ Հարիբի բանակցություններն ավարտին հասցնելու նպատակով:

Ի վերջո, անդադար փոխիրաճգործյամբ և օդային իրեսակոծություններով ուղեկցվող արևմտյան Բեյրութի 78-օրյա պաշարումն ավարտվեց՝ ամրագրվելով 1982թ. օգոստոսի 7-ին ամերիկյան պատվիրակ Ֆիլիպ Հարիբի և լիբանանյան իշխանությունների միջնորդություններում:

⁴³⁰ «New York Post», 17.8.1982.

⁴³¹ John Bulloch, Աշկ. աշխ., էջ 123:

⁴³² Арабо-израильский конфликт и палестинская проблема, ВГБИЛ, Москва, 1989, стр. 26. Այս մասին տես'ն նաև Внешняя политика Советского Союза и международные отношения, 1982...1983, стр. 90-91.

յամբ ստորագրված պայմանագրում: Վերջինիս համաձայն՝ պաղեստինյան ջոկատներն օգոստոսի վերջին պետք է դուրս բերվեին արևմտյան Բեյրութից՝ իրենց ապահովությունը երաշխավորող բազմազգ խաղաղապահ ուժերի ուղեկցությամբ: Փոխարենը, Վաշինգտոնը գրավոր երաշխավորում⁴³³ էր Լիբանանում մնացող պաղեստինցիների կյանքի անվտանգությունն ու արևմտյան Բեյրութ Խորայի մուտքի արգելումը⁴³³:

Սիրիան և մասնակցեց ՊԱԿ-ի դուրս բերմանն ուղղված բանակցություններին՝ իր հավանությունը տալով ամերիկյան ծրագրին: Փաստորեն, Դամասկոսի քանակցային հնարավորությունները համեմատարար քույլ էին՝ պատերազմում սահմանափակ (հիմնականում օդում) պարտություն կրելու, արարական զգալի աջակցության բացակայության և Լիբանանում իր քաղաքական դաշնակիցների հետ համագործակցության քույացման պայմաններում: Մինչդեռ ՊԱԿ-ի ջախջախումն օգտակար եղավ Սիրիային այնքանով, որքանով երա մի հատկածի կախվածությունն առավել քան երբեք մեծացավ Դամասկոսից⁴³⁴:

ՊԱԿ-ի դուրս բերման գործընթացի վերահսկողությունն ու անվտանգության ապահովումն օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 26-ը նախատեսվում էր իրականացնել խոալական, ֆրանսիական գորակազմերից քաղկացած խաղաղապահապահն՝ «Բազմազգ ուժերի» (ԲՈՒ) միջոցով, որոնց օգոստոսի 20-ին պետք է միամային ԱՄՆ-ի 800 ծովային հետևակազորայինները⁴³⁵:

Հիմնական վարչության անունից նրաշխավորեց, որ այդ դեպքում՝ 1)խորայի կազմակերպությունը և 2)կապահովվի Լիբանանում պաղեստինյան փախստականների ճամբարների անվտանգությունը: Այս մասին տես՝ Ագրարև Ա., Օր Կեմպ-Դևիդ ու տրագեդիա Լիբանա, նշվ. աշխ., էջ 133:

⁴³³ Людин А., Носенко В., Кризис в ООП: внутренние и внешние причины (1982-1985 гг.), Научно-информационный бюллетень, 2(36), ЭКЗ. № 00259, Москва, 1985, стр. 134. Արաֆարը Ռեյանի վարչակազմի հետ Հարիրի միջոցով անուրակի կաս պահելու փաստն ընկալեց իրը Վաշինգտոնի կողմից ՊԱԿ-ի դե-ֆակտո ճանաչում, որն իր հերքին պետք է նպաստեր ամերիկապահեստինյան երկխոսության կայացմանը:

⁴³⁴ Moshe Maoz and Avner Yaniv, Syria under Assad, նշվ. աշխ., էջ 218:

⁴³⁵ Kiron K. Skinner, Annalise Anderson and Martin Anderson, նշվ. աշխ., էջ 441: ՊԱԿ-ի դուրս բերման ընդհանուր պատասխանատվությունը կրում էին ֆրանսիացիներն ու խոալակացիները: Խոկ 800 ամերիկյան ծովային հետևակայինների գործողությունները,

Ուշագրավն այն է, որ Վայնը երգերը, որը ճգնաժամերի ուժային կարգավորման կողմնակից էր, դեմ էր Լիբանան ԱՄՆ-ի ծովային հետևակայինների ուղարկման Ռեյզանի օրոշմանը՝ ենելով հակամարտությանը հնարավոր մասնակցի վերածվելու մտավախությունից: Սինջեռ Շուլցն այն համոզմանն էր, որ ամերիկյան զորակազմը, իբրև խաղաղության հարատև երաշխիք, պետք է ուղի հարթեր խրայելական ուժերի արագ դրւութերմանը⁴³⁶:

Նշենք, որ սկզբնական շրջանում ամերիկյան ծովային հետևակայինները ողջունվեցին պաղեստինցինների և լիբանանյան բոլոր խմբակցությունների կողմից: Եթե պաղեստինցիններն ու մուսուլմանները հույս ունեին ծովային հետևակայինների միջոցով պաշտպանվել Խրայելից ու փաղանգավորներից, ապա Ժմայելն ու փաղանգավորներն ակնկալում էին նրանց միջոցով ամրապնդել երկրում իրենց սեփական դիրքերը: Ինչևէ, խաղաղապահները միառժամանակ չեզոք ու օգտակար դեր ունեցան անվտանգության ու կայունության հաստատման, ինչպես նաև Բեյրութից խրայելական ուժերի դրւութերման զործում⁴³⁷:

1982թ. սեպտեմբերի 1-ին պաղեստինյան զորամիավորումների և ՍԶՈՒ-ի սիրիական զորքանակի դրւութերմը քրծումը գործնականում ավարտված էր: Բեյրութից հեռացան սիրիական 25-րդ բրիգադի մնացորդները (2000 մարդ), իսկ պաղեստինցի մոտ 8.485 մարտիկներ տեղափոխվեցին Սիրիա, Ալժիր, Հարավային Եմեն, Սուդան, Իրաք, Հորդանան և Թունիս⁴³⁸:

Լիբանանից հեռանալուց հետո, Արաֆարը հանդիս եկավ ԱՍ-ում ուժերի հարաբերակցությունն ԱՄՆ-ի օգտին փոխվելու շուրջ

Վայնը երգերի ցանկությամբ, սահմանափակվում էին Բեյրութի նավահանգստի շրջանի վերահսկողությամբ՝ ենելով անվտանգության նկատառումներից:

⁴³⁶ Douglas Little, Յշվ. աշխ., էջ 245:

⁴³⁷ Fred J. Khouri, Յշվ. աշխ., էջ 441-422:

⁴³⁸ Киселев В.И., Палестинская проблема в международных отношениях: реалистический аспект, М., 1988. с. 184. ՊԱԿ-ի առաջին զորակազմը Բեյրութից Սիրիա մնացեց օգոստոսի 27-ին: Սեպտեմբերի 1-ի դրույթամբ ավելի քան 15.000 պաղեստինցիներ ու սիրիացիներ հեռացել էին Լիբանանից: ՊԱԿ-ի կենտրոնակայանը տեղափոխվեց Թունիս:

հայտարարությամբ⁴³⁹: ՊԱԿ-ի առաջնորդի կարծիքով՝ տեղի էր ունեցել ԱՍԽ-ի և ԽՍՀՄ-ի միջև «ազդեցության ոլորտների բաժանում»՝ տարածաշրջանում Վաշինգտոնին հատուկ դիրքեր ապահովելով⁴⁴⁰:

6. ԼԻՐԱՆԱՆՅԱՆ ԱԶԵՐԻ ԴԻՐՁԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄՆ ՈՒ 1982Թ. ԲԱՇԻՐ ԺՄԱՅԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱԾՏՈՆՈՒՄ:

1982Թ. ՈԵՅՎԱՆԻ ԵՐԱԳԻՐԸ

Լիբանանից սիրիապաղեստինյան ուժերի հեռացման պայմաններում ճախակողմյան ուժերի դիրքերը թուլացան՝ փաղանգավորներին թողնելով երկրի կառավարման նախաձեռնությունը: Թեև Սիրիան ու ՊԴ-ը պահպանեցին իրենց ուազմական ներկայությունը Բեքաայի հովտում, երկրի հյուսիսում ու Լեռնալիբանանի մի շարք շրջաններում, այնուհանդերձ, իրադարձությունների ընթացքի վրա նրանց ազդելու հնարավորությունն անշուշտ նվազեց: Զախերի գործունեության հիմնական կենտրոնը՝ արևմտյան Բեյրութը, անցավ աջակողմյան ուժերի հետ սերտ համագործակցության մեջ գտնվող լիբանանյան բանակի վերահսկողությանը:

Նման իրադրության պայմաններում 1982թ. օգոստոսի 23-ին Լիբանանի նոր նախագահ ընտրվեց այդ պաշտոնում միակ թեկնածու 34-ամյա Բաշիր Ժմայելը: Նախքան նախագահի պաշտոնում ընտրվելը, Բաշիրը խոստացել էր վերականգնել հակամարտության արդյունքում պառակտված երկրի միասնականությունը և հանդես էր եկել ԱՊԼ-ի կազմում Լիբանանի անդամակցության պահպանման օգտին⁴⁴¹:

Այնուամենայինիվ, նախագահի ընտրությունից անմիջապես հետո Վալիդ Ջումրաքի գլխավորությամբ մուսուլման գործիչները Բաշիրից պահանջեցին երաշխավորել Լիբանանում քրիստոնյաների և մուսուլմանների միջև ավանդական հաշտության քաղաքականության

⁴³⁹ «الأهرام الاقتصادي، القاهرة»، «Ա-ակրամ Ա-իբրիսաղի», Կահիրե, 17.1.1983:

⁴⁴⁰ «القدس العربي، الثورة الفلسطينية»، 20.11.1982:

⁴⁴¹ «New York Times», 24.8.1982.

վարումը⁴⁴²: Խնդիրն այն էր, որ Լիբանանի մուսուլման գործիչները թաշիրին խրայեցիների դաշնակից էին համարում^{*}, քանի որ վերջիններս ամեն ջանք գործադրել էին Լիբանանի նախագահի պաշտոնում թաշիրի ընտրությունն ապահովելու հարցում: Այդ էր պատճառը, որ Թել-Ավիվն իրեն իրավունք էր վերապահում թաշիրից պահանջել կատարել Խսրայելի հետ հաշտության ու պաշտպանության վերաբերյալ պայմանագիր կնքելու խոստումը⁴⁴³: Գեներալ Շարոնը սպառնում էր անզամ առանց պայմանագրի ստորագրման Խսրայելի գործերը դորս չբերել Լիբանանից, որն անշուշտ խարխլում էր Ժմայելի դիրքերը երկրի ներսում: Փաստորեն թաշիրը, որը խրախուսել էր խրայելական ազգեսիան իր գլխավոր «հակառակորդներից»՝ ՊԱԿ-ից և Սիրիայից ձերքագատվելու համար, այժմ ստիպված էր դիմել ամենատարեր խոսափարումների՝ Լիբանանում Խսրայելի դրածոյի պիտակից աղատվելու համար⁴⁴⁴:

Այդ էր թերևս պատճառը, որ Թել-Ավիվը, թաշիրի ընտրության հաջորդ օրը, վերջինիս նկատմամբ ճնշում գործադրելու (պաշտոնա-

⁴⁴² «Washington Post», 23.8.1982. Ժմայելի ընտրության դիմ վճռականապես հանդես եկամ Յախիլին վարչապես Սալամը՝ ՊԱԿ-ի հետ Ֆիլիպ Հարիրի քամակցություններում լիբանանյան հիմնական միջնորդը, և նախկին նախագահ Ա. Ֆրանժինը: Մուսուլմանների մոտ առավել մեծ վլողություն էր առաջացրել այն հանգամանքը, որ նախագահին շնորհագրուել էր Խսրայելի վարչապետ Մեզինը՝ «Ուստի լավագույն բարենադրանքները քո ընտրության կապակցությամբ: Աստված քեզ գորավիզ, իմ հարազատ ընկեր, Լիբանանի ազատագրության և նրա անկախության պատճական մնե առաջնորդյան իրականացման գործում»: Այս մասին տես՝ Sachar Howard M., A History of Israel from the Rise of Zionism To Our Time, New York, 2000, p. 911.

⁴⁴³ «Le Monde Diplomatique», Paris, 12.11.1982.

⁴⁴⁴ «Financial Times», London, 23.9.1982. 1982թ. սեպտեմբերի 14-ին (թաշիրի սպանությունից մեկ շաբաթ առաջ) Խսրայելում թեզինի հետ գաղտնի հանդիպման ընթացքում թաշիրը հայտնում է բոլոր լիբանանցիների նախագահ դառնալու, ետևարաք քաղաքական քույր ուժերին ընդունելի պայմանագրի կնքելու իր մտադրության մասին, որը փաստացի կերպով հարվածի տակ էր դնում Խսրայելի հետ պայմանագրի ստորագրման փաստը: Թաշիրը թեզինի հայտնում է նաև Խսրայելի դրած մայոր Հարդադին պետական դավաճանության մեղադրանքով լիբանանի արդարադասությանը համձնելու իր մտարության մասին: Թեզինն էլ իր «վաճառակոր» դաշնակցին եեղինակագրելու նպատակով «քոյլ է տախիս» այդ հանդիպմանը լուսաբանող հաղորդագրություն երապարակել խրայելական թերթի առաջին տողերում՝ այլպիսով խորացնելով թաշիրի և ընդդիմության միջև առկա հակառակությունները: Այս մասին տես՝ Аммон Капелюк, Правительство Израиля в час расплаты, ТАСС. БПИ N 222, 12.11.1982г., стр. 32.

պիս Լիբանանի հակամարտող ուժերի միջև հնարավոր «արյունահեռությունների կանխման») նպատակով իր գորքերը մտցրեց արևմտյան թերութ⁴⁴⁵: Լիբանանի կառավարությունը Թել-Ավիվի քայլը գնահատեց իրքն նոր ազրեսիա՝ ՍԱԿ-ի ԱԽ-ից պահանջելով նոր նիստ գումարել և Վաշինգտոնին խրայելական գործողությունների պատասխանատու համարելով⁴⁶:

Մեկ շաբաթ անց, սեպտեմբերի 1-ին, Խորայելը պաշտոնապես հայտարարեց «մսադադություն Գալիլեային» ուսումնական գործողության ավարտի մասին: Նույն օրը, Սալիտակ տաճ Օվալաձև գրասենյակից արված հեռուստաուղերձի ժամանակ, Ռեյզանը հանդիս եկավ մերձավորարևելյան խաղաղության «քարմ սկիզբ» նախաձեռնությամբ, որն իրքն հստակ քայլ էր դիտվում արարական աշխարհի դժգոհությունը մեղմելու և ամերիկյան քաղաքականությունն խրայելականից տարրութելու ուղղությամբ⁴⁴⁶: Եվ քանի որ իր պաշտոնավայրության ստանձնումից ի վեր նախազահ Ռեյզանը մերձավորարևելյան գործերում որպես օրենք առաջնորդվում էր նախորդ վարչակազմերի որդեգրած քաղաքականությամբ, ուստի նրա նախաձեռնությունը ևս հիմնված էր 1969թ. Ռոջերսի ծրագրի⁴⁴⁷ և 1979թ. Քեմփի Դելիի համաձայնագրերի վրա: Սակայն նրանում առավել հանգամանալից էին ներկայացված քաղաքական ու տարածքային խնդիրների կարգավորումներին առնչվող առաջարկները: Խաղաղ բանակցային նոր գործընթաց նախանշող ծրագիրը նպատակ ուներ արարական աշխարհին ցույց տալ, որ ԱՄՆ-ը համակրանքով է վերաբերվում արաբներին և փորձում է արձագանքել նրանց հոգսերին ու տագմապներին: Խնդիրն այժմ Խորայելի օրինական անվտանգության խնդիրները պաղեստինցիների օրինական իրավունքների հետ համատեղելու մեջ էր, որին,

⁴⁴⁵ «Financial Times», London, 23.9.1982. Խորայելցիները զինարավեցին տեղի ձախուսումանական միլիցիային, որոնք հայտնվեցին քրիստոնյա միլիցիայի վերահսկողության տակ:

* Ինչպես նշվել է, ԱՄՆ-ը, ի դեմս Հարիբի, գրավօր երաշխիք էր տվել արևմտյան թերություն խրայելական գորքերի ներխուժում արգելելու առնչությամբ:

⁴⁴⁶ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 146:

⁴⁴⁷ Այս մասին տես «Mahmoud Riad, նշվ. աշխ., էջ 137-158: The Rogers Plan, Jewish Virtual Library, A Division of The American-Israeli Cooperative Enterprise, December 9, 1969. <http://www.jewishvirtuallibrary.org/jsource/History/rogers.html>.

նախագահի կարծիքով, կարելի էր հասնել ոչ թե մարտադաշտում, այլ դիվանագիտական ճանապարհով և կողմերի միջև փոխզիջման գմով⁴⁴⁸:

Ծրագիրն առաջադրում էր տարածաշրջանում խաղաղության և կայունության հասնելու նպատակով վերականգնել պատերազմից քայլայված Լիբանանը: Սակայն դա չէր նշանակում, որ ՍՍ-ի խաղաղությունը սկսվում ու ավարտվում էր Լիբանանում: ԱՄՆ-ի աջակցությամբ Լիբանանի վերականգնման գործընթացը պարզապես արարիստայելական հակամարտության պատճառների արմատական կարգավորման ուղղությամբ քայլերից մեկը պետք է լիներ⁴⁴⁹:

Ամեն դեպքում, Ռեյգանի խաղաղության նախաձեռնությունը, քացի Եգիպտոսից, մերժեցին հակամարտությանն ուղղակի և անուղղակի մասնակից բոլոր կողմերը՝ Հորդանանի քաջավոր Հուսեյնը, Իսրայելի վարչապետ Բեգինը, Սիրիայի նախագահ Ասադը, ՊԱԿ-ի առաջնորդ Արաֆաթը, ԽՍՀՄ-ի առաջնորդ Բրեժենևը: Վաշինգտոնը փաստացի կերպով գրկում էր ինչպես արարիստայելական հակամարտության կարգավորման հնարավորությունից, այնպես էլ արարչափակոր վարչախմբերի վստահությունից: Խորհրդային առաջնորդները Ռեյգանի ծրագիրը «ֆարս» համարեցին՝ դատապարտելով ՍՍ-ի ապագան միանձնյա տնօրինելու ուղղությամբ ԱՄՆ-ի հավակնությունները:

7. ԱՄՆ-Ի ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԻՆ ԺՄԱՅԵԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Ինչպես տեսանք, Ռեյգանի ծրագիրն անօգտակար գտնվեց ոչ միայն արարիստայելական հակամարտության, այլև այդ հակամարտության մարտադաշտի վերածված Լիբանանի ճգնաժամի կարգավորման հարցում: Այդ մասին է վկայում ՍԱԿ-ի ԲՈՒ-ի և ԱՄՆ-ի խա-

⁴⁴⁸ Robert O Freedman, Եղվ. աշխ., էջ 71:

⁴⁴⁹ The Reagan Plan, Jewish Virtual Library, A Division of The American-Israeli Cooperative Enterprise, September 1982.

<http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Peace/reaganplan.html>.

դադապահների վերադարձը Լիբանան, որոնք իրենց առաքելության իրականացումից հետո, սեպտեմբերի 13-ի դրությամբ, հեռացել էին Երևանից: Վերջիններիս վերադարձին նպաստեցին մի շարք իրադարձություններ՝ սեպտեմբերի 14-ին Բաշիր Ժմայելի սպանությունը, սեպտեմբերի 16-ի գիշերը Սարրայի ու Շաքիլայի պաղեստինյան ճամբարների փախստականների նկատմամբ Իսրայելի աջակցությամբ «Քարայրի» իրականացրած դաժան կոտորածները⁴⁵⁰, ինչպես նաև արևմտյան Բեյրութից խորայնական ուժերի հեռացումը:

Այսպիսով, սեպտեմբերի 20-ին Լիբանան վերադառնալու իրահանգ ստացան ԱՄՆ-ի ծովային հետևակայինները: Սեպտեմբերի 29-ին Ռեյզանի խնդրանքով Բեյրութ վերադարձան նաև Ֆրանսիայի ու Իտալիայի խաղաղապահները: Նրանց պարտականությունը երկրի անվտանգության ու կայունության ապահովումը և պաղեստինցիներին ու լիբանանցիներին սպառնացող վտանգներից պաշտպանությունն էր: Իրականում լիբանանյան հակամարտության պասիվ խաղաղապահներից նրանք վերածվեցին ակտիվ մասնակիցների⁴⁵¹:

Անդրադառնալով Սարրայի ու Շաքիլայի կոտորածների խնդրին, կասկածից վեր ենք համարում, որ Վաշինգտոնը, առնվազն սեպտեմբերի 17-ի դրությամբ, տեղյակ էր այդ մասին: Նույն օրը երեկոյան նախագահ Ռեյզանը Նյու Ջերսիում ունեցած ելույթի ժամանակ հայտարարել էր, որ Բեյրութի աջ-քրիստոնեական զորամիավորումները գործել են ինքնապաշտպանական նկատառումներով՝ հակագործով ինչ-որ ծախական միլիցիայի հարձակմանը: Նման գնահատականից հետո պատհական չենք համարում ՍԱԿ-ում ՊԱԿ-ի մշտական ոլլ-

⁴⁵⁰ Մօքարյան Լ.Ա., նշվ. աշխ., էջ 97: Խորայելական հետախուզության կողմից «Երկար ուղենին» ծածկանումը ստացած զործողության շրջանակներում սեպտեմբերի 16-ին Թել-Ալիվը՝ օգտվելով Բեյրութից ՊԱԿ-ի ջոկատների հեռացման հանգամանքից, փակեց արևմտյան Բեյրութում գտնվող Սարրա և Շաքիլա պաղեստինյան ճամբարների մուտքերը և փաղանգավորական միլիցիայի զորամիավորումներին բոյլասորեց «ճամբարներում բարնված» 2.000 «պաղեստինցի ահարեկիցների» հայտնաբերման պատրվակով «մարտազարդել» ճամբարները: 4 օր շարունակ 100-ափոր քաղաքացիներ կոտորածի ներքարկվեցին: Այս փաստն անզամ իր հուշերում խոստվանում է ԱՄՆ-ի պետքարտուղարներից Մարին Օլբրայթը: See 'n Madam Secretary, A Memoir Madeleine Albright, Miramax Books, N.Y., 2003, p. 305.

⁴⁵¹ Douglas Little, նշվ. աշխ., էջ 246:

տորդի կողմից թե՛ ուղղակի, և թե՛ մի շարք արարական երկրների դեսպանատների միջոցով անուղղակի կերպով պետքարտուղարությանը հղված դիմումների՝ անպատասխան բողնելու փաստը⁴⁵²:

Մինչդեռ սեպտեմբերի 19-ին Խորայելը խիստ դատավիճուումների ենթարկվեց ոչ միայն ՍԱԿ-ի ԱԽ-ի, ԵՏՀ-ի անդամ պիտությունների և քազում ամերիկացիների, այլ բազմաթիվ խրայեցիների կողմից, որոնք խստորեն քննադատեցին իրենց կառավարությանը՝ կոտորածները բույլատրելու համար^{*}: Սեպտեմբերի 24-ին ՍԱԿ-ի Գլխավոր Ասամբեան ընդունեց կոտորածները դատապարտող բանաձեռ⁴⁵³:

Ինչ վերաբերվում է լիբանանյան իրադարձությունների նկատմամբ ԱՍՆ-ի գրադեցրած դիրքորոշմանը, ապա հարկ է նշել, որ 1982թ. աշնանից Վաշինգտոնը ներքաշվեց լիբանանյան հակամարտության խրբին հորձանուուր՝ ստանձնելով Բաշիր Ժմայելի սպանությունից մեկ շաբաթ անց վերջինիս եղրոր՝ Լիբանանի նախագահի պաշտոնում ընտրված Ամին Ժմայելի հիմնական հովանավորի դերակատարությունը: Նշենք, որ փաղանգավոր Ամին Ժմայելը սեպտեմբերի 21-ին Լիբանանի նախագահի պաշտոնում ընտրվել էր մուսուլման խորհրդարանականների աջակցությամբ՝ ազգային հաշտության, Խորայելի

* Դիմումները վերաբերվում էին Թեյրություն հեռացած պաղեստինցիների ընտանիքներին Վաշինգտոնի տված «անվտանգության երաշխիքների» չկատարմանը:

⁴⁵² Պյուլին Ե.Դ., նշվ. աշխ., էջ 250: Թումիսի ԱՍՆ-ի դեսպանատանը սեպտեմբերի 17-ին պաշտոնապես հայտարարվեց, որ Թեյրության ամերիկյան դեսպանատան ներկայացուցչը եղել է ճամբարներում և «առանձնահատուկ ոչինչ չի նկատեր»:

Բեգինի կառավարությունը հասարակական ճնշման տակ պաշտոնական հետաքրքրություն անցկացրեց, որը 1983թ. փետրվարին վերջնականապես հանգեցրեց պաշտոնահարար Շարոնի պաշտոնազրկմանը: Գրավյալ Արևմտյան ամիս կառավարիչ Մենախմեն Միլսենը սեպտեմբերի 23-ին երաժարվեց իր պաշտոնից, իսկ 1000 խրայելից պահեստագրայիններ պաշտոնապես խնդրեցին, որպիսի ծառայության շնչանակվեն Լիբանանում:

⁴⁵³ Палестинская проблема. Документы ООН, международных организаций и конференций, М., 1984, стр. 153-154. Цю նասին մանրամասն տե՛ս Резолюция Генеральной Ассамблеи ООН ES-7/9 от 24 сентября 1982 года, Резолюция седьмой чрезвычайной специальной сессии Генеральной Ассамблеи ООН по вопросу о Палестине (1980-1982 годы), Палестинская проблема, Документы ООН, международных организаций и конференций, М., 1984, стр. 153-154; Աշարությունաբ, ԱՍՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և ճամաֆամի ընթացքում (1975-1991թ.), թեկնածուական ատենախոսություն, ՀԱՎԵԼՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

օկուպացիային վերջ դնելու և Լիբանանի տարածքային ամբողջականության քաղաքականության գործին սատարելու նպատակով⁴⁵⁴: Փաստորեն, Լիբանանի պատմության մեջ առաջին անգամ, քարձրագույն իշխանությունը ստանձնած փաղանգավորների նոր փարչակարգը որդեգրում էր երկրի վերամիավորման քաղաքականություն: Լիբանանից բոլոր օտարերկրյա ուժերի դրւութերումից և հակամարտող կողմերի միջև հաշոտության հաստատումից հետո փաղանգավորները կարող էին երկրում պահպանել իրենց տիրապետող դիրքերը:

Նախազահ Ամինի հիմնական փորձությունը Սարրայի և Շարիլայի իրադարձություններից հետո Իսրայելի հետ հարաբերությունների խնդիրն էր: Վերջինիս ապավիմնելու դեպքում նախազահը կարող էր կորցնել ծախս-մուսուլմանական ուժերի աջակցությունը: Թերևս այդ էր պատճառը, որ Իսրայելի և, ինչու չէ, Սիրիայի կապանքներից ազատվելու նպատակով նա կարող էր ապավիմնել ԱՄՆ-ի աջակցությանը՝ գտնելով, որ միայն Վաշինգտոնն է ի գորու նրանց հարկադրել Լիբանանից միաժամանակ դրւութերել իրենց ուժերը: Դեռ ավելին, լիբանանյան կառավարության դիրքերն անրապեսելու հարցում Ամինը զգում էր նաև ԱՄՆ-ի ուազմական, ֆինանսական և դիվանագիտական աջակցության կարիքը⁴⁵⁵:

Թեև Վաշինգտոնի կարծիքով՝ Ամին Ժմայելը չէր կարող առավել արդյունավետ կառավարիչ լինել, քան նրա եղբայր Բաշիրը, այնուհանդեմ, նրա քաղաքական կողմնորոշումը, առավել մոտ էր լիբանանյան քարեփոխումների ամերիկյան հայեցակարգին: Այն պայմանավորված էր ոչ այնքան ԱՄՆ-ի համար Լիբանանի ուազմավարական նշանակության, որքան արտաքին գործուների առկայության հանգամանքով⁴⁵⁶: Այդ էր հավանաբար պատճառը, որ ԱՄՆ-ի օգնությունը երկար սպասել չուվեց: 1982թ. նեկտեմբերից Վաշինգտոնը ստանձնեց լիբանանյան քանակի հանդերձավորման ու գորավարժությունների անցկացման պատասխանատվությունը: Լիբանանի ոստիկանության

⁴⁵⁴ Moshe Maoz and Avner Yaniv, Եշվ. աշխ., էջ 219:

⁴⁵⁵ «Financial Times», London, 23.9.1982.

⁴⁵⁶ Moshe Maoz and Avner Yaniv, Եշվ. աշխ., էջ 219: Լիբանանյան զարգացումների հետազա ընթացքը տվյալ պահին գրեթե ամրողության կախված էր ամերիկասիրիական հարաբերությունների բնույթից:

իր գործառույթների իրականացման նպատակով մեծ քանակությամբ գենը ու զինամքերը տրամադրվեց: Երկրում ապահովվեց նաև ամերիկյան ծովային հետևակայինների և 6-րդ նավատորմի առկայությունը⁴⁵⁷:

Թե՛ Ժմայելը, և թե՛ ամերիկացիները մարտնական հրամանատարությամբ համազգային մարտունակ բանակ ստեղծելու նպատակ էին հետապնդում: ԱՄՆ-ը վստահ էր, որ արևմտամետ Ժմայելի կառավարության ընդլայնման և անրապնդման, հատկապես նրա բանակի վերակառուցման շնորհիվ հնարավոր կիմներ իրականացնել Լիբանանից սիրիական ու խրայելական գործերի դուրսբերումը՝ սահմանափակելով երկրում Սիրիայի ազդեցությունը:

1983թ. վերջին, գեներալ Ֆինտելի գլխավորած ամերիկյան ռազմական փորձագետների ջանքերի շնորհիվ, լիբանանյան բանակը համալրված էր 21.000 լավ զինված և վարժեցված սպաներով ու զինվորներով, որոնք բաժանվում էին 7 գորամասերի: Սակայն այն դեռևս կրում էր կոնֆեսիոնալիզմի կնիքը, քանի որ առավել մարտունակ 6 և 8-րդ գորամիավորումները համալրված էին շիաներով ու քրիստոնյաներով, իսկ ընդհանուր առմամբ բանակի շարքային զինծառայողների 60 %-ը շիաներ էին⁴⁵⁷. Դեռ ավելին, բանակը զրկվում էր համազգային ինքնությունից, քանի որ արտոնյալ գործառույթներ էին վերապահվում միայն փաղանգավորական միլիցիային:

Այսպիսով, Ամին Ժմայելի գլխավորած ԼՇ-ը՝ օգտվելով սկզբում խրայելական, ապա՝ ամերիկյան ռազմաքաղաքական աջակցությունից, երկրում տիրապետող ներքին ուժի վերածվեց: Դրան նպաստեցին ինչպես նախազահության, բանակի և այլ առանցքային կառույցների նկատմամբ փաղանգավորների վերահսկողության հաստատման, այնպես էլ Վաշինգտոնի կողմից «Զաքաիրների» և պետական կառույցների նույնացման փաստը: Միացյալ Նահանգները՝ բավարարվելով լիբանանյան բանակաշինության գործում արձանագրված «արագ առաջնադաշտմամբ», գտնում էր, որ բանակի, միլիցիայի և

* 1983թ. հունվարի 1-ից ամերիկյան «արագ արձագանքնան» ուժերը սկսեցին հանդիսացած «Պենտագոնի կենտրոնական հրամանատարության» դրոշի տակ:

⁴⁵⁷ Միրսկի Ռ., Աշխ., էջ 33:

ժանդարմերիայի կազմակերպված ուժերը պարտավոր են կարգ ու կանոն ապահովել երկրի առնվազն 2/3-ում⁴⁵⁸:

Ի վերջո, ԱՄՆ-ի ռազմաքաղաքական և ֆինանսական աջակցությունը Ժմայելին գոտեպահեց՝ առանց Խսրայելի և Սիրիայի աջակցության, ինչպես նաև առանց լիբանանյան դրուզների ու մուսուլմանների հետ փոխպիշման գնալու, մարոնական գերիշխանության պահպանման որոշումը կայացնելիս: Ամինը Վաշինգտոնի վարժեցրած ու հանդերձավորած քանակն ուղղեց արևմտյան Բեյրութ՝ կոտրելով տեղի մուսուլմանների ու պաղեստինցիների դիմադրությունը՝ միաժամանակ թույլ տալով փաղանգավորների միլիցիային և քաղաքական ուժերին շարունակել անարգել գործել ոչ միայն արևմտյան Բեյրութում, այլ ողջ երկրում⁴⁵⁹:

8. ԾԻՍ ԳՈՐԾՈՒՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Լիբանանի ճգնաժամը վեր հանեց նաև Լիբանանում շիա գործունի ակտիվացման և իրանական իսլամական հեղափոխության արտահանման խնդիրները, որոնք իրենց սրությամբ ծառացան լիբանանյան ճգնաժամի ողջ ընթացքում: Ուշագրավն այն է, որ Իրանի քարոզչությունը, ի տարբերություն արաբական այլ երկրների, քարենապատ հող գտավ միայն պառակտված Լիբանանում քագսվորող քասում՝ անցանկալի խնդիրներ հարուցելով ինչպես Սիրիայի, Խսրայելի, այնպես էլ ԱՄՆ-ի համար⁴⁶⁰.

Հայտնի է, որ իսլամիստների գործունեության ակտիվացմանը նպաստեց մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացում ստեղծված փակուղային իրավիճակը՝ զգալիորեն ընդլայնելով տարածաշրջանի հակամարտությունների շրջանակը: Միաժամանակ, արաբ-խսրայելական պատերազմներում սեփական իշխա-

⁴⁵⁸ «Le Monde», Paris, 12.4.1983, p. 3.

⁴⁵⁹ Fred J. Khouri, 62կ. աշխ., էջ 444-445:

⁴⁶⁰ «Middle East International», London, 25.7.1987.

նույթումների կողմից «փոքր» Խսրայելին հաղթելու անկարողությունը, ԱՄՆ-ի վարած խրայելամետ քաղաքականությունը և շափակոր արարական վարչախմբերի հետ նրա համագործակցությունը Վաշինգտոնի և նրան սատարող երկրների ու քաղաքական ուժերի նկատմամբ մուսուլմանական միջավայրում ծայրակել հակակրանք և անհանդրությունականության մթնոլորտ ստեղծեցին:

Չախաքեյան կազմակերպությունները՝ հիասքափված ներքաղաքական իրավիճակի կարգավորման աշխարհիկ կուսակցությունների անզորությունից, առկա խնդիրների լուծման ճանապարհը տեսնում էին «ճշմարիտ խլամին» վերադառնալու մեջ: Ուստի պատահական չէ, որ այդ գործընթացներում մեծ դեր ունեցավ երկրի խոշորագույն, սակայն տնտեսապես ամենաանապահով և քաղաքականապես վատ կազմակերպված շխա համայնքը: Ծիամերին ներկայացնող կրոնարադագական կազմակերպությունները հանդես եկան իրենց նկրտումներին այլևս չհամապատասխանող պետական կրոնադավանական համակարգի վերացման օգտին: Ուշագրավ է, որ եթե նախքան 1979թ. Իրանի խլամական հեղափոխությունը շիա կղերականների կողմից՝ Լիբանանը խլամական պետության վերածելու կոչերը շիա համայնքի շրջանում իրքև ուժողացած էին դիտվում, ապա հեղափոխությունից հետո դրանք միանգամայն իրատեսական համարվեցին⁴⁶¹:

Շիա համայնքի գարբոնքը մեծապես պայմանավորվեց նաև Մոռա Սաղրի խարիզմատիկ անձով, որը 1959թ. Իրանից գալուվ Լիբանան, 1974թ. զիսավորեց շիա նշանավոր կրոնական առաջնորդներին միավորող Գերագույն խլամական խորհուրդը: Սաղրը սկիզբ դրեց քաղաքական հավասարության և սոցիալական արդարության համար պայքարող «Զրկվածների Շարժմանը», իսկ 1975թ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբին, հիմնականում պաշտպանական նկատառումներով, հիմնադրեց շարժման գինված քաղը՝ ԱՍԱԼ կազմա-

⁴⁶¹ Chibli Mallat, Shi'i Thought from the South of Lebanon, Oxford: Centre for Lebanese Studies, 1988. http://www.bintjbeil.com/E/shii_mallat.html.

կերպությունը⁴⁶²: Փաստորեն մինչ ԱՍՍԼ-ի ստեղծումը, Լիբանանի շիաները զինված խմբագրում չունեցող միակ համայնքն էին:

Մուսա Սադրը ծգուում էր իր շարժման կոնֆեսիոնալ շրջանակ-ներն ընդլայնելու նպատակով համագործակցել կրոնաքաղաքական մյուս համայնքների ներկայացուցիչների հետ: Սակայն հատակ գաղափարական և քաղաքական հենքի քացակայության պայմաններում, շարժումը ծեռք բերեց առավել վառ արտահայտված շիական բնույթ: Այն լիբանանյան շիաների ծգողական կենտրոնի վերածվեց՝ իրեն իր համայնքի անդամներին պաշտպանող և երկրում նրանց դիրքերն ամրապնդող ուժ:

Նախքան իսրայելական 1982թ. ազրեսիան, շարժումը քազմարիվ քախումներ էր ունեցել հարավային Լիբանանի պաղեստինցիների հետ: Նախագահ Ամին Ժմայելի պաշտոնավարությունից հետո այն պայքարում էր նաև «իսրայելական գերիշխանության դեմ»⁴⁶³:

Փաստենք, որ ԱՍՍԼ-ի հզորացմանն ու Լիբանանում շիա շարժման արմատականացմանը նպաստեցին մի ամրող շարք իրադարձություններ՝ 1975թ.-ից սկիզբ առած Լիբանանի քաղաքացիական պատերազմը, 1978թ. Մուսա Սադրի անհետացման հանգամանքը, 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունը, 1978 և 1982թթ. Իսրայելի ներխուժումները Լիբանան: Մուսա Սադրի անհետացումից հետո Լիբանանի շիա համայնքն արար ազգայնականներից ու ձախ ուժերից՝ իր հայացքն ուղղեց դեպի ԱՍՍԼ-ը, որի դեկավարությունը, Նարին Բերիի գլխավորությամբ, կղերականից վերածվեց աշխարհիկի: Վերջինս, չնայած Իրանի հետ ունեցած կապերին, ԱՍՍԼ-ը տարավ ազգայնա-

⁴⁶² Martin Kramer, Hizbullah: The Calculus of Jihad, in Fundamentalisms and the State: Remaking Politics, Economics, and Militance, The Fundamentalism Project, vol. 3, Chicago, 1993, pp. 539-56. ԱՍՍԼ-ը «Դիմադրության լիբանանյան գումարտակներ»՝ «Ավագա ալ-մուտակիմա ալ-լորմանիյա»-ի արաբերեն հապալուն է:

⁴⁶³ Жудро А., К итогам 6-го съезда движение "Амаль", ТАСС. БПИ N 87, 6.5.1986г., стр. 35.
Խոլմենիին սատարող շիական հոգևորականությունը՝ ձախ կամ բորժուական կուսակցությունների ազդեցության ուժեղացումը ժողովրդի շրջանում կանխելու նպատակով քարոզում էին «Կուսակցություն» կարգախոսը որպես միայն աստծո կուսակցություն՝ «Հիզբաղաթ», իսկ առաջնորդ՝ որպես միայն Ռուսական՝ այսինքն՝ Խոլմենիին: Այս մասին տե՛ս Կ.Шուլալով, Иранское шиитское духовенство и его роль в революции, Восток и Современность, Научно-информационный бюллетень, 5(21), ЭКЗ. N 000265, М., 1981, стр. 22.

կան ճանապարհով, որի նպատակը մյուս համայնքների հետ քաղաքական ու տնտեսական հավասար պայմանների ստեղծման ուղղությամբ քարեփոխումների իրականացումն էր: 1986թ. ապրիլին ԱՍՍԼ շարժման 6-րդ համագումարի ժամանակ շարժման նպատակ հայտարարվեց իսրայելական օկուպացիայի դեմ պայքարը, Լիբանանի քաղաքական կյանքից Իսրայելի վերջնական բացառումը, Ա.Ժմայելի ներքին գերիշխանության դեմ պայքարը: Մարտնի համայնքի քաղաքական արտոնությունների վերացման հոդի վրա նախատեսվում էր նաև պայքար մղել երկրի քաղաքական համակարգի քարեփոխումների, ազատության, արդարության և հավասարության օգտին⁴⁶⁴:

Լիբանանի իրանամետ շիա շարժմանն իպահական հեղափոխության արտահանման գործում օգնություն տրամադրելու նպատակով Իրանը, օգուվերվ Իսրայելի լիբանանյան ազրեսիայից, Դամասկոսի բույլությամբ, 1982թ. Բերայի հովիտ (որն այժմ Սիրիայի վերահսկողության տակ էր գտնվում) ուղարկեց «Իրանի հեղափոխական պահակագործ»՝ ԻՀՊ-ի 1000 և ավելի փասդարանների, որոնց թիվն ավելի ուշ հասավ 2000-ի⁴⁶⁵:

Բոլոր դեպքերում, լիբանանյան շիաների և Սիրիայի վերաբերմունքն Իրանի ուղղակի միջամտության հարցում, միանշանակ չէր: 1980-ականներին շիա համայնքում իր դիրքերն ամրապնդած Նարին Բերին չէր ցանկանում ազդեցությունը կորցնել դեպի Իրանը կողմնորոշող իր համայնքի նկատմամբ, իսկ Սիրիան չէր ցանկանում թեներանի կղերական վարչախմբին Լիբանանի ներքին գործերում ուղղակի միջամտության հնարավորությունը ընձեռել⁴⁶⁶:

⁴⁶⁴ Adam Shatz, In Search of Hezbollah, The New York Review of Books, Volume LI, Number 7, April 29, 2004, March 31, 2004, p. 41. <http://www.oup.com>.

* Փասդարաններին Լիբանան ուղարկեց Ալ Արրար Սիրիաշնին, որը հետազոտման նշանակիվ էր Իրանում Սիրիայի դիսպան: Այս մասին տե՛ս Robert Fisk, The Great War for Civilization, The Conquest of the Middle East, Fourth Estate, London, p. 197.

⁴⁶⁵ Жиль Делапон, Тегеран укрепляет свое влияние среди ливанских шиитов, ТАСС. БПИ N 173, 2.9.1987г., стр. 19.

⁴⁶⁶ Махмодов В., Ливанская "Хезболла" как "Центр силы" на Ближнем Востоке, Информационный Центр Северная Африка, Ближний и Средний Восток, Исламизм и экстремизм на Ближнем Востоке, М., 2001, стр. 3. <http://www.middleeast.narod.ru/research/livan.htm>.

Այդ պատճառով Իրանը հզոր քարոզարշավ կազմակերպեց Նախի Բերիի նկատմամբ՝ միաժամանակ մեծ զաղափարական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով նրա տեղակալ Հուսեյն Մուսավիին, որն իր կողմնակիցների հետ հեռանալով ԱՍՍԼ-ի շարքերից, նոր կազմակերպություն հիմնադրեց՝ դառնալով Լիբանանում իրանական արտաքին քաղաքականության իրականացման գլխավոր գործիքներից մեկը⁴⁶⁷:

Միևնույն ժամանակ, Նարիկ Բերիի հետ իր քաղաքական հայցըները չկիսող ԱՍՍԼ-ի անդամ Իրաքիմ ալ-Ամինը, Մուհամմեդ Հուսեյն Ֆաղալահի ակտիվ մասնակցությամբ, 1982թ. Բաալեկում ծեռնամուխ եղավ լիբանանյան «Հիգրալլահ» կազմակերպության («Աստծո կուսակցության») ստեղծման գործին: «Հիգրալլահի» առաջնորդների հոգևոր ու ֆինանսական կնքահայրը դարձավ այսրուղի Խոմեյնին, որի հանդեպ իրենց հավատարմությունն արտահայտեցին 1985թ. մամիքնեստում: Կազմակերպությանը Խոմեյնիի տրամադրած լիբանանսական և ուազմական օգնությունը զաղափարականացված էր և խարիսխսկում էր պատմական խոր արմատներ ունեցող շիական դոկտրինայի ու զաղափարական դրույթների⁴⁶⁸ վրա՝ բացառելով միաժամանակ Խսրայելի պետության գոյության փաստի ճանաչումը: Փաստորեն, Խոմեյնիի «իսլամական հեղափոխության արտահանման» գործում «Հիգրալլահը» պետք է ցատկահարթակի դեր կատարեր⁴⁶⁹:

Կազմակերպչական առումով* «Հիգրալլահը» Բեյրութում, Բերայի հովտում ու Հարավային Լիբանանում գործող ազատ կառույց

⁴⁶⁷ Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, Middle East Intelligence Bulletin, vol. 4, No 2, February 2002, p. 1. http://www.mciib.org/articles/0202_11.htm.

⁴⁶⁸ Джон Кифнер, Иран: Религиозные разногласия мешают решению проблем, ТАСС. БПИ N 78, 22.4.1982г., стр. 37.

⁴⁶⁹ Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, Middle East Intelligence Bulletin, Vol. 4 No. 2, February 2002, p. 1.

* Այս մասին տե՛ս «Հարությունյան Ա. Լիբանանյան «Հիգրալլահը» որպես տարածաշրջանային ուազմարադարական գործոն, Սերծավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 124-132:

ունեցող և գաղափարապես մոտ կանգնած խմբերի ու զինյալ ջոկատների դաշինք էր⁴⁷⁰:

1985թ. իրանամետ ծայրահեղական կազմակերպությունների մասնակցությամբ Իրանում կայացած խորհրդաժողովի ժամանակ «Հիգրալլահի», «ԱՍՍԼ Խլամիի» և լիրանանյան այլ խմբավորումների առաջնորդներն իրենց երկարաժամկետ ծրագրային նպատակներ հայտարարեցին ալ-Քուտս (Երուսաղեմ) սուրբ քաղաքի և Լիրանանի հարավի գրավյալ տարածքների ազատագրումը, Խսրայելի՝ մասնավորապես սիոնիզմի, ԱՍՆ-ի, Ֆրանսիայի, Բրիտանիայի և արևամտամետ արաբական վարչախմբերի դեմ պայքարի ծավալումը, նահատակության և ինքնազրեարերման գնով «Աստծո թշնամիների» ոչնչացումը, Լիրանանում Իրանի օրինակով խլամական հանրապետության ստեղծումը:

⁴⁷⁰ ԶՈՒ Էսպոզիտո, Խլամական սպառնալիք. Առասպե՞ն, թե իրականություն, Երևան, 2003, էջ 182:

ԳԼՈՒԽ ՉՈՐԲՈՐԴ

ԱՄՆ-Ի ԻՍՐԱԵԼԱԼԻՔԱՆԱՆՅԱՆ ՊԱՅՍՏԱՎԳԻ (1983թ.)

ՀՈՎԱՆԱՎՈՐԻՑ ՍԻՐԻԱԼԻՔԱՆԱՆՅԱՆ ՊԱՅՍՏԱՎԳԻ (1989թ.) ՀՈՎԱՆԱՎՈՐ

1. ԻՍՐԱԵԼԱԼԻՔԱՆԱՆՅԱՆ 1983Թ. ՊԱՅՍՏԱՎԳԻ

ԱՏՈՐԱԳՐՈՒՄ ԱՄՆ-Ի ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՁՈ: ԱՄՆ-Ի ԻՍՐԱԵԼ ՈԱԶ-
ՄԱԿԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՈՐԾՄԱՐԿՈՒՄԸ

1983թ. Վաշինգտոնը միաժամանակ կանգնած էր Լիբանանում ազգային հաշտության ապահովման, Լիբանանը «Սիրիայի կապաճ-ներից ազատման», երկրի հարավից խրայելական ուժերի դուրս բերման, Ռեյզանի ծրագրի հիման վրա խաղաղության առավել լայն գործընթացի վերականգնման և, ԱՄՆ-ի նախագահական ընտրություններից առաջ ամերիկյան ծովային հետևակայինների վերադարձի ապահովման փոխկապակցված խնդիրների հանգուցարկության առջև⁴⁷¹: Եվ քանի որ նշյալ խնդիրների կարգավորումն անհնարին էր դիտվում Լիբանանում օտարերկրյա ուժերի առկայության պայմաններում, ուստի, 1982թ. վերջին ամիսներին և 1983թ. ողջ ընթացքում, ամերիկյան դիվանագիտությունը փորձում էր ակտիվացնել Լիբանանից խրայելական, սիրիական գործերի ու պաղեստինյան պարտիզանների դուրս բերման, ինչպես նաև երկրում արևմտամետ կառավարության կենտրոնակության ապահովման գործընթացները⁴⁷²:

Սակայն օտարերկրյա ուժերի դուրս բերման ուղղությամբ դեռևս տարեսկզբին Ֆիլիպ Հարիրի վարած բանակցությունները փակույի էին մտել՝ հիմնականում խրայելցիների ոչ կառուցողական մոտեցման պատճառով: Այդ էր պատճառը, որ ամերիկյան որոշ բարձրաստիճան անձինք, մասնավորապես պաշտմախարար Վայնբերգերը, վարչա-

⁴⁷¹ «Gardian», UK, 15.11.1983.

⁴⁷² «Պերսպեկտիվնы международной политики в 1983 году, ТАСС. БПИ N 1, 3.1.1983г., стр. 4-5. Այս գործընթացներին պետք է նպաստեր խաղաղահների բվարանակի ավելացումն ու անվտանգության հարցում նրանց պատասխանատվության բարձրացումը:

կազմին առաջարկում էին Խորայելի դեմ կոչտ դիրքորոշում գրավել⁴⁷³: Չի բացառվում, որ նման դիրքորոշմանը նպաստել էր նաև Լիբանանում գտնվող ամերիկյան ու խորայելական գորամիավորումների և նրանց կառավարությունների միջև նկատվող լարվածությունը⁴⁷⁴: Այդ հոդի վրա ԱՄՆ-ը 1983թ. մարտին դադարեցրեց Խորայելին «F-16» տիպի ինքնարիտների մատակարարման ծրագիրն ու լիբանանյան մարտերի ընթացքում Խորայելի հետ ուսումնական տեղակատվորչան փոխանակումը: ԱՄՆ-ը այն համոզմանն էր, որ հնարավորին չափ շտապ պետք է վերջ դրվեր Լիբանանում խորայելական ուսումնական ներկայությանը: Մինչդեռ Խորայելը Լիբանանից իր ուժերի դուրսերումը պայմանավորում էր սիրիացիների համաժամանակյա հեռացմամբ և Լիբանանի հետ պաշտոնական համաձայնագրի կնքմամբ⁴⁷⁵:

Հարկ է նկատել, որ Լիբանանից խորայելական ուժերի դուրս քերման ուղղությամբ բանակցությունների ճգճգմանը զուգահեռ Բեզզինը խրանում էր գրավյալ տարածքների բնակեցման քաղաքականությունը: Դա Ռեյգանի վարչակազմին զրկում էր խաղաղության հաստատման ուղղությամբ իր մտադրությունների լրջությունն ապացուելու և պաղեստինցիներին ու հորդանանցիներին բանակցությունների սեղանի շուրջ նաև ինարավորությունից⁴⁷⁶: Սակայն արարմների

⁴⁷³ Рассел Уотсон, Джон Уолкотт, Поездки Шульца и Буша: Попытка исправить ущерб представителями дипломатии, ТАСС. БПИ N 30, 11.2.1983г., стр. 2.

⁴⁷⁴ Մի շարք միջադիմքներ էին տեղի ունեցել ամերիկյան ծովային հետևակայինների ու խորայելցի զինվորների միջև՝ Խորայելի պահակազորայինների տարածքային սահմանափակումների շորջ առաջացած տարածայնությունների արդյունքում: Խորայելցիները ծովային հետևակայիններին մնալու դեմ իրենց դնմ ուղղված պարտիզանական զրոյակ կերպով կլասեցնելու մեջ:

⁴⁷⁵ Fred J. Khouri, Աշվ. աշխ., էջ 442:

⁴⁷⁶ Эмманюэль Жарри, Иордано-палестинские переговоры: Возвращение к исходной точке, ТАСС. БПИ N 92, 13.5.1983г., стр. 35. Լիբանանի իիմնախմերի մասին համատեղ հայտարարությամբ 1983թ. մարտի 7-11-ին Դեյլում կայացած 7-րդ համաժողովի ընթացքում հանդիս եկան շմացման երկրների պետությունների և կառավարությունների դեկալիաները: Այս մասին տես' «Палестинская проблема. Документы ООН, международных организаций и конференций. Из политической декларации VII конференции глав государств и правительств неприсоединившихся стран (Дели, 7-11 марта 1983 года), XI. Вопрос о Ливане, М., 1984, стр. 153-54; Աշարությունն, ԱՄՆ-ի վարձ քաղաքականությամբ Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և ճգմաժամի ընթացքում(1975-1991թ.), թեկնածուական ատենախոսություն, ՀԱՎԵՆՎԱԾ ՎԵՅԵՐՈՐԴ:

մոտ շատ ավելի տարակուսանք առաջացրեց Լիբանանի քանակցությունները փակուղուց դուրս բերելու և խաղաղության ամերիկյան ծրագրի հանդեպ չափավոր արաբական վարչակարգերի աջակցությունն ապահովելու նպատակով ՍԱ նախատեսվող այցից պետքարտուղար Շուլցի հրաժարման փաստը։ Սա խոսում էր Ռեյզանի ծրագրի սատարման հարցում Շուլցի շահագրգուվածության բացակայության մասին։ Դեռ ավելին, Ռեյզանի օգնականների համաձայն՝ անգամ նախագահն էր թերահավատությամբ վերաբերվում համապարփակ խաղաղության հաստատման հնարավորությանը։ Նրանց կարծիքով՝ Լիբանանից օտարերկրյա գործերի դուրսերման պայմանագրի կոնքումից հետո նախագահը պատրաստվում էր ընդհանրապես «Ճերագատվել ՍԱ-ի լարիբինթոսից»⁴⁷⁶։

Սակայն 1983թ. ապրիլի 18-ին Լիբանանի հակամարտությունը Վաշինգտոնի համար դրամատիկ նոր շրջադարձ ունեցավ, երբ Քեյրուրի ամերիկյան դեսպանատան մոտ «Հիգրալլահի» կազմակերպած ահարեւելական գործողության արդյունքում ավերվեց կառույցի մեծ մասն ու զոհվեցին 63 մարդ, որոնցից 17-ը՝ ամերիկացիներ։ Միջադեպն առավել սուր բնույթ հաղորդեց Լիբանանում ամերիկյան ռազմական՝ հատկապես խաղաղապահների ներգրավվածության ընդլայնման շուրջ Սայիտակ տանը բռնկված վեճերին։ Այն ամերիկյան ուժերին լուրջ վտանգի տակ էր դնում, հատկապես առավել մեծաքանակ սիրիական ու խրայելական ուժերի միջև միջնորդական գործույթների իրականացման պարագայում։ Ստեղծված իրավիճակում ԱՍԴ-ն անհրաժեշտ էր գտնում ապահովել նախ՝ խրայելայիրանանյան, այնուհետև՝ խրայելասիրիական պայմանագրերի կնքումը՝ նախապատվությունը տալով առաջինին և առավել ուշ վույշի հետանկարով հետաձգերվ երկրորդը։ Շուլցի կարծիքով՝ Լիբանանում Սիրիայի, ԽՍՀՄ-ի, ինչպես նաև պաղեստինցիների և դրուզների դիրքերն ու ազդեցությունն այնքան էին բոլացել պատերազմի արդյունքում, որ վերջիններս ի վիճակի չէին դիմակայել Խրայելի ու Լիբանանի միջև ստորագրվելիք ցանկացած համաձայնագրի։ Այդ էր թերևս պատճառը, որ

⁴⁷⁶ Карен Эллиот Хаус, Истоки провала Европейского плана Рейгану следует искать дома, ТАСС. БПИ N 81, 26.4.1983г., стр. 12-13.

Ծուցն ուշադրություն չդարձրեց ինչպես Սիրիայի պահանջներին*, այնպես էլ ԱՍ-ի գծով ամերիկյան որոշ դիվանագետների խորհրդականը: Վերջիններիս կարծիքով՝ Սիրիայի և Լիբանանի ընդդիմադիր տարրերի, արաքական երկների կարծիքների ու շահերի անտեսման գնով սեպարատ ու միակողմանի համաձայնագրի կնքումը կիսարիսեր Լիբանանի քաղաքական ուժերի միջև առանց այն էլ փխրուն հալվա-արակշությունը: Ծուցը ոչ միայն վստահ էր սատոցիների օժանդակությամբ* սիրիական ու լիբանանյան ընդդիմության աջակցությունը ձեռք բերելու, այլ սիրիա-խորայելական ուժերի շուտափույթ դուրսբ-րումից հետո, ԱՍ-ի խաղաղ գործընթացի վրա իր ջանքերի կենտրոնացման հնարավորության հարցում⁴⁷⁷: Բացի այդ, ԱՍ-ի նախազա-հական ընտրությունների նախաշեմին Վաշինգտոնը՝ հակվելով դեպի Թել-Ավիվը՝ գտնում էր, որ ուժեղ Խորայելը Սիրիայի տարածաշրջա-նային հավակնությունները մեղմելու միջոց կարող էր ծառայել: Ահա այսպես էր Ծուցը որոշել հասնել պետքարտուղարի պաշտոնում իր դիվանագիտական առաջին հաղթանակին՝ անձամբ գրադիվելով մարք-ային դիվանագիտությամբ՝ գործնականում վտանգի տակ դնելով իր հեղինակությունը⁴⁷⁸:

Սինջեռ դժվար էր պատկերացնել Վաշինգտոնի վարած լիբա-նանյան քաղաքականությունն առանց Սիրիայի հետ համագործակցության, նամանավանդ, որ Հաֆիզ ալ-Ասադի համար Լիբանանից հե-ռանալու դիմաց վճարվող գինը չափազանց մեծ էր: Սիրիան նվազագույն ոխսկի ու ծախսերի գնով ի վիճակի էր պաղեստինյան և լիբա-նանյան մարտիկներին ու միլիցիային օգտագործել ինչպես Խորայելի, այնպես էլ ԲՈՒ-ի դեմ: Դեռ ավելին, 1983թ. Սիրիայի և ԽՍՀՄ-ի միջև սուրագրված պայմանագրով նախատեսվող կատարյալ ռազմական

* Սիրիան պահանջում էր իրականացնել ՄԱԿ-ի ԱԽ-ի 1982թ. հունիսյան բանաձեռ, որի համաձայն Խորայելը պարտավոր էր առանց նախապայմանների Լիբանանից դուրս բերել իր գլուխած ուժերը:

• Սատույան Արարիան Սիրիայի նկատմամբ զավիչ ազդեցություն չգործադրեց:

⁴⁷⁷ Fred J. Khowari, Աշվ. աշխ., էջ 442-443: Նախքան 1983թ. բանակցություններում որոշ առաջնադաշտում նկատվելը, ԱՍ-ը Լիբանանին արտակարգ միջոցառումների նախ-տակը 82 մն., իսկ բնակարանաշինության և կարևոր ծառայությունների համար՝ 30 - մն. ԱՍ-ի դուլարի օգնություն տրամադրեց:

⁴⁷⁸ «Gardian», UK, 15.11.1983.

տեխնիկայի՝ տրամադրումը Դամասկոսին գոտեպնդել էր լիբանանյան իրադարձություններն իր վերահսկողության տակ պահելու որոշումը կայացնելիս: ԽՍՀՄ-ը զինվորական մեծաթիվ անձնակազմ և տեխնիկա էր տրամադրել Սիրիային՝ իր միջամտելու պատրաստակամությունը հայտնելով նաև Դամասկոսի դեմ հնարավոր ռազմական գործությունների դեպքում:

Ուշագրավ է նաև, որ 1983թ. մայիսի 10-ի ՏԱՍՏ-ի հայտարարության մեջ ԽՍՀՄ-ը դատապարտեց Լիբանանի բաժանման ամերիկա-խրայելական ծրագրերը՝ պահանջելով ամերիկյան, խրայելական և օտարերկրյա մյուս ուժերը դուրս բերել երկրից⁴⁷⁹:

Սիրիայի նկատմամբ ռազմութիւն կիրառումն աննպատակահարմար գտնելով, Վաշինգտոնն այժմ պետք է հենվեր Լիբանանի դրամատիկ քաղաքական զարգացումների, կամ էլ՝ ուղղակի կամ անուղղակի կերպով երկրում Խսրայելի ռազմական գերազանցությունը պահպանելու վրա: Այդ էր հավանարար պատճառը, որ խրայելական ազգեսիայի ընթացքում կենսական կարևորություն ներկայացնող բազմաթիվ դիրքերից դուրս մղված և ծանր ռազմական կորուստներ կրած սիրիական ուժերին լիբանանյան իրադարձություններում շուրջ մեկ տարով իրրե ամենազդեցիկ արտաքին գործոն փոխարինելու եկավ Խսրայելը⁴⁸⁰: 1983թ. հունիսին Վաշինգտոնը հայտարարեց Խսրայելի հետ 1981թ. նոյեմբերի 30-ի «ռազմավարական համաձայնագրի» գործարկման անհրաժեշտության մասին: Նոյեմբերի 29-ին «ռազմաքաղաքական համաձայնագրի» ուղղությամբ բանակցություններից հետո համաձայնագիր կնքվեց, որի շրջանակներում ստեղծված համատեղ հանձնախումբը պետք է առաջնակարգ ուշադրություն դարձներ ՍԱ-ում ամերիկախրայելական շահերի դեմ ԽՍՀՄ-ի հնարավոր

* Կատարելագործված ցամաք-օդ տիպի երթուններ, օդային պաշտպանության համակարգեր:

⁴⁷⁹ Арабо-израильский конфликт и палестинская проблема, ВГБИЛ, Москва, 1989, стр. 27. Այս մասին տես՝ նաև Վнешняя политика Советского Союза и международные отношения, 1983...1984, М., стр. 81-82.

⁴⁸⁰ Don Peretz, նշվ. աշխ., էջ 392:

սպառնալիքին⁴⁸¹: Նշենք, որ Իսրայելի հետախուզական ծառայության հետ ԿՀՎ-ի կնքած պայմանագիրը ԿՀՎ-ի պատմության մեջ օտարերկրյա որևէ հետախուզական ծառայության հետ կնքված ամենահամապարփակ պայմանագիրն էր⁴⁸²:

Մայիսին Ծուցը մեկնեց ՍՍ. Բեյրութի և Թել-Ավիվի միջև՝ Լիբանանից խրայելական ուժերի դուրս քերման ուղղությամբ համաձայնության ձեռք քերման նպատակով, որն իր հերթին Դամասկոսի և Բեյրութի միջև նմանատիպ համաձայնագրի կնքման նախադեպ պետք է ծառայեր: ՍՍ-ի մի շարք մայրաքաղաքների միջև ապրիլ-մայիս ամիսներին 17-օրյա մաքոքային անցուղարձերից հետ, 1983թ. մայիսի 17-ին Ծուցը հայտարարեց, որ Լիբանանի տարածքի մեծ մասից հեռանալու ուղղությամբ Իսրայելի հետ մասնակի համաձայնագիրը⁴⁸³ ձեռք է քերվել: Համաձայնագրի գաղտնի մասով Իսրայելն ԱՍՆ-ից պահանջում էր խրայելական ուժերի դուրս քերումն իրականացնել Սիրիայի և ՊԱԿ-ի ուժերի հետ միաժամանակ: ԱՍՆ-ի կառավարության անոնից համաձայնագիրը ստորագրել էր ՍՍ-ում նախագահի հատուկ ներկայացուցիչ Մ. Դրայաները⁴⁸⁴:

Սակայն մայիսի 7-ին Դամասկոսում Ծուցի հետ հանդիպման ընթացքում Ասադը, ընդառաջ չգնալով պետքարտուղարին, այդուհետ ընդհանրապես հրաժարվեց Ֆ. Հարիրի հետ Սիրիայի դիրքորոշումը մանրամասն քննարկելու նպատակով հանդիպումներից: Պետրարտուղարին շիազողվեց նաև հովիսի սկզբին մերձավորարևելյան այցի շրջանակներում Ասադի հետ հանդիպման ընթացքում հստակեցնենել Դամասկոսի դիրքորոշումը և կանախատեսել նրա քայլերը: Իրականում այս այցը ոչ միայն ապացուցեց, այլ ընդգծեց ՍՍ-ում ամերիկյան

⁴⁸¹ Стивен Спигель, К американо-израильскому стратегическому партнерству, ТАСС. БПИ N 38, 24.2.1986, с. 21-22.

⁴⁸² Петрусенко В.В., Белый Дом и ЦРУ, Москва, 1985, стр. 267.

⁴⁸³ Պայմանագրի տեսքը տես՝ Jewish Virtual Library, A Division of The American-Israeli Cooperative Enterprise, Peace Agreement Between Israel and Lebanon (May 17, 1983). http://www.jewishvirtuallibrary.org/jsource/History/israel_lebanon_83.html; Ա. Հարությունյան, ԱՍՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկորոր քաղաքացիական պատրիարքի և զգմանամի ընթացքում (1975-1991թթ.), բնկնածուական ատենախոսություն, ՀԱՎԵԼՎԱԾ ՅՈՒԹԵՐՈՂՈՐԴ:

⁴⁸⁴ Павлов А., Եղվ. աշխ., էջ 34:

բաղադրականության կրած անհաջողությունը, քանի որ ճախողվեց ոչ միայն Ռեյգանի ծրագրի առաջին՝, այլ երկրորդ մասը՝ կապված Լի-րանանից օտարերկրյա ուժերի դուրս քերման հետ⁴⁸⁵:

Փաստորեն, ամերիկյան ծրագրերի ճախողման զիսավոր պատճառը Միրիան էր: ԱՍ-ի գծով ԱՄՆ-ի փորձագետների համաձայն՝ դա բացատրվում էր Ռեյգանի վարչակազմի կողմից արմատական պետությունների հետ գլուխ հանելու անկարողությամբ: Մյուս պատճառն ամերիկյան ծրագրերում Սաույան Արարիայի^{*} ազդեցությունն օգտագործելու հարցում ԱՄՆ-ի դմկանությունը կամ անկարողությունն էր⁴⁸⁶:

Հատ եռթյան, Ծովայի ԱՍ կատարած հովիսյան այցելությունն ամերիկյան նախաձեռնությունը փակուսի մտցրեց: Այդ էր պատճառը, որ Սայփակ տունը փորձում էր, նախքան հովիսի վերջին նախատեսվող Ժմայելի և Բեգինի վաշինգտոնյան այցելությունը, ԱՍ-ում ամերիկյան քաղաքականության համար նոր ուղիներ հարթել: Խնդիրն այն է, որ այս անգամ Լիրանանի իրավիճակի ապակայունացման դեպքում Վաշինգտոնի վճարած գինն ավելի բարձր կարող էր լինել՝ երկրում ամերիկյան ծովային հետևակայինների, Լիրանանի իշխանության զիլսում Վաշինգտոնի աջակցությունից օգտվող կառավարության առկայության և ԱՄՆ-ի հովանու ներքո կնքված պայմանագրի ճախողման պարագայում⁴⁸⁷:

1983թ. հովիսի 28-ին Ռեյգանը հանդիպում ունեցավ նաև Խորայիլի պաշտոնախարարի ու արտաքին գործերի նախարարի հետ, որի ընթացքում որոշվեց իրագործել խորայելական գործերի դուրս քերման վերաբերյալ համաձայնագրի առաջին փուլը: Այն իրու լժակ պետք է

* Հունիսի մերժում ստանալով Արաֆարից, հայտարարեց, որ չի կարող մասնակցել քանակցություններին:

⁴⁸⁵ «Washington Post», 9.7.1983.

* Միրիան հավամարար իր կողմն էր գրավել սառցիներին: Բացի այդ, ԱՄՆ-ի քաղաքականության անհաջողությունն անվտահություն էր առաջացրել Ռիյադի մոտ:

⁴⁸⁶ «Washington Post», 9.7.1983.

⁴⁸⁷ Նույն տեղում:

օգտագործվեր Դամասկոսի դեմ՝ սիրիական ուժերի դուրս քերման պահանջով⁴⁸⁸.

1983թ. սեպտեմբերի 29-ին ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտաքին գործերով հանձնաժողովի առջև իր ելույթում Շուլցը հայտարարեց, որ «Լիբանանի մարտահրավերը մեր ազգի շահերը շոշափող մարտահրավեր է... Այստեղ դրվող խաղաքարտերը կապված են ամերիկյան արտաքին քաղաքականության նպատակների ու սկզբունքների հետ»: Վերջիններիս տակ նկատի էր առնվում օտարերկրյա բոլոր ուժերի դուրս քերումը, անկախի, ինքնիշխան Լիբանանի գոյությունը, Խարայելի հյուսիսային սահմանի անվտանգության ապահովումը: Շուլցի համաձայն՝ խնդրահարույցը Սիրիան էր, որն արգելակում էր այդ քաղաքականության երկու գլխավոր նպատակների կենսագործումը՝ օտարերկրյա ուժերի դուրս քերումն ու ազգային հաշտության կայացումը՝ օգտագործելով Լիբանանի ներսում ունեցած լծակները⁴⁸⁹:

Սակայն սիրիական ուժերի չհեռացման պայմաններում, Վաշինգտոնու 1983թ. երկրորդ կեսից փորձում էր արդարացնել Խարայելի ազլեսիան՝ վերջինիս հորդորելով ոչ միայն շարունակել պահպանել իր ներկայությունը Լիբանանում, այլ օգտագործել իր ուազմական իշխանությունը՝ Սիրիային հակագլելու, Ամին Շմայելի կառավարությանը սատարելու և ԱՄՆ-ին լիբանանյան ճգնաժամից ծերքազատելու հարցում աջակցելու նպատակով⁴⁹⁰: Փաստորեն՝ ԱՄՆ-ի և Խարայելի միջև ուազմակարական համագործակցության վերագործարկումը միաժամանակ Լիբանանից Վաշինգտոնի հեռացումը հեշտացնելու և Խարայելի հետ Լիբանանի հակամարտությունը կանխելու նպատակ էր հետապնդում⁴⁹¹: Ըստ Եվրյան, Թել-Ավիվը դարձել էր ամերիկյան մերձավորարևելյան այդժամ արդեն ուժային քաղաքականության և ուզմակարության կենտրոնական տարրը:

⁴⁸⁸ Kiron K. Skinner, Annelise Anderson and Martin Anderson, նշվ. աշխ., էջ 712:

⁴⁸⁹ Мирский Г., նշվ. աշխ., էջ 24:

⁴⁹⁰ Robert O Freedman, նշվ. աշխ., էջ 79:

⁴⁹¹ «Gardian», UK, 15.11.1983.

Այսուհանդերձ, Խսրայելին շիաջողվեց կենսագործել Նահանգ-ների կողմից իրեն վերապահված քաղաքականությունը, քանզի Ասադն իր գործերը Լիբանանից դուրս բերելու փոխարեն, աջակցություն ցուցաբերեց երկրում իրենց դիրքերի վերականգնման նպատակով Դամասկոսից ռազմաքաղաքական աջակցություն հայցող լիբանանյան շիաներին, դրուգներին, պաղեստինցիներին և զինված այլ խմբավորումների⁴⁹¹:

Հ. 1983թ. ԱՄ-Ի ՌԱԶՍԱԿՄ ՄԻՋԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀԱԿԱՍՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ: ՄԻՐԻԱՅԻ ՈՒ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԶԱԽԵՐԻ ԴԻՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Թեև լիբանանյան խորհրդարանը 1983թ. հունիսին հավանություն տվեց լիբանանախրայելական համաձայնագրի ստորագրմանը, այնուհանդերձ, այն չեր վակերացվում լիբանանյան ճախերի և Սիրիայի դիմակայության պատճառով: Լիբանանի ոչ միայն մուսուլման, այլև քրիստոնյա համայնքները՝ դեմ էին պայմանագրին՝ Խսրայելին շատ մեծ հնարավորություններ ընձեռելու, լիբանանի ինքնիշխանությունն իր սեփական տարածքի նկատմամբ սահմանափակելու և երկրին արարական համերաշխությունից ու լոյալությունից գրկելու պատճառով⁴⁹²:

Լիբանանախրայելական պայմանագրի ստորագրումը բավարար նախապայման չեղավ, որպիսի սիրիական ուժերը դուրս բերվեն Լիբանանի արևելյան ու հյուսիսային ռազմահանգրվաններից: Դեռ ավելին, լիբանանյան կառավարությունը դատապարտեց Խսրայելի

* Ամին Ժմայելի բարեփոխումները մերժեցին Լիբանանի ճախերը՝ 1983թ. հունիսի 23-ին ձևավորելով «Ազգային Փրկության նակատ» (ԱՓԾ) կողմող մարտավարական դաշինքը, որի արտաքին հովանավոր Սիրիան էր: Նրանց նպատակը լիբանանախրայելական համաձայնագրի տապալումն ու փաղանգավորների քաղաքական գերիշխանության վերացումն էր: Այս մասին տես' Նուևայա история арабских стран Азии (1917-1988), նշվ. աշխ., էջ 151:

* Խոսքը զնում է հոյս ուղղափառ, հոյս կարողիկ, հայ և հյուսիսային Լիբանանի մարդու՝ փաղանգավորներին չպատկանող համայնքների մասին:

⁴⁹¹ Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 443-444:

հետ ուղղակի համագործակցության միջոցով Լիբանանից սիրիական ուժերի հեռացման ուղղված Ամին Ժնայելի ուղևոքիծը: Խակ Լիբանանի մարտնչող խմբավորումներից դաշինքների ձևավորման ուղղությամբ Ժնայելի գործադրած բազում ջանքերը ճախողվեցին մերք մի խմբավորման, մերք մյուսի կողմից՝ քուլացնելով նախագահի իշխանությունը:

Վաշինգտոնը մտավախություն ուներ, որ սիրիամետ դրուզների վերահսկողության տակ գտնվող Շուֆ լեռներից^{*} խրայելական ուժերի դուրս քերումը կարող էր Լիբանանի բաժանման նախադրյալ ծառայել՝ նպաստելով Սիրիայի դիրքորոշման կարծեցմանը: Հետևարար, ԱՄՆ-ը փորձում էր Դամասկոսի հետ երկխոսության վերականգնման հարցում ժամանակ շահելու նպատակով Խրայելին համոզել միասնամանակ շիետանալ գրադեցրած դիրքերից: Սակայն Թել-Ավիվի հետ համաձայնության զայտվ, Վաշինգտոնը ստիպված էր (օգոստոսին) ընդունել Խրայելի զինուժի հեռացման որոշումը, որը սկսվեց 1983թ. սեպտեմբերի 4-ից: Խրայելական ուժերի հեռացումից հետո սիրիական ուազմական աջակցությունից օգտվող դրուզները Շուֆում հալքանակ տոնեցին մարտնիների նկատմամբ՝ վրեժիսնդիր լինելով Խրայելի պաշտպանությունից գրկված իրենց հակառակորդների նկատմամբ: Վերջիններիս օգնության հասան ԲՈՒ-ը՝ Լիբանանի բանակին նյութատեխնիկական աջակցություն տրամադրելով⁴⁹³: Իբրև պատասխան քայլ, դրուզների ջոկատները ոմբակոծեցին Բեյրութի օդանավակայանում գտնվող ամերիկյան հետևակայինների դիրքերը⁵:

Փաստորեն, աստիճանաբար ներքաշվելով խաչաձև հրածգության մեջ, ԲՈՒ-ը վերածվեցին լիբանանյան ընդդիմադիր խմբակցությունների հարձակումների թիրախի: Ի հեճուկս հակամարտությանը զինված միջամտությունից խուսափելու և չեզոք դիրք գրավելու շուրջ Ուեյզանի նախնական հավաստիացումներին, արար-խրայելական

* Լիբանականամի նահանգ՝ ալ-Շուֆի մարզ:

⁴⁹³ Perlutter Amos, նշվ. աշխ., էջ 442:

• ԲՈՒ-ի և ԱՄՆ-ի ծովային հետևակայինների տեղակայման մասին տես՝ ՀԱՎԵԼՎԱԾԸ: Արյուրը՝ Fisk Robert, Pity the Nation, The Abduction of Lebanon, N.Y., 1990. p. 2.

հակամարտության պատմության ողջ ընթացքում առաջին անգամ ԱՄՆ-ը՝ չսահմանափակվելով գրոհների հակահարվածներով, սեպտեմբերի 20-ից բացահայտ ու ազմական առճակատման մեջ մտավ արարական կողմի հետ: Իր գործողություններն արդարացնելով իրեն լիբանանյան բանակի և Բեյրութում ամերիկյան ու զիվանագիտական աշխատակազմի, ծովային հետևակայինների կողմից «հարձակողական ինքնապաշտպանություն», Վաշինգտոնը Լիբանանի տարածքը ոմբակոծությունների ենթարկեց ծովից ու օդից: Հինգ օր անց, Սպիտակ տունը ծովային հետևակայիններին հրահանգավորեց գործի դմել ու ազմածովային հրետանին՝ և ավիակիրների ինքնարինները, իսկ ԲՈՒ-ի դիրքերի՝ սպառնալիքի տակ հայտնվելու դեպքում հակահարձակման անցնել: Ուշագրավն այն է, որ երբ լիբանանյան բանակի գորամիավորումները մուսուլմանական միլիցիայի կողմից շրջափակման մեջ հայտնվեցին, Ուեյգանը *Սուր ալ-Հարրը*⁴⁹⁴ հայտարարեց ԱՄՆ-ի ռազմավարական շահերին ուղղված սպառնալիք: Նախագահի կարծիքով՝ Լիբանանում հակահարձայան ուժերի հաղթանակի դեպքում վտանգի տակ էին հայտնվում ոչ միայն ԱՄՆ-ի արևելամիջներկածովյան շահերը, այլ ողջ ԱՄՆ-ի կայունությունը⁴⁹⁵: Ուեյգանի հրահանգով Բեյրութի ծովակին մոտեցած ամերիկյան 6-րդ նավատորմի հրթիններն ու ծովային հետևակայինները հրետակոծության ենթարկեցին Սուր ալ-Հարրի դիրքերը⁴⁹⁶: ԱՄՆ-ի վարչակազմը կյանքի կոչեց տարածաշրջանային մակարդակով «ուղղակի հակամարտության» դոկտրինան⁴⁹⁷: Լիբանանի մուսուլմանները Սուր ալ-Հարրի գնդակոծությունից հետո ԱՄՆ-ին մեղադրեցին ստանձնած առաքե-

Բեյրութի մոտ կայանված էին տասնյակ ռազմանավեր, այդ թվում հսկայական ավիակիր «Էյզենհաումերը», որի տախտականածի վրա կար 90 ռազմական ինքնարին, «Տարավան» ուղղարկուակիրը՝ համարված «Հարիկը» ինքնարիններով և «Կորրա» ուղղարիններով: Բացի 1200 ծովային հետևակայիններից, ԲՈՒ-ում դնանտային նավերի վրա առկա էին Հնդկական օվկիանոսից թերված 2500 ծովային հետևակայիններ, «U-60» տանկեր, լողացող գրահափոխադրամիջոցներ, հակատանկային «Թոռ» տիպի հրթիններ, հրետանի:

Լինուայիրանանու դրույների դիրքերը:

⁴⁹⁴ David Lamb, *The Arabs, Journey Beyond The Mirage*, New York, 2002, p. 83.

⁴⁹⁵ «Nouvel Observatoire», Paris, 23.9.1983.

⁴⁹⁶ Современные Соединенные Штаты Америки, նշ. աշխ., էջ 308:

լուրջունից շեղվելու մեջ՝ գտնելով, որ ծովային հետևակայինները գործնականում պաշտպանում էին Խորայելի շահերը՝ միաժամանակ վերածվելով լիրանամյան քրիստոնյաների պահակազորի⁴⁹⁷:

Նշենք, որ նախագահ Ռեյգանին, այնուամենայնիվ, հաջողվեց կոնգրեսից բույլտվորթուն ստանալ՝ Լիրանամում ևս 18 ամսով ամերիկյան ծովային հետևակայինների առաքելության ժամկետի երկարաձգման ուղղությամբ:

Միևնույն ժամանակ նախագահը հաշվի էր առնում ԽՍՀՄ-ի և Սիրիայի հակագրեցության հնարավորությունը, քանի որ ամսիներ առաջ Դամասկոսը ստեղծել էր ժամանակակից հրթիռներով համալրված հզոր ՀՕՊ համակարգ: Հետևաբար կասկածահարույց էր Ժմայելի վարչակարգի փրկման նպատակով այդ հրթիռների դեմ պայքարում ԱՍՆ-ի օդաչուների կյանքը գոհարերելու Ռեյգանի պատրաստակամությունը⁴⁹⁸:

Եվ այսպես, Ժմայելի կառավարության և նրա փաղանգավորների հսկողության տակ գտնվող քանակի կողմից աստիճանաբար ներհամայնքային պայքարի մեջ ներքաշված Վաշինգտոնը լիրանամցիների աշքերում դարձավ իշխանության համար մղվող կատաղի մրցակիցներից մեկը: Լիրանամում Վաշինգտոնի «կայունացնող ու միջնորդական» դերակատարությունը թերահավատություն առաջացրեց ինչպես արարական շափակոր վարչախմբերի, այնպես էլ Վաշինգտոնի արևմտաեվրոպական գործընկերների՝ մոտ: Այս զարգացումները նպաստեցին ԽՍՀՄ-ի հետ Սիրիայի մերձեցմանը՝ նպաստելով տարածաշրջանում Սոսկայի ազգեցության մեծացմանը:

ԽՍՀՄ-ն ԱՍՆ-ին և Խորայելին մեղադրեց Լիրանամում «պատերազմի նոր փուլ» ծավալելու մեջ, իսկ Սիրիայի կառավարությանը գգուշացրեց, որ իրավիճակի սրումը կարող է իր կողմից պայքարի մեջ ներգրավվելու հիմք ծառայել: Մեպտեմբերի 21-ին նախագահ Ռեյ-

⁴⁹⁷ David Lamb, նշվ. աշխ., էջ 84:

⁴⁹⁸ Рене Бакман, Бейрут: На авансцену выходит американская морская пехота, ТАСС. БПИ N 206, 21.9.1983г., с. 34.

• Ֆրանսիան՝ Լիրանամում «փաղաղարք» ջամքը գործադրող ԱՍՆ-ի գլխավոր գործընկերը, թմբադատեց Վաշինգտոնի գործությունները: Ֆրանսիացի խաղաղապահներն այդժամ տվել էին 18 զոհ և 31 վիրավոր:

գանն իր պատասխան ելույթում մեղադրեց թե՛ Սիրիային, և թե՛ ԽՍՀՄ-ին՝ ստեղծված իրավիճակում անխոհեմություն ցուցաբերելու մեջ։

Փաստորեն, ԱՄՆ-ը որքան ամրապնդում էր իր կապերը փառանգավորների հետ՝ ընդդեմ դրուզների և շիաների, այնքան միակողմանի և կողմնակալ էր դառնում նրա դիրքորոշումը՝ միաժամանակ ուժեղացնելով Ասադի դիրքերը։ Եվ որքան շատ էր Վաշինգտոնը լիրանանյան հակամարտությունն ու Սիրիայի դիրքորոշումը դիտում Արևելք-Արևմուտք առճակատման ոսպնյակով, այնքան նպաստում էր Ասադի և նրա լիրանանյան գործընկերների մերձեցմանը ԽՍՀՄ-ի հետ⁴⁹⁹։

Ի վերջո, 1983թ. սեպտեմբերի 25-ին Սիրիայի և Սաուդյան Արաբիայի միջնորդությանը լիրանանյան բոլոր հակամարտող կողմերի միջև հրադադարի վերաբերյալ համաձայնագիր ստորագրվեց։ Վերջինս արտահայտում էր Լիրանանի քաղաքական քատերաբեմում ուժերի նոր հարաբերակցությունը՝ նախանշելով ինչպես ճգնաժամի կարգավորման գործում Վաշինգտոնի, Թել-Ավիվի ու նրանց լիրանանյան դաշնակիցների կրած ճախողումը, այնպես էլ լիրանանյան գործերում Սիրիայի ու լիրանանյան ճախերի կողմից նախաճեռնության ստանձնումը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի դիրքերի ուժեղացումը։

Վերջապես, 1983թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը ժննաւմ Լիրանանի հակամարտող կողմերի միջև Ազգային երկխոսության կայացման նպատակով գումարված համաժողովի՝ արդյունքում վերահստատվեց Լիրանանի՝ իրեն արարական պետության կարգավիճակը, որի հիման վրա էլ համաժողովն արտահայտվեց մայիսի 17-ի լի-

Փոխադարձ մեղադրանքներն առավել սպառնալից բնույթ էին ստացել ԽՍՀՄ-ը որպես «զարիքի կայսրություն» Ռեյզանի պնդումը վերահստատելու հողի վրա, եթե 1983թ. սեպտեմբերի 1-ին ԽՍՀՄ-ը պայքարեց Կորեայի ճարդատար ինքնարիոն իր 269 ուղևորներով։

⁴⁹⁹R.G. Neumann, Assad and the Future of the Middle East, Foreign Affairs, L., 1983/1984, Vol. 62, N 20, p. 246.

Համաժողովին նախակցում էին նախագահ Ամին Ժմայելը, Ազգային Փրկության նախատի՛ ԱՓՃ-ի առաջնորդ Վահիդ Չումբարը, Ռաշիդ Զարամեն, Սուկիյման Նրանժիեն, ԱՍԱՀ-ի ղեկավար Նարին Բերին, աջ-քրիստոնեական առաջնորդներ՝ Պիեր Ժմայելը, Քամիլ Շամունը, Սիրիայի արտգործնախարար Արդիլ Խալիֆ Հադրայը և Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչը։

բանամախրայելական համաձայնագրի մերժման օգտին: Դեռ ավելին, Ամին Ժմայելը, Լիբանանից իսրայելական ուժերի դուրս բերման վերաբերյալ այլ բանածև մշակելու նպատակով, հրահանգավորվեց ուղևորվել Վաշինգտոն, որը սակայն մերժվեց Ռեյգանի կողմից՝ նպաստելով զինված հակամարտության սրմանը⁵⁰⁰:

Ուշագրավն այն է, որ այդ ժամանակամիջոցին ԱՄՆ-ը, ի դեմս պետքարտուղար Շուլցի, զրադաշտ էր Թել-Ավիվի հետ «ռազմավարական համաձայնագրի» (հոկտեմբերի 18-ին) վերագործարկման խնդրով: Արդեն իսկ հոկտեմբերի 29-ին Ռեյգանը ստորագրեց Խրայելի հետ ռազմական դաշինքի վերաբերյալ Ազգային Անվտանգության Խորհրդի 111-րդ հրամանը (National Security Decision Directive 111)⁵⁰¹: Նոյեմբերի 29-ին Վաշինգտոն ժամանեց Խրայելի վարչապետ Շամիրն ու պաշտնախարար Արենը և պաշտոնապես հայտարարվեց 1981թ. նոյեմբերի 30-ի համաձայնագրի և խրայել-ամերիկյան ռազմական դաշինքի վերագործարկման մասին⁵⁰²: Կարծիք կա, որ այդպիսով Վաշինգտոնը փորձում էր իր ազդեցության լծակները մեծացնել ԱՄ-ում ամերիկյան շահերի առնչությամբ Խրայելի կայացրած որոշումների վրա, որը բոլորովին վերջերս մերժել էր կենտրոնական Լիբանանում խրայելական ուժերի պահպանման ռազմավարական նշանակություն ունեցող խնդրանքի կատարումը⁵⁰³:

Սակայն շուտով Վաշինգտոնը Լիբանանում հայտնվեց շատ ավելի բարդ իրավիճակի առօք, որից դուրս գալու հարցում նրան ի գործ չէր օգնել անգամ վերոնշյալ համաձայնագրի վերագործարկումը: Խնդիրն այն է, որ 1983թ. հոկտեմբերի 23-ին Բեյրութի ԱՄՆ-ի դեսպանատան, ծովային հետևակայիններին պատկանող շտարակայանի և օդանավակայայնի զինանոցների, ինչպես նաև ֆրանսիական խաղաղապահների շտարակայայնի նկատմամբ միջազգային ահարեկության պատմության մեջ «Հիգրալլահի» առաջին ինքնասպան պայք-

⁵⁰⁰ Don Pcretz, նշվ. աշխ., էջ 393:

⁵⁰¹ Caspar. P. Weinberger, Fighting for Peace: Seven Critical Years in the Pentagon, N.Y., 1990, p. 154-55.

⁵⁰²Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը Խրայելա-Պաղեստինյան հակամարտության համեմատ, Երևան, 2001, էջ 26:

⁵⁰³ B.W. Quandt, նշվ. աշխ., էջ 259:

ցումներով ահաբեկչական գրոհներ իրականացվեցին, որոնց գոհ գնացին 241 ամերիկյան ծովային հետևակային⁵⁰⁴, 58 ֆրանսիացի պարաշյուտիստ խաղաղապահներ և խրայելցի զինվորականներ: Ահաբեկչական գրոհներից անմիջապես հետո Կոնգուստում դեմոկրատները բանաձև մշակեցին ծովային հետևակայինների «շտապ և կանոնավոր դուրս բերման» վերաբերյալ, սակայն Ռեյզանը հայտարարեց, որ ահաբեկիչները չեն կարող ԱՄՆ-ին դուրս մղել Լիբանանից կամ ԱՄ-ից: Նախագահը գտնում էր, որ «ամերիկացիները պարտավոր են առավել վճռական լինել, քան երբեմ, որպեսզի ահաբեկիչները չկարողանան իրենց ծեռքը վերցնել աշխարհի այդքան կենսական ու ուսագնավարական նշանակություն ունեցող հատվածի վերահսկողությունը»: Դեկտեմբերին Ռեյզանը կարգադրեց վլեժիսնդիր լինել Քեքաա հարթակայրում հաստատված ԻՀՊ-ի փասդարաններից, սակայն նրանց հարձակումը հակահարվածի արժանացավ: Դեռ ավելին, սիրիական հրթիռները ոչնչացրեցին Դամասկոսի դիրքերի ոմբակոծման նպատակով օդ բարձրացած ամերիկյան հնացած կործանիչներից երկուսին:⁵⁰⁵

Հարկ է նշել, որ այս միջադեպերի հետ կապված ԱՄՆ-ում աճող քննադատությունը, Սիրիայի վճռական գործողությունների կասեցման հարցում Վաշինգտոնի անկարողությունը և, առհասարակ, ներկրանեանյան հակամարտության քաղաքական կարգավորման հարցում վերջինիս ծախողումը մեծ հարված հասցրին ԱՄ-ում ԱՄՆ-ի դիրքերին:

⁵⁰⁴ Martin Kramer, Hizbullah: The Calculus of Jihad, in Fundamentalisms and the State: Remaking Politics, Economics, and Militance (The Fundamentalism Project, vol. 3), Chicago, 1993, p. 549. <http://www.geocities.com/martinkramerorg/Calculus.htm#n2>.

⁵⁰⁵ B.W. Quandt, ճշկ. աշխ., էջ 259: Օդաշուներից մեկը սպանվեց, մյուսը՝ լիյտենանտ Ռոբերտ Գույմենը զերի վերցվեց: Վերջինս 1984թ. հունվարի դամասկոսյան այցի ընթացքում ԱՄՆ-ի նախագահի թեկնածու դիմուլաց Ձեսի Զերտոնի օգնությամբ ազատազրվեց, իսկ ոմբակոծությունների պատճառած վճարը փոխառուցվեց: 1984թ. հունվարի 18-ին հրազենից սպանվեց Թեյրութի ամերիկյան համալսարանի նախագահ Մալրում Ջերրին՝ արարական երկրների գծով հայտնի նախագետ-գիտնական, որն ամերիկյան թիջեկ միսիոններից մեկի որդին էր: ԿՀՎ-ի տեղական գրասննյակը ևս պայթեցվեց: 1985-87թթ. Թեյրութում առևանգված ԱՄՆ-ի քաղաքացիների թիվը հասնի էր 14-ի:

Իսկ Սիրիային պատմելու ուղղությամբ Ռեյգանի վարչակազմի որոշումը չիրագործվեց Սպիտակ տան ներսում առկա երկու իրարամերժ դիրքորոշումների պատճառով։ Ի տարբերություն Պենտագոնի, նախագահ Ռեյգանը, Շուշը ու Մակֆարլեյնն՝⁵⁰⁵ առավել ուղղակի ուղղությունը էր։ Մինչդեռ պաշտնախարարը, քայլության օրու գեներալներ, ԿՀՎ-ի տնօրին Վիլիամ Ջեյսին, պետքարտուղարության ՍԱ-ի գործերով փորձագետները դեմ էին ոչ միայն ԱՍՆ-ի գործերի պահպանմանը, այլ Խորայելի հետ կապերի սերտացմանն ընդհանրապես։

Այդ էր պատճառը, որ Վաշինգտոնի առաջնահերթ խնդիրը Լիքանանում, թեև այդ մասին չբարձրածայնելուն, ԱՍՆ-ի նախագահական ընտրությունների նախաշեմին, ծովային հետևակայինների վերադարձի ապահովումն էր հայրենիք։ Իսկ Լիքանանի ավերին այդժամ ԱՍՆ-ի ուղղականությունը ուժերի ցուցադրման հետևում իրականում բարենպած էին Վաշինգտոնի գործողությունները խիստ սահմանափակող մի շարք գործուներ։

Խնդիրն այն է, որ Բեյրութի շրջանից խրայելական ուժերի (սեպտեմբերին) անցանկալի հեռացման արդյունքում ԱՍՆ-ի ծովային հետևակայինները չեն կարողանում կատարել իրենց վրա դրված պարտականությունները։ Իսկ կոնգրեսը չէր ցանկանում Ժմայելի վարչախմբի օգտին անհրաժեշտ մասշտարներով ուղղական միջամտություն ապահովել՝ ելնելով Ծոցի պետություններին ԱՄՆ-ից վաճելու մտավախությունից՝ ճիշտ այն ժամանակ, երբ իրան-իրաքյան պատերազմը ցանկացած պահի սպառնում էր Օրմուզի նեղուցի շրջափակմամբ⁵⁰⁶։

Ծովային հետևակային գնդապետ Ռոբերտ ՄակՖարլեյնը, որը գրադեցրել էր պետքարտուղարի խորհրդականի պաշտօնը, դարձավ ԱՄՆ-ում Կարակի տեղակալը՝ այդժամ Հարիրին փոխարինելով որպես ԱՍՆ-ի լիքանանյան պատվիրակ, այնուհետև՝ Կարակին փոխարինելով ազգային անվտանգության գծով նախագահի օգնականի պաշտոնում։ Տե՛ս Robert O Freedman, նշվ. աշխ., էջ 89.

⁵⁰⁶ «Gardian», UK, 15.11.1983.

Հ. 1984թ. ԱՄՆ-ի ԾՈՎԱՅԻՆ ՀԵՏԵՎԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԴՈՒՐՍ
ԲԵՐՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻՑ:

ՄԻՐԻԱՆ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԻԲՐԵՎ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԱՐՏԱՓԻՆ ՈՒԺ

Այսպիսով, Ռեյգանը Լիբանանից ծովային հետևակայինների դուրս քերման վերաբերյալ որոշում կայացրեց՝ հակառակ ամխաներ շարտնակ ԱՄՆ-ի անվտանգության տեսանկյունից Լիբանանի կենսական կարևորության ներկայացման և Լիբանանի խաղաղության ու անվտանգության նկատառումներից բխող ԲՈՒ-ի ներկայության պահպաննան անհրաժեշտության ուղղությամբ Վաշինգտոնի պնդումներին⁵⁰⁷:

Ռեյգանի կառավարության պատրանքները Լիբանանի ճգնաժամի կարգավորման առնչությամբ վերջնականացեն փարատվեցին 1984թ. փետրվարին, երբ դյուզների ու շիաների միջցիաները Լեռնալիբանանում մի շարք նոր դիրքեր գրադեցնելուց հետո հայրանակ տարան նաև արևատյան Քեյրություն: Վերջիններս հանդես եկան լիբանանախրայելական համաձայնագիրն անվավեր դարձնելու և փաղանգավորների գերիշխանությանը վերջ դնելու կարգախոսներով: Դեռ ավելին, մուտքամբաններին իր կողմն անցնելու ուղղությամբ ԱՍԱԼ-ի կոչի արդյունքում ամերիկյան աջակցությամբ մարտնչող լիբանանյան բանակը կազմակուծվեց քրիստոնեական և մուտքամբանական զորամիավորումների⁵⁰⁸:

1984թ. փետրվարի 6-ին նախագահ Ռեյգանը դիմեց Սիրիայի կառավարությանը՝ լիբանանցինների նկատմամբ ահարելչական հարձակումների իրականացմանը նպաստող կամ դրանք ապահովող գործողությունները դադարեցնելու կրչով⁵⁰⁹: Հաջորդ օրը, փետրվարի 7-ին, նախագահն ԱՄՆ-ի ծովային հետևակայիններին հրամայեց բարձրանալ տախտակամած: Ամերիկացինների օրինակին շուտով հետևեցին ԱՄՆ-ի ՆԱՏՕ-ի մյուս գործընկերները: 1984թ. փետրվարի 26-ին, ամե-

⁵⁰⁷ B.W. Quandt, նշվ. աշխ., էջ 259: Պետքարտուղար Շուզմ այնուհանդերձ դեմ էր նախագահի որոշմանը:

⁵⁰⁸ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 185-186:

⁵⁰⁹ Kiron K. Skinner, Annelise Anderson and Martin Anderson, նշվ. աշխ., էջ 443:

դիւյմ զինվորական ողջ անձնակազմը Լիբանանից դրս թերվեց, իսկ մարտի 30-ին Լիբանանից հեռացան 6-րդ Նավատորմի վերջին միավորները: Քաղաքական ծախողման պայմաններում ամերիկյան նավատորմի հղորդությունն իմաստագրկված էր: Ինքնասպան ահարելիչների գործողությունները չեղոքացնում էին գերտերության անպարտելիության զգացումը⁵¹⁰:

Ռոբերտ Մակֆարլենի կարծիքով՝ ծովային հետևակայինների դրս թերումը Լիբանանից Ռեյզանի վարչակազմի գլխավոր պարտություններից էր⁵¹¹: Թերևս այդ էր պատճառը, որ Խրայելում և ԱՄՆ-ի կոնգրեսում, Թել-Ավիվի աջակիցների ուժին ճնշման տակ, վարչակազմը չեղյալ հանարեց ոչ միայն Հորդանանին ու Սաույան Արարիային կատարելագործված հակաօդային հրթիռներ վաճառելու ծրագիրը, այլ բացառեց մոտ ապագայում արար-խրայելական հիմնախնդրի հետ կապված: Խաղաղարար նոր ջանքերի գործադրումը: 1984թ. մայիսի 18-ին ՍՍ-ում ԱՄՆ-ի հատուկ պատվիրակ Դոնալդ Հ. Ռամսֆելդը՝ դադարեցրեց իր գործառույթները⁵¹²: Ամերիկյան վարչակազմը որոշեց պայմանագրի ստորագրման շորջ կրկին բանակցությունների չփակել այնքան ժամանակ, մինչև արարական երկրներն ու Խրայելն առավել մկունություն համրեն չրերիմ սեփական հակամարտության կարգավորման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, Վաշինգտոնը մտավախություն ուներ, որ խաղաղության պայմանագրի բացակայության արդյունքում առաջացած «օլիվանագիտական վակուումը» կարտ էր լցվել ինչպես ԱՄՆ-ի ազգային շահերին սպառնացող արար ահարելիչների ու արմատականների, այնպես էլ խրայեցի առաջնորդների կողմից⁵¹³:

Օգտվելով ստեղծված իրավիճակից, ՄԶՈՒ-ի կազմի մեջ մտնող 30.000-անոց սիրիական բանակն իր հսկողության տակ առավ երկրի տարածքի գրեթե կեսը: Միրիան ոչ միայն վերականգնեց Լիբանանում ունեցած իր նախկին ազդեցությունը, այլ երկրից խրայելական ուժերի

⁵¹⁰ David Lamb, Աշվ. աշխ., էջ 85:

⁵¹¹ Douglas Little, Աշվ. աշխ., էջ 245:

⁵¹² Khouri Fred J., Աշվ. աշխ., էջ 451:

⁵¹³ William L. Cleveland, Աշվ. աշխ., էջ 137:

դուրս բերումից հետո, վերածվեց տիրապետող արտաքին ուժի⁵¹⁴: Սա նշանակում էր, որ դեսպան Հարիքի ու պետքարտուղար Շուլցի կողմից Լիբանանի հիմնախնդրի շուրջ Վարվող քանակցություններից Սիրիային բացառելն իսկապես անհեռանկար քաղաքականություն էր: Ամերիկացի դիվանագետները չէին գիտակցում նաև Խորայելի և Սիրիայի, կամ Խորայելի և Հորդանանի միջև առավել համալիր քանակցային գործընթացի նախաձեռնության հրատապությունը: Նրանք չէին գիտակցում միաժամանակ, որ Վաշինգտոնի օգտին Սիրիայի վրա արդյունավետ ճնշում գործադրելու հարցում կարող էին ամենայն լրջությամբ ապավինել ԱՄՆ-ի այնպիսի դաշնակիցների վրա, ինչպիսին Սաուդյան Արարիան էր:

Խզոր չէր Շուլցն ավելի ուշ արդարանում, որ ինքը փորձել է «Ասադի վրա լծակներ գործադրել», չնայած անուղղակի ճանապարհով՝ արաբական այլ երկրների միջոցով: Պետքարտուղարը Լիբանանում ԱՄՆ-ի կրած ծախողման մեղավոր էր դիտում Խորայելին՝ Լիբանանից անժամանակ հեռանալու, պաշտնախարար Վայնբերգերին՝ ԱՄՆ-ի դիվանագիտության սատարման նպատակով սահմանափակ ուժ չկիրառելու, ինչպես նաև ԱՄՆ-ի վարչակազմին՝ Լիբանանից ամերիկյան ծովային հետևակայիններին դուրս բերելու համար⁵¹⁵:

Փաստորեն, պետքարտուղարությունը՝ կորցնելով Լիբանանում ծերը բերած լծակները, այժմ կարող էր միայն հուսալ, որ ‘Համասկոռը կկարողանա կայտն դերակատարություն ունենալ երկրի ներքին քաղաքական խնդիրների կարգավորման կամ անդրկուլիսյան պայմանագրի ստորագրման հարցում, որը կիեշտացներ խորայելական ուժերի վերջնական դուրս բերումը երկրից: Սակայն այս սպասումներն ի դերև եղան շարունակվող ահաբեկչությունների պայմաններում⁵¹⁶:

Փաստենք, որ ԱՄՆ-ի ռազմավարական ծրագրերի ծախողումը փաստող Վերոնշյալ իրադարձությունները վերջնականապես փոխեցին Լիբանանում առկա ուժերի հարաբերակցությունը: Նոր իրողութ-

⁵¹⁴ Don Peretz, ճշգ. աշխ., էջ 393:

⁵¹⁵ George P. Shultz, Turmoil and Triumph. My Years as Secretary of State, N.Y., 1993, p. 233.

⁵¹⁶ Robert O Freedman, The Middle East After The Israeli Invasion of Lebanon, New York, 1986, p. 81.

յան պայմաններում ԼԾ-ը ևս հարկադրված էր շտկումներ մտցնել իր քաղաքականությունում: Ամերիկյան աջակցությունից գրկված և լիբա-նանյան ճախերի դեմ միայնակ հայտնված Ամին Ժմայելն այժմ ստիպված էր քաղաքական աջակցության նպատակով վերականգնել Սիրիայի հետ մարտնիմերի հին դաշինքը: Փետրվարի վերջին Ամին Ժմայելը նախագահի պաշտոնում առաջին անգամ այցելեց Դամասկոս, որն ընկալվեց իրու լիբանանյան գործերում ամերիկամետ և խ-րայելամետ կողմնորոշումից լիբանանյան իշխանությունների պաշտոնական իրաժարում և Սիրիայի առաջատար դերակատարության ընդունում: 1984թ. մարտի 5-ին Դամասկոսում ծեռք բերված պայմանավորվածության համաձայն, լիբանանյան կառավարությունը պաշտոնապես անվավեր հայտարարեց Իսրայելի հետ կնքված «իսահաղորդյան համաձայնագիրը»⁵¹⁷, որի արդյունքում Լիբանանում ու նրա շոր-ջը փաստացի կերպով քաղաքական նոր իրավիճակ ստեղծվեց:

Եվ այսպես, ԱՍՆ-ի հետինակությունը և նրա դիրքերը ՍՍ-ում տուժեցին, իսկ նրա տարածաշրջանային հայեցակարգը դատապարտվեց ճախողման: 1974թ.-ից արար-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացը միանձնյա տնօրինող գերտերության աջակցությանն ապավիճած Իսրայելը 1984թ. ընկրկեց, և այդ տասնամյակում առաջին անգամ ԱՍՆ-ի հովանավորած արար-իսրայելական համաձայնագիրը ճախողվեց ԽՍՀՄ-ի տեղական դաշնակցի՝ Սիրիայի կողմից⁵¹⁸: Լիբանանի օրինակը փաստեց, որ ՍՍ-ում ԱՍՆ-ի ծրագրերը ոչ միշտ են իրագործվում⁵¹⁹: Ամերիկյան ծրագրերը գործնականում կատարվեցին միայն այնքանով, որքանով Իսրայելի վերահսկողությունը հաստատվեց հարավային Լիբանանի նկատմամբ: Սա արդեն անհաջողություն էր ԱՍՆ-ի քաղաքականության համար:

Այնուհանդերձ, պաշտոնավորության երկրորդ ժամկետում նախագահ Ռեյգանի վարչակազմի մերձավորարևելյան քաղաքականության սկզբունքներն անփոփոխ մնացին: Դրանց տակ շարունակ հասկացվում էր ԽՍՀՄ-ի ազդեցության սահմանափակում՝ առավելագույ-

⁵¹⁷ Мирский Г., նշվ. աշխ., էջ 32:

⁵¹⁸ Don Peretz, նշվ. աշխ., էջ 393:

⁵¹⁹ Douglas Little, նշվ. աշխ., էջ 245:

Այս հասցնելով սեփական ազդեցությունը, տարածաշրջանային կայունության ապահովում՝ կանխելով պատերազմներն ու արմատական հեղափոխությունները, ԱՄՆ-ի դաշնակիցների աջակցություն և արագնորում, նավքի նկատմամբ ազատ մուտքի ապահովում⁵²⁰:

4. 1985թ. ԻՄՐԱՅԵԼԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻՑ: ԼԻԲԱՆԱՆՆ ԻԲՐԵՎ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԶԱՆ

1984թ. մարտի 12-20-ին Լոզանում Վալիդ Ջումբարի և Նարիկ Բերիի նախաձեռնությամբ մասնակիցների նախկին կազմով սկսվեց ազգային երկխոսությանը նվիրված հանդիպումների երկրորդ փուլը, որին մասնակցեց նաև Սիրիայի փոխնախագահ Արդել Հալիմ Խադիդամը: Չնայած կողմերի տարածայնության արդյունքում նրանց չհաջողվեց քաղաքական բարեփոխումների շուրջ համաձայնության գալ, այնուամենամեծ, նրանք ամրագրեցին իրադադարի հասնելու միջոցները և հավանություն տվեցին նոր սահմանադրության մշակման սկզբունքներին: Ապրիլին Ամին Շմայելի Դամասկոս կատարած այցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց լիբանանյան քաղաքական կառույցի համարի բարեփոխումների շուրջ: Նախատեսվում էր կրտնահամայնքային համակարգի պահպանմամբ հանդերձ, սահմանափակել քրիստոնյաների արտօնությունները և իրավահավասարություն մտցնել մուսուլմանների ու քրիստոնյաների միջև:

Դամասկոսում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման շրջանակում 1984թ. մայիսի սկզբին Ռազամեի գլխավորությամբ ձևավորվեց «Ազգային Սիրանականության Կառավարությունը»՝ ԱՄԿ-ը^{*}: Նոր կառավարությունը հավասարակշռված էր իր կազմով և ընդունելու էր հակամարտող կողմերի առաջնորդներին՝

⁵²⁰ Barry Rubin, US and The Middle East, 1985-1988, The Middle East from the Iran-Contra Affair to the Intifada, N.Y., 1991.

* Ըստիկ Ուազզանի կառավարությունը իրաժարական էր տվել դեռևս փետրվար ամսին:

Վալիդ Զումրլաքիմ՝ ԼԱՍԿ-ից, Նարին Բերիկին՝ ԱՍԱԼ-ից, Պիեր Շնայխին և Քամիլ Չամոնին: Նոր կառավարությունն իր առջև ողել էր իսրայելական գորքերի դուրս բերման, անկախ արտաքին քաղաքականության վարման, Միրիայի հետ սերտ համագործակցության հաստատման և քաղաքական քարեփոխումների համաձայնեցված անցկացման նպատակ: Թեև փաղանգավորներն իրենց ձեռքում պահեցին նախագահի պաշտոնը, այնուհանդերձ, Ռաշիդ Քարամեի վարչապետության ամրապնդման շնորհիվ զրկվեցին քաղաքական գերիշխանությունից⁵²¹:

Նոր իրադրությունը թույլ տվեց սիրիական կառավարության հետ իրենց գործողությունները համակարգող լիրանանյան իշխանություններին՝ ի դեմս նախագահ Շնայխի և Վալիդ Զումրլաքի, առավել ակտիվ միջոցներ ձեռնարկել երկրի տարածքից իսրայելական ուժերի դուրս բերման ուղղությամբ⁵²²: Իսրայելի կրած մարդկային զգալի կորուստները, լիրանանյան իրադարձությունների վրա ներգործելու անարդյունավետությունը և ֆինանսական զգալի ծախսերը Իսրայելի Ծիմոն Պերեսի կառավարությանը ստիպեցին իսրայելական ուժերի դուրս բերման պայմանների շուրջ 1984թ. նոյեմբերի 8-ին բանակցություններ վարել:

1985թ. հունվարի կեսերին, Իսրայելը հայտարարեց իր ուժերի եռափուլ դուրս բերման մտադրության մասին: Սահմանամերձ գոտուց հեռանալու պարտավորությունը ստանձնելուն զուգահեռ Իսրայելը պահպանում էր «Հարավային Լիրանանի Բանակին» ռազմական աջակցություն ցուցաբերելու իրավունքը⁵²³:

1985թ. մարտի 11-ին Սամիր ԶաԶայի գլխավորությամբ խմբավորումները վերահսկողություն հաստատեցին ԼՈՒ-ի նկատմամբ: 1985թ. ապրիլին Ս. ԶաԶայի կողմնակիցները իսրայելական սպաների անմիջական հրամանատարությամբ մասնակցեցին հարավի՝ Սայդա-

⁵²¹ Новейшая история арабских стран Азии, 624. аշխ., էջ 153:

⁵²² Обстановка в Ливане, Бейрут, ТАСС. Атлас N 37 (1419), 11.03.1988, стр. 41.

* Բանակցությունները վարվում էին Լիրանամի ու Իսրայելի բանակային սպաների նակարդակով՝ UNIFIL-ի սպաների ներկայությամբ:

⁵²³ Fred J. Khouri, 624. аշխ., էջ 458:

յի շրջանի ուազմական գործողություններին: Մայիսին ԼՈՒ-ի գործկումի նախագահի պաշտոնում Զաջային փոխարքինեց էլի Հռբեյրան, որը Դամասկոսի հովանու ներքո ճախերի հետ փոխգիշման գնալու կոչ արեց:

Միևնույն ժամանակ խնդիրներ ծագեցին ճախերի և մուսուլմանական խմբավորումների հսկողության տակ գտնվող շրջաններում⁵²⁴: Մայիս-հունիս ամիսներին Բեյրութում արյունալի բախումներ տեղի ունեցան սիրիական աջակցությունից օգտվող շիական ԱՍՍԼ-ի և 1985թ. տարքեր ուազմավարական դիրքեր՝ վերադարձած պաղեստինյան ուժերի միջև⁵²⁵: Այս անգամ Սիրիան հրաժարվելով մարունիների ու սունիների գերիշխող ազգեցության վերականգնման քաղաքականությունից, սկսեց ամրապնդել Նարի Բերիի գլխավորությամբ շիական ԱՍՍԼ-ի և Վալիդ Ջումբարի գլխավորությամբ դրուգների միջև ուազմարարական դաշինքը^{*}: Սակայն պաղեստինցիները կոչտ հակազդեցություն ցուցաբերեցին ճամբարներից իրենց դուրս մղելու փորձերին, որտեղ նրանց հաջողվեց վերականգնել իրենց գինված կազմավորումները⁵²⁶: ԱՍՍԼ-ի հետևորդների ջանքերը ճախողվեցին նաև Բեյրութի արվարձանի պաղեստինյան ճամբարի գրավման ուղղությամբ:

Հունիսին իսրայելական ուժերը հեռացան Լիբանանի հարավի մեծ նասից՝ ազատազրելով այդ շրջանի խոշորագույն քաղաքները՝ Սայդան, Տիրը և Նարարիան, Լեռնալիբանանի զգալի մասը և Բերաայի հովիտը[:]

⁵²⁴ Шуйская Н., նշվ. աշխ., էջ 58-59:

* Բեյրութի ու Սիրիոնի պաղեստինյան ճամբարներ:

⁵²⁵ Тони Йокер, Организация освобождения Палестины и Арабский мир, ТАСС, БПИ N 151, 5.8.1986г., стр. 21-24. Խորային ազրենայի արդյունքում Լիբանանից վտարված ՊԱԿ-ի 12.000 ճարտիկներ 1985թ. սկզբին վերադարձել էին Լիբանան՝ կրկին ամրապնդելով իրենց դիրքերը ՊԱԿ-ի ճամբարներում:

* Բերին ու Ջումբարը ժմային կառավարության անդամներ էին:

⁵²⁶ Peretz Don, նշվ. աշխ., էջ 394:

* 1985թ. հունիսի 9-ին ԽՍՀՄ-ն (ՍՍՍԼ-ի հայտարարությամբ) իր աջակցությունը հայտնեց Լիբանանի տարածքից իսրայելական ուժերի լիակատար և առանց նախապայմանների դուրս բերման ուղղությամբ լիբանանցների պահանջման: Այս մասին տես՝ Արա-իզրայիլական կոնֆլիկտ և պալեստինական հարցեր, ՎԳԲИЛ, Մոսկվա, 1989, ստ. 29; Վնешняя политика Советского Союза и международные отношения, 1982, М., 1983.

Վերոշարադրյալից կարելի է գալ այն հետևողյան, որ եքել 1983-84թ. Բեյրութում՝ ամերիկյան ու ֆրանսիական թիրախների նկատմամբ «Հիգրավլահի» ահարեկչական գործողությունները նպաստեցին 1984թ. Երկրից ամերիկյան ու ԲՈՒ-ի («MNF») հետացմանը, ապա 1983-85թ. Լիբանանի հարավում խրայելական ներկայության դեմ զինված պայքարը՝ հանգեցրին 1985թ. Իունվարից կենտրոնական Լիբանանից խրայելական ուժերի դուրս բերմանը⁵²⁷: Այդ իրադրությունները նպաստեցին շիա համայնքի դերի բարձրացմանը ինչպես միջազգային, այնպես էլ լիբանանյան քատերարեմում⁵²⁸:

Միևնույն ժամանակ Թել-Ավիվի ռազմական ներկայությունը պահպանվեց լիբանանախրայելական սահմանի երկայնքով «անվտանգության գոտում»՝ անհրաժեշտության դեպքում Լիբանանի տարածքի ուղղությամբ հարվածներ իրականացնելու իրավունքի վերապահումով: Խրայելի ռազմաքաղաքական միջամտությունը լիբանանյան գործերում շարունակվում էր՝ հաճախ քողարկված ազրեսիայի տեսք ընդունելով և ԱՄՆ-ի կողմից սատերվելով:

Հարկ է նշել, որ Թել-Ավիվը Լիբանանից խրայելական ուժերի դուրսերման ժամանակ՝ (1985թ. ապրիլի 2-ից) իրենց հետ Խրայել էին տարել «լիբանանյան քատերաբեմից հնարավոր վտանգ ներկայացնող» մոտ 1000 ռազմագերիների (որոնցից 735-ը՝ շիա): Միացյալ Նահանգների և որոշ երկրների կողմից այդ քայլը որակվեց իրեն դեպորտացիան արգելող ժնկի կոնվենցիայի կոպիտ խախտում:

Հունիսի 14-ին ռազմագերիներին ազատազրելու նպատակով «Ա-Զիհադ ալ-Խալամ» շիա-մուսավանների զինված մարտիկները բռնազրավեցին Արենքից Հոռոմ քոչող «Trans world Airline» ամերիկյան ընկերության «Բոինգ-727» ինքնաթիռը (153 ուղևորով)՝ ստիպելով

«Խախանական հեղափոխության փասդարանները» ևս իրենց գործողությունները Թերապայից տեղափոխուն էին Լիբանանի հարավ: Նրանց ռազմավարքական ճամբարների թիվը 1987թ. դրույթամբ 7-ից հասել էր 23-ի: Այս մասին տես՝ Ջոլլ Դելաֆոն, նշվ. աշխ., էջ 21:

⁵²⁷ Polk William, նշվ. աշխ., էջ 355:

⁵²⁸ Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 179:

հարկադրական վայրէջք կատարել Բեյրութում⁵²⁹: Ամերիկյան ՌԾՈՒ-ի ջրասույզ Ռոբերտ Դինը սպանվեց, իսկ 39 ուղևորներ 17 օր շարունակ սպատանդ պահեցին: Նախագահ Ռեյգանը հունիսի 17-ին սպառնաց ամերիկյան նարուտական ջոկատ ուղարկել պատաժներին ազատագրելու նպատակով, սակայն վարչակազմի ավագ պաշտոնյաները գաղտնի խոստովանեցին ուազմական իրական տարրերակ չունենալու փաստը: 700 շիա ուազմագերիների ազատ արծակման Խորայելի առաջարկը մերժվեց Միացյալ Նահանգների կողմից՝ այն դիտելով իրեն «ահարենկչության զիջում»: Իցիակ Ռաբինը հայտնեց, որ այդ խնդրի հետ կապված ԱՄՆ-ն Խորայելի հետ «խաղեր չպիտի խաղա» և միակողմանիորեն ազատ արծակեց 31 ուազմագերիների: Հունիսի 24-ին փոխնախագահ Ջորջ Բուշն անսպասելորեն հայտնեց, որ Խորայելում շիա ուազմագերիների պահպանումը միջազգային օրենքի խախոռում է, և նրանք պետք է ազատ արծակվեն: Վերջապես, հունիսի 28-ին ետնարեմային բանակցություններից հետո, որտեղ Սիրիայի նախագահ Ասադը ևս դեր ունեցավ*, ԱՄՆ-ի պաշտոնյաները հայտարարեցին մնացած 39 պատաժների և Խորայելի կողմից 735 ուազմագերիների «շտապ» ազատ արծակման մասին⁵³⁰: Սպիտակ տունը հանդես եկավ նաև Բեյրութի միջազգային օդանավակայանի աշխատանքների բորբարկման միջոցով Լիբանանի դեմ պատժամիջոցներ կիրառելու հայտարարությամբ:

Ուշագրավն այն է, որ Խորայելը՝ հակառակ ահարենկիչների սպառնալիքներին կտրականապես «չենթարկվելու երկարյա քաղաքականությանը», ազատ արծակեց շիա ուազմագերիներին: Այնուհետեւ, այս միջադեպը Թեհրանի հետ, որտեղ գտնվում էր «Ալ-Զիհադ ալ-Խուլամիի» հրամանատարական շտաբը, ուղարկի գործարքի^{*} գնա-

⁵²⁹ Barry Rubin, The United States and The Middle East, 1984-1985, Vol. 9, Middle East Contemporary Survey, Westview Press, Boulder, Colorado, 1987.

* Ծիաների առաջնորդ Նարիմ Բերհմ Ասադի առաջադրանքով միջնորդական ջանքեր գործադրեց բանակցություններում:

⁵³⁰ Polk William, Եղվ. աշխ., էջ 469:

* Սարս ամսին զենքի առևտուվ գրավվող սառույան ճիխարդատեր Ալման Խաչողը խորայեցիներին առաջարկել էր ԱՄՆ-ի պատաժների ոլմաց Թեհրանին ամերիկյան զենք տրամադրելու գործարքը: Ծիմոն Պերսոն Թեյրություն ԿՀՎ-ի բաժնի վարիչ Վիլյամ Բարիի ազատազրման նպատակով կապվել էր Վաշինգտոնի հետ, որից հե-

լու հետանկար բացեց: «Վաշինգտոնը մտադիր էր Խորայելի միջոցով թերանձնին զենք վաճառել՝ «չաղտութելով» իր ծեռքերն ահարեկիչների հետ ուղղակի շփումների արդյունքում»⁵³².

1985թ. հուլիսի սկզբին, այս անգամ «ահարեկչության դեմ պայքարի» պատրվակով, ԱՄՆ-ը կրկին փորձեց իր ռազմական ներկայությունն ապահովել Լիբանանում՝ «անորոշ երկար ժամկետով» ռազմածովային ուժեր կենտրոնացնելով երկրի ծովափնյա շրջաններին: Խոսք զնաց նաև Լիբանանի նկատմամբ տնտեսական շրջափակման և ԱՄՆ-ի կողմից տրամադրվող օգնություններից զրկելու մասին: Ի պատասխան ԱՄՆ-ի վարչակազմի «ձեռնարկած միջոցառումներին», Ռ.Քարամեն հերքեց Լիբանանն «ահարեկչական երկրի» վերածվելու շուրջ ԱՄՆ-ի հայտարարությունները⁵³³: Վարչապետը նշեց, որ «եթե ահարեկչություն անգամ գոյություն ունի, ապա այն ամերիկյան քաղաքականության ծնունդ է, որը մշտապես անտեսում է միջազգային իրավունքներն ու համաձայնագրերը»⁵³⁴:

տո մայիսին Խորայել էր մեկնել ամերիկյան ԱՄՆ-ի նախկին խորհրդատու Մայր Լիգին: Ավելի ոչ հետևեց ամերիկյան հոգևորական Թեմչիամին Ռուբեն ազատազրման դիմաց Իրանին հակատանկային «ԹՈՈՒ» 500 հրեհների տրամադրման զորաքայլ: Որի արդյունքում սեպտեմբերի 15-ին պատանդն ազատ արձակվեց, իսկ Բարին զազանարար սպանվեց: Այս մասին տե՛ս Юրի Դզն, Կաк США заключили сделку с дьяволом, Секретная американо-иранская сделка - как тайное стало явным, 1986, ТАСС. БПИ N 247, 19.12.1986г., стр. 24-26.

⁵³² Որոշ դիտորդների կարծիքով՝ Խորայելը վտանգում էր իր ինքնիշխանությունը՝ Սպիտակ տանը ծառայելով Պենտագոնի կամ ԿՀՎ-ի ղերում՝ իրեւ սովորական դաշնային գերատեսչություն: Սակայն հարկ է նկատել, որ Խորայելն իր հաշիվներն ուներ Իրանի հետ պատերազմող Իրաքի հետ, որի զորքերն արար-խորակական երեք պատերազմների ընթացքում կովկի էին Թել-Ավիվի ղեմ: Ենթադրվում էր, որ հայրաբանակի ղեաքրում Իրաքն իր մարտերում կովկած կորքերը կարող էր ուղղել նաև Խորայելի ղեմ: «Հետևարար քննամու քննամու օգնություն ցուցաբերելը միանանայն դիմում էր Թել-Ավիվի շահերից: Այս մասին տե՛ս Գլени Ֆրենկը, Իзраиль организовал первую сделку между США и Ираном ТАСС. БПИ N 233, 1.12.1986г., стр. 10-11; «Le Monde», Paris, 18.11.1986.

⁵³³ Агарышев А., Ближний Восток: Терроризм и его покровители, 1986, М., с. 183.

⁵³⁴ «Правда», М., 4.6.1985.

5. 1985թ. ԴԱՍՍԿՈՍՅԱՆ «ԵՌԱԿՈՂՄՊԱՅՄԱՆԱԳՐԻ»
ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի ՀԱՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՆԿԱՏՍԱՐ: ՆԵՐԼԻԲԱՆՄԵՅԱՆ ՊԱՅԹԱՐԻ ՄՐՈՒՄԸ

1985թ. աշնանը լիբանանյան ճգնաժամի կարգավորման առաջատար երեք ռազմաքաղաքական խմբավորումների՝ ԱՍԿ-ի (Վալիդ Զումրլաքի), ԱՍԱԼ-ի (Չարիի Բերիի) և ԼՈՒ-ի (Ելի Հորեյքայի)⁵³⁵ միջև Դամասկոսում քանակցություններ սկսեցին, որոնք ավարտվեցին դեկտեմբերի 28-ին՝ «Եռակողմ պայմանագրի» ստորագրմամբ: Պայմանագրով նախատեսվում էր քաղաքացիական պատերազմի ավարտից և քաղաքական կոնֆեսիոնալիզմի հիմնախնդիրը սահմանադրական մարմինների դատին հանձնելուց հետո արյատական քաղաքական քարեփոխումներ իրականացնել: Առաջին խորհրդարանը, որն առաջարկվում էր ընտրել 1986թ. վերջին, իրավունք էր ստանում վերացնել կրոնադավանական համակարգը պատգամավորների ծայների 2/3 մեծամասնությամբ⁵³⁶: Այդ փաստարդի համաձայն՝ լիբանանյան հասարակության և պետության խորը պառակտման պատճառ հանդիսացող կրոնահամայնքային համակարգը պետք է աստիճանաբար՝ 11-13 տարվա ընթացքում վերացվեր: Անցումային շրջանում նախատեսվում էր մարոնի նախագահի իշխանության սահմանափակում՝ կառավարության և խորհրդարանի լիազորությունների համաժամանակյա ընդլայնմամբ և խորհրդարանում մուտքմանների ու քրիստոնյանների հավասար ներկայություն՝ ապահովմամբ: Պայմանագիրը հոչակում էր Լիբանանի և Սիրիայի միջև «հատուկ հարաբերությունների» մասին, որոնք տարածվում էին ոչ միայն ռազմական ոլորտի, այլ արտա-

⁵³⁵ Ենթադրվում էր, որ Հորեյքան դարձել էր մարոնի բուրժուազիայի այն շրջանակների արտահայտողը, որոնք ի դեմս Սիրիայի տեսնում էին իրենց համայնքի փրկությունը: Այս մասին տեսն Միրսկի Ռ., նշվ. աշխ., էջ 40:

⁵³⁶ Ռայման Հ., նշվ. աշխ., էջ 52: Խորհրդարան շնորհվելու դեպքում, հաջորդ խորհրդարանը՝ 1990թ. կարող էր վերացնել կրոնադավանական համակարգը ծայների 50%+1% մեծամասնությամբ: Եթե դա ևս չիրագործվեր, ապա 3-րդ խորհրդարանը՝ 1994թ., իրավասու էր վերացնել կոնֆեսիոնալիզմը ներկա պատգամավորների ծայների պարզ մեծամասնությամբ:

* Պատգամավորների թիվը 99-ից հասցվելու էր 198-ի:

ըին քաղաքականության վրա, շոշափում էին անվտանգության, տնտեսության, կրթության, տեղեկատվական ծառայությունների ոլորտները⁵³⁷: Կողմերը հանդիս էին գալիս այդ հարաբերությունները «ռազմավարական ինտեղացիայի» սկզբունքի հիման վրա կառուցելու օգտին⁵³⁸:

Ինչ վերաբերվում է առավել կամ պակաս շափով ազդեցիկ քրիստոնեական մյուս համայնքներին^{*}, ապա նրանք հանդիս չեկան եռակողմ պայմանագրի դեմ, որով պահպանվում էին իրենց նախկին իրավունքները: Պայմանագրին դեմ էին Ս. Ֆրանժիեն և Ք. Շամունը: Շամունը մերժում էր այն՝ շիաների առաջնորդ Բերիի հետ ունեցած իր տարածայնությունների պատճառով: Խնդիրն այն է, որ Բերին խորհրդարանում երեք համայնքների (շիա, մարունի և սուննի) հավասար ներկայացուցչություն էր պահանջում, այսինքն՝ պայքարում էր մարունիների կողմից պատգամավորական տեղերը շիաներին զիջելու օգտին⁵³⁹:

Սակայն 1986թ. հունվարի 13-ին ԼՈՒ-ում նոր զարգացումների արդյունքում Ելի Հորեյքան փոխարինվեց Սամիր Զաջայով, որը Ժմայիլի և Շամունի հետ միասին հանդիս եկավ «Եռակողմ պայմանագրի» դեմ: Օտարերկրյա մամուլն իրադարձությունների նման ելքը որակեց իրու Սիրիայի լուրջ պարտություն⁵⁴⁰: Բանն այն է, որ ԼՈՒ-ին ու փաղանգավորներին մոտահոգում էր պայմանագրում Սիրիայի հետ հասուկ հարաբերությունների վերաբերյալ կետը⁵⁴¹, մինչդեռ Ամին Ժմայիլին մտահոգում էր ոչ միայն բանակցություններին շմասնակցելու, պայմանագրով իր լիազորությունները սահմանափակելու, այլ աջրիստունեական ուժերի աջակցությունից զրկվելու հետանկարը:

⁵³⁷ «The Middle East and North Africa», L., 1986-1987, p. 569.

⁵³⁸ Միրսկի Գ., Աշխ., էջ 39; Եջեցօնու, Մ., 1986, ստ. 294.

* Հույն-ուղղափառ, հույն-կաթոլիկ, հայ-կաթոլիկ:

⁵³⁹ Հայոց, «Ալ-Միդա», Բեյրութ, 27.12.1985: Այդժամ արդեն մուտքամմները գերակշռում էին ցրիստոնյաներին, իսկ շիաները՝ սուննիներին:

⁵⁴⁰ Lebanon's Christians Sink Assad's Grand Design, Middle East International, L., 1986, № 267. Հորեյքան որոշ ժամանակ անց սիրիական աջակցությամբ ԼՈՒ-ի իշխանությունը վերագրավելու անհաջող փորձ կատարեց:

⁵⁴¹ Ալ-Ամար, «Ալ-ամար», Բեյրութ, 17.01.1986:

Հարկ է նշել, որ Ժմայելը չէր կարող նաև հաշվի շնուտել ԱՄՆ-ի հետ, որը բացահայտ սատարում էր պայմանագրի դեմ արտահայտվող ընդդիմությանը: Վաշինգտոնը գտնում էր, որ «Եռակողմ պայմանագրի» հաջող կենսագործումը՝ հատկապես սիրիահորդանանյան մերձեցման հողի վրա, Լիբանանին ևս կարող էր մղել այդ երկրների հետ «արևելյան ճակատում» ընդգրկվելու գաղափարին: Այդ պատճառով էլ, եթե ԱՄՆ-ը հայտարարեց, որ սահմանափակում է Լիբանանի հարավում գտնվող ՍՊԿ-ի արտակարգ ուժերին ցուցաբերվող օգնությունը՝ այդուհետ ընդհանրապես դադարեցնելու մտադրությամբ, ապա այդ քայլը գնահատվեց իբրև Լիբանանի վրա որոշ նկատառումներով ԱՄՆ-ի կողմից ճնշում գործադրելու փորձ: Չի բացառվում, որ պայմանագրի դեմ գործելով՝ Վաշինգտոնը ճգնում էր պատժել իր հովանու ներքո ստորագրված լիբանանախրայնական 1983թ. պայմանագրի ծախողմանը նպաստող Սիրիային՝ վերջինիս գրկելով Լիբանանում «տուրի տակի հողից»⁵⁴²:

Ընդդիմությունն Ամին Ժմայելին մեղադրեց ԱՄՆ-ի՝ մասնավորապես Զորջ Շուլցի պահանջներին տեղի տալու հարցում: Ենթադրվում էր, որ Շուլցին հաջողվել էր Սիրիայի միջնորդությամբ ստորագրված համաձայնագրին հետևողականորեն դիմակայելով՝ համապատասխան պահին ծախողել այն⁵⁴³: Պետքարտուղարին գիծելով՝ Ժմայելն ասես նպաստում էր 1983թ. պայմանագրի հարցում ԱՄՆ-ի կրած բաղարական վնասի փոխհատուցմանը:

Ի հեճուկս «Եռակողմ պայմանագրի» դեմ Ժմայելի և ԼՈՒ-ի հակագործությանը, Վ. Զումրլարը, Ն. Քերին, Պ. Ֆրանժին և Ա. Հ. Խադրամը կրկին հանդիպեցին Դամասկոսում՝ իրենց հավատարմությունը հայտնելով եռակողմ պայմանագրին: Նրանք հերքեցին «ազգային համաժողով» հրավիրելու վերաբերյալ աջ-քրիստոնյաների առաջարկությունը, որի դեպքում ստիպված էին լինելու բանակցային սեղանի շուրջ նստել Ամին Ժմայելի և Սամիր Զաջայի հետ: Սակայն դա կանխավ անընդունելի էր, առավել ևս, որ նման համաժողովը կարող էր

⁵⁴² Шүйсская Н., б2վ. аշխ., էջ 54-56:

⁵⁴³ «النـادـا»، بـيـرـوـت، «Ա-Ա-ի-դա»، Բեյրութ, 18.01.1986:

հաջողություն ապահովել միայն դամակոսյան պայմանագրի իրագործման համար ուղի հարթելու դեպքում⁵⁴⁴:

Ուշագրավն այն է, որ երբ 1986թ. գարնանը ԱՄՆ-ը Լիբիայի՝ իբրև ահարեկչությունը հովանավորող երկիրի դեմ պատժիչ միջոցների դիմեց, Բեյրութի քաղաքական շրջանակներում հիշեցին աջ-քրիստոնեական ուժերին՝ 1986թ. հունվարի 15-ից «մինչև զարնան սկիզբն ընկած ժամանակահատվածում անդրդիմելի մնալու» ուղղությամբ Վաշինգտոնի տված «փորձարդմերը»: Ըստ Եռթյան լիբանանյան աջերին խորհուրդ էր տրվում ժամանակ շահել քաղաքական որոշումներ կայացնելու հարցում, քանի դեռ միջազգային հանրության ուշադրությունը սևեռված էր մերձավորարևելյան նոր իրադարձությունների վրա: Սակայն երբ Վաշինգտոնը Սիրիային ևս մեղադրեց ահարեկչության հովանավորման մեջ՝ Լիբանանն ինքնըստինքյան հայտնվեց Սիրիայի դեմ ԱՄՆ-ի պատժամիջոցների կիրառման թիրախի վերածվելու սպառնալիքի տակ:

Սիրանույն ժամանակ Լիբանանում զարգանում էր ևս մի գործընթաց՝ կապված Լիբանան պաղեստինցիների վերադարձի հետ⁵⁴⁵: Դամակոսյան պայմանագրի ձախողումից հետո Արաֆարի կողմնակիցները վերականգնեցին Լիբանանում ունեցած իրենց դիրքերը, որն օտարերկրյա մամուլը Սիրիայի երկրորդ պարտություն գնահատեց⁵⁴⁶: ՊԱԿ-ի դիրքերի ամրապնդումը կանխելու նպատակով Սիրիան աջակցություն ցուցաբերեց ԱՍԱԼ-ին, որը 1986թ. մայիսից մարտերի էր բռնկվել արևմտյան Բեյրութի Սարրա և Շարիլա փախստականների ճամբարների պաղեստինցիների դեմ: ԱՍԱԼ-ը ևս դեմ էր խրայելական գորքերից ազատազրկած և իր կողմից գրադեցրած շրջաններ գինված պաղեստինցիների վերադարձին⁵⁴⁷:

⁵⁴⁴ Шуйская Н., Աշվ. աշխ., էջ 63-65:

⁵⁴⁵ «The Middle East and North Africa», L., 1986-1987, p. 570.

⁵⁴⁶ Мирский Г., Աշվ. աշխ., էջ 40:

⁵⁴⁷ Հյուրուս, Կ իտուր 6-րդ սեզոն ճայքենիք «Ամալ», ՏԱԾԸ ԵՊԻ N 87, 6.5.1986թ., տր. 37. «ԱՍԱԼ»-ի տեղական դեկավարներից Դաուդ Դաուդ ամրապնդվեց Տիրի շրջանում, Սահմուլ Ֆարիթը՝ Սայդայի արվարձաններում ու Նարաքիայի շրջանում: Վերջիններս փաստացի կերպով գործում էին իրենց թերության առաջնորդից՝ Նարի Քերիից անկախ: Նրանց գործությունները իիմնականում ուղղված էին Հարդադին փոխարինած Լահայի ստորաբաժնումների դեմ:

Նշենք, որ թեև ծախս-մուտլմանների առաջնորդները, հատկապես Զումբարը, ևս դեմ էին Լիբանան պաղեստինցիների վերադարձին, այնուհետեւ զարդարելու առաջացրին սուննիների և դրուզների դժգոհությունը: Կարծում ենք, որ Լիբանանի ծախս-մուտլմանները գիտակցում էին պաղեստինցիների նկատմամբ ԱՍԱԼ-ի հաղթանակի դեպքում շիա համայնքի հղորացման, ինչպես նաև նրա մարտական ոգու և հավակնությունների մեծացման հնարավորությունը:

1986թ. հուլիսին իրադրությունը հսկողության տակ առնելու նպատակով արևմտյան Բեյրութ մտցվեցին սիրիական անվտանգության ուժերի սոորարածանումներ: Ամբողջ ժմայելը, «Քարահըր», LFL-ը և ԱՀԿ-ը բացասարար արձագանքեցին լիբանանյան իշխանությունների հետ շիամածայնեցված այդ քայլը: Նրանք գտնում էին, որ սիրիական զորքերը չսահմանափակվելով միայն արևմտյան Բեյրութով, կներխուժեն աջ-քրիստոնյանների վերահսկողության տակ գտնվող շրջաններ⁵⁴⁸: Նախագահի մտահոգությունն ըստ Էռեյյան գուրկ չէր հիմքից, քանի որ 1987թ. փետրվարին արևմտյան Բեյրութում, դրուզների և պաղեստինցիների ուժերի դեմ ԱՍԱԼ-ի ջոկատների հարձակումից հետո, իրադրությունն իր հսկողության տակ պահելու նպատակով Դամասկոսը փետրվարի 22-ին սիրիական 7000-ոց ուժեր մտցրեց մայրաքաղաք⁵⁴⁹: Ենթադրվում էր, որ սիրիական զորքեր չմտցնելու դեպքում՝ ԱՍԱԼ-ը կարող էր նզվել Բեյրութի հարավային արվարձաններ, և արևմտյան Բեյրութի ու Սահայի միջև ընկած ողջ շրջանը կիայտնվեր արմատական մուտլմանական ուժերի հետ համագործակցող պաղեստինյան կուալիֆիայի և ծախս կողմնորոշմամբ նրանց հին դաշնակիցների ազդեցության ոլորտում⁵⁵⁰:

⁵⁴⁸ Խոյակ Հ., նշվ. աշխ., էջ 67:

⁵⁴⁹ Gary Gambill and Ziad K. Abdellour, Hizbollah: Between Tehran and Damascus, Middle East Intelligence Bulletin, Vol. 4 No.2, February 2002, p. 3.

http://www.mcib.org/articles/2002_11.htm.

⁵⁵⁰ Muir J., Syria Takes a Dangerous Plunge, Middle East International, London, No 295, L., 1987, p. 3-4.

Հարկ է նշել, որ իր հերթին 1986թ. սեպտեմբերից «Հիգրալահը», որի տրամադրության տակ այժմամ 5000 մարտիկ կար, արյունահեղ մարտեր էր վարում իսրայելական բանակի և նրա լիրանանյան դաշնակիցների դեմ՝ կիրառելով «մարդկային ալիքների» ռազմավարությունը, որն Իրանն օգտագործել էր Իրաքի դեմ պատերազմում։ Իսրայելի դեմ պայքարի մարտական կարգախոսի տակ «Հիգրալահը» մտադիր էր հաստատվել հարավային Լիբանանում, որտեղ իր մրցակիցն էր Սիրիայի դաշնակից Նարիի Բերիի ԱՍՍԼ շարժումը⁵⁵¹։

Փաստորեն, Լիբանանի հարավում պահեստինցիների ռազմական ներկայության վերականգնման և Իրանի ազդեցության աճի խնդիրները մքնոլորտը շիկացնող այն երկու գործոններն էին, որոնք ի գործ էին Իսրայելին ու Սիրիային ներքաշել նոր պատերազմի մեջ⁵⁵²։

Թերևս այդ էր պատճառը, որ աջ-քրիստոնյաները ստիպված էին, մուսուլմանների կողմից Լիբանանի պառակտման սպառնալիքի տակ, համաձայնել Սիրիայի հետ երկխոսությանը, նամանավանդ, որ իսրայելական ուժերի դրւումից հետո Թեղ-Ավիվի դիրքերը Լիբանանում Սիրիայի համամատ շատ ավելի բույլ էին։ Նման իրավիճակում ԱՄՆ-ը և Իսրայելը, առնվազն դեմ չէին իրադրության կարգավորման ուղղությամբ Դամասկոսի միջամտությանը։ Այս առումով հաշվի էր առնվում նաև հարավային Լիբանանում սիրիական ուժերի կողմից Իսրայելի ազդեցության «կարմիր գոտին» ջխախտելու փաստը։

1987թ. հուլիսին մինչ այդ միմյանց դեմ մարտնչող սիրիամետ 13 խմբակցություններ ձևավորեցին մեկ այլ, «Միասնության և Ազատազրման ճակատը» ՄԱՃ-ը, որի նպատակը Սիրիայի և Լիբանանի ռազմական, սոցիալ-տնտեսական, անվտանգության և կրթական համակարգերի միավորումն էր։ ՄԱՃ դաշինքն ուղղված էր նախազահ Ժմայելի և մարտնական միլիցիաների դեմ, որոնց վերահսկողության տակ էր գտնվում արևելյան Բեյրութն ու Լիբանանի հյուսիսային ծովափնյա հատվածը։ Սակայն առանց կենտրոնական կառավարու-

⁵⁵¹ Խալ Դելաֆոն, Աշվ. աշխ., էջ 21։

⁵⁵² Israel and Syria Both Have an Interest in Keeping the Lid in Lebanon, Economist, L., Vol. 302, N 7480, 1987, p. 19.

բյան, միացյալ բանակի և արդյունավետ հարկային համակարգի, երկրությունը կայունության հաստատման հեռանկարն ամեն դեպքում դեռևս աղոտ էր թվում էր⁵⁵³:

6. ԼԻԲԱՆԱՆՆ ՓԻՐԱՆԳԵՅԹ ԳՈՐԾԱՐՁԻ ՀԱՍՏԱՔԱՏՈՒՄ (1985-1986թթ.)

1983թ. փետրվարին ԱՄՆ-ի պետքարտուղար Շուլցը ներկայացնեցիների պալատի օտարերկրյա գործերով գրավվող հանձնաժողովի առջև հանդիս եկավ արտասահմանյան երկրներին ԱՄՆ-ի օգնությունների վերաբերյալ զեկույցով, որում շեշտվեց ազատ աշխարհի «տնտեսական և քաղաքական անվտանգության» համար Պարսից ծոցի «կենսական կարևորությունը»: Սակայն ընդամենը երեք տարի անց, 1986թ. փետրվարին Շուլցը նույն հանձնաժողովի առջև ԱՄՆ-ի արտաքին քաղաքական նոր հայեցակարգում չիշխատակեց Պարսից ծոցի, անգամ ՄԱ-ի մասին՝ փոխարենն ընդգծելով միջազգային ահարեւէլության խնդիրը, որը սերտորեն կապված էր Լիբանանի հետ⁵⁵⁴: Վաշինգտոնը, մասնավորապես պետքարտուղար Շուլցը, կասկածներ ունեին, որ Իրանը մասնակից է Լիբանանում ԱՄՆ-ի երեք քաղաքացիների առևանգման գործին⁵⁵⁵: Նշենք, որ Իրանը քացահայտ սատարում էր «Հիգրավահին» ընդդեմ Սիրիայի՝ հույս ունենալով, որ «Աստծո կազմակերպության» հսկողության տակ գտնվող

⁵⁵³ Don Peretz, Եղվ. աշխ., էջ 395:

⁵⁵⁴ Дон Обердорфер, Դևան Օտտան, США: Значение Персидского залива уменьшается, ТАСС. БПИ N 36, 20.2.1986, стр. 11. 1982թ. Հուանին Սուավիի դեկապարած խմբավորման կողմից առևանգված Բներության ամերիկյան համալսարանի նախագահ Դավիթ Ռոջը մեկ տարի անց ազատվել է Սիրիայի միջամտության արդյունքում: 1984թ. սիրիացիների միջնդրությամբ ազատ էին արձակվել տարրեր խմբավորումների կողմից պատասխ վերցված ամերիկացիներ: 1984թ. մարտին ու ամռանը «Հիգրավահի» կողմից Բներություն առևանգված ԱՄՆ-ի 8 քաղաքացիներից մեկին՝ Ջերանի Լելինին հաջողվել էր փախտատի դիմել 1985թ. փետրվարին: 1985թ. հունիսին «Էնվամական Զիհանը» պատասի էր վերցրել 6 ամերիկացի լրագրողի, Բներության համալսարանի հիվանդանոցի տնօրինելուն, մի ականեմիկոսի, երկու հոգևորականի և Լիբանանում ԿՀՎ-ի գործակալության դեկապար Ուիլյամ Բարլիին, որոնց ազատազրման ուրությամբ Ասադի փորձերն անհաջորդության էին նատանվել:

⁵⁵⁵ «Christian Science Monitor», N.Y., 20.11.1986.

թեյրութի հարավային արվարձանները, որտեղ գտնվում էին օտարերկրյա պատանդները, կղատնան Լիբանանում ապազ իշլամական համրապեսության ստեղծման հենակետը⁵⁵⁶:

1985թ. հուլիսին Խրայելի արտաքին գործերի նախարար Դավիթ Կիմչեն ԱՄՆ-ի նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Մակֆարլեյնին հայտնում է, որ իրանական քարձրաստիճան պաշտոնյաները պատրաստ են ազդել «Հիգբալլահի» վրա՝ ամերիկյան պատանդների ազատազրման հարցում Վաշինգտոնից ռազմական առաքումներ ստանալու դիմաց: Մակֆարլեյնն այս մասին տեղեկացնում է նախագահ Ռեյգանին, որը համաձայնում է օգտվել ընձեռված հնարավորությունից: Այս գործարքը հետագայում ստացավ «Փրան-Կոնտրաս» կամ «Փրանգեյք» անունը՝ «Վոքերգեյքի» նմանությամբ⁵⁵⁷:

Հարկ է նկատել, որ Ռեյգանն իր պաշտոնավարության սկզբից ևեր ուղիներ էր փնտրում Իրանի հետ տեղի «զափավոր» ուժերի միջոցով ԱՄՆ-ի հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ: Այդ իսկ պատճառով պատանդների ազատազրման խնդրով շահագրղութած Ռեյգանը, իրու քարի կամքի դրսերում, պատրաստ էր իրացիներին պաշտպանական գենը և զինամքերը վաճառել՝ խախտելով ահարեկչության դեմ ամերիկյան պաշտոնական հայեցակարգը և նոր պատանդների առևանգման խթան ծառայելու⁵⁵⁸.

Հարկ ենք համարում նշել, որ միևնույն ժամանակամիջոցին՝ 1985թ. հուլիսին, նախագահ Ռեյգանի հանձնարարությամբ փոխնախագահ Ջորջ Բուշը՝ կառավարության մակարդակով զիսավորած ահարեկչության դեմ պայքարի հատուկ խումբը՝ ելնելով արտերկրում ամերիկյան քաղաքացիների և շահերի դեմ ահարեկչական գործողությունների աճող սպառնալիքից, եկել էր այն եզրակացության, որ ահարեկչության դեմ ԱՄՆ-ի քաղաքականությունն ու պայքարի ծրագիրը պետք է լինեն կոչտ ու վճռական: Այն արտահայտում էր այլ պետո-

⁵⁵⁶ A Friendship Broken in Beirut, Economist, Vol. 302, No 7489, L., 1987, p. 55.

⁵⁵⁷ Հովհաննեսյան Ն., Իրան, Այրողական կոմսյոնի դարաշրջանը, Երևան, 2004, էջ 70-71:

⁵⁵⁸ «US News and World Report», Washington, DC., 24.11.1986.

բյունների հետ համատեղ կամ միայնակ ահարեկչական գործողությունների կանխարգելման և պատասխան միջոցառումների կիրառման Վաշինգտոնի պատրաստականությունը՝ բացառելով ահարեկչների հետ փոխզիջման զնալու ցանկացած հնարավորություն⁵⁵⁹: Կարծիք կա, որ ԱՄՆ-ի հետախուզության գծով սենատի հատուկ հանձնաժողովի նախագահ Դարենքերգերի ճնշման տակ ԿՀՎ-ն առաջին անգամ հատուկ հետախուզական ուսումնակարություն էր մշակել: Այնուհանդերձ, Քեյսիին ենթարկվող ԿՀՎ-ն և հետախուզական գերատեսչություններն ի վիճակի չեն նախագահին և ազգային անվտանգության գծով նրա օգնականներին ապահովել անհրաժեշտ համակողմանի և խորը տեղեկատվությանը: Եվ սա այն դեպքում, երբ նրանց գնահատմանը՝ ահարեկչությունն առավել սպառնալից տեսք էր ընդունում, քան խորիրդային հարծակումը, այն է՝ միջուկային գենքի կիրառմանը⁵⁶⁰:

Այսպիսով, Վաշինգտոնը, 1983թ. Բեյրութում ամերիկյան ու ֆրանսիական բիրախների նկատմամբ շիաների ահարեկչական գործողություններից հետո, գործի դրեց «ահարեկիչներին իրենց ապատարաններում հարված հասցնելու մարտավարությունը»՝ միաժամանակ ահարեկչությունն իրեւ փոքր ինտենսիվությամբ հակամարտություն որակելով: Ուշագրավն այն է, որ անգամ ֆրանսիացի քաղաքական գործիչներն ահարեկչության մասին խոսելիս, օգտագործում էին ամերիկյան փաստարկների ողջ զինանոցը՝ «ահարեկչությունը պատերազմ է», «այդ արտաքին ազգային դեմ նոր դիմադրական շարժում է պետք», «ամերիանեցտ է հարված հասցնել այն երկրներին, որոնք ահարեկչությունն օգտագործում են խոսավարման նպատակով»⁵⁶¹:

⁵⁵⁹ Доклад американской специальной правоохранительной группы по борьбе с терроризмом, Заявление вице-президента США Джорджа Буша, ТАСС. БПИ N 55, 19.3.1986г., стр. 3-4. Սիայն 1985թ. տեղի էր ունեցել ահարեկչական միջազգային 812 միջադիմ, որոնց արդյունքում զոհվել էր 926 մարդ, այդ թվում՝ 23 ամերիկացի:

⁵⁶⁰ Патрик Тайлер, Дэвид Оттаяэй, ЦРУ в движении: Кейси укрепляет свою роль в соответствии с "Доктриной Рейгана", ТАСС. БПИ N 66, 3.4.1986г., стр. 8.

⁵⁶¹ Игнасио Рамоне, Терроризм или конфликт малой интенсивности, ТАСС. БПИ N 210, 23.10.1986г., стр. 6-7. «Վաշինգտոն պուստ»-ի և «Էյ-Բի-Սի» հեռուստարաններության հարցումների համաձայն՝ ԱՄՆ-ի հասարակությունը դրական էր վերաբերի ահարեկիչների դեմ ճնշամիջոցների, մասնավորապես «ահարեկիչների ապատա-

Ծուրջ տարի ու կես պետքարտուղար Ծովցը շրջագայեց ողջ աշխարհով՝ փորձելով կանչելի ահարեկիշմերի հետ կապիտալիստական երկրների կողմից գործարքների դիմելու հնարավորությունը և կոչ անելով բռնոր երկրներին պաշտպանել ԱՄՆ-ի դիրքորոշումը՝ ահարեկիշմերի սպառնալիքներին տեղի չտալու հարցում։ Ռեյգանն իր նորություններում և մանյու աստվածներում հայտարարում էր, որ «Մենք երբեք բանակցությունների չենք գնա», և որ ԱՄՆ-ը չեզոք դիրք է գրավում իրանիրաքյան պատերազմում՝ միաժամանակ պահանջելով, որ ոչ մի երկիր Իրանին զենք չվաճառի։ Այդ երկրների մեծ մասն անշուշտ ենթարկվեցին ԱՄՆ-ի պահանջներին։ Սակայն որքան էլ տարօրինակ թվա, Վաշինգտոնն այս ողջ ընթացքում հակառակ իր կոչերին ու հայտարարություններին, խախտելով ինչպես ԱՄՆ-ի՝ այնպես էլ միջազգային իրավունքի նորմերը, Խրայելի միջոցով Լիբանանում ամերիկյան պատանդների ազատ արձակման դիմաց Իրանին զենք վաճառելու զաղունի գործարքի մեջ էր գտնվում⁶⁶²։ Հարկ է նշել, որ բացի պատանդների ազատազրումից, ԱՄՆ-ն Իրանին կոմունիզմի դեմ իրեն գործընկեր իր կողմը գրավելու՝ և Իրանի զինված ուժերում արևմտամետ կողմնորոշմամբ ավագ սպայակազմին արմատականների դեմ պայքարում օգտագործելու՝ նպատակներ էր հետապնդում։ Վ.Քայրուրյանի համաձայն՝ Իրանի հետ հարաբերություններում ընդհանուր տնտեսական, աշխարհաքաղաքական ու ռազմաստրատեգիական շահերի կարևորությունից ելնելով՝ Արևմուտքի երկրներն Իրանի հանդեպ «քննադատական քաղաքականություն» որդեգրելով հանդերձ, հույս ունեին մեղմել Իրան-Արևմուտք առճակատումը⁶⁶³։ Փաստորեն, Իրանն իրեն ա

բանների» դեմ հարվածների քաղաքականությանը։ ԱՄՆ-ը ռազմական գործողությունների պետք է դիմեր ամերիկացիների դեմ ահարեկական գործողությունների մասնակից ԱՄՆ-ի ցանկացած երկրի նկատմամբ։

Կոնգրեսը հասուն արգելու էր դրեմ Իրանին զենք վաճառելու վրա։

⁶⁶² «People's Daily World», N.Y., 13.11.1986. 100.000 ԱՄՆ \$-ի դիմաց ամերիկացի մի պատանդի պատազրման անհաջող գործար ևս կատարվեց։

• Այս մասին տես՝ Տօրգովեց օրужյան ռազմական գործողությունների մասնակից ԱՄՆ-ի ցանկացած երկրի նկատմամբ։

• Այս մասին տես՝ Տօրգովեց օրужյան ռազմական գործողությունների մասնակից ԱՄՆ-ի ցանկացած երկրի նկատմամբ։

• «Washington Post», 19.11.1986. Արմատականները դեմ էին Վաշինգտոնի հետ ցանկացած մերձեցման։

⁶⁶³ Քայրուրյան Վ., Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 735-36։

րագ ծավալման ուժերի ռազմահամգրվան, իր անհրաժեշտ տեղը պիտի է գրադադար նաև Պենտագոնի աշխարհաքաղաքական ռազմավարության մեջ⁵⁶⁴:

Այսպիսով, Թեհրանի հետ պատահների փոխանակման գործարքով գրադադար էր ԱՄՆ-ի ԱՌԽ-ը⁵, որի գործունեությունն ու ծրագրերը գաղտնի էին պահպատ կոնգրեսից ու Սրացյալ Նահանգների ժողովրդից⁵⁶⁵: Սակայն պետքարտուղար Շուշը ու պաշճախարար Վայնբերգերը գործարքն «անհերերություն» համարելով, ամենայն հավանականությամբ, խուսափել էին վերջինիս մասնակցությունից⁵⁶⁶: Նայսկին պետքարտուղար Հեյզն իր հուշերում ևս հավաստում է, որ երբեւ չի լիազորել կամ առաջարկել, որպիսի ԱՄՆ-ն Իրայելի միջոցով Իրանին զենք վաճառի, առավել ևս՝ որ այդ ուղղությամբ իրավասությունը չի եղել⁵⁶⁷: Հարկ է նշել, որ գործարքի, մասնակորապես 1985թ. ամսանը Լիբանանում ամերիկյան պատահնի՝ հոգևորական Բենջամին Ուլյյի ազատազրնան նպատակով զենքի խրայելական առաջումների մասին իր իրազեկությունը քարցնում էր նաև փոխնախագահ Բուրումը⁵⁶⁸:

Փաստորեն Ռ.Ռեյզանը, որը «Վլրերգեյր» ճգնաժամի հետ կապված ժամանակին անխնա ծաղրել էր Ջիմմի Կարտերին, 1986թ. ուշ աշնանը, «Իրանգեյրի» գործարքի գաղտնազերծումից հետո, անձամբ հայտնվեց ոչ նախանձելի իրավիճակում⁵⁶⁹: Սա դեմոկրատների

⁵⁶⁴ Դրանով էր բացատրվում Պակիստանի, Թուրքիայի, Սաումյան Արարիայի և Իրայելի միջոցով իրանական արմատականների հետ հարաբերությունների քարելագման ուղղությամբ ԱՄՆ-ի գործադրած ջանքերը: Այս մասին տես՝ Վ.Դ. Կոպրա, Օսկ Բաշիրտու-Իսլամաբադ-Տեղեր, ՏԱԾ. ԲՊИ N 192, 1.10.1986թ., ստ. 44.

⁵⁶⁵ Սպիտակ տան աշխատակազմի ղեկավար Դոմալդ Ուդամը, ազգային անվտանգության գծով օգնական փոխնակալական Զոն Պոյնտերսները, ԿՀՎ-ի պետ Վ. Թեյսին և Ազգային Անվտանգության ծառայության՝ ԱԱԾ-ի «օպեր-աշխատակիցներ», մասնավորապես ծովային հետևակային փոխնակալական Օլիմպիկ Նորտը: Վերջիններին օգնել էին ԱԱԾ-ի նախկին ղեկավար Ռոբերտ Մակֆարլենը և այլոր:

⁵⁶⁶ Գյու Խոլլ, Иранское дело Рейгана-основание для импичмента, ТАԾ. ԲՊИ N 225, 19.11.1986թ., ստ. 3-4.

⁵⁶⁷ «Philadelphia Inquirer», USA, 23.11.1986.

⁵⁶⁸ Alexander Haig, Charles McCarry, Inner Circles, How America Changed the World, A Memoir, N. Y., 1992, p. 552.

⁵⁶⁹ Томас Олифант, Дилемма Буша: что сказать, ТАԾ. ԲՊИ N 238, 8.12.1986թ., ստ. 9.

⁵⁶⁹ «Newsday», N.Y., 30.11.1986.

հաղթանակն էր, որոնք ճգույն էին գործարքի մասին նախագահի «ամփրազեկության» հանգամանքը՝ Ռեյգանի «արիվնայան զարշապարը», օգտագործել Վերջինիս դեմ⁵⁷⁰:

Գործարքի գաղտնազերծման արդյունքում ԱՄՆ-ի միջազգային հեղինակությունը խաթարվեց նաև նրա ԱՄ-ի դաշնակիցների, հատկապես Սառույան Արարիայի, Հորդանանի և շափակոր արարական երկրների շրջանում, որտեղ մոտ մինչ այդ հարգանքը էր ներշնչել իրանիրաքյան պատերազմում ԱՄՆ-ի որդեգրած շնորհ քաղաքականությունը⁵⁷¹:

Մինչդեռ Դամասկոսը գործարքի մասին տեղեկացել էր նախքան բացահայտումը, որի մոտ խիստ վլողվունք էր առաջացրել սեփական միջոցներով պատանեների ազատազրման հնարավորության ձախողութը՝ ԱՄՆ-ից տնտեսական և այլ գիշումներ կորցելու ակնկալիքով։ Դամասկոսը հույս ուներ նաև ահարեկչությունը հովանավորող երկրի պիտակից ձերբազաւութելու նպատակով ճնշում բանեցնել Վաշինգտոնի վրա, սակայն Վերջինս տեղի չտվեց այդ սպառնալիքներին։ Գործարքի բացահայտումից հետո, նոյնամբերի կեսին, Սահստակ տունն ընդամենը փոքր-ինչ մեղմացրեց Սիրիայի դեմ պատժամիջոցների կիրառումը⁵⁷²։

⁵⁷⁰ «Boston Glob», 1.12.1986.

⁵⁷¹ «US News and World Report», Washington, 24.11.1986.

* Վաշինգտոնը Սիրիային, Լիբիային, Նիկարագուային և Իրանին դատում էր ահարեկչական երկրների շարքը։ Այս մասին տես՝ Հակ Փատ, Տerrorizm: Реальность, причины и идеология, ТАСС. БПИ N 247, 19.12.1986г., стр. 11-20.

⁵⁷² «New York Post», 11.12.1986.

**7. 1988թ. ԱԽՐԻԱ-ԱՍԵՐԻԿՅԱՆ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԼԻԲԱՆԱՆԻ ճԳՆԱԺԱՄԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄՔ՝**

1988թ. առաջին կեսին Լիբանանի կառավարությունը փորձում էր ազգային հաշտության քաղաքականություն վարել, սակայն թե՛ ծախ և թե՛ աջ քաղաքական կուսակցությունները հանդիս էին գալիս խորհրդարանական ժողովրդավարության վերականգնման օգտին⁵⁷³:

Միևնույն ժամանակ լիբանանցիները պատրաստվում էին նախագահական ընտրություններին, որի նախաշեմին երկրում քննարկվող հիմնական թեման դարձել էր սիրիակամերիկյան հարաբերությունների խնդիրը⁵⁷⁴: Բանն այն է, որ ԱՄՆ-ը և նրա արևմտյան գործընկերները դեռևս 1986թ. աշնանից սկսել էին ակտիվ միջոցներ ձեռնարկել Դամասկոսի հետ «սառեցված» հարաբերությունների «ջերմացման» ուղղությամբ՝ քացահայտ շահագրգուվածություն հանդիս քերելով Սիրիայի հետ քաղաքական երկխոսության վերականգնման հարցում: Արևմտություն հավանաբար հույս ուներ Դամասկոսի քաղաքական հնարավորություններն օգտագործել իրան-իրաքյան պատերազմի, Լիբանանում մի շարք խնդիրների կարգավորման՝ նախևառաջ արևմտյան պատահների ազատագրման, ինչպես նաև մերձավորարևելյան կարգավորման որոշ մեխանիզմների վրա ներգործելու ուղղությամբ⁵⁷⁵: Հաշվի էր առնվում նաև Իրանի և ԽՍՀՄ-ի հետ Սիրիայի սերտ դաշնակցության փաստը⁵⁷⁶: Չի քացառվում, որ «Իրաների» ստորացումը կրելուց հետո, Դամասկոսի միջնորդությամբ Լիբանանում գտնվող ա-

⁵⁷³ Այս նասին նաեւրամասն տես՝ Հարությունյան Ա., Սիրիա-ամերիկյան համագործակցությունը Լիբանանի 1988թ. նախագահական ընտրությունների և ճգնաժամի կարգավորման ուղղությամբ, Սերծավոր Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 144-155:

⁵⁷⁴ Ежегодник, М., 1988, стр. 296.

⁵⁷⁵ Онищенко Ю. и Крутыхина М., К предстоящим президентским выборам, Внутриполитическая обстановка в Ливане, ТАСС. БПИ N 61, 29.3.1988г., стр. 29-32.

⁵⁷⁶ Шенников В., Основные направления политики США и других стран НАТО на Ближнем Востоке, ТАСС. БПИ N 93, 16.05.1988, стр. 40.

⁵⁷⁶ «International Herald Tribune», Paris, 27.9.1988.

մերիկյան պատաճանների ազատազրման մտադրությամբ, ԱՄՆ-ը «ստիլիզված էր ջերմացներ» Սիրիայի հետ հարաբերությունները, որն անշուշտ կուժեղացներ նաև Ասադի հաղթաքղթերը⁵⁷⁷:

Դեռ ավելին, նոր իրողության պայմաններում ԱՄՆ-ը ճգնում էր մեղմացնել Լիբանանում Դամասկոսի հակասմերիկյան և հակախրայլական քաղաքականությունը, ծայրահեղ դեպքում չեղոքացնել նրա դերն այդ երկրում լիբանանյան նախագահական վերահաս ընտրությունների նախաշեմին:

Փաստենք, որ Հաֆիզ ալ-Ասադը տարեսկզբին հանդիպում էր ունեցել ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Շուլցի հետ, որի ընթացքում քննարկվել էին միջազգային համաժողով հրավիրելու, ԽՍՀՄ-ին այդ գործընթացի մեջ կառուցողական ոգով ներգրավելու՝ և այլ հիմնախընդիրները: Համբիպումից հետո, որոշ հանգամանքների բերումով, Սիրիայի նախագահը սկսեց «հաշվի նստել» Վաշինգտոնի կարծիքի հետ՝ Շուլցի ծրագրում «ակտուվ կառուցողական դեր» ստանձնելով⁵⁷⁸:

Ի տարրերություն 1983-84թթ. լիբանանյան զարգացումներում ուղղամական միջամտությանն ու հակամարտող կողմերի նկատմամբ ԱՄՆ-ի ոչ անկողմնակալ դիրքորոշմանը, Վաշինգտոնն այժմ փորձում էր ԱՄՆ-ի դիվանագիտության համար հաջողություն ապահովագրել տեղական կուսակցությունների հետ համագործակցության միջոցով⁵⁷⁹:

Իրենց հերքին, լիբանանյան քաղաքական ուժերը՝ կորցնելով ներկանանյան գործերը ներքին միջոցներով կարգավորելու հույսը, մեծ ակնկալիքներ ունեին ԱՄՆ-ի և Հարավային Ասիայի գծով ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Ռիշարդ Մերֆիի դամասկոսյան այցի

⁵⁷⁷ «Financial Times», London, 26.9.1988.

* Դեռևս 1987թ. սեպտեմբերի 27-ին ԽՍՀՄ-ի արտօգործնախարար Է.Շևարճանն և Սիրիայի Արքական Խանրապետության (ՍԱՀ) արտօգործնախարար Ալ-Չարաան հանդիպել էին Նյու-Յորքում: Համեյսման նպատակն էր ՍԱՀ հակամարտության կարգավորման ուղղությամբ միջազգային համաժողովի հրավիրումը՝ որոր շահագրգիռ կողմերի, այդ բայց՝ ՊԱԿ-ի մասնակցությամբ: Այս նախին տես՝ «Правда», Մոսկվա, 25.10.1987.

⁵⁷⁸ Туркатаенко Н., К итогам поездки госсекретаря США Шульца на Ближний Восток, ТАСС. БПИ N 49, 11.03.1988, стр. 5.

⁵⁷⁹ Barry Rubin, The US Policy in the Intifada Era, 1988-1990, Middle East Contemporary Survey, Vol. 11, 1987 (Westview, 1989). <http://meria.idc.ac.il/uspolicy/data1988.html>.

արդյունքներից: Այս անգամ ԱՄՆ-ի ներկայացուցիչները գերադասում էին խոսել ոչ թե ինչ-որ նախաձեռնության կամ ծրագրերի, այլ այդ երկրի հիմնախնդիրների համայիր կարգավորման մասին: Ուշագրավն այն է, որ լիբանանյան հոգսերի նկատմամբ տարիներ շարունակ լիակատար անտարբերությունից հետո, ճգնաժամի կարգավորման ուղղությամբ Վաշինգտոնի միջնորդությամբ հանդես գալու նախաձեռնությունը լիբանանցիներն այնուհանդերձ կապում էին Դամասկոսի հետ⁵⁸⁰:

Վաշինգտոնն այժմ հետամուտ էր մի կողմից՝ Սիրիայի ու նրա լիբանանյան դաշնակիցների, մյուս կողմից՝ Լիբանանի նախագահ Ամին Ժնայելի ու աջ-քրիստոնեական ուժերի միջև «կամուրջների անցկացմանը», քաղաքական բարեփոխումների հարցում քրիստոնյաների համաձայնության ձեռք բերմանը և Լիբանանում Դամասկոսի հատուկ դերի ճանաչմանը⁵⁸¹: Ներլիբանանյան կարգավորման ճանապարհին Վաշինգտոնը երկու հիմնական խնդիր էր տեսնում՝ վերացնել Լիբանանի պետական կառույցի կոնֆեսիոնալ համակարգն ու ապահովել մուսուլմանական համայնքի մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին: Ընտրությունների անցկացումն ու նոր կառավարության ձևավորումն անհնար էր դիտվում առանց «ազգային հաշտության» կայացման: Սինջեռ քրիստոնյաները չէին ցանկանում հրաժարվել իրենց իշխանական արտնություններից՝ «հաշտությունը» պայմանավորելով Լիբանանում սիրիական գորքերի դրամական հետ:

Սերֆին հետապնդում էր նաև Սիրիայի հովանու ներքո՝ 1983 և 1984 թթ. Ժնանում գումարված ազգային հաշտնեցման համաժողովի նմանությամբ լիբանանյան «համազգային երկխոսության» հրավիրման նպատակ⁵⁸²:

⁵⁸⁰ Крутыхин М., Некоторые аспекты ливанского кризиса, ТАСС. БПИ N 55, 21.4.1988г., стр. 33.

⁵⁸¹ Ю.Онищенко и М.Крутыхина, К предстоящим президентским выборам, նշվ. աշխ., էջ 30:

Այս կապակցությամբ Դամասկոսը եիշեցնում է, որ հատկապես նախագահ Ժնայելն էր ծախողել 1985 թ. գետեմբերին Սիրիայի նախաձեռնած ներլիբանանյան համաձայնության ձեռքբերման փորձերը, այն դեպքում, եթե հիմնական զինված խմբա-

Սակայն լիրանանյան «Ալ-Մասա» քերթի համաձայն՝

1. ԱԱՄ-ի համար լիրանանյան խնդիրներն արար-իսրայելական հիմնախնդրի համեմատությամբ ետին պլանի վրա էին գտնվում;

2. Վաշինգտոնն ամենահին էլ չէր պատրաստվում հրաժարվել տարածաշրջանում Իսրայելի շահերի պաշտպանությունից;

3. Ամերիկացիները գործ ունեին գերազանցապես նախազահ Ամին Ժմայելի հետ, և նրանց ջանքերը կենտրոնացված էին Ժմայելի կապերը Դամասկոսի հետ վերականգնելու ուղղությամբ։ Սինջեռ նախազահի քաղաքական մեկուսացման ու Լիրանանի մուսուլմանների կողմից նրա դեմ բռոդքարկման պայմաններում Ժմայելը ոչ թե նախազահ, այլ առաջնորդ էր համարվում, այն էլ՝ոչ թե ժողովրդական, այլ՝ քրիստոնեական կլանի։

Իր հերթին, սիրիական դեկավարությունը Մերֆիին ներկայացրել էր լիրանանյան ճգնաժամի կարգավորման իր ծրագիրը՝ առանձնացնելով այն մերձավորարևելյան հիմնախնդիրների կարգավորման փաթեթից։ Եվ որպես լիրանանյան հիմնախնդիրը մերձավորարևելյան փաթեթից առանձնացման գործընթացի սկիզբ, Վաշինգտոնը պետք է Իսրայելին համոզեր դուրս բերել իր գորքերը Լիրանանի տարածից։ Սիայն այդ դեպքում երկրի հարավում լիրանանյան ու պահեստինյան տարրեր զինված խմբավորումների ներկայությունը չէր կարող արդարացվել իրու Թել-Ավիվի ներկայության դեմ հակակշիո։ Ենթադրվում էր, որ խրայելական ուժերի դուրս բերումը հնարավորություն կը նձեռներ Լիրանանի հարավում, ավելի ստույգ, լիրանանախսրայելական սահմանի երկայնքով ԱԱԿ-ի ուժերի հետ մեկտեղ լիրանանյան ուժեր տեղակայել։ Երկրի հարավն ու Բերդայի հովիտը «փաղադության գոտու» կվերածվեին, ուր հնարավոր ցանկացած զինված ելույթ կճնշվեր՝ իրու Իսրայելի դեմ չարդարացված քայլ։

Սիրիացիներն էլ հնարավորություն կստանային գրադվել արևմտյան Բեյրութի անվտանգության, լիրանանյան մայրաքաղաքի

վորումները ստորագրել էին «Եղակ համաձայնագիրը»։ Սիրիացիների պահմանը՝ հաշտեցման իրենց ծգութմները ձախողում էր նախազահ Ժմայելը՝ օրինակ «ողմկամուրյում» հանդես բերելով վարչական Զարամեկի սպանության մեղավորներին գտնելու և պատժելու հարցում։ Լիրանանյան մուսուլմանների կարծիքով՝ սպանությունը կազմակերպել էին ՀՈՒ-ի և լիրանանյան զինված ուժերի որոշ տարրեր։

հարավային շրջանների հսկողության խնդրով^{*}, որ տեղակայված էին «Հիգրալլահի» և իրանական կողմնորոշմամբ մուսուլմանական ծայրահեղական այլ խմբավորումների հենակետեր: Վերջին առաջարկի առնչությամբ Մերֆին ԱՄՆ-ի կողմից «կանաչ լույս» չերաշխավորեց՝ գտնելով, որ Դամասկոսն արևելյան Բեյրութով կարող է զբաղվել միայն հարավային Լիբանանի անվտանգության խնդիրներն Խրայելի հետ կարգավորելուց հետո:

Ինչ վերաբերվում է Լիբանանի նախագահի թեկնածության խնդրի շուրջ երկու պետությունների դիրքորոշումներին, ապա Սիրիայի նախագահի կարծիքով՝ «Դամասկոսի միջոցով» ընտրությունների անցկացումը կարող էր Լիբանանում խաղաղության վերականգնման ազդանշան ծառայել, հակառակ դեպքում՝ իրադրությունը հոյի էր անկանխատեսելի հետևանքներով: Վաշինգտոնի պաշտոնական դիրքորոշումն այս հարցում առավել քան չեզոք էր: Մերֆիի համաձայն՝ ԱՄՆ-ը որոշել էր գործակցել Լիբանանում նախագահական ընտրությունների անցկացմանը՝ նշված ժամկետում և առանց խոչընդոտների:

Այդուհանդերձ, սիրիաամերիկյան բանակցությունները որոշ արդյունքներ արձանագրեցին, որոնց ուղղությամբ ԱՄՆ-ի ծետնարկած քայլերն էին:

• Մերֆին Լիբանանի նախագահի խորհրդական Ի.Սալեմի միջոցով նախագահ Ժմայելին հանձնեց լիբանանյան կառավարության նոր կառուցվածքի և կոնֆեսիոնալ համակարգի փոփոխության հնարավորության շուրջ Սիրիայի և ԱՄՆ-ի պայմանավորվածությունների փաթեթը: Լիբանանի նախագահը պետք է ամենասեղմ ժամկետում պատասխաններ առաջարկեներին:

• ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցները մի շարք հանդիպումներ ունեցան աջրիստուննեական ուժերին ու նախագահ Ժմայել-

Սակայն իրականում Բեյրութի հարավային արվարձանների մասին հարցն այլ կերպ էր դրվել Մերֆիի և Ասադի համեմատման ընթացքում: Երբ ամերիկյան պատվիրակը հարցրել էր «Հիգրալլահի» նկատմամբ սիրիացիների ծեռարկվելիք միջացառումների հնարավորության մասին, Ասադը պատասխանել էր, որ դրանց կիրառումն անհնատ է առանց արևելյան Բեյրութում աջ-քրիստոնեական միլիցիայի և կոսակցությունների նկատմամբ նմանատիպ միջոցառումների կիրառման:

լին ընդդիմադիր կոսակցությունների և կազմակերպությունների դեկալարների հետ: Ամերիկացիները լիբանանյան քաղաքական գործիչներին տեղեկացրեցին Դամասկոսում Սերֆիի վարած քանակցությունների արդյունքների մասին՝ խնդրելով հնարավորին չափ շուտ պատասխանել առաջարկներին:

Միրիան և ԱՍԽ-ը պայմանավորվածության էին եկել հետևյալում՝

1. Խորհրդարանում պատգամավորների տեղերը քաժանվում էին մուտքման և քրիստոնյա համայնքների միջև հավասարապես, որի արդյունքում պատգամավորական տեղերն ավելացվելու էին:

2. Խորհրդարանի նախագահն ու անդամներն ընտրվում էին քառամյա ժամկետով:

3. Վարչապետն ընտրվում էր խորհրդարանի պատգամավոր: Խորհրդարանի նախագահի ստորագրությունը պարտադիր էր կառավարության ձևակորումը, նրա կազմի հաստատումը կամ կարինետի արձակումը հրահանգավորող փաստաթուրում՝ նախագահի ստորագրությանը զուգահեռ:

4. Նախագահի, խորհրդարանի նախագահի և վարչապետի ընտրության դեպքում պահանջվող պատգամավորական ձայնների մեծամասնությունը պետք է որոշվեր նույն կարգով:

5. Պատգամավորների ճայների ոչ պակաս, քան 2/3-ով ընդունված հրամանագրերը ստորագրվելու էին նախագահի, վարչապետի և համապատասխան նախարարությունների ղեկավարների կողմից:

6. Որոշ ժամանակ (16 տարի) անց քաղաքական կրոնադավանական համակարգը պետք է վերացվեր⁵⁸²:

Սիրիայի ղեկավարները ևս իրենց լիբանանյան դաշնակիցներին ներկայացրին քաղաքական քարեխոխումների ուղղությամբ ծեռք բերված պայմանավորվածությունների հիմնադրույթները: Այդ նպատակով Դամասկոս գործուղվեց Լիբանանի խորհրդարանի նախագահ

⁵⁸² Մ. Կրուտիխին, նշվ. աշխ., էջ 33-36:

Հուսեյն ալ-Հուսեյնին, վարչապետի պաշտոնակատար Մելիմ ալ-Հոսը, ԱՍԿ-ի նախագահ Վալիդ Ջումբարը, ԱՍԱԼ-ի առաջնորդ Նարին Թերին, որոնք ընդհանուր առմամբ համաձայնեցին քաղաքական քարեփոխությունների ճամապարհով Լիբանանի հակամարտության կարգավորնան ծրագրի հետ: Ամերիկացիները նույնականացրեցին հանձնեցին ամերիկասիրիական գործակցության արդյունքում ձեռք բերված առաջարկների փարեքը⁵⁸³:

Հարկ է նկատել, որ Վաշինգտոնի և Դամասկոսի միջև պայմանագրով առաջին հայացքից չին շոշափում Լիբանանի հիմնախնդիրներն ու ճգնաժամի առաջացման պատճառները: Այնուհանդեռ, վերահաս նախագահական ընտրությունների նախաշեմին, դրանք զգալիորեն ակտիվացնում էին թե՛ երկրի ներքաղաքական զարգացումները, և թե՛ նախընտրական գործընթացում միջազգային՝ մասնավորապես Դամասկոսի ու Վաշինգտոնի ներգրավվածությունը:

8. ԼԻԲԱՆԱՆԸ 1988Թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԾԵՄԻՆ: 1989Թ. ՍԻՐԻԱԼԻԲԱՆԱՆՑԱՆ ԹԱԻՖԻ ՀԱՍՏԱՅԱԳԻՐԸ*

1988թ. նախագահական ընտրությունների նախաշեմին քազմաթիվ լիբանանցիներ «Քրաշըի» էին սպասում Վաշինգտոնի, Բեյրութի և Դամասկոսի միջև «աշխատանքային փաստաթղթերի» փոխանակման և ամերիկախորհրդային հանդիպումների արդյունքներից:

Այնուհանդեռ, 1988թ. սեպտեմբերի դրությամբ, երբ լրանում էր Ամին Ժմայելի պաշտոնավարության ժամկետը, լիբանանյան քաղաքական ուժերը դեռևս համաձայնության չին եկել նախագահի իրավահաջորդի հարցում: Քաղաքական այս փակուրու առաջացմանը, որոշ կարծիքների համաձայն, նպաստում էր ամերիկյան դիվանագի-

⁵⁸³ К предстоящим президентским выборам, №24. аշխ., էջ 31-32:

Այս մասին մանրամասն տես՝ Հարությունյան Ա., Սիրիա-լիբանամյան Թայեֆի համաձայնագիրը, Հանդես Երևանի համալսարանի, N 1(96), Երևան, 2000, էջ 111-118:

տությունը, որի միջամտության արդյունքում^{*}, Ու.Սերժիի առաջարկով, Սիրիան հրաժարվում էր իր թեկնածուի՝ Լիբանանի նախկին նախագահ Սուլեյման Ֆրանժինի առաջարկությունից⁵⁸⁴: ԱՄՆ-ը լուր սատարում էր Դամասկոսի երկրորդ թեկնածուին՝ իրավաբան և խորհրդարանի անդամ Սիրիայի ալ-Դահերին, որն անողակիորեն նպաստեց լիբանանյան կառավարության հետագա պարակտումնը⁵⁸⁵:

Նշենք, որ Դամասկոսը հավանություն չուվեց ԱՍԿ-ի առաջնորդ Վալիո Զումբրարի առաջ քաշած քրիստոնյա մարտի Անտոնան ալ-Աշքարի՝ թեկնածությանը՝ հակառակ Լիբանանի ներքին գործերին շմիջամտելու ուղղությամբ Սիրիայի արտաքին քաղաքական գերատեսչության դեկավարի նախկինում արված հայտարարություններին: Սիրիայի հավանությանը շարժանացան նաև պատզամափորների առաջարկությամբ խորհրդարանի նախագահ Հուսեյն ալ-Հուսեյնի թեկնածությունը: Դամասկոսին բնականարար դուր չեկավ նաև լիբանանյան արհմիտությունների առաջնորդների ու խորհրդարանի պատզամափորների լայն շրջանի աջակցությունից օգտվող «Ազգային Դաշինքի» առաջնորդ Ռայմոն Էդդեի թեկնածությունը, որը երդվել էր պայքարել Լիբանանից սիրիական և խրայելական տժերի դուրս քերման օգտին:

Սիրիան ու ԱՄՆ-ը բացասաբար վերաբերվեցին նաև բանակի հրամանատար մարտի Սիշել Առանի թեկնածությանը: Խնդիրն այն էր, որ Սիրիան ցանկություն չուներ Լիբանանի նախագահի պաշտոնում տեսնել մի զինվորականի, որը պայքարել է իր լիբանանյան դաշնակիցների՝ դրուզների և ԱՍԿ-ի և շիական ԱՍԱԼ-ի դեմ, և որի վրա Դա-

* Լիբանանում մարտիների կարողիկոս Բուտրոս Սֆեյրի համաձայն՝ ԱՄՆ-ը նախապես իր միջոցով Սիրիային էր ներկայացրել նախագահական թեկնածուների ցուցակը: Այս մասին տես՝ Foreign Broadcasting Information Service Daily Reports, Washington, 1988.

• Անուան ալ-Աշքարի աջակցություն չէր գտել նաև ԱՍԱԼ-ի մոտ:

⁵⁸⁴ Դին Փիպեր, Упущенный шанс на измученной земле, Иностранные печать о неурегулированном внутриполитическом положении в Ливане, ТАСС, БПИ N 203, 18.10.1988, стр. 34.

⁵⁸⁵ «New York Times», 30.8.1989. Լիբանանում մարտիների կարողիկոս Բուտրոս Սֆեյրի համաձայն՝ ԱՄՆ-իր միջոցով Սիրիային էր ներկայացրել նախագահական թեկնածուների ցուցակը:

• Անուան ալ-Աշքարի աջակցություն չէր գտել նաև ԱՍԱԼ-ի մոտ:

մասկոսն ազդեցություն չուներ: ԱՄՆ-ը ևս դեմ էր զինվորական անցյալ ու մեծող նախագահի թեկնածությանը, մտավախություն ունենալով, որ վերջինս կարող է «ԱՄՆ-ի օրակարգից դուրս» ճգնաժամի առաջացման պատճառ դառնալ⁵⁸⁶:

Սիներույն ժամանակ լիբանանյան տունի մուտքմանների զինավոր քաղաքական խմբավորումը՝ «Ժայամական հանդիպումը», Սիրիայի միջնորդությամբ փոխգիշման հասնելու շուրջ քանակցություններ էր վարում քրիստոնյա քաղաքական գործիչների հետ: Խմբավորման անդամները պատրաստ էին նախագահ շընտրվելու դեպքում դեկավարել անցումային կառավարությունը: Նշենք, որ վարչապետի պաշտոնակատար տունի մուտքման Սելիմ Հոսը, որն իր զինավոր խնդիրը համարում էր առկա ստատուս քվոյի պահպանումը, հատկապես տնտեսության ոլորտում, լրացնում էր լիբանանյան սիրիամնենների շարքը:

«Հիգրալլահն» իր հերթին պահանջում էր «քաղաքական մարոնիզմի վերացում» և նախագահի պաշտոնում շիա աստվածաբանի ընտրությամբ «իշլամական հանրապետության» ստեղծում: Լիբանանի շիական քարծրագույն իշլամական խորհրդի նախագահի տեղակալ շեյխ Մուհամմադ Մահդի ալ-Դինն առաջ էր քաշում «ժողովրդավարական մեծամասնության» հիման վրա ընտրությունների գաղափարը՝ հերքելով քրիստոնյա-մարոնիների օգտին նախագահի պաշտոնի ամրագրումը, և առաջ քաշելով Սելիմ Հոսի թեկնածությունը:

Ինչ վերաբերվում է «Ժայամական-հայրենասիրական» ճամրարին⁵⁸⁷, ապա վերջինիս գործողությունների համակենտրոնացմանը խոչընդոտեցին ԱՍԱԼ-ի և «Հիգրալլահի» միջև ուազմական գործողությունները և Արաֆարի կողմնակիցների ու հակառակորդների միջև քա-

⁵⁸⁶ P.Salem, Awn and Taif, Two Years of Living Dangerously, General Awn and the Precarious Rise of Lebanon's Second Republic, The Beirut Review, LCPS, Vol. 1, No 1, 1991, p. 65. Առնը ստեղծել էր իր նախընտրական թիմը և լիբանանյան քաղաքական քանակությունից ամերիկամետների, սիրիամնենների հեռացմանն ուղղված իր գործեկանությունները և Արաֆարի կողմնակիցների միջև պատճենագործությունը:

ռատկած «ճամբարների միջև պայքարը», որոնց միավորում էր բացառապես Լիբանանում սիրիական ուղեգծի սատարումը⁵⁸⁷:

Սամիր ԶաԶայի զիսավորած ԼՈՒ-ը, բողոքարկեցին Հաֆիզ Ասադի մերձավոր ընկերոջ, Սովեյման Ֆրանժիեի թեկնածությունը՝ ելնելով Ասադի կամքին Ֆրանժիեի ականջալուր լինելու մտավախորյունից՝ հատկապես Լիբանանում սիրիական 40 հազարանոց զորքերի առկայության պայմաններում: Աջ-քրիստոնյաների համար անընդունելի էր նաև սիրիական նախագահի երկրորդ թեկնածու Միհսայի ակահերի թեկնածությունը:

Այսպիսով, լիբանանյան քաղաքական ողջ սպեկտրը ներկայացնող ուժերի միջև ծրագրերի բացակայության ու տարածայնությունների պայմաններում, 1988թ. սեպտեմբերի 21-ի նախագահական ընտրությունները գործնականում դատապարտված էին ծախողման: Ընտրությունների հաջորդ օրը, նախքան նախագահի լիազորություններից հրաժարվելը, Ժմայելն իր աշխատակազմի ղեկավար, լիբանանյան բանակի զիսավոր հրամանատար Միշել Առինին նշանակեց վարչապետի պաշտոնում, որը պետք է ղեկավարեր 6 զինվորականներից կազմված «ռազմական անցումային կառավարությունը»⁵⁸⁸: Առնի նշանակմանը հավանություն տվեցին քրիստոնյա-աջերը, սակայն մերժեցին մուսուլման-Ճախերը՝ այն ոչ լեզիտիմ համարելով: Ռազմական կարինետի 3 մուսուլման ներկայացուցիչներ՝ սուննի, շիա և դյուզ, հրաժարվեցին համագործակցել Առնի և երկու սպա քրիստոնյաների հետ: Փոխարենը՝ մուսուլման առաջնորդները Սիրիայի աջակցորյանք իրենց հավատարմությունը հայտնեցին վարչապետի պաշտոնակատար Սելիմ ալ-Հոսի զիսավորած լիբանանյան կառավարությանը⁵⁸⁹:

Այդժամ Առնը ձևավորեց իր կառավարությունը, որի մեջ երկու քրիստոնյա նախարարների՝ գեներալ Իսամ Զամրայի ու Էղզար Մալուֆի հետ նուազ նաև անձամբ վարչապետը: Փաստորեն, երկրում

⁵⁸⁷ М.Крутихин, “Исламско-патриотический” лагерь Ливана, ТАСС. БПИ N 216, 4.11.1988г., стр. 23-24.

⁵⁸⁸ Ежегодник, М., 1989, стр. 307.

⁵⁸⁹ Дин Фишер, նշվ. աշխ., էջ 66:

ստեղծվեց լեզիտիմ իշխանության ձեռք բերման ուղղությամբ մրցակցող երկու հակամարտող կառավարությունների (իրենց առանձին բանակներով) համագոյակցություն: Լիբանանը կրկին բաժանվեց երկու կառավարությունների միջև՝ Բաարդա նախագահական պալատում գործող կառավարության՝ Սիշել Առն Վարչապետով և արևելյան Բեյրութում գործող կառավարության՝ Սելիմ Հու Վարչապետով:

Սկզբնական շրջանում բխում էր, թե կառավարության պառակտումը չի երկարատևի՝ երկու վարչապետների կողմից նախագահական շտապ ընտրությունների անցկացման շուրջ արտաքոստ համաձայնության գալու լույսի ներքո: Եվ իսկապես, կառավարական աշխատանքները լուր կերպով շարունակվում էին երկու կարինետների միջև: Սակայն շտապով պարզվեց, որ Առնի հավակնությունները դուրս են գալիս Հուի կարինետի լեզիտիմությունը մերժելու շրջանակներից և նախագահական պաշտոնը գրադենելու նպատակ են հետապնդում⁵⁸⁹: Առնը՝ մի կողմ դնելով նախագահական ընտրությունների անցկացման հրատապության խնդիրը, ճեղնամուխ եղավ անկախ քաղաքական ուղեգծի վարմանը՝ պայքար ծավալելով միաժամանակ ԼՃ-ի ներսում դեկավարությունը ստանձնելու ուղղությամբ:

1989թ. փետրվարին ԼՈՒ-ի միլիցիայի հետ Առնի առաջին բախման նպատակը Բեյրութի նավահանգստի նկատմամբ վերահսկողության հաստատումն էր: Այն վերածվեց բացահայտ առնակատման, որի արդյունքում նավահանգստը վերադարձվեց պետությանը: Առնը մեկ ամիս անց ծովային շրջափակման ենթարկեց մուսուլման մեծամասնությամբ միլիցիաներին, որոնց ձեռքում էին զոնվում երկրի գրեթե բոլոր նավահանգստները⁵⁹⁰: Սա առաջացրեց ԱՍԱԼ-ի, դրուզների և Ս.Ֆրանժիեի «Մարադայի», ինչպես նաև նրանց սիրիական հովանավորի դիմակայությունը՝ ճգնաժամի սրման առիթ ծառայելով:

Մարտի 14-ին Առնն «ազատազրական պատերազմ» սանձահարեց Լիբանանում սիրիական ուժերի ներկայության դեմ⁵⁹¹, որն ըստ

589 Լիբանանի սահմանադրության համաձայն՝ նախագահի պաշտոնը բափոր մնալու դասպրում վերջինիս լիազորությունները վստահվում էին Նախարարների խորհրդին:

⁵⁹⁰ P.Salem, Աշվ. աշխ., էջ 66:

⁵⁹¹ Նոյն տեղում, էջ 67:

Եռաջան մեծ մարտահրավեր էր՝ ուղղված ներքին և տարածաշրջանային համերաշխությանը: Իր հերքին Սիրիան ցամաքային և ծովային շրջափակման ենթարկեց Սիշել Առաջի զինված խմբավորումների հսկողության տակ գտնվող «Քրիստոնեական ինքնավարության» շրջանները: Առաջ պատասխան հարվածներ հասցրեց արևատյան Բեյրութում գտնվող սիրիական դիրքերին⁵⁹²: Վեց ամիս շարունակ արևելյան Բեյրութը՝ մուսուլմանական ու սիրիական ուժերի, իսկ արևամտյան Բեյրութն ու Շուֆը՝ ԼՈՒ-ի բանակի քրիստոնյա գորամիավորումների փոխհրաձգությունների տակ էր գտնվում:

ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի՝ վարչակազմը, որը մինչ այդ խոսափում էր ԱՄ-ի ուղությամբ համապարփակ քաղաքականության իրականացումից, ենթով տարածաշրջանային հակամարտությունների (կոմկրետ դեպքում լիբանանյան) ծավալման մտավախությունից, փորձեց կասեցնել իրածգությունների և ցամաքային գրոհների միջոցով Լիբանանի քրիստոնեական ինքնավար շրջանի ոչնչացման ուղղությամբ Սիրիայի գործողությունները⁵⁹³:

Սակայն լիբանանյան իրադարձություններում Վաշինգտոնն այժմ ստիպված էր գործ ունենալ նոր դերակատարի հետ՝ ի դեմս Իրաքի, որի միջամտությունը հակամարտությանն առավել սուր քնույթ հաղորդեց: Խնդիրն այն է, որ իրան-իրաքյան պատերազմի ընթացքում Սիրիան տարածաշրջանում ազդեցիկ ռազմավարական դիրքեր էր գրադեցնում Իրանի հետ դաշինքի շնորհիկ: Սակայն պատերազմի ավարտից հետո, Իրաքն ասես Սիրիայի դեմ ուսանշի նպատակով⁵⁹⁴,

⁵⁹² Հարությունյան Լ., 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին լիբանանյան ազ ուժերի ճակատում հակասությունների սրման հարցի շուրջ, Սերծափոր Արևելիքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXV, Երևան, 2006, էջ 85:

⁵⁹³ Ջորջ Բուշ ԱՄՆ-ի նախագահի պաշտոնը ստամձել էր 1989թ. հունվարին:

⁵⁹⁴ Օ внешней политике Сирии, ТАСС. Атлас N 36 (1678), 4.9.1989, стр. 58.

⁵⁹⁴ «New York Times», 30.8.1989.

1988թ. աշնանից զինում ու հանդերձավորում էր Լիբանանի քրիստոնյա ընդդիմությանը⁵⁹⁵:

Սիրիան չէր կարող վերջիններիս դեմ պայքարում ապավիճել ոչ ԱՍՆ-ի, ոչ էլ իր ռազմավարական դաշնակցի՝ ԽՍՀՄ-ի աջակցությանը, որի վարած մերձավորարևելյան քաղաքականության որոշ ասպեկտներից դժգոհ էր։ Ուստի Դամասկոսը ստիպված էր դիմելու Իրանի աջակցությանը՝ թե՛ Իրաքի կողմից սատարվող Միջել Առևի նկատմամբ ճնշում գործադրելու, և թե՛ Սաուդյան Արաբիայի ու ԱՊԼ-ի կողմից Լիբանանում Սիրիայի բացառիկ դերի ճանաչումն ապահովելու հարցում։

Եվ իսկապես, Իրանին գործնականում հաջողվեց Լիբանանում խլամական ազգայնական հակառանական կուլիցիա՝ ստեղծելու, որն Առևի դեմ պայքարում Սիրիայի համար էական զայիչ գործոն ծառայեց՝ նամանավանդ Առևի օգտին Ֆրանսիայի կողմից սպառնացող միջամտության պայմաններում։ Սա միաժամանակ իրքև նախազգուշացում ծառայեց նաև Սաուդյան Արաբիային ու ԱՊԼ-ին, որոնք Լիբանանում Սիրիայի խաղաղարար դերակատարությանը դիմակայելու դեպքում ստիպված էին լինելու գործ ունենալ իսլամական հեղափոխության հետ։⁵⁹⁶

Ի վերջո, Սիրիան ստեղծված ճճաժամի պայմաններում տարրության ռազմավարություն որդեգրեց՝ գործի դմելով ռազմական ճնշամիջոցների, Դամասկոսի նկատմամբ արաքական, ֆրանսիական և միջազգային ճնշմանը դիմակայելու, ԱՍՆ-ին Սիրիայի հետ առավել

⁵⁹⁵ Тони Уокер, Сирия стремится сохранить свое влияние в Ливане, ТАСС. БПИ N 203, 18.10.1988, стр. 35. Իրաքը Լիբանանի քրիստոնյա ընդդիմությանը հաճախ զինում էր Իրանից բանազրաված զենքով ու հանդերձանքով։

Ասային մտահոգում էին ԽՍՀՄ-Իրաքի հարաբերությունների բարեկավումը, Իրաքի հետ բանական գործնքացին մասնակցելու ուղղությամբ Արաֆաթի նոր պրազմատիկ բաղադրականության սատարումը ԽՍՀՄ-ի կողմից։ Այս մասին տես՝ «New York Times», 30.8.1989.

Կուալիցիայի մեջ մտան Վ. Չումբարը, ԱՍԱԼ-ից՝ Նարին Բերին, «Հիգրալիայից»՝ միշարք շնչիսեր, Ծիական բանակում խորհրդից՝ Սահի Համսադրին, պաղեստինցիներ, Արու Մոսան և Ահմեդ Զերիխը, Թասիկիդից՝ շնչիս Հարան, նասերականներ, կոմունիստներ։

⁵⁹⁷ Anoushirvan Ehteshami and Raymond A. Hinnebusch, Syria and Iran, London and New York, 1997, p. 135.

լայն երկխոսության մեջ ներգրավվելու քաղաքականություն՝ Վաշինգտոնի հետ հարաբերություններին առավել մեծ նշանակություն տալով և այդ ուղղությամբ առավել մեծ զանքեր գործադրելով⁵⁹⁸.

Իր հերթին ԱՍՆ-ը՝ հաշվի առնելով Լիբանանում Դամասկոսի կարևոր դերակատարությունը, փորձում էր լիբանանյան և արաբ-խորայիշական հիմնախնդիրների կարգավորման հեռու զնացող նկատառումներով, ընդայնել Միջիայի հետ համագործակցությունը⁵⁹⁹: Այդ նպատակով լիբանանյան և մերձավորարևելյան խաղաղության հիմնախնդիրներն ԱՍՆ-ի աջակցությամբ քննարկման դրվեցին 1989թ. մայիսի 25-26-ին Կասարլանկայում գումարվող արարական երկրների գագարնաժողովում⁶⁰⁰:

ԱՊԼ-ի նշանակած հանձնախումբը՝ հանդիպումներ կազմակերպելով լիբանանյան երկու կառավարությունների դեկավարների հետ՝ կողմներին հնարավորություն ընձեռեց արտահայտել իրենց դիրքորոշումները⁶⁰¹: Լիգայի ծևավորած եռակողմ հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Սաուսյան Արարիայի ու Մարոկկոյի քաջավորները, Ալժիրի նախագահը, որոնց հիմնական նպատակը Լիբանանի սահմանադրական բարեփոխումների և նոր նախագահի ընտրության ապահովումն էր⁶⁰²: Հանդիպումը նախատեսվում էր անցկացնել սեպտեմբերի 30-ին Սաուսյան Արարիայի Թաիֆ քաղաքում, ուր նախապես երապարակված պաշտոնական հաղորդագրության համաձայն երավիրված էին նաև Լիբանանի խորհրդարանի պատգամավորները⁶⁰³:

Հարկ է նշել, որ իրենց հերթին 1989թ. սեպտեմբերի 23-ին ԽՍՀՄ-ն ու ԱՍՆ-ն հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ ընդգծելով Լիբանանի հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով և հակա-

⁵⁹⁸ Օ նեանու պολιτικէ Սիրիա, նշվ. աշխ., էջ 57-58:

⁵⁹⁹ Նույն տեղում, էջ 58:

⁶⁰⁰ Ghassan Tucini, նշվ. աշխ., էջ 94:

⁶⁰¹ Fida Nasrallah, The Treaty of Brotherhood, Co-operation & Co-ordination, An Assessment' in State and Society in Syria and Lebanon, University of Exeter Press, 1994, p. 104.

⁶⁰² Susan Smith, The Taif Agreement: Still on Schedule After 1-1/2 Years, Washington Report on Middle East Affairs, Special Report, May/June 1991, p. 1.

⁶⁰³ Հովհաննեսյան Ն. Հ., Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թ.), հ. III, Երևան, 2006, էջ 657:

մարտող կողմերի շահերից բխող կառուցողական երկխոսության ոգով կարգավորելու անհրաժեշտությունը⁶⁰⁴:

Այսպիսով, միջարարական ու միջազգային խորհրդակցությունների և քանակցությունների արդյունքում ստեղծված «Քարծրագույն Եռակողմ հանճախումբը» քննարկման ներկայացրեց իր կողմից պատրաստված զեկուցագիրը, որը հայտնի էր դառնալու իրեւ «Թափի համաձայնագիր» կամ «Ազգային Հաշտության Խարտիա»:

Համաձայնագրում արծարծվող չորս հիմնախնդիրներից առաջինը վերաբերյալ էր Լիբանանի ներքին սահմանադրական քարեփոխումներին, երկրորդը՝ Լիբանանի ինքնիշխանության վերահաստատմանը երկրի ողջ տարածքում, երրորդը՝ Իսրայելի գինված ուժերից Հարավային Լիբանանի ազատագրմանը, և չորրորդը՝ Սիրիայի հետ հատուկ հարաբերությունների հաստատմանը:

Զեկուցագրում առաջարկվում էր ստեղծել նաև «Մեծ Բեյրութի» անվտանգությունը հսկող արարական դեկավարություն՝ հաստատելով նրա աշխարհագրական սահմանները⁶⁰⁵.

Ներքին քարեփոխումներն ուղղված էին գործադիր իշխանության վերաբաշխմանը, որը մի շարք մեկնարանների կարծիքով, իին համակարգում նախագահի միջոցով արտահայտվող քրիստոնեական գերակայությունը փոխարինում էր նոր համակարգի պայմաններում վարչապետի միջոցով արտահայտվող մուսուլմանական գերակայությամբ: Գործադիր իշխանությունն անցնելու էր Նախարարների Խորհրդին, որը նախագահելու էր վարչապետը:

⁶⁰⁴ Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը Իսրայելա-Պաղեստինյան հակամարտության հանդեպ, Եր., 2001, էջ 26:

⁶⁰⁵ Թափի պայմանագիր տեսաղ տես՝ Middle East Historic Documents, The Taif Agreement, September 1989.

http://www.lebanonwire.com/prominent/historic_documents/1989_tacf_agreement.asp; Council of Lebanese American Organizations, Policy Statement and Analysis of the Lebanese Situation, July, 1991. <http://www.lebanese-forces.org/lebanon/agreements/tacf.htm>; Ա. Հարությունյան, ԱՄՆ-ի վարած քաղականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և նզմաժամի ընթացքում (1975-1991թ.), քենածուական ատենախոսություն, ՀԱՎԵԼՎԱԾ ՈՒԹԵՐՈՐԴ:

⁶⁰⁶ Թյուրյումջյան Պ., Լիբանանի ժողովողի ազատագրական պայքարը և նայ համայնքը (1920-1990), Եր., 1992, էջ 250:

Թախիքի համաձայնագրով կրոնական համայնքների միջև հակաշիռ պետք է ապահովվեր իշխանության երեք ճյուղերի համամասնական բաշխման միջոցով՝ հանրապետության նախագահի պաշտոնում նշանակելով մարտնի քրիստոնյայի, նախարարների խորհրդի նախագահի՝ վարչապետի պաշտոնում՝ սուննի մուսուլմանի և պատգամավորների պալատի՝ խորհրդարանի նախագահի պաշտոնում՝ շիա մուսուլմանի:

Նոր խորհրդարանական ընտրությունները պետք է հիմնվեին արտահամայնքային սկզբունքի վրա, այսինքն՝ ստեղծվելու էր ԱՍԽ-ի կոնգրեսի Մենատի և Ներկայացուցիչների պալատին համարժեք մի կառույց, և, անկախ ընտրված պատգամավորների կրոնահամայնքային պատկանելության, Մենատի օրինակով, նրանց միջև համամասնությունը պետք է պահպանվեր քաղաքական այնպիսի մարմնի ձևավորման միջոցով, որում բոլոր կրոնահամայնքային մարմինները ներկայացված լինեին հավասարապես:

Փաստորեն, կողեզիալ կառավարման ինստիտուտը՝ հիմնվելով ընդհանուր համաձայնության վրա, կարող էր համարվել այն միակ գործուն մեխանիզմը, որն ի վիճակի կլիներ թուացնել միջիամայնքային լարվածությունը և դառնալ նրանց համախմբման հիմնական երաշխիքը:

Համաձայնագրի երկրորդ մասով պահանջվում էր սահմանադրական բարեփումների կենսագործումից մեկ տարի անց ազատ արձակել բոլոր միլիցիաներին: Ինչ վերաբերվում է սիրիական ուժերի օժանդակությամբ Լիբանանի ինքնավարության վերահաստատումից հետո դրանք թեքաայի հարթակայր տեղափոխման խնդրին, ապա զեկույցում, բացի նշյալ ուժերի ռազմավարական տեղաբաշխումից, նրանց վերջնականացես հետացման մասին ոչինչ չէր նշվում: Խնդիրը հետաձգվում էր Սիրիայի և Լիբանանի Ազգային Սիասնության կառավարությունների միջև բանակցությունների արդյունքում լուծման հեռանկարով⁶⁰⁶, միաժամանակ օրինականացնելով սիրիական ռազմական ուժերի ներկայությունը Լիբանանում, որի շուրջ պայքար էր ծա-

⁶⁰⁶ Susan Smith, նշվ. աշխ., էջ 3:

վալվել դեռևս 1982 թվից: Նշենք, որ Բեքաայում Սիրիայի ռազմակարգական դիրքերի պահպանումը բացատրվում էր տարածաշրջանում status quo-ի պահպանման նկատառումներով, այսինքն՝ սիրիական գորքերի դուրս բերումը Լիբանանից բացառվում էր խրայելական ռազմական ուժերի առկայության պայմաններում:

Իրերի նման փոխկապվածությունը բնականարար արգելակում էր գեկուցագրի երրորդ նասով նախատեսվող ՄԱԿ-ի ԱԽ-ի 425-րդ բանաձևի կենսագործումը, որով պահանջվում էր միջազգային հանրության օգնությամբ հարավային Լիբանանի ազատագրում խրայելական գորքերից:

Համաձայնագրի վերջին՝ չորրորդ նասն անդրադառնում էր Սիրիայի և Լիբանանի միջև հատուկ հարաբերությունների բնույթին: Երկու երկրներն էլ ստանձնում էին փոխարարծ անվտանգության երաշխիքներ, որոնց համաձայն Լիբանանը պարտավորվում էր քոյլ շտալ իր տարածքն օգտագործել որպես միջանցիկ օդակ կամ ռազմահանգրվան որևէ տերության, կազմակերպության կամ իշխանության կողմից՝ ուղղված Սիրիայի դեմ: Սիրիան էլ պարտավորվում էր քոյլ շտալ, որպեսզի Լիբանանի տարածքն օգտագործվեր Լիբանանի անվտանգության դեմ:

Հարկ է նկատել, որ Թաիֆում, այնուհանդերձ, բացակայում էր արաբների կողմից Խսրայելի ազրեսիան սահմանափակող և նրա ուժերի դուրս բերումն ապահովող լծակների առնչությամբ որևէ կետ, որի օգնությամբ հնարավոր կլիներ ինչ-որ կերպ հակազդել Լիբանանի ներքին գործերում Խսրայելի ապակայունացնող դերակատարությանը: Արաբները պետք է խոսափեին Լիբանանի ինքնիշխանությունը Սիրիայի և պաղեստինցիների հաշվին նսեմացնող քայլերից: Դրա պատճառներից մեկը հրադադարի պարտադրման նպատակով համապատասխան խաղաղապահների և դիտորդների բացակայությունն էր⁶⁰⁷:

⁶⁰⁷ Ghassan Toumi, նշվ. աշխ., էջ 95:

**9. ՀԵՏԹԱԽԵՑՄՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԼԻՔԱՆԱՆՈՒՄ:
1991թ. ՍԻՐԻԱԼԻՔԱՆԱՆՅԱՆ «ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ,
ՀԱՍՏԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԿԱՐԳՍԱՆ» ԴԱԾՆԱԳԻՐԸ**

Հակառակ Թահիֆի համաձայնագրի ստորագրման ուղղությամբ տարածաշրջանային ու միջազգային ուժերի գործադրած ջանքերին, այն չկարողացավ բավարարել լիրանանյան հակամարտությանը մասնակից բոլոր կողմերի պահանջները: Համաձայնագիրը բացարձակապես մերժվեց գորավար Առնի և քննադատության ենթարկվեց «Հիգրալլահի», ԱՍԱԼ-ի, ԱՍԿ-ի և պաղեստինցիների կողմից⁶⁰⁸: Սիշել Առնը մերժեց մասնակցել համաժողովին, իսկ քրիստոնյա պատգամավորների մասնակցությունը դավաճանություն համարեց⁶⁰⁹: Գեներալը հերքում էր այն՝ պայմանագրում սիրիական ուժերի Լիրանանից դուրս բերման չվացուցակի բացակայության պատճառաբանությամբ: Առնը գտնում էր նաև, որ քաղաքական բարեփոխումների արդյունքում իշխանությունը նախագահից պարզապես փոխանցվում էր վարչապետին՝ առանց հիմնախնդրի արմատական կարգավորման: Այդ էր պատճառը, որ 1989թ. նոյեմբերին նախատեսվող խորհրդարանական ընտրությունները բողոքարկելու դիտավորությամբ, հետևաբար Թահիֆի կենսագործումը ճախողելու նպատակով, Առնը ցրեց խորհրդարանը՝ սկիզբ դնելով Թահիֆի հետ կապված գործընթացների օրինական կամ սահմանադրական լինել շինելու վերաբերյալ առայօր շարունակվող բանավեճերին:

Ի հեճուկս Առնի գործողությունների, լիրանանյան խորհրդարանը նոյեմբերի 5-ին երկրի նախագահի պաշտոնում ընտրեց պատգամավոր Ռենե Սուավլադին⁶¹⁰, որը 7 օր անց մահափորձի գոհ դարձավ: Լիրանանյան խորհրդարանի ընտրած հաջորդ նախագահն էր պատգամավոր Իլիաս Հրատիին:

⁶⁰⁸ Fida Nasrallah, Եղվ. աշխ., էջ 106:

⁶⁰⁹ Robert Fisk, Pity the Nation, The Abduction of Lebanon, N.Y., 1990, p. 638.

* Այս մասին տես՝ Հարությունյան Լ., Լիրանանը 1958-1990 թվականներին, Երևան, 2007, էջ 262:

Բոլոր դեպքերում, երկրի նախագահին, խորհրդարանին և Ս. Հովհաննեսի նոր կառավարությանը ցուցաբերվող միջազգային ու տարածաշրջանային աջակցության շնորհիվ Թափիի գործընթացները վիճակված էին կենսագործման⁶¹⁰, նամանավանդ նորընտիր նախագահի կողմից ջանքերի այնպիսի գործադրման պայմաններում, որոնք գեներալ Առնին իշխանությունից հետացնելու նպատակով կիրառեցին հարկադրման բոլոր հնարավոր միջոցները (ներառյալ տնտեսական շրջափակում):

Սակայն Ծոցի ճգնաժամն՝ Իրաքի մարտավարական դաշնակիցներ գորավար Առնի և ՊԱԿ-ի մոտ կարծատև հույս արթնացրեց ԱՄՆ-ի և Սաուդյան Արաբիայի ուշադրությունը Լիբանանից շեղելու ակնկալությամբ: Նրանց կարծիքով՝ Ծոցի ճգնաժամի շնորհիվ կրուանար թե՛ իրենց ճնշող առանցքը, թե՛ քաիֆյան գործընթացներին սատարող տարածաշրջանային ու միջազգային համաձայնությունները:

Ստեղծված իրավիճակում Սիրիան հարկադրված էր արագացնել Լիբանանի խորհրդարանի կողմից Թափիի պայմանագրի ստորագրման գործընթացը, որը տեղի ունեցավ 1990թ. օգոստոսի 21-ին: Ուշագրավն այն է, որ Սիրիան նման շտապողականություն հանդիս թիրեց ԱՄՆ-ի պետքարտուղարի մերձավորակնելյան գործերով օգնական Չոն Քելիի այցից հետո: Օգնականը հավանություն էր տվել Լիբանանում Սիրիայի տիրապետող դիրքերի պահպանմանը՝ այդ ուղղությամբ խոստանալով ապահովել նաև Վաշինգտոնի աջակցությունը:

Այսպիսով, ԱՄՆ-ից ստանալով «կանաչ լույսը», սիրիական գործերն ու ռազմաօդային ուժերը՝ կրկին խախտելով սիրիա-իսրայելական «կարմիր գոտու» վերաբերյալ դաշնագրի պայմանները և օգտվելով ԱՄՆ-ի զիսավորությամբ հակա-իրաքյան կոալիցիային մասնակցության հնարավորությունից, 1990թ. հոկտեմբերի 13-ից ոմբակոծեցին ամիսներ շարունակ կամավորական ուժերի կողմից պաշտպան-

⁶¹⁰ P. Salem, նշվ. աշխ., էջ 67-68:

* 1990թ. օգոստոսին Իրաքը ներխուժեց Զովեյք, որը միաժամանակ ԱՄՆ-ին ու Սաուդյան Արաբիային նետված մարտահրավեր էր:

վոր Քաարդա պալատը՝ վերջնական պարտության մատնելով Սիշել Առնին⁶¹¹:

Ի վերջո, Ծոցի պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ Ամերիկայի և Սասույան Արարիայի «օրինությամբ» Թահիֆի համաձայնագիր կատարելապես «սիրիականացվեց»՝ օրինականացնելով Լիբանանում Սիրիայի դերը և երկրում «Pax-Syriana»-ի հաստատման հնարավորությունը ընձեռելով⁶¹²:

Դեկտեմբերի 24-ին Ծոցի երկրմերի աջակցությունից օգտվող Սելիմ Հոսի փոխարեն Ազգային Սիրանության կամ Հաշոտության կառավարության վարչապետ նշանակվեց Օմար Քարամեն, որն օգտվելով էր քացառապես սիրիական աջակցությունից: Նոր կառավարության կազմի մեջ ընդգրկված էին միմյանց հակառակորդ միլիցիաների ու կուսակցությունների առաջնորդներ, ավանդական քաղաքական դիմքեր:

ԼՈՒ-ի և «Փաղանգավորների» կարծիքով՝ նոր կառավարությունում քացակայում էր «ազգային հավասարակշռությունը», որի ամենամերի 2/3-ը գտնվում էին Սիրիայի վերահսկողության տակ: Դրուզները դժողով էին իրենց ազդեցության քուլացումից: «Հիգրալլահը», ԼԿԿ-ը և ԱԼԿ-ը, Սիշել Առնի հետևողությունը կարինետում ընդհանրապես ներկայացված չէին:

Մարտի 28-ի լիազումար նիստին կառավարությունը հաստատեց լիբանանյան և ոչ-լիբանանյան քոլոր միլիցիաների կազմալուծման և խորհրդարանի 40 նոր պատգամավորների վերընտրման ծրագիրը, որը Թահիֆի պայմանագրի իրագործման երկրորդ փուլն էր: Այս միջոցառումներին նպաստեց Ծոցի պատերազմում Թահիֆի գործընթացը սատարող Ամերիկա-Սուսյան Արարիա-Սիրիա դաշինքի կողմից իրացի նկատմամբ տարած հաղթանակը⁶¹³:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ի փլուզման և աշխարհաքաղական փոփոխությունների պայմաններում Սիրիան, ի դեմս ԽՍՀՄ-ի, կորցրեց

⁶¹¹ Fida Nasrallah, 62վ. աշխ., էջ 107-108:

⁶¹² Anoushirvan Ebtehams and Raymond A. Hinnebusch, 62վ. աշխ., էջ 75:

⁶¹³ Fida Nasrallah, 62վ. աշխ., էջ 107-108:

իր ուժեղ դաշնակցին և հովանավորին⁶¹⁴: Դա ԱՍՆ-ին հնարավորությունը ընծեռեց ամրապնդելու տարածաշրջանում ունեցած իր դիրքերը և առանց զլորալ խոչընդոտմերի հետամուտ լինելու իր քաղաքական նպատակների իրագործմանը: Վաշինգտոնն ազատ էր Թահիֆի գործընթացների նկատմամբ արարական աջակցության ապահովման հարցում, որի իրագործմանը մտադիր էր հասնել Սիրիայի միջոցով⁶¹⁵:

Իսկ Լիբանանի և Սիրիայի միջև «հատուկ» հարաբերություններն ամրապնդեցին երկու երկրների կառավարությունների միջև 1991թ. մայիսի 22-ին Դամասկոսում «Եղայրության, Համագործակցության և Համակարգման» դաշնագրի ստորագրումով, որը դեռևս 1980-ականների երկրորդ կեսից սկիզբ առած գործընթացների տրամարանական շարունակությունն էր: Գործընթացներ, որոնք սկիզբ դրեցին ամերիկյան համաձայնությամբ Լիբանանում Սիրիայի գրանցուած դերի օրինականացմանը:

Դաշինքով հիմնադրվեց պաշտոնական այն կառույցը, որը Սիրիայի հետ լիովին համաձայնեցված կերպով գրադիվելու էր երկու երկրների միջև քաղաքական, ռազմական, ներքին անվտանգության և տնտեսության մակարդակներով խնդիրների մշակման ու կենսագործման քաղաքականությամբ: Դաշինքի պաշտոնական բնույթը Սիրիային հնարավորություն էր ընծեռում Լիբանանին պահել de jure կախվածության մեջ, չնայած Դամասկոսը պարտավորվում էր հարգել Լիբանի լիբերալ՝ ազատական քաղաքական համակարգը և կապիտալիստական տնտեսությունը:

Գործադիր իշխանության վերահսկողության նպատակով ստեղծվում էին համատեղ խորհուրդներ, որոնցից կարևորագույնը՝ Գերագույն Խորհուրդը, կազմված էր երկու երկրների նախագահներից, վարչապետներից, նրանց տեղակալներից, խորհրդարանի նախա-

⁶¹⁴ Сурен Манукян, Знагаги развития исламистского движения в Сирии в 1982-2000гг., Угродавուր Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Երևան, 2005, էջ 187:

⁶¹⁵ Krayem Hassan, The Lebanese Civil War and The Taif Agreement, American University of Beirut, p. 6.

<http://www.beirutletter.com/mainmenu/lebanesecexp/lebwar/analyse/sample.html>.

զահներից: Այն օժուված էր գործադիր իշխանությամբ՝ հակասելով ոչ միայն երկրի սահմանադրությանը, այլև սպառնալով նրա քաղաքական համակարգին, քանի որ Լիբանանի խորհրդարանն այլևս առանց հանրաքվեի իրավատու չէր այն փոխել: Իսկ խորհրդարանի պատգամավորները՝ ընտրված լինելով տարբեր քաղաքական կառույցների կողմից, ի վիճակի չէին ներկայացնել ժողովրդին: Սիրիայի և Լիբանանի արտաքին քաղաքականության համակարգումը, անգամ երկու երկրների սահմանադրության շրջանակներում իրագործվելու պայմաններում, նսեմացնում էր Լիբանանի ինքնիշխանությունն ու նրա անկախությունը՝ նամանավանդ Սիրիայի 40.000-ոց գործերի առկայության դիպում:

Անվտանգության ոլորտում համագործակցությունն ամրագրվում էր երկու երկրների միջև ստորագրված «պաշտպանական դաշինքով»՝ ինքնըստինքյան խիստ հսկողություն ենթադրելով բոլոր լիբանանցիների, մասնավորապես սիրիական վարչախմբի հակառակորդների գործողությունների նկատմամբ: Դաշնագրով վավերացվում էր նաև սիրիական ռազմական ներկայության ժամկետների երկարաձգման փաստը Լիբանանի տարածքում, խախտելով Խորայելի հետ կնքված զինադադարի պայմանագիրը, որոնց նկատմամբ Լիբանանի ո՛չ զինվորական հրամանատարությունը, և ո՛չ էլ նախարարական ու պատգամավորական կազմը հրամաններ արձակելու որևէ իրավասություն չուներ⁶¹⁶:

Եղրայրության դաշնագրի վավերացման փաստը շնպաստեց նաև երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործին:

Հարկ է նշել, որ 1990-ականների հետ-քաիֆյան շրջանում Լիբանանը շարտանակեց մնալ իրու հակասական և միմյանց դեմ հակամարտող սոցիալ-քաղաքական ուժերի պայքարի օջախ: Թեև քաղաքական քարեփոխումների գործընթացներին մասնակցեցին լիբանանյան ճգնաժամի ընթացքում հակամարտող իիմնական քաղաքական ուժերը, այնուհենդեռ, իշխանության նկան նաև սոցիալ-քաղաքա-

⁶¹⁶ Fida Nasrallah, նշվ. աշխ., էջ 109-110:

կան նոր ուժեր, որոնք ներկայացնում էին տարածաշրջանային կապի-տալի հետ դաշն կնքած տեղական կապիտալին և սատարվում էին եվրոպական, Ծոցի պահպանողական հարուստ երկրների ու ԱՄՆ-ի կողմից: Այս գործընթացների արդյունքում երկրում, այնուամենայնիվ, նվազեց ավանդական կոնֆեսիոնալ առաջնորդների ազբեցությունը:

«Հիգրալլահի» հակախրայելական ակտիվ պայքարի արդյունքում 2000թ. նայիսի 24-ից Խորայելի վարչապետ Եհուդ Բարաքի որոշմամբ⁶¹⁷, առանց Լիբանանի հետ պաշտոնական հաշտագրի կնքման, սկսվեց Լիբանանի հարավից խորայելական գործերի դուրս բերման գործընթացը: Այն միաժամանակ խախտում էր տարածաշրջանային status quo-ն, քանզի խորայելական ուժերի դուրս բերման պարագայում Սիրիան ստիպված էր հիմնավորել Բեքաայում իր ռազմավարական դիրքերի պահպանման անհրաժեշտությունը:

Դամասկոսի իրավիճակն առավել բարդացնում էր ԱՄԿ-ի Աև-ի 2004թ. սեպտեմբերի 2-ի ընդունած 1559-րդ քանածելը, որը համառոտակի կրկներով Թահիֆի պահանջները, ընդգծում էր Լիբանանից սիրիական ուժերի դուրս բերման անհրաժեշտությունը: Այն շոշափում էր Լիբանանի անկախության ու ինքնիշխանության ապահովման, երկրից սիրիական ուժերի դուրս բերման, լիբանանյան և ոչ-լիբանանյան միլիցիաների լուծարման, Լիբանանի կառավարության վերահսկությունը ողջ երկրի նկատմամբ տարածման խնդիրները⁶¹⁸:

Սիրիան իր ուժերը Լիբանանի տարածքից հարկադրված եղավ դուրս բերել 2006թ.: Առաջն քվի հովհանքից Խորայելի ձեռնարկած լիբանանյան նոր ազքեսիայից հետո: Այս ամենն այնուամենայնիվ քավարար նախապայմաններ չեղան Մայրիների երկրում հակամարտության կարգավորման և խաղաղության վերջնական հաստատման համար: Այդ մասին են վկայում քաղաքական սպանությունների անվերջանալի բվացող շարքը, սոցիալական և կրոնաքաղաքական տարաբնույթ ուժերի միջև առկա հակասությունները և քախումները, ինչպես

⁶¹⁷ Moshe Arens, Hezbollah 2, Israel 0, Haaretz, 16.2.2004.

⁶¹⁸ Թահիֆի պայմանագրի և Աև-ի 1559-րդ քանածեի համեմատությունը նկարագրող աղյուսակը բերված է ստորև: Աղյուրը՝ <http://www.lebaneseforces.org/lebanon/agreements/tacf.htm>.

Նաև արտաքին կողմնորոշումների ու կախվածությունների շուրջ այդ ուժերի և հասարակության միջև առկա խոր պառակտումը:

N.	Խնդիր	Ամս-ի 1559-րդ Բանաձև (սեպտեմբեր 2, 2004թ.)	Թափի պայմանագիր (հոկտեմբեր 22, 1989թ.)
1	Լիբանանի անկախություն ու ինքնիշխանությունը	Խստորեն պաշտպանում է Լիբանանի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, միասնությունը և քաղաքական անկախությունը՝ Լիբանանի կառավարության բացառիկ վերահսկողության ներքո։ Բանաձեռ կոչ է անում ազատ և արդար ընտրություններ՝ առանց Լիբանանի ներքին գործերին արտաքին միջամտության։	Ներածության մեջ հայտարարվում է, որ Լիբանանն ինքնիշխան, ազատ և անկախ պետություն է՝ ինքնվաճանահատի և կոլեկտիվ ազատությունների հարգանքի վրա։
2	Սիրիական ուժերի դուրս բերում	Կոչ է անում բոլոր օտարերկրյա ուժերի՝ այսինքն՝ սիրիական բանակի և իրանական Դեղափոխական Պահակազորի հեռացում Լիբանանից։	Ա. Պայմանագրի վավերացումից հետո առնվազն երկու տարվա շրջանակներում սիրիական ուժերը պետք է օգնեն Լիբանանի բանակին՝ Լիբանանի կառավարության ինքնիշխանության ամրապնդան ուղղությամբ։ Բ. Այդ ժամանակ [այսինքն՝ 1991թ.] սիրիացիներն ու լիբանանցիները պետք է որոշում կայացնեն Բեքաայի հովտում և նրա շրջակայքում Սիրիայի ուժերի վերադասավորման ուղղությամբ։ Սիրիան ու Լիբանանը պետք է Բեքաայի հովտում սիրիական ուժերի ընդարձակումն ու ժամկետի երկարածումը հաստատող պայ-

			մանագիր ստորագրություն:
3	Լիբանանյան և ոչ-լիբանան- յան միջիցիա- ների լուծա- րում	Կոչ է անում բոլոր լիբանան- յան և ոչ-լիբանանյան միջի- ցիաների [այսինքն՝ «Հիզբու- լահ» և պաղեստինյան ահա- բեկչական կազմակերպու- թյունները] լիակատար լուծա- րում և գինարակում:	Դայտարարում է, որ բոլոր լիբանանյան և ոչ-լիբանան- յան միջիցիաները պետք է լուծարվեն և նրանց գենքը պետք է հանձնվի Լիբանա- նի պետությանը և ամսվա ընթացքում՝ իրեն «ազգա- յին հաշտեցման» անվտան- գության ծրագրի մի մաս: Ծրագիրը ենթադրվում է ի- րականացնել մեկ տարվա շոշանակներում՝ Լիբանան- ի կառավարության հնանիշ- խանությունը երկրի ողջ տարածքով աստիճանա- կան ամրապնդման նպա- տակով:
4	Լիբանանի կառավարու- թյան վերա- հսկողությունը ողջ Լիբանանի նկատմամբ	Պաշտպանում է Լիբանանի կառավարության վերահս- կողությունը Լիբանանի ողջ տարածքի նկատմամբ [այ- սինքն՝ ներառյալ «Հիզբու- լահի» վերահսկողության տակ գտնվող Լիբանանի հարավի՝ նույնիսկ 2000թ. մայիսին հՊՈՒ-ի դուրս բե- րումից հետո՝ ի հեճուկս Թափթի պայմանագրի և Ան- վտանգության Խորհրդի 425-րդ բանաձևի]:	Թափթի պայմանագրով Լի- բանանի ինքնիշխանությունը ողջ երկրի նկատմամբ ամ- րապնդող կետեր է պարունա- կում: Այդ կետի համաձայն՝ բոլոր լիբանանյան և ոչ-լի- բանանյան միջիցիաները պետք է լուծարվեն և լիբա- նանյան անվտանգության ու- ժերն ամրապնդվեն: Ի լրումն դրա, Լիբանանի կառավա- րությունը պետք է վերա- կանգնի իր վերահսկողու- թյունը երկրի նկատմամբ՝ մինչև լիբանանախրայելա- կան միջազգայնորեն ճանաչ- ված սահմանը՝ իրականաց- նելով ԱԽ-ի 425-րդ բա- նաձևը: Լիբանանը պետք է ազատագրի Խորայելի օկու- պացիայից, Լիբանանի բա-

նակը պետք է տարածվի Խո-
րայելի սահմանի երկայնքով
և պետք է կայունություն ու
անվտանգություն հաստատ-
վի սահմանի երկայնքով
[2000թ. ԻՊՈՒ-ը հեռացան Լի-
բանանից, սակայն «Դիզբար-
լահը» շարունակեց իր արդ-
յունավետ վերահսկողությու-
նը Լիբանանի հարավի
նկատմամբ: Սիրիացիները
կանխեցին լիբանանյան իշ-
խանությունների կողմից հա-
րավի և սահմանի նկատմամբ
վերահսկողության վերա-
կանգնումը՝ խախտելով
Թաիֆի պայմանագիրը և
Ալս-ի 1559-րդ բանաձևը]:

ԱՄՆ-ի նախագահ Ջերալդ Ֆորդի (1974-1977թթ.) վարչակազմը՝ 1973թ. հոկտեմբերյան պատերազմից հետո, ԱՍ-ի օրակարգում կարևորելով իշրայելանգլիպտական սեպարատ գործարքի կնքումը, լիրանանյան իիմնախնդրին մեծ կարևորություն չէր տալիս: Եղնելով Լիրանանում արմատական վերափոխումներ իրականացնելու անհնարինության կանխադրույթից, Սայիտակ տունը հետամուտ էր երկրում առկա status quo-ի պահպանման քաղաքականությանը: Լիրանանի հարցում ամերիկյան վարչակազմը սկսեց անհանգստություն ցուցաբերել միայն 1975թ. քաղաքացիական պատերազմի սկզբում՝ հակամարտությանը Սիրիայի և Իսրայելի ռազմական միջամտության նախանշաններ ի հայտ գալուց հետո: Խուսափելով ճգնաժամի առավել խորացնան դեպքում գերտերությունների՝ իրենց հովանավորյալների (Իսրայելը՝ ԱՄՆ-ի հովանավորյալ Սիրիան և ՊԱԿ-ը՝ ԽՍՀՄ-ի) կողմից անխուսափելի ու միաժամանակ անցանկալի միջամտության հավանականությունից, ԱՄՆ-ը 1975թ. աշնանը հավանություն է տալիս Լիրանանի գործերին Սիրիայի դիվանագիտական, իսկ 1976թ. ամռանը՝ ռազմական միջամտությանը՝ ապահովելով Իսրայելի չեղոքությունն այդ ուղղությամբ: Վաշինգտոնի համաձայն՝ Սիրիայի լիրանանյան ներխուժմանը և վերջինիս կողմից ՊԱԿ-ի ջախջախմանը պետք է հաջորդեր տարածաշրջանում «Pax Americana»-ի հաստատումը, որի արդյունքում քուացվելու էին ծայրահեղական վարչակարգ ունեցող արարական երկրները և նվազագույնի էր հասցվելու ԱՍ-ում ԽՍՀՄ-ի ազդեցությունը: Նախապատվությունը տալով չափավոր արարական երկրների (որոնք լիրանանյան ճգնաժամը միջարարական և ոչ քեզ միջազգային խնդիր էին համարում) միջոցով խնդրի կարգավորմանը, ԱՄՆ-ն խորհուրդ էր տալիս Իսրայելին, ԽՍՀՄ-ին և Խվրոպական մյուս տերությունների, գերծ մնալ Լիրանանում հնարավոր որևէ միջամտությունից:

ԱՄՆ-ի նախագահ Ջիմմի Կարտերի (1977-1981թթ.) վարչակազմը՝ արար-իսրայելական հակամարտության համապարփակ կարգավորումը դարձնելով իր գերագույն առաջնահերթություններից մեկը,

ամրողուվին համակվեց Խորայելի անվտանգության, պաղեստինյան հիմնախնդրի, ԽՍՀՄ-ի նկատմամբ ուազմավարական դիրքերի բարելավման ու տարածաշրջանում Վերջիններիս ազդեցության կասեցման, ինչպես նաև արարական նավթի նկատմամբ Արևմուտքի ազատ մուտքի ապահովման հիմնախնդրներով։ Բավարարվելով ՍՍ-ում հաստատված status quo իրավիճակով, նոր վարչակազմի նախառակը ՍՍ-ի ցանկացած հատվածում խաղաղությանը խաթարող կամ խոչընդոտող զարգացումների կանխարգելուն էր։ Թեև Կարտերը վերանայեց նախորդ վարչակազմի ՍՍ-ի քաղաքականության որոշ ասպեկտներ, այնուհանդերձ, հավատարիմ մնաց լիբանանյան ճգնաժամի հանդեպ նրանց որդեգրած հիմնական ուղղագին՝ տարածաշրջանային խնդրների օրակարգում Լիբանանին երկրորդական տեղ հատկացնելով։ Վաշինգտոնը Սիրիայի լիբանանյան ռազմարշավը դիտում էր կամ ուղղակի, կամ էլ 1977թ. գարնանը նախատեսվող Ժնևի համաժողովի միջոցով սիրիա-խորայելական հարաբերությունների քանակցային կարգավորման նախադրյալ, որի առաջնքացին այդժամ խոչընդոտում էր հարավային Լիբանանում ստեղծված քարդ իրավիճակը և որի «շուկման» գործը Վաշինգտոնը վստահում էր Սիրիային։ Սակայն Դամասկոսի խաղաղ մտադրությունները լրջորեն անհանգստացնում էին Խորայելին, ուստի Սահիտակ տունը ստիճանված էր վերջիններիս համոզել խոհեմություն դրևորել՝ խոսափելու Ժնևի համաժողովի աշխատանքների վերականգնմանը խոչընդոտող քայլերից։

1977թ. գարնանն արաբ-խորայելական կարգավորմանն ուղղված դիվանագիտական ջանքերի թուլացման արդյունքում Լիբանանի հարավի իրադրությունը (պաղեստինցինների ու խորայելցինների միջև) սրվեց։ Թե՛լ-Ավիկը շիրագործեց ամերիկյան դիվանագիտական խողովակների միջոցով Լիբանանին տրված երաշխիքները, որով քացառվում էր խորայելական ներխուժման հնարավորությունը։ Դեռ ավելին, ԱՍՍ-ն Խորայելին իրավունք էր վերապահում Լիբանանի հարավի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն հաստատել՝ հակառակ դրա անքույլատրեկիության շուրջ ԱՍՍ-ի նախօրոք արած պաշտոնական հայտարարություններին։ Իրենց հերթին, լիբանանյան աջերը հակասիրիական ռազմարշավ ծավալեցին՝ ապավինելով ինչպես ԱՍՍ-ի

և Խորայելի ռազմաքաղաքական աջակցությանը, այնպես էլ լիբանանցիների շրջանում աճող հակասիրիական տրամադրություններին:

Ժնևի համաժողովի աշխատանքների վերականգնման ուղղությամբ հաջողության շիասմելով՝ Կարտերի վարչակազմը ետին պյան նույն Միրիայի հետ բացված, իսկ պաղեսատինցիների հետ ակնկալվող երկխոսությունը՝ 1977թ. հոկտեմբերից սատար կանգնելով խորայելաեղիայտական պայմանագրի կնքման գործընթացին: Գործարքը դիտվում էր իրրև Խորայելի և նրա բոլոր հակառակորդ-հարևանների միջև ստորագրվելիք մի շարք սեպարատ պայմանագրերի նախակարապետ, որոնք հետագայում կարող էին ամերիկյան եռվանու ներքո ռազմաքաղաքական դաշինքների վերածվել: Գործարքի իրականացման համատեքստում Վաշինգտոնը սկսեց սահմանափակել Լիբանանում Դամասկոսի գործողությունները՝ հենվելով Լիբանանի անվտանգության երաշխավորման խնդրում Վաշինգտոնին ուղղված լիբանանյան աջերի կոչերի վրա, և ակնկալելով ԱԱ-ի կարգավորման գործընթացում ամերիկյան սցենարով Միրիայի դիրքորոշման հետագա փոփոխությունը:

ԱԱՆ-ը սառն անտարքերությամբ արձագանքեց 1978թ. մարտին Խորայելի լիբանանյան ազգեստիային՝ իրադրության կարգավորման հարցում այն անգամ օգտակար համարելով: Վաշինգտոնը ընդամենը քննադատեց Խորայելի կողմից, «առանց լիազորությունների», ամերիկյան զենքի կիրառման փաստն ու «ԱԱՆ-ի խորհրդով» Լիբանանում խորայելական գորքերի պահպանման ուղղությամբ Թել-Ավիվի քոյլ տված ակնարկները: Իրականում Սահիտակ տունը ոչ միայն տեղյակ էր նախատեսվող ներխուժման մասին, այլ ցանկության դեպքում, ի վիճակի էր հետաձգել կամ կանխել այն: Մնում է ենթադրել, որ ամերիկյան լուրջունը հավասարագոր էր հավանության, ի հեճուկս Լիբանանի տարածքից խորայելական գորքերի անհապաղ, անմիջական և առանց նախապայմանների դուրս քերման շուրջ ԱԱՆ-ի մասնակցությամբ ԱԱԿ-ի ԱԽ-ի 1978թ. մարտի 19-ին ընդունած քանաձեկն: Փաստորեն, Լիբանանի ճգնաժամը՝ Վաշինգտոնի ԱԱ-ի քաղաքականության օրակարգում պահպանելով իր լուսանցքային նշանակությունը, ամբողջովին ստվերվեց մերձավորարևելյան մի շարք զարգացումնե-

րով, մասնավորապես Եգիպտահսրայելական քանակցային գործընթացով, որը Եզրափակվեց 1979թ. մարտի 22-ին ԱՍՆ-ի հովանու ներքո ստորագրված Քենի Նկողի համաձայնագրով:

Ունալդ Ուեյգանի վարչակազմը (1981-1989թ.) ԱՍ-ի քաղաքականության շուրջ դատում էր «սառը պատերազմի» ոսպնյակով՝ Արևելք-Արևմուտք հակամարտության դիրքերից: Նոր վարչակազմին ևս ավելի շատ մտահոգում էր ոչ թե Լիբանանի «անցողիկ» համարվող ճգնաժամն ու արար-իսրայելական հակամարտությունը, այլև ԱՍ-ում ԽՍՀՄ-ի հնարավոր առաջնադաշտացման կասեցումն ու Վերջինիս դաշնակիցների՝ Սիրիայի և ՊԱԿ-ի միջոցով տարածաշրջանում համայնավարների ազդեցության սահմանափակումը, ԱՍՆ-ի համար ուղամավարական ու կենսական շահեր ներկայացնող Ծոցի երկրների անվտանգության ապահովումը և նրա նավթային պաշարների նկատմամբ Արևմուտքի ազատ մուտքի ապահովագրումը: Այն ճերրազատելու էր ամերիկյան արտաքին քաղաքականությունը ներտարածաշրջանային հակամարտությունների հետ կապված քարոզություններից՝ միաժամանակ արևմտամետ կողմնորոշմամբ բռնոր երկրներին համախմբելով հակախորհրդային առանցքի՝ տարածաշրջանային պաշտպանական նոր համակարգի՝ «ռազմավարական կոնսենսուսի» շուրջ: Հակախորհրդային ռազմավարության շուրջ Խսրայելին և արարական վարչախմբերին համախմբող առանցք կամ միջոց կարող էր, ըստ Ուեյգանի վարչակազմի՝ ծառայել Եգիպտահսրայելական գործարքը՝ ոչ թե ուղղակի գործող ավանդական դաշինքի, այլ Վաշինգտոնի միջոցով ԱՍՆ-ի և նրա տարածաշրջանային գործընկերների միջև հնարավոր «փոխհարաբերությունների» տեսքով:

1981թ. ԱՍՆ-ի և Խսրայելի միջև «Ռազմավարական փոխըմբռնման հուշագրի» ստորագրումից հետո արար-իսրայելական հակամարտությունում ստեղծվեց ճգնաժամային նոր իրավիճակ, որը վարչակազմի ուշադրությունը երավիրեց մասնավորապես լիբանանյան իրադարձությունների վրա՝ Ուեյգանի ութամյա նախագահության ընթացքում չկորցնելով իր իրատապությունը, և մնալով ԱՍՆ-ին նետված արտաքին լուրջ մարտահրավերներից մեկը: Վերոհիշյալ ռազմավարական հուշագրի ստորագրումից հետո, միմյանց դեմ սառը պատերազմի

կարգավիճակում գտնվող երկու գերտերությունների ՍԱ-ի դաշնակիցների միջև հակասություններն էլ ավելի սրվեցին՝ իրենց գազաթնակետին հասնելով 1981թ. ապրիլին: Այն կապված էր պաղեստինցիների դեմ լիբանանյան քրիստոնյա-աջերի (որոնք օգտվում էին Իսրայելի ռազմական աջակցությունից) գրոհների կասեցման նպատակով: Միքրիայի միջամտության հետ, որն ի վերջո հանգեցրեց Իսրայելի և Միքրիայի միջև ռազմական բախման՝ ԱՄՆ-Ի ԱՀՀ առնակատման հնառնկարով:

